15:92
Հ-73

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԵՄՔԵՐ, ՓԱՍՏԵՐ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2010

ՀՏԴ 159.9 (07)
ԳՄԴ 88 g 7
Հ 730

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի խորհուրդը

Խմբագիր՝ հոգ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ. Մ. Ավանեսյան

Կազմողներ՝ մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Վ. Հովհաննիսյան,
հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ. Ռ. Հովհաննիսյան,
հոգ. գիտ. թեկնածու, ասիստենտ Է. Վ. Ասրիյան

Գրախոսներ՝ հոգ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Ա. Գրին,
հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ. Ռ. Պապոյան

Հ 730 Հոգեբանություն (դեմքեր, փաստեր): Ուսումնամեթոդական ձեռնարկ / Կազմ. Ս. Վ. Հովհաննիսյան, Հ. Ռ. Հովհաննիսյան, Է. Վ. Ասրիյան, խմբ. Հ. Մ. Ավանեսյան - Եր.: ԵՊՀ հրատ., 2010 թ. - 204 էջ:

Ձեռնարկում ներառված են բոլոր ժամանակների և ժողովուրդների մեծանուն հոգեբանների համառոտ կենսագրական տվյալներ և նրանց առավել հայտնի աշխատությունների ու տեսակետների մասին տեղեկություններ: Ուսումնամեթոդական ձեռնարկը կազմված է ԵՊՀ «Հոգեբանություն» մասնագիտությամբ բակալավրիատի «Մասնագիտության ներածություն» և «Հոգեբանության պատմություն» առարկաների ծրագրերի շրջանակներում:

Ձեռնարկը հասցեագրված է բուհերի ուսանողներին, մագիստրոսներին, ասպիրանտներին, հոգեբանությամբ և հոգեբանության պատմությամբ հետաքրքրվողներին, ինչպես նաև կրթական համակարգում աշխատող մասնագետներին, ովքեր առնչվում են հոգեբանական գիտության տեսական և գործնական արդի խնդիրների հետ:

ԵՊՀ Գրադարան
SU0180534

ՀՏԴ 159.9 (07)
ԳՄԴ 88 g 7

ISBN 978-5-8084-1201-9

© ԵՊՀ հրատարակչություն, 2010 թ.
© Կազմողների համար, 2010 թ.

ԵՊՀ Սարգսի և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան
Sargis and Marie Izmirlian Library of YSU
Библиотека ЕГУ им.Саргиса и Мари Измирлянов

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնամեթոդական ձեռնարկում ընդգրկված նյութը համապատասխանում է «Հոգեբանություն» մասնագիտության բակալավրիատի ուսումնական ծրագրերին, կազմված է ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ընդհանուր հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ և հոգեբանության մագիստրոս՝ *Գ. Ս. Պետրոսյանի* (ՄԱՍ 2. և 3.5., 3.6. բաժինների թարգմանում ու կազմում) մասնակցությամբ:

Ձեռնարկը նպատակ ունի օժանդակել ուսանողների հոգեբանության հիմունքների և հոգեբանության պատմության համակարգված գիտելիքների ձեռքբերմանը և աջակցել առարկաների ինքնուրույն ուսումնառությանը, որոնք նախատեսված են կրեդիտային կրթական չափորոշիչներում:

Սույն ձեռնարկի տրամաբանական կառուցվածքը ներառում է հետևյալ բաժինները.

- որպես նախաբան ներկայացրել ենք՝
  - հոգեբանության զարգացման փուլերը և տեղը գիտությունների համակարգում,
  - հոգեբանության պատմության պարբերացումներից մեկը,
- առաջին մասում ներկայացրել ենք փիլիսոփայական հոգեբանությունը,
- երկրորդում՝ գիտական հոգեբանության առաջավորներին,
- երրորդ մասում տարանջատել ենք հոգեբանական հիմնական ուղղություններն ու դրանց կարկառուն ներկայացուցիչներին,
- չորրորդում փաստել ենք հայ հոգեբանական մտքի կայացումը 19-20-րդ դարերում,
- հինգերորդում՝ ընդգրկել ենք հայ անվանի հոգեբաններին, իսկ
- եզրափակիչ մասը ներառում է՝
  - համառոտ պատմական ակնարկ հոգեբանության պայմանանշանի մասին,
  - օգտագործված գրականության ցանկ,
  - տեքստում հանդիպող հոգեբանական տերմինների և մեկնաբանություն չունեցող կարևոր հասկացությունների բացատրական բառարան: Դրանք մեծմասամբ հասկացություններ և ուղղություններ են: Բառարանում ներկայացված են թվով 59 հասկացություններ, որոնք մեկնաբանված են իրենց ընդհանուր կողմերով: Բառարանը կազմելիս օգտվել ենք տարբեր հանրագիտարաններից ու բառարաններից, և աշխատել ենք մատչելիության ու լակոնիկության սկզբունքով,
  - օժանդակ գրականություն

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ՏԵՂԸ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հոգեբանությունն ահռելի նախապատմություն ունի և շատ կարճ պատմություն: Որոշ աղբյուրների համաձայն «Հոգեբանություն» տերմինն առաջարկվել է 1590 թ. Մարբուրգի պրոֆեսոր Գոկլենիուսի կողմից, և այլ աղբյուրների համաձայն «Հոգեբանություն» տերմինը (գիտություն հոգու մասին) 1732 թ. գիտության մեջ ներմուծել է գերմանացի փիլիսոփա, Մ. Վ. Լոմոնոսովի ուսուցիչ Վոլֆ Քրիստիանը: Ք. Վոլֆը օգտվեց մահկանացու, ազգությամբ հույն Պսիխեյի մասին առասպելից, որն անմահություն ձեռք բերեց Երոս Աֆրոդիտեի տղային սիրելու համար և դարձավ իր իդեալը փընտրող հոգու խորհրդանիշ:

Հոգեբանության պատմությունն անցել է զարգացման մի քանի փուլեր.

1. Մինչգիտական հոգեբանություն. Այս փուլում մարդը ճանաչել է այլ մարդկանց և ինքն իրեն անմիջականորեն գործունեության և շփման, հաղորդակցման գործընթացներում: Մինչգիտական հոգեբանության հիմքում ընկած է առողջ միտքը: Սա այն հոգեբանությունն է, որն ըստ Ժ. Պիաժեի, ժողովուրդը ստեղծել է դեռ մինչև հոգեբանները: Մինչգիտական հոգեբանությանը կարելի է վերագրել նաև գրականագետների (Թեոֆրաստ, Լաբրյուեր), բարոյախոսների (Մարկ Ավրելիուս, Մոնտեն, Պասկալ, Լարուշֆուկո) և փիլիսոփաների (Արիստոտել, Լուկրեցիուս) հայացքները:

Իհարկե, «Մինչգիտական հոգեբանության փուլը» չավարտվեց միջին դարերում, երբ հոգեբանական խնդիրները գրավեցին փիլիսոփաների ուշադրությունը: «Կենցաղային» հոգեբանությունը և նրա հիմնական գործիքը՝ «առողջ միտքը», այսօր ևս մեզ ուղեկցում են մեր կյանքում: Լավ գրողը, որպես «կենցաղային հոգեբանության մասնագետ», շատ ավելի բանիմաց կարող է լինել, քան համալսարանական դիպլոմով որոշ «գիտական հոգեբաններ»:

2. Փիլիսոփայական հոգեբանությունը հոգեբանական հայացքների զարգացումն է այս կամ այն փիլիսոփայական համակարգի շրջանակներում:

Դեռ անտիկ փիլիսոփայությունում առաջ են քաշվել՝ օրենքի գաղափարը, որպես հետազոտության ձևափոխման պայմաններում դրսևորվող չփոփոխարկվող վերաբերմունք, սկզբնական սուբստանցիաների (հիմքերի), էթիկական նորմերի, չփոփոխակման օրենքի պահպանման գաղափարը՝ կախված փիլիսոփայական դպրոցից:

Հոգեբանական խնդիրների փիլիսոփայական լուծումների հիմքում ընկած են առաջ քաշվող վերացական, տրամաբանական սկզբունքները:

Առավել հնագույն աշխատություններից է համարվում հույն փիլիսոփա, հոգեբան Արիստոտելի «Հոգու մասին» տրակտատը: Միջին դարերում փիլիսոփա Սխոլաստը ևս մտորում է հոգեկանի մասին: Դեկարտի ժամանակներից սկսած փիլիսոփաներն արդեն ճանաչում էին մարմնի և հոգու անկախության գաղափարը: Այս ժամանակների հոգեբանության խնդիրն էր՝ հոգեկանի և ֆիզիոլոգիականի միջև կապի բացահայտումը: Բեկոնը սկսում է ուսումնասիրել ճանաչողության գործընթացը, և այս բոլորը իրագործվում է փիլիսոփայության շրջանակներում: Այս ժամանակների հիմնական մեթոդը ինքնադիտման կամ ինտրոսպեկցիայի մեթոդն էր: Իսկ Արիստոտելի ժամանակներից սկսած մեր մտքերը կապող հիմքն արդեն զուգորդումներն էին:

Միայն արիստոտելյան փիլիսոփայության և ֆիզիկայի մայրամուտին՝ 17-րդ դարում, մարդու ճանաչողության խնդիրը ձեռք բերեց իր յուրահատկությունը: Փիլիսոփաները, Դեկարտից սկսած, աստիճանաբար եկան հոգեբանական խնդիրներին: Այս խնդիրներին նրանք միայն տեսական պատասխաններ էին տալիս իրենց համակարգերի սահմաններում, և նույնիսկ փորձարարներն իրենց տեսությունները հաստատելու համար չէին դիմում գիտափորձի, չնայած որ չէին բացառում փորձարարության հնարավորությունը հոգեբանությունում:

3. Գիտական հոգեբանության զարգացման ամբողջ պատմությունում, ներառյալ «մինչգիտական շրջանը», անցկացվել են մի շարք հետազոտություններ, որոնք մենք այսօր կարող ենք կոչել հոգեբանական: Օրինակ, դեռ մեր թվարկության 3-րդ դարում Նեմեցիա եպիսկոպոսը սահմանել է, որ տեսողությունը միաժամանակ 3-4 տարրերից ավելի չի կարող ընդգրկել իր տեսադաշտում:

Կ. Ա. Ռամուլը նշում է, որ հոգեբանական գիտափորձի մասին առաջին տվյալները հանդիպում են միայն 16-րդ դարում և բավականին շատ տեղեկություններ դրանց մասին վերագրվում են 18-րդ դարին: Ռամուլի կարծիքով՝

- առաջին հոգեբանական փորձերը կամայական բնույթ էին կրում և գիտական նպատակ չէին հետապնդում,
- գիտական նպատակով հոգեբանական փորձերի համակարգված կազմակերպումն ի հայտ է գալիս միայն 18-րդ դարի հետազոտողների մոտ,
- մեծամասամբ այդ փորձերը կապված էին տարրական տեսողական զգայությունների հետ:

Հոգեբանությունում չափումների մասին առաջինը խոսել է Ք. Վոլֆը: Նա գտնում էր, որ մեր կողմից գիտակցվող կատարյալով կարող է չափել բավականությունը կամ հաճույքը, իսկ ուշադրության մեծությունը՝ փաստարկների տևականությամբ, որին մենք ի վիճակի ենք հետևելու:

Վոլֆը տարբերում էր էմպիրիկ և ռացիոնալ հոգեբանություններ: Ընդ որում, էմպիրիկ հոգեբանությունը քննարկում էր հիմնված փորձի վերլուծության վրա, և ոչ թե դեդուկցիայի վրա՝ հոգու էությունից: Սակայն հետազոտության մեջ մաթեմատիկան կիրառելու գաղափարը ներմուծել է Գալտոնը: Նա պնդում էր, որ քանի դեռ գիտության ինչ-որ բնագավառի երևույթները չեն ենթարկվել չափման և թվերի, դրանք չեն կարող ձեռք բերել գիտության արժանիք և կարգավիճակ:

Առաջին հոգեբանները կրթությամբ ավելի հաճախ ֆիզիոլոգներ էին (Վունդտ, Բինե, Պավլով), բժիշկներ (Բեխտերև) կամ ֆիզիկոսներ (Բուգեր, Վեբեր, Ֆեխներ): Սա պայմանավորված էր նրանով, որ նախ նրանք սովոր էին ավելի շատ ենթարկվել և վստահել փաստերին, քան մտավոր կառույցներին, և հետո նրանք ունեին իրենց մեթոդաբանությունը, երբեմն նաև որոշ սարքավորումներ, որոնք թույլ էին տալիս հատկապես զգայությունների բնագավառում որակապես ու քանակապես փոփոխարկել խթանները (ստիմուլյացիան):

1860 թ. լույս տեսավ Գ. Ֆեխների «Հոգեֆիզիկայի տարրերը» գիրքը: Սա իրավամբ համարվում է փորձարարական հոգեբանության առաջին աշխատանքը: Ֆեխները հոգեֆիզիկան սահմանեց որպես «ճշգրիտ տեսություն մարմնի և հոգու միջև հարաբերությունների մասին, և ընդհանրապես՝ ֆիզիկական և հոգեկան աշխարհի միջև»:

Առաջին խոշոր հոգեբանական աշխատությունը Վունդտի «Ֆիզիոլոգիական հոգեբանությունն» է՝ գրված 1973-74 թվականներին, իսկ առաջին ֆրանսիական լաբորատորիան հիմնված էր Բոնիի կողմից՝ 1889 թ., այնուհետև հիմնվեց Բինեյի ֆիզիոլոգիական հոգեբանության լաբորատորիան և այլն:

Վիլհելմ Վունդտը էմպիրիկ նախափորձարարական հոգեբանությունը վերածեց փորձարարական հոգեբանության: Նրա կողմից 1879 թ. ստեղծված հոգեբանական լաբորատորիայում պատրաստություն են անցել հոգեբաններ ամբողջ աշխարհից, այդ թվում նաև Ռուսաստանից: Ֆեխները Վունդտից առաջ էր սկսել հետազոտությունները, որոնք հիմք դրեցին բնական-գիտական հոգեբանությանը, սակայն հենց Վունդտի լաբորատորիայում ստեղծվեց առաջին գիտական հոգեբանական դպրոցը: Վունդտը ինտրոսպեկցիայի մեթոդն ակտիվ կիրառում էր օբյեկտիվ վերահսկողության զուգակցմամբ: Նա պնդում էր, որ հենց օբյեկտիվ վերահսկողությունն է ինտրոսպեկցիայի մեթոդն իսկապես դարձնում հոգեբանական գիտափոր-

ձի մեթոդ: Վունդտը ինտրոսպեկցիայի մեթոդը կիրառելի էր համարում միայն տարրական զգայարանների ուսումնասիրման համար, ընդ որում որպես հետազոտվողներ կարող են հանդես գալ միայն ինքնադիտման, ինքնահաշվարկների ունակ մարդիկ:

Իր հոգեֆիզիկական փորձերում հոգեբաններից առաջինը Ֆեխներն էր, որ հետևեց իր իսկ կողմից սահմանված պահանջներին:

1885 թ. կատարված «Հիշողության մասին» աշխատանքում էբինհաուզն արդեն փորձարարական հոգեբանության խնդիրը հասկանում է որպես՝ որոշակի երևույթների և որոշակի գործոնների միջև գործառնական կապերի հաստատում: Ընդ որում, ոչ թե ինքնադիտման, այլ ինչ-որ խնդիրների լուծման հաջողության միջոցով:

Կ. Ա. Ռամուլը գտնում է, որ ժամանակակից գիտությունը գիտափորձը չի հանգեցնում միայն չափման ընթացակարգին, բացի դրանից, հետազոտությունն ավարտելու համար անհրաժեշտ է տվյալների մեկնաբանում, ինչը կապված է տեսական հայեցակարգերի ընտրության հետ, որից էլ կախված է փորձարարական հետազոտության պլանավորումն ընդհանրապես:

Ներկա ժամանակաշրջանում ակնառու է հոգեբանական գիտության բուռն զարգացումը, որը պայմանավորված է նրա առջև ծառացող տեսական և գործնական խնդիրների բազմազանությամբ: Հոգեբանության հիմնական խնդիրը հոգեկան գործունեության օրենքների իմացությունն է դրա զարգացման մեջ: Նախորդ հարյուրամյակի ընթացքում նշանակալիորեն ընդլայնվեց հոգեբանական հետազոտությունների դաշտը, ի հայտ եկան նոր գիտական ուղղություններ և գիտակարգեր: Փոխվել է հոգեբանական գիտության հասկացությունների ապարատը, անընդմեջ ի հայտ են գալիս նոր վարկածներ և հայեցակարգեր, հոգեբանությունը հարստանում է նոր էմպիրիկ տվյալներով:

Հոգեբանության կողմից ուսումնասիրվող երևույթների ոլորտը հսկայական է: Այն ընդգրկում է գործընթացներ, վիճակներ և հատկություններ՝ բարդության տարբեր աստիճաններով, զգայական օրգանների վրա ներգործող օբյեկտի առանձին հատկանիշների տարրական տարբերակումից մինչև անձի դրդապատճառների պայքար: Այս երևույթներից մի քանիսն արդեն բավական լավ ուսումնասիրված են, իսկ մյուսների նկարագրությունը հանգում է դիտումների պարզ արձանագրման: Շատերը կարծում են, որ ուսումնասիրվող երևույթների և դրանց կապերի ընդհանրացված և վերացական նկարագրությունն արդեն տեսություն է: Սակայն դրանով տեսական աշխատանքը չի սպառվում, այն ներառում է նաև կուտակվող գիտելիքների համադրումն ու ինտեգրացիան, համակարգումը և այլն:

Հոգեբանական գիտության կայացման գործընթացը հարուստ և բազմաբնույթ էր այն առումով, որ տեսությունների, գիտակարգերի և դպրոցների հիմնադիրները հանդիսացել են այլ գիտությունների ներկայացուցիչներ՝ փիլիսոփաներ, բժիշկներ, ֆիզիոլոգներ, լեզվաբաններ, մանկավարժներ և այլն: Այդ պատճառով գիտությունների համակարգում հոգեբանությանը հատկացված տեղից կախված է այլ գիտություններում հոգեբանական տվյալների օգտագործման հնարավորությունները հասկանալը, և ընդհակառակը, հասկանալ, թե հոգեբանությունն ինչ չափով է իրավազոր օգտագործելու դրանց արդյունքները: Այս կամ այն պատմական ժամանակահատվածում գիտությունների համակարգում հոգեբանությանը հատկացված տեղն ակնառու վկայել է հոգեբանական գիտելիքների զարգացման մակարդակի մասին: Հարկ է նշել, որ հասարակության ոգեղեն զարգացման պատմության մեջ գիտելիքի ոչ մի բնագավառ գիտությունների համակարգում իր տեղն այդքան հաճախ չի փոխել, ինչպես հոգեբանությունը: Նշվածը պարզաբանելու համար առաջնային խնդիր է դառնում տեղեկանալ հոգեբանության զարգացման տարբեր փուլերում նշանակալի ներդրում ունեցող գիտնականների կենսագրականներին և նրանց հիմնական աշխատությունների ուղղվածությանը:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄ

Հոգեբանության պատմությունը կարելի է բաժանել երկու մասի. դրանց միջև սահմանը հոգեբանության կայացումն է՝ որպես ինքնուրույն գիտություն (Վունդտի լաբորատորիա, 1879 թ.):

<u>Ի շրջան</u>

1. *Հոգու մասին պատկերացումները հնադարում.*
   - առասպելաբանական (դիցաբանական) պատկերացումները,
   - Հին Հունաստանի վաղ ժամանակյա բնախույզների (նատուրալիստների) պատկերացումները,
   - Սոկրատեսի և Պլատոնի գաղափարապաշտությունը (իդեալիզմը),
   - Արիստոտելի հոգեբանությունը: Հոգին որպես կենդանի մարմնի տեսակ,
   - թերահավատների (սկեպտիկների), շնականների (կինիկների կամ ցինիկների), ամրակամների (ստոիկների), վայելքամոլների (էպիկուրականների) հոգեբանական հայացքները:
2. *Հոգեբանության զարգացումը միջին դարերում.*
   - քրիստոնեության ծագման դարաշրջանի ընդհանուր բնութագրումը,
   - վաղ սխոլաստիկան (կյանքից կտրվածություն) հոգու մասին՝ Պլատոն, Ավգուստին, 2-4-րդ դարեր,
   - արաբ մտածողների հոգեբանական հայացքները,
   - Ֆոմա Աքվինացու կողմից Արիստոտելի ուսմունքի աստվածաբանական մեկնաբանությունը՝ թոմիզմ,
   - ռեալիզմը (իրապաշտությունը) և նոմինալիզմը (անվանապաշտությունը) ուշ սխոլաստիկայում (Դունս Սկոտտ, Ուիլյամ Օկկամ, Ռոջեր Բեկոն):
3. *Հոգեբանական հայացքների զարգացումը 17-րդ դարում.*
   - էմպիրիկ և փորձարարական ուղղության ձևավորումը գիտությունում,
   - Դեկարտի փիլիսոփայական-հոգեբանական համակարգը,
   - Գոթֆրիդ Լայբնիցի իդեալիզմը,
   - Բենեդիկտ Սպինոզա՝ մոնիզմ,
   - Թոմաս Հոբս,

- մարմնի և հոգու հարաբերակցության հոգեֆիզիկական հիմնախնդիրը և դրա լուծումը 17- րդ դարի մտածողների կողմից:

4. *Անգլիական զուգորդական (ասոցիատիվ) հոգեբանությունը 17-20-րդ դարերում.*
    - Ջոն Լոկ,
    - դասական ասոցիանիզմ,
    - սուբյեկտիվ ասոցիանիզմ,
    - բնագիտական ուղղությունը 19-րդ դարի կեսերին (Ալեքսանդր Բեն, Հերբերդ Սպենսեր):
5. *Ֆրանսիական մատերիալիստների հոգեբանությունը.*
    - Ջ. Լոկի գաղափարների զարգացումը Էմիլ Կոնդելյարի համակարգում՝ սենսուալիզմ (զգայապաշտություն),
    - Ժան-Ժակ Լամետրի հոգեբանական հայացքները («Մարդ-մեքենա»),
    - պոզիտիվիզմ՝ գիտությունների դասակարգում և սոցիոլոգիա (Օգյուստ Կոնտ):
6. *Հոգեբանական գաղափարները գերմանական դասական փիլիսոփայությունում.*
    - օբյեկտիվ իդեալիզմ (նախադրյալները՝ Լայբնիցից),
    - էմպիրիկ և ռացիոնալ հոգեբանություն (Ք. Վոլֆ),
    - Ի. Կանտի փիլիսոփայական և հոգեբանական հայացքների ընդհանուր բնութագիրը,
    - հոգեբանության քննադատությունը Կանտի կողմից,
    - գիտակցության շեմերը, մաթեմատիկայի կիրառումը հոգեբանությունում (Հերբարտ):

<u>II շրջան</u>

1. *Հոգեբանության, որպես ինքնուրույն գիտություն, առաջացման անմիջական նախադրյալները.*
    - ռեֆլեքսիայի մասին ուսմունքը և ֆիզիոլոգիան,
    - ռեակցիայի ժամանակի ուսումնասիրման սկիզբը,
    - Վեբերի և Ֆեխների հոգեֆիզիկան,
    - Հերման Հելմհոլցի հոգեֆիզիոլոգիան,
    - Դարվինի ուսմունքը,
    - ֆրանսիական հոգեթերապիան,
    - մաթեմատիկական մեթոդների զարգացումը՝ Ֆ. Գալտոն:

2. *Հոգեբանությունը, որպես ինքնուրույն գիտություն՝ 19-րդ դարում.*

ա) հոգեբանության հիմնական տեսական ուղղությունները նրա ծագման սկզբին՝

- Վ. Վունդտը և նրա դպրոցը՝ ստրուկտուրալիզմ (ռուսական դպրոցը՝ Գ. Ի. Չելպանով, ամերիկյանը՝ Թիթչեներ),
- ֆունկցիոնալիզմ (նախադրյալները՝ դարվինիզմ, Ֆ. Բրենթանո, Կ. Շտումֆ՝ եվրոպական ֆունկցիոնալիզմ, Ու. Ջեյմս՝ ամերիկյան),
- Ի. Մ. Սեչենովը և վարքային հոգեբանությունը (բիհեվիորիզմ):

բ) առաջին փորձարարական հետազոտությունների հիմնական ուղղությունները՝

- զգայությունների, ընկալման և ուշադրության հետազոտությունները (Վ. Վունդտ, Ջ. Քեթթել, Ն. Լանգե),
- հույզերի հետազոտությունների սկիզբը (Թ. Ջեյմս-Լանգե),
- ասոցիացիաների (Գալտոն) և հիշողության (Էբինհաուզ) ուսումնասիրությունները,
- Կյուրցբուրգյան դպրոց՝ մտածո[illegible]ան հետազոտությունները,
- անհատական տարբերությունների հետազոտումը, թեստաբանությունը (Բ. Բուրդոյի, Ա. Բինեյի ֆրանսիական ավանդույթները: Ֆ. Գալտոնի, Ջ. Մակին Քեթթելի անգլոամերիկյան ավանդույթները:),
- արտադրական հոգեբանությունը՝ հոգետեխնիկան (Հյուգո Մյունստերբերգ),
- պատմամշակութային հոգեբանությունը (Կավելին, Հերբերտ Սպենսեր, Գաբրիել Թարդ, Էմիլ Դյուրգհեյմ):

3. *Հոգեբանության զարգացումը 1900-1930 թթ.*

ա) բիհեվիորիզմ,

բ) հոգեվերլուծություն՝

- նախադրյալները (ֆրանսիական հոգեբուժություն, ֆիզիոլոգիա, Ֆ. Բրեյների գաղափարները, Ֆրոյդի և Բրեյերի հիպնոթերապևտիկ պրակտիկան),
- հոգեվերլուծության առաջացումը,
- Ֆրոյդի հոգեվերլուծության հիմնական դրույթները (անձի կառուցվածքը, հոգեսեռական զարգացման շրջանները),
- Ա. Ադլերի անհատական հոգեբանությունը (անլիարժեքության բարդույթ, սոցիալական հետաքրքրություն, վաղ հիշողությունների վերլուծություն),

- Կ.-Գ. Յունգի վերլուծական հոգեբանությունը (կոլեկտիվ և անհատական անգիտակցական, արքետիպեր, հոգեբանական տիպեր),

գ) գեշտալտ հոգեբանություն՝

- նախադրյալները (ստրուկտուրալիզմի թերությունները, նոր ֆիզիկան, էրիկ Ֆելսի ձևի որակի մասին հասկացությունը, պատկերի և ֆոնի հետազոտումը՝ Կատց, Ռուբին),
- գեշտալտ հոգեբանության ներկայացուցիչները և նրանց նվաճումները՝ Մաքս Վերտհայմեր (արդյունավետ մտածողության, ընկալման օրենքների ուսումնասիրումը), Կուրտ Կոֆկա (հոգեկանի զարգացման խնդիրը), Վ. Քյոլեր (մտածողության հետազոտությունները, «ինսայթ»),
- գեշտալտ հոգեբանության հիմնադրույթները. ամբողջի առաջնությունը մասի նկատմամբ, իզոմորֆիզմի (հավասարաձևունակության) սկզբունքը,
- Կուրտ Լևին՝ անձի մոդելը և իրավիճակի մոդելը, փորձարարական աշխատանքները, խմբային դինամիկայի հայեցակարգը:

դ) անհատական տարբերությունների հոգեբանություն՝

- անհատական տարբերությունների փորձարարական հետազոտությունները, թեստաբանությունը,
- Վ. Շտերնի պերսոնալիստիկան: Անձ, անձի հատկություններ (դիսպոզիցիաներ):

ե) հոգեբանությունը Ռուսաստանում, մինչև 1917 թ.՝

- հիմնական ուղղությունները՝ փիլիսոփայական-կրոնական, ստրուկտուրալիզմ, բնագիտական (ֆունկցիոնալիզմ, ռեֆլեքսաբանություն),
- Չելպանովի փորձարարական հոգեբանությունը,
- Նեչաևի ֆունկցիոնալիզմը և մանկավարժական հոգեբանությունը,
- Վ. Մ. Բեխտերևի ռեֆլեքսաբանությունը՝ հոգենյարդաբանական ինստիտուտի կազմակերպումը:

զ) հոգեբանությունը 1917-1936 թթ.՝

- պեդոլոգիա (Արոն, Զալկինդ),
- հոգետեխնիկա (Իվան Շպիլռեյն),
- հոգեբանության հիմնական ուղղությունները. հոգեվերլուծություն՝ Զալկինդ, պատմամշակութային ուղղություն՝ Չելպանով,

Շպետ, վարքային հոգեբանություն (Կորնիլովա, Բասով, Բլոնսկի, Բեխտերև),

- պայքար հոգեբանության գոյատևման համար,
- նոր տեսության կառուցումը մարքսիզմի սկզբունքների վրա (Վիգոտսկու պատմամշակութային հայեցակարգը, Ռուբինշտեյնի գործունեության տեսությունը):

4. *Հոգեբանության զարգացումը 30-ական թվականներից հետո.*

ա) նեոբիհեվիորիզմ՝

- օպերացիոնալիզմի սկզբունքը հոգեբանությունում (Բրիջմեն, Ստիվենս),
- Թոլմենի կոգնիտիվ բիհեվիորիզմը,
- Կ. Հալլի վարկածային-դեդուկտիվ բիհեվիորիզմը,
- Սկինների օպերանտ բիհեվիորիզմը,
- հոգեվերլուծության ազդեցությունը՝ դրդապատճառայնության խնդրի մշակումը (Մյուրեյ, Կ. Սպենս, Թեյլոր և այլոք),
- Պավլովի դպրոցի ազդեցությունը՝ ակտիվացման գիծը (Հեբբ, Բերլայն),
- սոցիալական ուսուցանման գիծը (Ա. Բանդուրա, Ջ. Ռոթթեր):

բ) հոգեվերլուծության էվոլյուցիան՝

- Կ. Հորնի՝ տագնապի զգացումը և նևրոտիկ անձի մասին հասկացությունը,
- է. Ֆրոմ՝ մարքսիզմը և հոգեվերլուծությունը, մարդկային գոյության էքզիստենցիալ հակասությունը,
- է. Էրիկսոն՝ անձի զարգացման էպիգենետիկական տեսությունը:

գ) Ժան Պիաժեի գենետիկական հոգեբանությունը:

դ) կոգնիտիվ հոգեբանության հիմնական ուղղությունները.

- հիմնական նախադրյալները՝ կիբեռնետիկան, կապի տեսությունը (Ջ. Բրուներ, Ջորջ Միլներ),
- տեղեկատվական-կիբեռնետիկական մոտեցումը (Ու. Նայսեր),
- կոգնիտիվ-սոցիալական հոգեբանությունը:

ե) հումանիստական հոգեբանությունը.

- ակունքները (Շտերն, էքզիստենցիալ հոգեբանություն և այլն),
- անձնակենտրոն մոտեցումը (Կ. Ռոջերս),
- ինքնիրացման տեսությունը (Ա. Մասլոու):

զ) անձնային-տեսական մոտեցումը.

- «Անձի համար» շարժումը 30-ական թվականներին,

- նորմոթետիկ (նորմոգրաֆիկական) և իդեագրաֆիկական մոտեցումը (Գ. Օլպորտ),
- ընդունակությունների հոգեդիագնոստիկայի ուղղության զարգացումը՝ ինտելեկտի տարատեսակ տեսությունները (Չ. Սպիրմեն, Լեոն Տերսթոուն, Ջ. Գիլֆորդ, Ռ. Քեթթել):

Նշված պարբերացումը ընդամենը մեկն է մի քանի պարբերացումներից, որը նպատակ է հետապնդում կողմնորոշելու ձեռնարկից օգտվողներին:

1.9. Պյութագորաս

Հին հույներից առաջինը, որն իրեն անվանեց փիլիսոփա: Ծնվել է մ.թ.ա. 6-րդ դարում, Փյունիկիայի Սիդոն քաղաքում: Պյութագորասի կյանքի ու գործունեության նկարագրությունները լի են բազմաթիվ առասպելաբանական մոտիվներով, ինչի հետևանքով դժվար է տարբերակել իրական փաստերը մտացածին պատմություններից: Ըստ ավանդության, դեռևս մինչև Պյութագորասի ծնվելը, Դելփիական Պյութիան նրա ծնողներին կանխատեսում է, որ նրանց որդին բոլորից կառանձնանա իր իմաստությամբ և մեծագույն օգուտ կբերի մարդկությանը: Եվ, քանի որ երեխայի մասին ծնողներին հայտնել էր Պյութիան, երեխային տալիս են Պյութագորաս անունը:

Դեռևս մանկուց, Պյութագորասն աչքի է ընկնում իր խելացիությամբ և ծնողները խրախուսում են նրա վաղաժամ հակումը դեպի գիտությունը: Սամոսում նա Հերմադոմանտի մոտ սովորում է ուղղագրություն, ուղղախոսություն, բանաստեղծական արվեստ: Ֆերեսիդես Սիրոսացու մոտ ծանոթանում է այն ժամանակների դիալեկտիկային, ֆիզիկային և թեոգոնիային: Հենց Ֆերեսիդեսն է առաջինը ձևակերպել հոգու վերաբնակեցման՝ մետեմպսիխոզիսի ուսմունքը, որն ամբողջ հետագա կյանքում ուղեկցում էր Պյութագորասին: Նա Ֆերեսիդեսից սովորում է իրական երևույթները թվերի միջոցով ներկայացնելու ու մեկնաբանելու մեթոդը: Պյութագորասը սովորում է նաև բազմաթիվ տարբեր աստվածություններին նվիրված տաճարների քրմերի մոտ՝ տիրապետելով գաղտնի գիտելիքների այբուբենին: Ինն տարեկանում նա մասնակցում է Դիոնիսիոս աստծուն նվիրված միստերիաներին, արժանավայել կերպով դուրս է գալիս բոլոր փորձություններից և ստանում երրորդ մակարդակի ձեռնադրում: Տասնհինգ տարեկանում Պյութագորասը ձեռնադրվում է Պանի սրբավայրում: Այդ ձեռնադրումն, ըստ ամենայնի, կապված է սեռահասունության հետ, և ձեռնադրվողի առջև բացում է առողջ սեռական կյանքի գաղտնիքները: Այնուհետև նրա առջև բացվում են օրփիկական միստերիաների գաղտնիքները, որոնցից նա վերցնում է աստվածների թվային բնույթի մասին գաղափարը և «Օրփեոսի սուրբ բառը» գիրքը: Տասնութ տարեկանում նա ճանաչվում է զինապարտ և ուղարկվում զինվորական ծառայության:

Երկու տարի անց, չհաշտվելով Պոլիկրատոսի աճող տիրանիայի հետ, լքում է Սամոսը և գնում Միլեթ, որտեղ բնակվում էին ժամանակակից ականավոր փիլիսոփաներ Թալեսն ու Անաքսիմանդրեսը: Որոշ ժամանակ Պյութագորասն ուսուցառում է նրանց, ինչպես նաև Անաքսիմենի մոտ՝ ծանոթանում միլեթյան փիլիսոփայական դպրոցի հանրահայտ ֆիզիկոսների հայացքներին: Լքելով Միլեթը, որտեղ ուր որ է կհայտնվեին պարսկական զորքերը՝ Պյութագորասը ճանապարհվում է դեպի իր ծննդավայր՝ Սիդոն: Այստեղ նա ծանոթանում է բնափիլիսոփա Մոխի սերունդների հետ, որոնցից իմանում է նրա կոսմոգոնիական և ատոմիստական հայացքների մասին: Փյունիկիայում, տարբեր սրբավայրերում նա անցնում է ձեռնադրումների մի ամբողջ շարք: Այդ ընթացքում Բաբելոնը պարտության էր մատնվել պարսկական բանակի կողմից, որը շարունակում էր իր արշավանքը դեպի Փյունիկիա: Այդ իսկ պատճառով Պյութագորասը որոշում է մեկնել Եգիպտոս:

Չնայած բռնապետական բնավորությանը, Պոլիկրատոսը հովանավորում էր փիլիսոփաներին և պոետներին: Նա Պյութագորասին է տալիս Ամազիս փարավոնին ուղղված երաշխավորական նամակը: Փարավոնի օգնությամբ Պյութագորասը հանդիպում է Մեմֆիսի քրմերի հետ: Վերջիններս Պյութագորասին ընդունում են ոչ շատ սիրալիր. եգիպտացի իմաստունները չէին վստահում հույներին՝ նրանց համարելով փոփոխական և թեթևամիտ: Սակայն Պյութագորասի աշխատասիրությունը, անզսպելի ձգտումը դեպի գիտելիքը թերահավատ քրմերին ստիպեցին փոխել իրենց վերաբերմունքը հույն փիլիսոփայի նկատմամբ:

Պյութագորասը սովորում է եգիպտական լեզուն, ծանոթանում հին եգիպտական տեքստերին: Նրա առջև բացվում են նախ Հելիոպոլիսի, այնուհետև Մեմֆիսի, Դիասպոլիսի, Լետոպոլիսի և Սաիսի գիտական շտեմարանների դռները: Նա ջանասիրաբար ուսումնասիրում է աստղաբանություն, երկրաչափություն, աստվածաբանություն: Քրմերը նրան թույլ են տալիս մասնակցել անգամ զոհաբերություններին և պատարագներին, ինչը եզակի երևույթ է, քանի որ Պյութագորասն օտարերկրացի էր:

Հին Եգիպտոսի հոգևոր մթնոլորտը Պյութագորասի համար այն միջավայրն էր, որտեղ նա ի վիճակի էր հագեցնել գիտելիքի քաղցը, որտեղ դեռևս իշխում էր հնագույն իմաստությունը, իսկ գիտնականների մատերիալիզմն ու վանականների տգիտությունը չէին հասցրել ներխուժել եգիպտական մշակույթի անանց դարպասներից ներս: Պյութագորասը որոշում է ընդմիշտ մնալ Սիաստում: Սակայն իր ճանապարհին ամեն ինչ ավերող պարսից բանակը մոտենում է փարավոնների երկրին: Պարսից միապետ Տիրոսի որդի Կամբիզն, իր անհամար բանակով շարժվում է դեպի Եգիպտոս:

Ավերելով և թալանելով եգիպտական սրբավայրերը, պարսիկները գերևարում են բազմաթիվ քրմերի և նրանց ուղարկում Բաբելոն: Գերիների մեջ էր նաև Պյութագորասը: Սակայն, այդ ժամանակաշրջանում Բաբելոնում իրար են հանդիպում երեք տարբեր՝ խալդական քրմերի, պարսկական մոգերի և հրեաների կրոնները: Պյութագորասի համար սա այլ աշխարհընկալման համակարգերի հետ հաղորդակցվելու մի նոր հնարավորություն էր: Բաբելոնում նա հաճույքով շփվում է ինչպես միդիական մոգերի հետ, որոնք հիմնականում զբաղված էին կախարդությամբ, գուշակություններով և զոհաբերություններով, այնպես էլ ուրարտական խալդ աստծուն երկրպագող խալդական քրմերի հետ, որոնց հետաքրքրություններն առավելապես կապված էին աստղաբանության և աստղագուշակության հետ: Նույնիսկ կա կարծիք, ըստ որի այստեղ Պյութագորասը հանդիպում է Զրադաշտին, որը հարում էր խալդական քրմությանը, և իմանում գոյության մասին նրա ուսմունքը:

Այնուհետև Պյութագորասը վերադառնում է հայրենիք:

Ֆրենկ Հիգինսի կարծիքով, Պյութագորասը Միդիա և Պարսկաստան ճամփորդությունից հետո մեկնում է Հինդուստան, որտեղ նրա անունն առայսօր պահպանվում է բրահմայական տարեգրությունների մեջ որպես Յավանչարիա՝ իոնական Ուսուցիչ:

Ըստ մեկ այլ տեսակետի, Պյութագորասը որոշում է լքել Բաբելոնը Դարեհի կողմից մոգերի խավի վերացման հետևանքով առաջացած հուզումներից խուսափելու նպատակով: Նախ նա որոշում է մեկնել Եգիպտոս, սակայն, իմանալով հայրենի Սամոսում բռնապետ Պոլիկրատոսի գահընկեցության մասին, վերադառնում է Սամոս: Ըստ Դիոգենես Լայերտցու, Պյութագորասի Սամոս վերադառնալու ժամանակահատվածում այստեղ դեռևս իշխում էր Պոլիկրատոսը, և Պյութագորասը ստիպված էր հեռանալ իտալական Կրոտոն:

Ամեն դեպքում, երբ բազմաթիվ տարիների շրջագայությունից հետո Պյութագորասը վերադառնում է հայրենիք, նրա մտավոր հայացքի առջև բաց էին ժամանակակից բոլոր հիմնական կրոնական, փիլիսոփայական, առասպելաբանական, գիտական ուսմունքները: Նա ի վիճակի էր համադրելու և համեմատելու հույների բազմաստվածությունը, հրեաների միաստվածությունը, պարսիկների դուալիզմը և հինդուսների եռաստվածությունը: Նա գիտեր, որ այդ բոլոր հավատալիքներն ու կրոնները միևնույն ճշմարտության բանալիներն են, որոնք ձևափոխվում են հարմարեցվելով գիտակցության տարբեր մակարդակներին և տարբեր հասարակական կարգերին:

Ունենալով քաղաքացիական գիտակցության բարձր մակարդակ, Պյութագորասը որոշում է իր գիտելիքները ծառայեցնել ի նպաստ մարդկության: Նա ժամանում է Կրոտոն և այստեղ հիմնադրում գիտության և կյանքի

դպրոց, ոտեղից, Շյուրյեի խոսքերով. «Դուրս կգային ոչ թե քաղաքագետներ և սոփեստներ, այլ լուսավորված տղամարդիկ և կանայք, իսկական մայրեր և հերոսներ»: Պյութագորասը հավատում է, որ ճշմարիտ գիտելիքի ուժով հնարավոր է ապաքինել մարդու տկարացած էությունը, կատարելության հասցնել նրա անկատար բնույթը:

Կրոտոնում Պյութագորասը ձեռք է բերում մեծ ճանաչում: Ըստ ավանդության, Կրոտոնում Պյութագորասի հաջողությունը կապված է նրա անդրշիրիմյան ճամփորդության հետ: Հասնելով Կրոտոն՝ Պյութագորասը գետնի տակ սենյակ է փորում և առանձնանում այնտեղ, բավականին երկար ժամանակ մնալով միայնության մեջ: Որոշ ժամանակ անց, նա, հյուծված և նիհարած, հայտնվում է Կրոտոնի ժողովրդին՝ պնդելով ազգային ժողովին, որ ինքը եկել է Հադեսի արքայությունից: Զարմացած ունկնդիրներին նա պատմում է այն բոլոր դեպքերի մասին, որոնք տեղի են ունեցել իր բացակայության պայմաններում, պատմում է անդրշիրիմյան թագավորության մասին, նկարագրում է նրանց վաղուց մահացած հարազատներին: Պյութագորասը նույնիսկ պատմում է Հեսիոդոսի և Հոմերոսի հոգիների անդրշիրիմյան վիճակի մասին: Բնական է, որ այս պատմությունները պետք է հսկայական ազդեցություն ունենային Կրոտոնի բնակիչների վրա: Նրանցից շատերը դառնում են Պյութագորասի հետևորդները:

Սակայն հիշատակված պատմության մեկնաբանությունները միանշանակ չեն: Ոմն Հերմիպ, որին վկայակոչում է Դիո•ենես Լայերտացին, այլ կերպ է մեկնաբանում այդ իրադարձությունները: Նրա կարծիքով, Պյութագորասն, անցնելով ստորգետնյա իր կացարանը, կարգադրում է իր մորը տախտակների վրա գրել այն բոլոր դեպքերի մասին, որոնք տեղի կունենան իր բացակայության ընթացքում: Ըստ Հերմիպի, վերադառնալով լույս աշխարհ և ներկայանալով Կրոտոնի ազգային ժողովին, նա ընդամենը վերարտադրում էր մոր գրածները:

Կրոտոնի արվարձաններում Պյութագորասը հիմնում է դպրոց, որին կրոտոնցիները տալիս են Մուսաների տաճար անվանումը: Հետագայում այն կոչվում է հիմնադրի անունով՝ պյութագորական, իսկ այդտեղ աշակերտող սաները՝ պյութագորականներ: Մուսաների տաճարում սովորել ցանկացողների թիվը բավականին մեծ էր, սակայն ոչ բոլորին էր հաջողվում դառնալ մեծ փիլիսոփայի հետևորդը. Պյութագորասը շատ խիստ էր աշակերտների ընտրության հարցում: Փորձության էին ենթարկվում նորեկի կամային, մտավոր, բարոյական հատկությունները: Շատերն ի վիճակի չէին դիմանալու այդ փորձություններին և ստիպված էին հրաժարվել Մուսաների տաճարում սովորելու իրենց ցանկությունից:

Պյութագորասի փիլիսոփայական համակարգի էությունը պահպանվել է Լիզիյայի «Ոսկե բանաստեղծություններում», Հերակլեսի մեկնաբանու-

թյուններում, Ֆիլոլաիսի և Արխիթի «հատվածներում», ինչպես Պլատոնի «Թիմեյայում», որն իր մեջ պարունակում է Պյութագորասի կոսմոգոնիան:

Այն դեպքում, երբ միլեթյան դպրոցի փիլիսոփաներն առաջնային էին համարում բնական երևույթների նյութական նախահիմքը, ստեղծում էին բնական երևույթները նկարագրող տեսություններ և հետո միայն դրանց միջոցով մեկնաբանում հոգեկան իրականության բնույթը, ինչի հետևանքով նրանց հաճախ անվանում են մատերիալիստներ կամ Ֆիզիկոսներ, Պյութագորասն առաջնային էր համարում այդ երևույթները կարգավորող և կառավարող, սակայն շատ դեպքերում անմիջականորեն չընկալվող, անյութական գործոնները: Պյութագորասի համար իրականությունը մի ամբողջություն էր, որի տարբեր ոլորտները՝ թվերի, մաթեմատիկական պատկերների, երաժշտական հնչյունների, երկնային մարմինների, հոգեկան դրսևորումների աշխարհները ենթարկվում էին միևնույն օրինաչափություններին: Այդ օրինաչափությունների բացահայտումն էլ հենց, ըստ Պյութագորասի, իմաստասիրության հիմնական նպատակն է:

Դա է պատճառը, որ պյութագորական դպրոցում կրթությունը, դաստիարակությունը և հոգևոր զարգացումը կազմում էին մի ամբողջություն. հոգևոր զարգացման ցանկացած մակարդակի համապատասխանում էր գիտելիքների և բարոյական հատկանիշների որոշակի համալիր:

Մուսաների տաճարում ուսումնական գործընթացն ընթանում էր չորս՝ նախապատրաստական, մաքրագատման, կատարելության և համընկալման աստիճաններով: Ընդունվելով պյութագորական դպրոց, աշակերտը հաջորդաբար պետք է անցներ հոգևոր, ինտելեկտուալ և բարոյական զարգացման նշված փուլերով: Յուրաքանչյուր նոր մակարդակ ուներ գիտելիքների իր բաժինը: Անցնելով այդ ուղին, դպրոցի սանն աստիճանաբար մոտենում էր բացարձակ իրականությանը:

Առաջին փուլը նախապատրաստման փուլն էր: Պյութագորասի կարծիքով, նորեկները դեռևս պատրաստ չէին հասկանալու իրական երևույթների բուն էությունը: Նրանք պետք է համապատասխան ձևով նախապատրաստվեին գոյության խորքերով հետագա հետաքրքիր, բայց դժվարին ճանապարհորդության համար: Նախապատրաստական փուլի դասերի ժամանակ աշակերտներն ստիպված էին պահպանել բացարձակ լռություն երկու, իսկ որոշ դեպքերում նույնիսկ հինգ տարի: Նախապատրաստական փուլը կրում էր նաև ունկնդրում (ակուսմատիկո, հուն. - ακουσματικοι) անվանումը, սաները կոչվում էին ունկնդիրներ (ակուսմատիկոս) և լուռ ունկնդրում էին ուսուցչի խոսքերը, որոնք խթանում էին աշակերտի մտածողությունը՝ նրան տալով հետագա զարգացման համար անհրաժեշտ ուղղվածություն: Ուսուցչի խոսքը կազմված էր ասույթների պես ձևակերպված արտահայտություններից՝ բացահայտություններից (ակուսմատա, հուն. - τα ακουσ-

ματα) և այլաբանական նշաններից (սիմվոլ, հուն. - τα σύμβολα): Դրանք կարող էին ունենալ բացահայտ և ենթատեքստային իմաստ, արտահայտել կենցաղային ճշմարտություններ և վերաբերեին աստվածային իրականությանը: Սիա Պյութագորասի ասույթներից մի քանիսը. Բարիք են դժվարությունները, բավականությունը, բոլոր առումներով, չարիք է: Ցանկացած գործի կեսը սկիզբն է: Ի՞նչն է ամենից սքանչելի՝ ներդաշնակությունը: Ի՞նչն է ամենից ուժեղ՝ անխուսափելիությունը: Ի՞նչն է ամենից դժվար՝ ճանաչել ինքդ քեզ: Ի՞նչն է ամենից հեշտ՝ ապրել համաձայն սովորության: Տաճար անհրաժեշտ է մտնել սպիտակ, մաքուր հագուստով: Մի՛ համարձակվիր չհավատալ աստվածների մասին ավանդազրույցներին կամ աստվածային ուսմունքներին, եթե նույնիսկ դրանք անհավանական են: Մի՛ խոսիր պյութագորական ուսմունքի մասին խավարում: Չարժե երբևիցե վոնդել վստահությունը ընկերությունից (սիրուց): Մի համարիր քեզ մեծ մարդ՝ դատելով մայրամուտին քո ստվերի մեծությունից: Ցասման պահին ո՛չ խոսիր, ո՛չ գործիր...

Պյութագորական ասույթներն ունեին կրկնակի իմաստ՝ մի կողմից դրանք կարող էին արտահայտել այն, ինչն ուղղակիորեն ասվում էր, մյուս կողմից՝ այն, ինչը թաքնված էր ուղղակի նշանակության տակ: Պյութագորական սիմվոլների և ակուսմատների ուղղակի մեկնաբանությունը շատ դեպքերում թվում է անիմաստ: Այսպես՝ առաջին հայացքից կարող է անհեթեթ թվալ «Կշեռքի վրայով մի՛ անցիր» ասույթը: Սակայն հնարավոր է, որ դրա տակ թաքնված է մեկ այլ իմաստ, այն է՝ մի խախտիր հավասարությունն ու արդարությունը: Կամ «Սիրտ մի՛ կեր» արտահատությունը կարող է ունենալ հոգիդ հոգսերով և կրքերով մի ծանրաբեռնիր իմաստը:

Ունկնդիրներն իրենց դասերն անց էին կացնում արտաքին բակում, ինչի հետ կապված, նրանց գիտելիքը ստանում է էկզոտերիկ (արտաքին, դրսում տեղակայված) անվանումը: Յուրացնելով առաջին փուլում մատուցված գիտելիքը, հասնելով հոգևոր, բարոյական և ինտելեկտուալ զարգացման համապատասխան մակարդակին, Մուսաների տաճարի սանն իրավունք է ստանում անցնել երկրորդ փուլ՝ մտնել տաճարի ներքին բակը: Անցնելով ներքին բակ, աշակերտները ձեռնամուխ էին լինում պյութագորական տեսության էզոտերիկ (ներքին, ներսում տեղակայված) ուսմունքի ուսումնասիրությանը: Այստեղ նրանք անմիջական հաղորդակցման մեջ էին մտնում ուսուցչի հետ, կարող էին հարցեր տալ նրան, քննարկել տարբեր խնդիրներ: Այս փուլը ստանում է մաքրազատում (կատարսիս) անվանումը: Այստեղ դասավանդվող առարկաները համախմբվում են մաթեմատիկա (μαθηματικαι - հուն. դաս, իմացում, խնդիր) անվանման տակ, աշակերտները կոչվում են մաթեմատիկոսներ: Երկրորդ փուլում հոգեկան մաքրազատման հետ համատեղ դասավանդվում են թվաբանություն, հարմոնիկա,

երկրաչափություն, օպտիկա, աստղագիտություն, թեոգոնիա: Պյութագորասի կարծիքով թվարկված գիտակարգերը գտնվում են սերտ փոխհամաձայնության մեջ, կառուցվում են միևնույն առանցքի շուրջ և իրենց հերթին հանդիսանում ամենայն գոյավորի հասկացման հիմք: Այս գիտություններն ստանում են մաթեմատիկական գիտություններ անվանումը:

Երկրորդ փուլում դասավանդվող մաթեմատիկական առարկաների շարքում առաջնային տեղ էր հատկացվում թվաբանությանը: Պյութագորասը, որպես ամբողջ գոյության նախասկիզբ, համարում էր թիվը: Այն, ըստ պյութագորականության, կազմում է բոլոր առարկաների աներևույթ էությունն ու նախահիմքը, դրանում են բացահայտվում իրականության հիմնական սկզբունքները: Պյութագորասը նկատում է, որ թվային օրինաչափությունները, դրանց հարաբերակցություններն անփոփոխ կերպով դրսևորվում են գոյության բոլոր ոլորտներում: Այդ հարաբերակցությանը Պյութագորասը տալիս է ներդաշնակություն՝ հարմոնիա, կամ համաչափություն՝ սիմետրիա, անվանումը: Թվային համադրումները ներկայանում էին որպես երկրաչափական օրինաչափություններ: Թվերի և դրանց հարաբերակցության լուսաբանման միջոցով էր պարզաբանվում աստվածների էությունն ու բնույթը: Մի խոսքով, ամբողջ գոյավորը ենթարկվում էր թվային օրինաչափություններին և կարող էր բացահայտվել դրանց միջոցով: Թվերի և դրանց դրսևորումների լուսաբանումը հնարավոր էր դարձնում ամբողջ գոյության էության հասկացումը: Այդ իսկ պատճառով, էզոտերիկ գիտությունը ներառում էր թվերի բնույթի պարզաբանումը՝ թվաբանությունը, դրանց հարաբերությունները՝ հարմոնիան, համադրությունները՝ երկրաչափությունը, ինչպես նաև թվերի և աստվածային ոլորտների փոխկապակցվածությունը: Այդ բոլոր գիտակարգերը համադրվում էին մի ուսմունքի ներքո: Այսպես՝ Պլուտարքոսի խոսքերով պյութագորականների մոտ՝ «Եռանկյան ուժը արտահայտվում է Պլուտոնի, Բաքոսի և Մարսի բնույթում, իսկ քառակուսու յուրահատկությունները՝ Ռեայի, Վեներայի, Ցերերայի, Վեսթայի և Յունոնայի բնույթում: Պլուտարքոս. «Իսիդա և Օզիրիս»»: Ինչպես տեսնում ենք, երկրաչափական պատկերները նույնացվում են աստվածությունների հետ, ըստ ամենայնի, ելնելով դրանց էության նմանություններից: Պյութագորասի ուսմունքի մեզ հասած դրվագներով հնարավոր չէ վերականգնել գոյության միասնականության և ամբողջականության այն պատկերը, որը բացվում էր Մուսաների տաճարի սաների առջև: Ամեն դեպքում, փորձենք ներկայացնել պյութագորականության ընդհանուր բնութագիրը:

Մեկը (μονας), ըստ պյութագորականության, Աստծո, նրա բանականության՝ արարիչ և ձևավորող նախապատճառի, խորհրդանիշն է: Այն արտահայտում է առարկաների ինքնանույնությունը, ինքնաբավությունը, հաստատունությունը: Մեկը ներառում է միևնույն ժամանակ թե սահմանափակու-

թյունը, և թե անսահմանությունը: Այն բոլոր թվերի, աստվածների, մարդկանց, առարկաների և երևույթների սկիզբն է: Մեկն ամբողջական տիեզերքի, տիեզերական սիրո՝ Էրոս Ֆանետի, Արեգակի և դրա հետ կապված բոլոր աստվածությունների՝ Հիպերիոնի, Թեյայի, Հելիոսի, Էոսի, Հեմերայի, Հեսպերայի խորհրդանիշն է: Երկրաչափական պատկերներից մեկին համապատասխանում է կետը, որը բոլոր պատկերների սկիզբն է: Երկուսը (δυας) տարբերակման, հակադրությունների, փոփոխականության աղբյուրն է, նյութի, տեսանելի տիեզերքի խորհրդանիշը, Երկրի և երկրային աշխարհի թիվը: Այն կապված է Երկրի, Լուսնի և ամբողջ անդրլուսնային աշխարհի, ինչպես դրանց հետ առնչվող աստվածությունների՝ Գեյայի, Ֆեբայի, Ատլանտի, Գեկատայի աստվածությունների հետ: Երկուսը տխրության, երևակայության, թախիծի և կարծիքի խորհրդանիշն է: Այն կապվում է շարժման հետ: Երկրաչափական պատկերներից եկուսին է համապատասխանում գիծը: Ըստ Պյութագորասի, բոլոր առարկաները որոշվում են երեքով (τριας), այսինքն կազմված են սկզբնամասից, միջնամասից և վերջնամասից: Այս թիվը հանդիսանում է օլիմպիական գերագույն աստվածների՝ Զևսի, Հադեսի և Պոսեյդոնի երրորդության, Պիրոենտ (Մարս) մոլորակի հետ կապված աստվածությունների՝ Կրիոս տիտանի, Դիոնա տիտանիդայի և նրանց սերունդների, Հերմես Տրիսմեգիստի, աստվածային Լոգոս-խոսքի խորհրդանիշը: Երեքն արտահայտում է արդարացի զայրույթը և ժլատությունը: Երկրաչափական պատկերներից երեքին է համապատասխանում եռանկյունին: Չորսը (τετρακτις) համաշխարհային կարգի սկիզբն է: Այն արտահայտում է չորս տարերքները՝ կրակը, օդը, ջուրը, հողը, հորիզոնի չորս կողմերը՝ արևմուտքը, արևելքը, հյուսիսը և հարավը, տարվա չորս եղանակները, կյանքի չորս տարիքները՝ մանկությունը, պատանեկությունը, առնականությունը, ծերությունը, հոգեկան չորս էներգիաները՝ միտքը, զգայությունը, կարծիքը և գիտելիքը: Տետրակտիսը կապված է Սթիլբոն (Մերկուրի) մոլորակի և դրա հետ առնչվող աստվածությունների՝ Կոյոսի, Մնեմոսինայի և նրանց սերունդների հետ: Չորսը հպարտության և աստվածավախության խորհրդանիշն է: Երկրաչափական մարմիններից այս թվին համապատասխանում է բուրգը: Հինգը (πεντας) արտահայտում է տիեզերքի էվոլյուցիոն զարգացման գաղտնիքները, հանդիսանում է հոգեկան ալարկոտության և հավասարակշռության խորհրդանիշը: Արտահայտում է հինգերորդ տարրը՝ եթերը: Կապված է Ֆաետոն (Յուպիտեր) մոլորակի և դրան վերաբերող աստվածությունների՝ Հափետ տիտանի, Ֆեմիդա տիտանիդայի, նրանց սերունդների հետ: Բոլոր հնգանկյուն համաչափ երկրաչափական մարմինները համապատասխանում են հինգ թվին: Վեցը (εξακτις), ըստ պյութագորականների, կատարյալ թիվ է: Այն արտահայտում է աշխարհի արարումը: Կապված է Ֆոսֆորոս-Հեսպերոս

(Վեներա) մոլորակի հետ կապված տիտան Օվկեանոսի, տիտանիդա Տեթիսիսի և նրանց սերունդների հետ: Վեցը սնունդի մեջ անկըշտության և անզսպողականության, դատարկ փառասիրության նշանն է: Լինելով կրոնական մտածողության խորհրդանիշ՝ յոթը (επτακτις) համարվում էր խոնարհման արժանի թիվ: Այն կապված է Թայնոն (Սատուրն) մոլորակի առնական մասի՝ Քրոնոսի և իգական մասի՝ Ռեյայի, նրանց յոթ երեխաների՝ Զևսի, Հադեսի, Պոսեյդոնի, Հերայի, Հեսթիայի, Դեմեթրայի և Պանի հետ: Այն կանխագուշակում է բռնություն, նախանձ և ծանծրույթ: Ութը (οκτακτις) հաղորդակից է ութ տոնայնություններից կազմված երաժշտական հարմոնիային: Երաժշտական տոնայնությունների նմանությամբ ներդաշնակության մեջ են գտնվում նաև տիեզերքի ութ ոլորտները, որոնցից յուրաքանչյուրը հնչում է որոշակի տոնայնությամբ: Մարմնականի հետ հաղորդակցության տեսանկյունից ութը զիջում է միայն երկուսին: Կանխագուշակում է մելամաղձություն: Ինն (εννεας) արդարության խորհրդանիշն է, քանի որ հանդիսանում է միևնույն թվի՝ երեքի եռակի գումարման, կամ բազմապատկման արդյունք: Արտահայտում է ժլատություն: Տասը (δεκας) կատարյալ թիվ է և իր մեջ պարունակում է թվերի ամբողջ բնույթը: Այն տասը ոլորտներից կազմված տիեզերքի խորհրդանիշն է և արտահայտում է աստվածավախություն:

Ըստ պյութագորականության, մակրոկոսմը և միկրոկոսմը սերտորեն փոխկապակցված են: Թե՛ մարդը, և թե՛ տիեզերքն արարված են Աստծո կերպարով, և քանի որ այդ կերպարը նույնն է, ապա իմանալով տիեզերքի գաղտնիքները, մենք կարող ենք ճանաչել նաև մեր իրական էությունը, և հակառակը՝ ճանաչելով մեզ, մենք կիմանանք նաև տիեզերքի գաղտնիքները:

Պյութագորականների կարծիքով սկզբում անվերջանալի և անսահման Ապեյրոնն էր (απειρον, հուն. - անսահման), որին սովորական մարդիկ տալիս են Քաոս անվանումը: Այնուհետև առաջանում են Գեյան և Ուրանոսը, ժխտումն ու հաստատումը, չգոյն ու գոյությունը: Ուրանոսի սերմի պտույտից առաջանում է գնդի մակերեսը, միասնականը: Այնուհետև միասնականից առաջանում է մոնադը, որի բռնկումից առաջանում է բազմաթիվ մոնադներից կազմված եթերը: Արագ պտույտի հետևանքով մոնադները տաքանում են, առաջացնելով տիեզերական հրե գունդը: Այստեղ նրանք հալչում են սկիզբ դնելով բոլոր մնացած թվերին և դրանց համադրություններին: Եթերային գնդի կենտրոնը չափազանց շիկացած է, այն Զևսի գահն է: Արեգակը հանդիսանում է այդ շիկացած հրե միջուկի արտացոլանքը: Տիեզերական գնդի ծայրամասերն ավելի սառն են և կազմում են օդը և գոլորշին, որոնք խտանալով վերածվում են ջրի, կարծրանալով՝ հողի: Գնդի կենտրոնը ճառագայթում է տիեզերական սերը, որը կոչվում է Էրոս-Ֆանեթ,

դրա միջոցով ղեկավարվում է եթերից առաջացած նյութական տիեզերքը տարածության և ժամանակի մեջ: Նյութական տիեզերքը, պտտվելով կենտրոնական օջախի շուրջ, կարծրանում է, ինչի հետևանքով ձևավորվում են Լուսինը և բոլոր հայտնի մոլորակները, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ոլորտը:

Անդրլուսնային գնդոլորտը երկրային ծգողականության, նյութականի ոլորտն է և կոչվում է «ծնունդների շրջան»: Վեց մոլորակների և Արեգակի գնդոլորտները տարբեր ոգեղեն էակների բնակության վայրն է: Ըստ Պյութագորասի, Երկրի ոլորտը մարդկության բնակության վայրն է, Լուսնի ոլորտում ապրում են դեմոնները, Արեգակի և մոլորակների ոլորտներում՝ դեմոնները և աստվածները:

Ըստ պյութագորականության, հոգին տիեզերական եթերի մասնիկ է: Այն բաղկացած է տաք և սառը եթերներից և տարբերվում է կյանքից, որը կազմված է միայն տաք եթերից: Լինելով հավերժական եթերի բեկոր, հոգին նույնպես անմահ է: Այն մարդուն տրվում է ժամանակավորապես: Իջնելով տիտանների, դեմոնների և աստվածների ոլորտներից, անմարմին հոգիները միավորվում են խոնավ էության՝ մարմնի հետ: Այդ միավորումն իրականանում է մարդու ծննդյան ժամանակահատվածում:

Պյութագորասի կարծիքով հոգին մարմնի մեջ տեղակայված է սրտի և գլխուղեղի շրջաններում: Հույզերը գտնվում են սրտում, գիտակցությունն ու բանականությունը՝ գլխուղեղում: Արյունը հոգու սնունդն է, մտքերը՝ դրա քամիները:

Հոգու էությունը, ինքնությունը, Պյութագորասի մոտ նույնացվում է մեկի հետ, քանի որ այն անփոփոխ է, ինքնահաստատ: Այդ առանցքի շուրջ համախմբվում են հոգու մնացած՝ գիտակցական, անգիտակցական, սիրային, ստվերային, դիմակային և աստվածային բաղադրիչները: Հոգին, մի կողմից մոնադիկ է, գիտակցական, առնական, մյուս կողմից՝ դիադիկ, անգիտակից, կանացի, կրքոտ, նյութականին և մարմնականին կառչած: Հոգու հակադիր մասերը համաձուլվում են տիեզերական սիրո միջոցով:

Պյութագորասը տարբերակում է մարդկային հոգու անբանական և բանական մասերը: Անբանական հոգին անգիտակից է, բազմազան, անսահման, մութ և հակված է չարության: Հոգու բանական մասը՝ մտքի և խոսքի կատարյալ էներգիան, սահմանավոր է, լուսավոր, ուղիղ և միտված է դեպի բարին: Այն կազմված է գիտակցությունից (νους), ինտելեկտից (φρενες) և հույզերից (θυμος): Ընդ որում, հոգու գիտակցական և ինտելեկտուալ մասերը անմահ են, հուզականը՝ մահկանացու:

Գիտակցությունը անգիտակցականի ներքին աշխարհից բաժանվում է ստվերի միջոցով: Ստվերը ուրիշների հանդեպ ատելության և թշնամանքի

դրսևորումն է: Հոգու այդ ներքին, անսահման և մութ կողմը երբեմն երևութանում է երազների մեջ:

Պյութագորասն առանձնացնում է մարդուն արտաքին աշխարհից պաշտպանող հոգու հագուստը, որ նպատակ ունի մարդուն ներկայացնելու այնպես, ինչպիսին նա կցանկանար երևալ, կամ ինչպիսին նրան կուզենային տեսնել շրջապատողները: Այդ արտաքին դիմակը շատ դեպքերում լինում է խաբուսիկ:

Հոգին օժտված է չորս՝ մտածողության, զգացմունքային գնահատման, զգայման, և ներշնչման ընդունակություններով: Մտածողությունը (επιστημη) հոգուն հայտնում է առարկաների և երևույթների գոյության մասին, անվանակոչում դրանք, ստեղծում հասկացություններ, միավորում է դրանք մտահանգման մեջ, փնտրում ճշմարիտ դատողություններ: Զգացմունքային գնահատումը (δοξα) որոշում է առարկայի կամ երևույթի արժեքը, մարդկային փոխհարաբերությունների բնույթը, ձևավորում է կարծիք: Զգայությունը (αισθξσισ) հոգուն հայտնում է առարկայի ներկայության մասին, սակայն չի կարող ասել, թե ինչ է դա: Այն ընդունակ է միայն վայելել առարկայի հետ փոխհարաբերությունը, կամ տառապել դրանից: Ըստ Պյութագորասի, զգայությունները և հատկապես տեսողությունը չափազանց տաք գոլորշի են: Տեսողական ճառագայթի տաք էներգիան արտացոլվում է սառն առարկայից, ինչի հետևանքով առաջ է գալիս տեսողության երևույթը: Պյութագորասը աչքերը համարում էր Արեգակի դարպասներ: Ներշնչումը (νουσ) ներքին ընկալման և անսահման անգիտակցականի միջոցով օգնում է հոգուն ճանաչել զգայություններում չտրված առարկաների և երևույթների էությունը: Այն թույլ է տալիս կանխատեսել իրադարձությունների ընթացքը՝ չհենվելով նախկին փորձի վրա:

Մարմինը լքած հոգին որպես ուրվական թափառում է երկրի վրա: Պյութագորասի կարծիքով, ամբողջ երկրային ոլորտը լի է այդպիսի հոգիուրվականներով, որոնք սպասում են իրենց հետագա ճակատագրին: Կախված մարմնական կյանքի օրոք հոգու դեպի չարը կամ բարին հակվածության գործոնից, հոգին կամ գահավիժում է վերածնունդների ծովը, կամ ազատվում է երկրային ոլորտից, համբարձվում է վեր՝ միավորվելով անմահ և անմարմին աստվածներին: Հոգիների ճակատագիրը տնօրինում է Հերմեսը. մաքրազատված և բարուն ուղղված հոգիներին այն ուղղորդում է դեպի Զևսի գահը, դեպի տիեզերական եթերը: Անմաքուր հոգիները մնում են գամված Երկրին: Դրանք կարող են վերամարմնավորվել ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանիների մեջ, բացառությամբ աստվածներին զոհաբերվող կենդանիների:

Պյութագորասի ուսմունքը: Հոգևոր զարգացման չորս աստիճանները. նախապատրաստում, մաքրազատում (katarsis), կատարելություն (teleio-

tes), համընկալում (epafania – տեսք վերևից): Իմաստասիրության և իմաստության տարանջատումը: Էզոտերիկ և էկզոտերիկ գիտելիք: Ակուսմատիկա և սիմվոլիզմ: Պյութագորասի թվաբանությունը, երկրաչափական, երաժշտական, բժշկական և աստղագիտական հետազոտությունները: Էզոտերիկ մարմիններ: Պյութագորասի ընդհանուր փիլիսոփայական հայացքները: Պյութագորասի ուսմունքը հոգու էության մասին: Հոգին որպես տետրադա. հոգու չորս բաղադրիչները՝ միտք, գիտելիք, կարծիք և զգացմունք: Հոգին որպես եթեր: Հոգու ուժերը՝ նոուս և լոգոս: Բարու կամ չարի ընտրությունը: Հոգու և մարմնի կապը: Հոգու տեղակայումը՝ սիրտը որպես հույզերի, ուղեղը որպես գիտակցության և բանականության օրգան: Հոգու գիտակցական, անգիտակցական, էրոտիկ, ստվերային և սաղմնային բաղադրիչները, դրանց բնութագիրը: Հոգու ընդունակությունները՝ մտածողություն, զգացմունք, զգայական ընկալում, հայում: Հոգու հակասական բնույթը: Անմարմին և մարմնավորված հոգիներ: Հոգու ճակատագիրը ֆիզիկական մահվանից հետո: Հոգու անմահությունը, մետեմփսիխոզիս: Մարդու կատարելության ուղին:

1.2. Սոկրատես (469-399 մ.թ.ա.)

Սոկրատեսը ծնվել է մ.թ.ա. 469 թ. Աթենքում, քարտաշ Սոֆրոնիսկի և տատմեր Ֆենարետայի ընտանիքում, ստացել է սովորական կրթություն, որպես ծանր հետևակային՝ մասնակցել է մի շարք ճակատամարտերի: Սոկրատեսն իր փիլիսոփայական գործունեությանը զուգընթաց մասնակցել է Աթենքի հասարակական-քաղաքական կյանքին՝ ոչ միշտ համամիտ լինելով իշխողների և մեծամասնության տեսակետներին: Լինելով կառավարման արիստոկրատական ձևի կողմնակից, նա հատկապես քննադատում էր դեմոկրատական իշխանության թերությունները, ինչն էլ, ըստ էության, պատճառ հանդիսացավ նրա դեմ դատական գործի հարուցմանը: Չնայած նրան մեղադրում էին այն բանում, որ նա չի պաշտում աստվածներին, ներմուծում է նոր աստվածություններ և իր փիլիսոփայությամբ այլասերում պատանիներին: Մ.թ.ա. 399 թ. դատարանի վճռով նա թույն է խմում և մահանում: Չնայած Սոկրատեսը հնարավորություն ուներ փախչե-

լու բանտից ու փրկվելու, սակայն նա, որպես օրինապահ քաղաքացի, հրաժարվում է այդ անօրինական քայլից:

Սոկրատեսը չի թողել գրավոր ժառանգություն, իսկ Պլատոնի, Քսենոփանեսի և Արիստոփանեսի երկերում նա ներկայանում է տարբեր կերպարներով: Արիստոփանեսը Սոկրատեսին ներկայացնում է որպես սոփեստ, բնափիլիսոփա, Քսենոփանեսը՝ որպես ավանդապահ, օգտապաշտություն քարոզող, իսկ Պլատոնը՝ որպես ճշմարտություն որոնող մտածող:

Ըստ ավանդության Սոկրատեսը երիտասարդ տարիքում այցելել է Դելֆոս, որտեղ նրան հուզել է Դելֆյան տաճարին փորագրված «Ճանաչիր ինքդ քեզ» մակագրությունը: Սոկրատեսը դա ընդունել է որպես մարդու էության, բնության, նրա կյանքի իմաստի ու նպատակի ճանաչողության կոչ, որպես խորհրդածությունների ելակետ: Նա շարունակում է սոփեստների գիծը, սակայն էական տարբերությամբ: Եթե սոփեստները, մարդուն հռչակելով որպես բոլոր իրերի չափանիշ, ժխտում էին ընդհանուր գիտելիքի, օրենքների և բարոյական սկզբունքների գոյությունը, ապա Սոկրատեսը հարկ էր համարում բացահայտել այդ ընդհանուրը, մարդկային կեցության և մտածողության բանական սկզբունքներն ու չափանիշները: Ընդ որում, դրանք պետք է փնտրել մարդկային բանականության մեջ և ոչ թե բնության մեջ: Սա չի նշանակում, թե Սոկրատեսը, մերժելով բնափիլիսոփայելու նշանակությունը, կարծում էր, որ բնությունը զուրկ է բնական հիմքերից: Եթե բնության մեջ չլիներ ընդհանուրը, միասնականը և բանականը, ապա դա նման կլիներ անաքսագորասյան խառնուրդին: Մինչդեռ փորձը ցույց է տալիս, որ բնության մեջ կա որոշակի կարգ, ներդաշնակություն և նպատակահարմարություն, որի հեղինակը ոչ թե ինքը՝ բնությունն է, այլ Միտքը կամ Աստված: Սոկրատեսի համոզմամբ բնափիլիսոփայության մեջ առկա տարբեր, իրար հակադիր տեսությունների առաջացման պատճառն այն է, որ բնափիլիսոփաները պատկերացում չունեն մարդկային գիտության վերաբերյալ: Բնության գաղտնիքները կարող է ճանաչել միայն կատարյալ իմաստությամբ օժտված էակը՝ Աստված, իսկ քանի որ մարդը չունի կատարյալ իմաստություն, ուստի նա չի կարող բնության մասին կատարյալ, բացարձակ գիտելիք ունենալ: Մարդը կարող է ճանաչել իր բնության և մտածողության օրենքները:

Ուսումնասիրելով մարդկային գիտելիքի բնույթը, Սոկրատեսը պարզեց, որ որևէ առարկայի մասին գիտելիք ունենալ, նշանակում է իմանալ տվյալ առարկայի սահմանումը կամ հասկացությունը: Առհասարակ, սոկրատեսյան փիլիսոփայության խնդիրը դառնում է հասկացությունների ձևավորման ընթացքի պարզաբանումը: Դրան հասնելու համար Սոկրատեսը կիրառում է որոշակի մեթոդաբանություն՝ սուբյեկտիվ դիալեկտիկան, որի տարրերից են՝ հեգնանքը, մաևտիկան և ինդուկցիան: Հեգնանքը սոկրա-

տեսյան բանավեճի և զրույցի վարման անկապտելի մասն է: Նա հեգնական է թե՛ իր և թե՛ ուրիշների հանդեպ: «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ» սկզբունքը, որով առաջնորդվում է նա, ուղղված է նրանց դեմ, ովքեր չգիտեն, որ չգիտեն, բայց վիճում են: Նա զրույցը վարում է այնպես, որ զրուցակիցը շուտով հայտնվում է փակուղու մեջ և սկսում է ինքն իրեն հակասել: Զրուցակցին թվում է, թե Սոկրատեսը նույնպես դիտմամբ խճճվում է, որպեսզի խճճի իրեն: Սակայն սոկրատեսյան զրույցի նպատակը զրուցակցի անգիտության, մոլորության կամ սխալի ցուցանումը չէ. զրույցի միջոցով պետք է երևան գա ճշմարտությունը: Այդ պատճառով Սոկրատեսն իր արվեստն անվանում է մանտիկա, այսինքն՝ տատմերական արվեստ, որն օգնում է ճշմարտության լույս աշխարհ գալուն:

Զրույցի ընթացքում պարզվում է, որ սահմանվող առարկան ունի բազմաթիվ կողմեր ու հատկություններ: Դրանք ընդհանրացնելու համար Սոկրատեսը կիրառում է ինդուկցիայի մեթոդը, որի դեպքում մասնավորից ընթանում ենք դեպի ընդհանուրը: Միտքն ամրագրում է ընդհանուրը՝ հենվելով իրերի նման հատկությունների վրա: Դիալեկտիկական արվեստի խնդիրը, ըստ Սոկրատեսի, ուսումնասիրվող առարկայի սեռային և տեսակային հասկացությունների հայտնաբերումն է և դրանց հարաբերման եղանակի պարզաբանումը:

Սոկրատեսը բնապաշտական (ռացիոնալիստական) բարոյագիտության հիմնադիրն է: Նա բարոյականությունը կապում է բանականության հետ, իսկ առաքինությունը նույնացնում գիտելիքի հետ: Գիտելիք ունենալ, նշանակում է լինել առաքինի: Ճշմարիտ բարոյականությունը գիտելիքն է այն մասին, թե ի՞նչ է բարիքը և օգտակարը մարդու համար, ի՞նչն է օգնում նրան հասնելու երջանկության և երանության: Գիտելիքը նույնացնելով առաքինության հետ, Սոկրատեսը կարծում էր, որ միայն գիտակցված, իմացության վրա խարսխված արարքը կարող է կոչվել բարոյական: Մի բան է, երբ մարդը բարիք է գործում անգիտակցաբար, և մի այլ բան, երբ դա անում է գիտակցաբար: Մենք բարոյական կարող ենք անվանել միայն այն մարդուն, որը ոչ թե պատահաբար, հանգամանքների բերումով է բարիք գործում, այլ իմանալով, բարիքի մասին գիտելիք ունենալով: Նույնիսկ, եթե իմացողն անբարո արարք է կատարում, այնուհանդերձ, նա բարոյական մարդ է, որովհետև գիտի, թե ինչ է անում: Սոկրատեսի «գիտելիքն առաքինություն է» դրույթն առաջին հայացքից չի դիմանում քննադատության. մարդը կարող է իմանալ, թե ինչ է քաջությունը, սակայն քաջ չլինել: Սոկրատեսը չի բացառում նման դեպքերը, սակայն կարծում է, որ միայն առաքինությանը հետևելը կարող է մարդուն հասցնել երջանկության: Եթե մարդը շեղվում է առաքինությունից, ապա նրան թվում է, թե դա օգտակար է իրեն: Սակայն դա միայն թվացյալ է, որովհետև կարճատև հաճույքը չի կա-

ղող վերջնական երջանկության երաշխիք լինել: Ամեն մի բանական էակ ձգտում է բարիքի, բայց այդ բարիքը պետք է լինի ընդհանուր, միասնական և ոչ թե անհատական: Սոկրատեսը ձգտում է բացարձակ, անպայմանական բարիքին, ուստի քննադատում է նրանց, ովքեր սահմանափակվում են մասնավոր բարիքի ձեռքբերմամբ: Նա առաքինությունը չի հիմնում հաճույքի վրա, սակայն հաճույքն էլ չի հակադրում առաքինությանը:

Սոկրատեսի մահվանից հետո նրա աշակերտները հիմնադրեցին մի շարք դպրոցներ, որոնցից առավել նշանավորներն էին կիրենյան, կինիկյան և մեգարյան դպրոցները: Միակողմանիորեն զարգացնելով Սոկրատեսի ուսմունքի կողմերից մեկը՝ այդ դպրոցները ոչ միշտ հարազատ մնացին սոկրատեսյան փիլիսոփայության ոգուն: Բացի դրանից, դրանք տարբեր կերպ էին պատասխանում Սոկրատեսի կողմից դիտարկված մի շարք հարցերի՝ ի՞նչ է բարիքը, մտահասանելի իրողությու՞ն, թե՞ հոգու առանձնահատուկ վիճակ, ինչպիսի՞ն պետք է լինի բարիքը՝ ընդհանուր, թե մասնավոր: Ո՞րն է անձնական բարիքը, կատարյալ ազատագրումը բոլոր պահանջմունքներից, թե լիակատար զգայական բավարարվածությունը և հաճույքը:

1.3. Պլատոն (427-347 մ.թ.ա.)

Սոկրատեսի ամենատաղանդավոր աշակերտը Պլատոնն էր, որի ստեղծած օբյեկտիվ իդեալիստական փիլիսոփայությունը, լինելով դարակազմիկ երևույթ, վիթխարի ազդեցություն ունեցավ հետագա դարերի փիլիսոփայական մտքի զարգացման վրա:

Պլատոնը (իսկական անունը՝ Արիստոկլես) ծնվել է մ.թ.ա. 427 թ. Աթենքի մոտ գտնվող Էգինա կղզում, արիստոկրատական ընտանիքում: Նրա հայրը սերում էր Ատտիկայի վերջին թագավոր Կոդրոսի տոհմից, իսկ մայրը՝ նշանավոր օրենսդիր Սոլոնի տոհմից: Նախնական կրթությունն ստանալուց հետո նա սկսում է զբաղվել փիլիսոփայությամբ՝ նախ աշակերտելով Հերակլիտեսի հետևորդ Կրատիլոսին, այնուհետև Սոկրատեսին: Վերջինիս մահվանից հետո Պլատոնը թողնում է Աթենքը և շուրջ մեկ տարի

ապրում Մեգարայում: Վերադառնալով Աթենք՝ նա շուտով մեկնում է Հարավային Իտալիա և Սիցիլիա: Սիրակուզայում Պլատոնը մտերմանում է Դիոնի՝ բռնակալ Դիոնիսիոսի բարեկամի հետ, որը այութագորական փիլիսոփայության հետևորդներից էր: Այստեղ Պլատոնը փորձում է կյանքի կոչել պետության մասին իր գաղափարները, սակայն պալատականների ապստամբությունների պատճառով խիստ սրվում են Դիոնիսիոսի և Պլատոնի հարաբերությունները: Բռնակալը վաճառում է Պլատոնին որպես ստրուկ, որին Էգինիայի ստրկավաճառանոցից գնում է կիրենայիկ Անիկերիդեսը: Վերջինս ազատում է Պլատոնին՝ հրաժարվելով վերցնել նրա ընկերների հավաքած գումարը: Վերադառնալով Աթենք, Պլատոնը մ.թ.ա. 487 թ. աթենացի հերոս Ակադեմոսի անունը կրող այգում հիմնում է իր դպրոցը, որն ստանում է Ակադեմիա անունը: Մեկ տարի անց, երբ մահանում է Դիոնիսիոս բռնակալը, Դիոնի հրավերով Պլատոնը կրկին մեկնում է Սիրակուզա՝ հույս ունենալով իրագործել իդեալական պետության մասին իր նախագիծը: Սակայն այս անգամ էլ նրա առաքելությունն անհաջողության է մատնվում, և նա վերադառնում է Աթենք, որտեղ էլ մ.թ.ա. 347 թ. կնքում է իր մահկանացուն:

Պլատոնը թողել է հարուստ փիլիսոփայական ժառանգություն: Նրա անունով մեզ են հասել «Սոկրատեսի ջատագովություն» ճառը, բազմաթիվ երկխոսություններ ու նամակներ: Նրա հայացքների ձևավորման վրա նշանակալից ազդեցություն են թողել Հերակլիտեսի, էլեաթների, այութագորականների և հատկապես Սոկրատեսի փիլիսոփայական ուսմունքները:

Պլատոնի օբյեկտիվ իդեալիստական փիլիսոփայության հիմքում ընկած է էյդոսների (տիպարների, էությունների, գաղափարների) մասին տեսությունը: Մինչև Պլատոնը գրեթե բոլոր հույն փիլիսոփաները համոզված էին, որ գոյություն ունի մտահասանելի կեցություն, որը ճանաչվում է բանականությամբ և գոյություն ունի զգայելի կեցություն, որը ճանաչվում է զգայություններով: Ընդսմին, մտահասանելի աշխարհը համարվում էր իսկական, ճշմարիտ կեցություն, իսկ զգայելի աշխարհը՝ անիսկական, խաբուսիկ, թըվացյալ կեցություն: Ճշմարիտ կեցությունը կարող է ճանաչվել միայն բանականությամբ, որը գործառում է ընդհանուր հասկացություններով: Ճանաչել որևէ առարկա, ասում էր Սոկրատեսը, նշանակում է իմանալ նրա հասկացությունը: Եթե զգայելի աշխարհում չկան ընդհանուր, անփոփոխ էություններ, եզրակացնում է Պլատոնը, ուրեմն դրանք գոյություն ունեն մտահասանելի աշխարհում: Այսպիսով, ի տարբերություն Սոկրատեսի, Պլատոնը զգայելի իրերի աշխարհի հետ մեկտեղ ընդունում է մտահասանելի էությունների աշխարհի գոյությունը, այսինքն՝ ընդհանուր հասկացություններին վերագրում է օբյեկտիվորեն գոյություն ունենալու հատկություն: Եթե զգայելի աշխարհի իրերն առաջանում և ոչնչանում են, ապա

մտահասանելի էություններն անփոփոխ են, անշարժ և միշտ նույնական իրենք իրենց:

Իրերի աշխարհի գոյությունը բացատրելու համար Պլատոնը ճշմարիտ կեցությունից (էյդոսների աշխարհից) զատ ընդունում է ոչ կեցության՝ նյութի գոյությունը: Այլ կերպ ասած, իրերի առաջացումը բացատրելու համար Պլատոնը ընդունում է երկու սկիզբ՝ էյդոսը և նյութը, որոնք իրենց բնույթով հավերժական են: Նյութական-զգայելի իրերի աշխարհը կեցության՝ էյդոսի և ոչ կեցության՝ նյութի փոխներգործության արդյունք է: Նյութական-զգայական աշխարհը, ըստ Պլատոնի, ոչ էյդոսների, ոչ էլ նյութի աշխարհ է, այլ դրանց արանքում գտնվող միջին կեցություն: Պլատոնի համար նյութը անորոշ, անձև, անսկզբունք, իգական-կրավորական գոյ է, էյդոսների աղավաղման սկզբունքը: Էյդոսներն իրերի էություններն են, դրանց հիմքն ու պատճառը, նախատիպերը կամ հարացույցերը, ինչպես նաև դրանց կեցության իդեալները և նպատակները: Պլատոնի կարծիքով իրերի աշխարհը ճշմարիտ կեցության ստվերն է, խեղաթյուրված պատկերը:

Պլատոնի իդեալիզմը բարոյագիտական ուղղվածություն ունի: Եթե Սոկրատեսի կարծիքով ճշմարիտ գիտելիքը ընդհանուր և օբյեկտիվ բարոյական օրենքների ճանաչողությունն է, ապա ըստ Պլատոնի, էյդոսների աշխարհը ողջ գոյի օրենքների, սկզբունքների և կանոնների աշխարհն է, միաժամանակ գեղեցկության, բարու և ճշմարտության այն իդեալական աշխարհն է, որին պետք է ձգտի մարդը: Պլատոնի կարծիքով բարիքը էյդոսների աշխարհի թագուհին է, ողջ գոյի պատճառը և նպատակը:

Ըստ Պլատոնի տեսության, էյդոսներն անփոփոխ են, անբաժանելի և միասնական, բայց միևնույն ժամանակ «հաղորդակից» են բազում իրերի: Սակայն էյդոսը չի կարող միաժամանակ գտնվել տարբեր տեղերում, ինչպես նաև չի կարող բաժանվել մասերի: Էյդոսների տեսության հետ կապված այս հակասությունն առաջին անգամ դիտարկել է հենց ինքը՝ էյդոսների տեսության հեղինակը: Հետագայում Արիստոտելը, որը քննադատել է այդ տեսությունը, գրեթե հիմնականում կրկնել է Պլատոնի կողմից բերված փաստարկները:

Տիեզերածնության ընթացքը նկարագրելիս՝ Պլատոնը պյութագորականներից փոխառում է մի շարք գաղափարներ, այդ թվում համաշխարհային հոգու մասին գաղափարը: Տիեզերքի ստեղծումը Պլատոնը ներկայացնում է հետևյալ կերպ. արհեստավոր Աստվածը՝ Դեմիուրգոսը կամ արարիչ Միտքը, ցանկանում է իր և բարիքի նմանությամբ ստեղծել (կառուցել) ողջ տիեզերքը: Նախ, նա ի սկզբանե գոյություն ունեցող նյութականից և իդեալականից կազմված խառնուրդից ստեղծում է տիեզերքի հոգին, իսկ այդ խառնուրդը սփռում է տարածությունով մեկ: Տիեզերքը, ըստ Պլատոնի,

կենդանի էակ է և ունի հոգի, որը ներթափանցված է բոլոր գոյերի մեջ: Համաշխարհային հոգին հանդես է գալիս որպես տիեզերքի շարժման պատճառ և ուժ, որպես տիեզերքի միասնության հիմք, տիեզերքի գիտակցություն, որպես միջնորդ օղակ, որի միջոցով էյդոսները խառնվում են նյութի հետ: Կյանքի լրիվության ապահովման նպատակով Աստված ձեռնամուխ է լինում կենդանի էակների ստեղծմանը: Դեմուրգոսի կամքով աստվածներն ստեղծում են մարդու բնության մահկանացու մասը՝ մարմինը, իսկ ինքը ստեղծում է անմահ մասը՝ հոգին, որը Համաշխարհային հոգու մասնիկն է: Մարդկային հոգիները սկզբում տեղավորվում են աստղերի վրա, հետո Դեմիուրգոսի կամքով իջնում են երկիր՝ միանալու մարմնի հետ: Պլատոնը, պյութագորականների նման, պաշտպանում է հոգու տեղափոխության և վերամարմնավորման գաղափարը:

Հոգու անմահության օգտին Պլատոնը բերում է մի շարք փաստարկներ: Հոգին անմահ է որպես ինքնաշարժվող և շարժվող, որպես տիեզերքի միասնությունն ապահովող սկիզբ. եթե հոգին լիներ մահկանացու, ապա տիեզերքի միասնությունը և ներդաշնակությունը կփլուզվեր: Հոգին անմահ է նաև այն պատճառով, որ ինքը հենց կյանքն է: Հոգին վերաբերում է կյանքին այնպես, ինչպես կրակը՝ ջերմությանը. կրակը անմտածելի է առանց ջերմության, իսկ հոգին՝ առանց կենդանության:

Հոգու անմահության մասին է վկայում նաև մարդկային գիտելիքի բնույթը: Պլատոնի կարծիքով իմացությունը հոգու մեջ առկա գիտելիքի վերհիշումն է: Մինչև մարմնի մեջ տեղափոխվելը, հոգին իդեալական աշխարհում ձեռք է բերել ճշմարիտ գիտելիք, որը մարմնի հետ միավորվելուց հետո թաղվել է մոռացության մեջ: Այսինքն, հոգին ի ծնե ունի բնածին գիտելիք: Եթե չունենանք այդ գիտելիքը, ապա չենք կարող դատողություններ անել իրերի մասին: Բնածին գիտելիքի առկայությունը վկայում է հոգու անմահության մասին: Այս կապակցությամբ Պլատոնը քննադատում է գիտելիքի վերաբերյալ զգայապաշտական տեսությունը, որն ընկած էր սոփեստների փիլիսոփայության հիմքում: Պլատոնը ցույց է տալիս, որ ոչ զգայությունները, ոչ կարծիքը, ոչ էլ բացատրության վրա հիմնված կարծիքը չեն կարող դիտվել որպես գիտելիք: Պլատոնը ցույց է տալիս, որ զգայապաշտը, երբ ընդունում է կեցության անընդհատ փոփոխության ու հարաբերականության դրությը, չի կարող իմանալ, թե ինչն է փոփոխվում, հետևաբար չի կարող հասկացություններով մտածել և գիտելիք ունենալ: Բացի դրանից, այս աշխարհի իրերն իդեալական աշխարհի էյդոսների ստվերներն են, ուստի զգայությունները մեզ կարող են տալ պատկերացում միայն ստվերների մասին: Քննադատելով զգայապաշտական տեսությունը, Պլատոնը, այնուամենայնիվ, դրա մեջ դրական մի կողմ է տեսնում. իրերի

ստվերները մեզ օգնում են վերհիշել և ճանաչել իսկական գիտելիքը, որն էլ հոգուն ստիպում է հիշել իր առաքելության մասին:

Սկզբնական շրջանում հետևելով Սոկրատեսին, Պլատոնը բարիքը ըմբռնում է որպես առաքինության և երջանկության, գեղեցիկի և օգտակարի, բարու և հաճույքի ներդաշնակ միասնություն: Սա էվդեմոնիստական (հուն. էվդեմոնիա - երջանկություն) տեսակետ է: Սակայն Սոկրատեսի մահվանից հետո, երբ իրական աշխարհը նրան թվում է չարիքի, անարդարության և կեղծիքի աշխարհ, և երբ մշակվում է էյդոսների մասին տեսությունը, Պլատոնը իդեալական, բարձրագույն բարիքը հակադրում է հաճույքին, զգայական բավականությանը: Նրա բարոյագիտական ուսմունքն ստանում է ընդգծված ասկետիկական (ճգնավորական) միտվածություն: Մարդու կեցության բարձրագույն նպատակը նա տեսնում է իդեալական, մտահասանելի աշխարհում, որին հասնելու համար պահանջվում է հրաժարվել ամենայն զգայական-մարմնական բարիքներից: Փիլիսոփայության նպատակը հոգու մաքրագործումն է (կատարսիս), որը մեզ ազատում է կրքերի, ցանկությունների ճնշումից, հոգուն նախապատրաստում մահվան, ինչը, ըստ Պլատոնի, նոր կյանքի սկիզբն է: Սակայն Պլատոնը հետևողականորեն չի պաշտպանում իդեալականի և զգայականի հակադրության գաղափարը: Իր վերջին շրջանի ստեղծագործություններում նա ռացիոնալիստական էվդեմոնիզմի տեսանկյունից փորձում է բարիքը ներկայացնել որպես գիտելիքի և հաճույքի, գեղեցիկի և օգտակարի միասնություն: Բարիքը բովանդակում է գեղեցիկը, կատարյալը, գիտելիքը և հաճույքը: Այս կապակցությամբ Պլատոնը քննադատում է թե՛ կիրենաիկների հեդոնիստական տեսությունը և թե՛ կինիկների «ցինիզմն» ու բացարձակ անխռովության մասին ուսմունքը:

Պլատոնի կարծիքով մարդը ապրում է հասարակության մեջ, ուստի անհատական բարիքը և երջանկությունը չեն կարող նրա համար վերջնանպատակ լինել: Բարիքը ընդհանրական է, հետևաբար մարդն իր անհատական բարիքը պետք է ենթարկի ընդհանուրի բարիքին: Այս պատճառով Պլատոնը անհատական բարոյագիտությունը լրացնում է սոցիալական բարոյագիտությամբ կամ քաղաքագիտությամբ:

Եթե գոյաբանության մեջ Պլատոնը իդեալական աշխարհը հակադրում է զգայական-նյութական աշխարհին, իմացաբանության մեջ՝ բանական գիտելիքը զգայականին, բարոյագիտության մեջ՝ ընդհանուր բարիքը մասնավորին, ապա քաղաքագիտության մեջ նա իդեալական պետությունը հակադրում է իրականում գոյություն ունեցող պետություններին: Պլատոնը դիտարկում է կառավարման չորս ձև՝ թիմոկրատիա, օլիգարխիա, դեմոկրատիա և բռնապետություն:

Իդեալական է կառավարման այն ձևը, կարծում է Պլատոնը, որը մտածում է բոլորի բարիքի մասին: Պլատոնը մարդկային հոգու երեք մասերին՝ բանականին, ցասմնականին և ցանկականին համապատասխան իդեալական պետության մեջ առանձնացնում է քաղաքացիների երեք դաս: Հոգու բանական մասին, որի առաքինությունն իմաստությունն է, համապատասխանում է կառավարիչների՝ փիլիսոփաների դասը, հոգու ցասմնական մասին, որի առաքինությունն արիությունն է, համապատասխանում է պետության պահապանների՝ զինվորականների դասը, հոգու ցանկական մասին, որի առաքինությունը ողջախոհությունն է, համապատասխանում է նյութական բարիքներ արտադրողների՝ հողագործների, արհեստավորների և առևտրականների դասը: Այսպիսով, հանուն ընդհանուր բարիքի, Պլատոնը զոհաբերում է անհատական բարիքը, հանուն պետության՝ պետությունը վերածում է զորանոցի, ճամբարի, որը գործում է սպարտական կենցաղի կանոններով: Պլատոնի իդեալական պետության մասին ուտոպիական նախագիծն այդպես էլ իրականություն չդարձավ, թեև հետագայում՝ միջնադարում, և սոցիալիզմի ու ֆաշիզմի ժամանակաշրջանում, այդ նախագծի մի շարք գաղափարներ իրականացան:

1.4. Արիստոտել (384-322 մ.թ.ա.)

Արիստոտելը՝ Պլատոնի աշակերտներից առավել ականավորը, հոգու մասին մեզ հասած առաջին համակարգված և հետևողական աշխատության հեղինակը, ծնվել է մ.թ.ա. 384/3 թ. Թրակիայի Ստագիրա քաղաքում, Մակեդոնիայից ոչ հեռու, Մակեդոնիայի արքայի բժիշկ Նիկոմախի ընտանիքում: Մ.թ.ա. 367/6 թ. Արիստոտելը մեկնում է Աթենք և ընդունվում պլատոնյան Ակադեմիա, որտեղ ուսումնառում է քսան տարի, մինչև Պլատոնի մահը:

Մ.թ.ա. 347 թ. Արիստոտելը հեռանում է Աթենքից, չորս-հինգ տարի անց ստանում է հրավեր՝ դառնալու մակեդոնյան գահաժառանգի՝ հետագայում Ալեքսանդր Մեծի դաստիարակը: 335/4 թ. Արիստոտելը վերադառնում է Աթենք, որտեղ հիմնադրում է իր փիլիսոփայական դպրոցը: Այն տեղակայված էր Լիկեյյան Ապոլոնի տաճարի հարևանությամբ և ստանում է Լիկեյ անվանումը: Արիստոտելն իր դասախոսությունները կարդում էր քայ-

լելով, ճեմելով հարակից ծառուղիներով, որի պատճառով նրա աշակերտներին անվանում էին պերիպատետիկներ՝ զբոսնողներ:

Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից հետո, մ.թ.ա. 323 թ., թուլանում է Աթենքի վրա մակեդոնիական ազդեցությունը, և ամբողջ Հունաստանում վերելք է ապրում հակամակեդոնական շարժումը: Այս դեպքերը չէին կարող անհետևանք մնալ Արիստոտելի համար, որի կապը մակեդոնական արքունիքի հետ ակնհայտ էր: Արիստոտելին մեղադրում են աստվածապղծության մեջ և նա, չսպասելով դատին, օգտագործելով Աթենքից հեռանալու իր իրավունքը, 322 թ. լքում է այն: Նա հեռանում է Էվբեոս կղզու վրա գտնվող Խալկիդա բնակավայր, որտեղ էլ մահանում է մ.թ.ա. 322 թ.:

Արիստոտելի փիլիսոփայական հայացքներն էապես տարբերվում էին նրա ուսուցչի՝ Պլատոնի տեսակետից: Առաջին հերթին քննադատության էր արժանանում «գաղափարների», «էյդոսների» մասին վերջինիս ուսմունքը: Արիստոտելը դեմ է դուրս գալիս «էյդոսների» ինքնուրույն, դրանցով արտահայտվող առարկաներից անկախ գոյության մասին պլատոնյան տեսակետին: Ըստ Արիստոտելի, ցանկացած գոյ կազմվում է «ձևի»՝ «էյդոսի» և «նյութի»՝ «հյուլեի» միավորումից և համադրումից: Գոյության այդ երկու կողմերը սերտորեն փոխկապակցված են, դրանք դրսևորվում են մեկը մյուսի միջոցով:

«Ձևի» և «նյութի» հետ համատեղ Արիստոտելի գոյաբանության մյուս կարևոր հասկացությունն է «միտքը», «խելքը», «նոուսը»: Այն, ըստ Արիստոտելի, կազմում է ձևի և նյութի բոլոր դրսևորումների՝ համաշխարհային գործընթացի նախաշարժիչ Աստծո էությունը: Աստված, ըստ Արիստոտելի, անմարմին է՝ աննյութական: Նրա համար օտար են բոլոր տիպի շարժումներն ու փոխակերպումները. Աստված զուտ «ձև» է, առանց նյութի չնչին իսկ խառնուրդի: Ինչպես տեսնում ենք, իր փիլիսոփայության այս կետում, Արիստոտելը չի կարողանում շրջանցել էյդոսների առաջնայնության Պլատոնի ուսմունքը և որպես համաշխարհային գործընթացի նախաշարժիչ ընդունում է բացարձակ աննյութական Աստծուն, որը հենց նոուսն է՝ միտքը:

Այսպիսով, ամբողջ գոյությունն, ըստ Արիստոտելի, կազմված է նյութից, որն ինքնին դեռևս որոշակի չէ, ձևից կամ կերպարից, որը որոշակիացնում է նյութը, նյութի ու ձևի միավորումից: Ընդ որում, նյութը հնարավորությունն է, իսկ ձևը էնտելեքիան, իրականությունը, փաստացի լինելիությունը:

Գոյության մասին Արիստոտելի այս հայացքները տարածվում են նաև հոգու բնույթի մասին նրա պատկերացումների վրա: Այսպես, ըստ Արիստոտելի, հոգին և մարմինը, «ձև»-ը և «նյութ»-ը կազմում են մեկ անքակտելի ամբողջականություն, որտեղ հոգին հանդես է գալիս որպես նյութը հատուկ

կերպով կազմակերպող սկզբունք, մարմինը՝ որպես հոգու դրսևորումները ապահովող նյութական հիմք: Հոգին, ըստ Արիստոտելի, մարմնի էնտելեքիան է: Դրանցից յուրաքանչյուրի գոյությունը մյուսից անկախ ուղղակի անհընար է: Իր այս գաղափարն Արիստոտելը պարզաբանում է աչքի և տեսողության օրինակով: Եթե աչքը լիներ կենդանի էակ, ապա նրա հոգին կլիներ տեսողությունը: Տեսողությունը կորցրած աչքը միայն անվանումով է այդպիսին: Եվ ինչպես բիբն ու տեսողությունը միավորվելով կազմում են աչքը, այդպես էլ մարմինն ու հոգին՝ կենդանի էակը:

Արիստոտելը հոգին դիտարկում է կենսական գործընթացի համատեքստում: Կենդանության չափանիշներն են միտքը, զգայությունը, տարածության մեջ շարժումն ու հանգիստը, ինչպես նաև շարժումը սննդառության, աճի և անկման իմաստով: Այդ չափանիշներից յուրաքանչյուրի առկայությունը խոսում է կենդանության մասին: Սակայն կենդանի օրգանիզմների յուրաքանչյուր դասին հատուկ են այդ չափանիշներից ոչ բոլորը: Այսպես, Արիստոտելը նշում է, որ սննդառության ընդունակությամբ օժտված են թե՛ բույսերը, թե՛ կենդանիները և թե՛ մարդիկ, սակայն բույսերն, ի տարբերություն կենդանիների և մարդու, չունեն զգայության ընդունակություն: Իսկ կենդանիներն էլ, մարդու համեմատությամբ զուրկ են մտածելու ընդունակությունից: Հետևաբար մարդու մեջ առկա են հոգու բուսական՝ սննդառության, կենդանական՝ զգայության, և մարդկային՝ մտածողության մակարդակները: Եվ հենց հոգու այդ ընդունակությունների շնորհիվ է մարդն ապրում, զգայում և մտածում: Հոգին, ըստ Արիստոտելի, ոչ թե նյութ և նախահիմք է, այլ իմաստ և ձև: Այն մարմնի էնտելեքիան է, պատկանում է մարմնին և չի կարող գոյություն ունենալ նրանից անկախ: Այնպես որ, հոգին անբաժանելի է մարմնից: Հետևաբար, Արիստոտելն, ինչ-որ իմաստով, մերժում է նախկինում բազմաթիվ առասպելաբանական և փիլիսոփայական ուսմունքներում լայն տարածում գտած և Պլատոնի կողմից պաշտպանվող հոգու ինքնուրույն, անմարմին գոյության գաղափարը:

Սակայն Արիստոտելը լիովին չի ձերբազատվում անմահ հոգու գաղափարից: Մարմնի քայքայմանը զուգահեռ քայքայվում են միայն հոգու բուսական և կենդանական մակարդակները: Սակայն մարդուն հատուկ բանական մակարդակը, միտքը, չի կապվում մարմնի հետ, այն մաքուր ձև է, և ինչպես տիեզերական նոուսն է գտնվում աշխարհից վեր՝ կառավարելով բնական գործընթացները, այնպես էլ մարդկային բանական հոգին մնում է նյութականից զերծ, ուղղորդելով մարդու էության դրսևորումները: Մարդու բանական հոգին, միտքն անկախ է մարմնից և ֆիզիկական մահվանից հետո շարունակում է իր գոյությունը:

Անդրադառնալով իմացության խնդիրներին Արիստոտելը նշում է, որ իմացական ընդունակություններն սկիզբ են առնում զգայական ընկալու-

մից, որն իմացության առաջնային աղբյուրն է: Հիշողությունն ապահովում է զգայությունների բովանդակությունների պահպանումն ու հետագա վերարտադրումը: Արիստոտելը տարբերակում է հիշողության երեք մակարդակներ: Ամենացածր մակարդակում զգայությունների բովանդակությունները պահպանվում են որպես պարզ մտապատկերներ, զգայվող առարկաների կրկնօրինակներ: Երկրորդ մակարդակը բուն հիշողության մակարդակն է, որտեղ պահպանվող մտապատկերները զուգորդվում են դրանց ժամանակային բնութագրի հետ: Հիշողության ամենավերին մակարդակը դատողության միջոցով իրականացող վերհիշումն է, երբ իրականանում է ներկայի և վերհիշվող անցյալի միջև զուգորդական, իմաստային կապ: Չնայած որ զուգորդումների մասին խոսում էր դեռևս Պլատոնը, Արիստոտելն առաջինն է դրանք դիտարկում որպես հիշողության մեխանիզմներ, տալիս դրանց համակարգված նկարագրությունը: Հիշողության առաջին մակարդակը հատուկ է բոլոր կենդանիներին, երկրորդ մակարդակը ժամանակի ընկալման ընդունակությամբ օժտված կենդանիներին, բարձրագույն մակարդակը՝ միայն մարդուն:

Երևակայությունն, ըստ Արիստոտելի, համապատասխան արտաքին ազդեցության բացակայության պայմաններում մտապատկերների ձևավորումն է: Ըստ նրա, որևէ խնդիր լուծելու ընթացքում բանականության անզորության պարագայում երևակայությունը փոխարինում է մտածողությանը:

Մտածողությունն, ի տարբերություն զգայությունների, ընկալում է ընդհանուրը: Արիստոտելը տարբերակում է մտածողության երկու՝ կարծիքի և գիտելիքի մակարդակները: Գիտելիքի մակարդակում տարբերակվում են մտածողության երեք տարատեսակներ: Առաջինը տրամաբանական մտածողությունն է, որը գիտելիքին հասնում է դատողությունների միջոցով: Երկրորդ մակարդակը ինտուիտիվ մտածողության մակարդակն է, որտեղ բացահայտվում են դատողության համար անհրաժեշտ նախադրյալները: Մտածողության ամենաբարձր և կատարյալ մակարդակն իմաստության մակարդակն է: Արիստոտելը տարբերակում է նաև մտածողության տեսական և գործնական տարատեսակներ: Առաջինն, ըստ նրա, ուղղված է դեպի հայեցումը, երկրորդը՝ դեպի գործունեությունը:

Արիստոտելն առանձնացնում է իմացության մի քանի աստիճաններ: Զգայությունը նրա մոտ հանդես է գալիս որպես իմացության ցածրագույն մակարդակ, այնուհետև գալիս են պատկերացումը, հիշողությունների միջոցով ուժեղացված փորձը, արվեստը և վերջապես, գիտությունը, որն ամբողջ իմացական գործընթացի գագաթնակետն է: Հենց գիտական իմացությունն է Արիստոտելը համարում բանականությամբ իրականացող ընդհանուր ճանաչում: Արիստոտելը ճշմարիտ կերպով նշում է այն փաստը, որ միայն անհատականի ճանաչման հիմքի վրա, այլ ոչ հիշողության և հայեց-

ման միջոցով ենք մենք ճանաչում ընդհանուրը, և որ մտածողությունն անքակտելիորեն կապված է գործնական գործունեության հետ: Հետագայում հենց այս տեսանկյունն է դառնում հիմնական՝ մարդկային հոգեկանի իմացական ընդունակությունների հետազոտման ընթացքում:

Արիստոտելը գտնում էր, որ մարդը դառնում է այն, ինչ կա՝ կատարելով այս կամ այն արարքը: Բնավորությունն, ըստ նրա, ձևավորվում է արարքների իրականացման ընթացքում:

Արիստոտելը տարբերակում է գործունեության կամածին և ոչ կամածին տարատեսակներ, կախված այն հանգամանքից, թե որտեղ է գտնվում գործունեության հիմքը, սուբյեկտից դու՞րս, թե՞ հենց սուբյեկտի ներսում: Կամածինն Արիստոտելի մոտ կամայինը չէ: Նա կամային է անվանում միայն բանական ձգտումով, մտադրությամբ իրականացող արարքը: Մտադրությունը ձևավորվում է դրդապատճառների համեմատությամբ: Կամային գործողությունն ազատ է, պատասխանատու և միշտ ուղղված է դեպի ապագա նպատակը, որի մասին կարող է դատել միայն միտքը, այդ իսկ պատճառով, որտեղ չկա բանականություն, այնտեղ չկա նաև կամք (օրինակ երեխաների և կենդանիների մոտ):

Պատճառականությունների բազմազան տարատեսակների մեջ Արիստոտելն առանձնացնում է պատճառականության առանձնահատուկ նպատակային տարատեսակը կամ «այն, ինչի համար կատարվում է գործողությունը»: Ըստ Արիստոտելի, «բնությունը ոչինչ իզուր չի անում» և գործընթացի վերջնական արդյունքը՝ նպատակը, նախօրոք ազդում է նրա ընթացքի վրա: Արիստոտելը պնդում էր, որ տվյալ պահի հոգեկան կյանքը կախման մեջ է գտնվում ոչ միայն անցյալից, այլև անխուսափելի ապագայից:

Արիստոտելը գտնում էր, որ զգացմունքները ուղեկցում են ցանկացած գործունեության և հանդես են գալիս որպես դրանց աղբյուր: Ընդ որում, նա նշում էր, որ բավականության և տհաճության զգացումները կամ հոգեկանի և մարմնական գործառույթների զարգացման նորմալ կամ հապաղող ընթացքի ցուցանիշներ են: Արիստոտելը աֆեկտ է անվանում մղումը, ցասումը, վախը, այսինքն այն ամենը, ինչին ուղեկցում է հաճելիությունը կամ տանջանքը: Արիստոտելի մոտ աֆեկտներն առաջ են գալիս ինչ-ինչ ազդեցություններից, ուղեկցվում մարմնական փոփոխություններով, ընդ որում, իրենք՝ աֆեկտները, ոչ չարիք են, ոչ առաքինություն, այլ ընդամենը բնութագրում են վարքի ձևը:

1.5. Օգոստինոս Երանելի (354-430)

Արևմտյան հայրաբանության ամենահեղինակավոր դեմքը Օգոստինոս Երանելին էր:

Քրիստոնեական փիլիսոփայության ձևավորման և զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ Արևմտյան եկեղեցու ուսուցիչ Օգոստինոս Երանելու փիլիսոփայական-աստվածաբանական վարդապետությունը: Ողջ միջնադարի ընթացքում Օգոստինոսը ընդունվում էր որպես անառարկելի հեղինակություն, որպես աստվածաբան փիլիսոփայի տիպար:

Օգոստինոս Երանելին ծնվել է Հյուսիսային Աֆրիկայի Տագաստե քաղաքում, կրթություն ստացել տեղի, այնուհետև Կարթագենի հռետորական դպրոցներում: Տեղափոխվելով Հռոմ, նա հրապուրվում է մանիքեականության գաղափարներով, սակայն, շուտով հիասթափվելով, փորձում է սկեպտիցիզմի մեջ փնտրել ճշմարտությունը: Ի վերջո փիլիսոփայական դեգերումներից հետո ճշմարտությունը նա տեսնում է քրիստոնեական ուսմունքի մեջ: 387 թ. նա մկրտվում է և վերադառնում ծննդավայր՝ զբաղվելով հիմնականում գրական գործունեությամբ: 396 թ. Օգոստինոսը ձեռնադրվում է Հիպոնա քաղաքի եկեղեցու եպիսկոպոս, որտեղ էլ 430 թ. մահանում է՝ թողնելով հարուստ փիլիսոփայական-աստվածաբանական ժառանգություն: Նրա փիլիսոփայական հայացքները շարադրված են «Խոստովանություն», «Երկնային քաղաքի մասին», «Կամքի ազատության մասին», «Մենախոսություններ» և այլ երկերում: Օգոստինոսի փիլիսոփայական-աստվածաբանական հայացքների ձևավորման վրա ազդեցություն է ունեցել մանիքեականների, սկեպտիկների (որոնց դեմ նա հատուկ աշխատություններ է գրել) և, հատկապես, նորպլատոնականների փիլիսոփայությունը: Սակայն նորպլատոնական փիլիսոփայությունը, որը մի շարք առումներով սկզբունքորեն տարբերվում է քրիստոնեությունից, նա վերաիմաստավորում է քրիստոնեության ոգով: Այսպես, նորպլատոնականների համար Աստված (Միասնականը) անդեմ գոյացություն է, իսկ Օգոստինոսը Աստծուն համարում է Անհատ, Անձնավորություն: Ըստ նորպլատոնականության՝ գոյություն ունեցողն արտահեղման (էմանացիայի) ճանապարհով անհրաժեշտաբար բխում է Միասնականից, մինչդեռ Օգոստինոսը կարծում է, որ Աստված արարիչ է: Նա ոչնչից, իր կամքով ստեղծում է ամեն ինչ, կեցություն պարգևում բոլոր գոյերին: Այս իմաստով որակական տարբերու-

թյուն գոյություն ունի Արարչի և արարածների միջև. Աստծո և արարված աշխարհի միջև կա անջրպետ՝ Աստված տիեզերքից դուրս գտնվող վերանցական (տրանսցենդենտալ) գոյ է: Մինչդեռ նորպլատոնիզմի մեջ, քանի որ տիեզերքը դիտվում է որպես Միասնականի արտահեղման աստիճաններ, ընդունվում է Միասնականի և տիեզերքի օրգանական միասնության մասին պանթեիստական տեսակետը: Եթե նորպլատոնականների համար բնությունը, նյութը նույնքան հավերժական են, որքան Միասնականը, ապա Օգոստինոսի համար հավերժական է միայն Աստված, իսկ արարված աշխարհը ժամանակավոր է և անցողիկ: Եթե նորպլատոնիզմի մեջ տիեզերքը գոյանում է աստիճանաբար, ապա Օգոստինոսը պաշտպանում է աստվածաշնչյան այն պատկերացումը, որ Աստված միաժամանակ է ստեղծել բոլոր գոյերին: Ի տարբերություն Աստծո մասին անտիկ փիլիսոփայության ռացիոնալիստական ըմբռնման՝ Օգոստինոսը կարծում է, որ Աստված ամենագետ է և ամենազոր, որ աստվածային կամքն առաջնային է աստվածային բանականությունից: Մարդու կամքի ազատության հարցում, քննադատելով Պելագիոսի տեսակետը, որը միտում ուներ բացարձակացնելու անձնիշխանությունը, Օգոստինոսը պաշտպանում է այն գաղափարը, որ մարդը, օժտված լինելով կամքի ազատությամբ, այնուհանդերձ, առանց Աստծո գործուն միջամտության՝ չի կարող ճիշտ ընտրություն կատարել, հետևաբար, ինքնուրույն կերպով չի կարող փրկվել:

Բնության մեջ առաջացման ու լինելության գործընթացը բացատրելու համար Օգոստինոսն ընդունում է «բանական սաղմերի» մասին ստոիկյան-նորպլատոնական տեսությունը, ըստ որի արարչագործությունից հետո Աստված բոլոր իրերի մեջ ներդնում է դրանց «բանական սաղմերը» կամ սերմերը, որոնք ներգործական բնույթ ունենալով, ժամանակի ընթացքում աճում և զարգանում են՝ երբեք չփոխելով իրենց որակական որոշակիությունը:

Հավատի և բանականության հարաբերակցության հարցը դիտարկելիս Օգոստինոսն առավելությունը տալիս է հավատին՝ առաջնորդվելով «Հավատում եմ, որպեսզի հասկանամ» սկզբունքով: Միաժամանակ նա չի ընդունում բանականության և փիլիսոփայության նկատմամբ ծայրահեղ մերժողական տեսակետը: Օգոստինոսը հստակորեն իրարից չի բաժանում հավատի և բանականության, աստվածաբանության և փիլիսոփայության ոլորտները: Բանականությունը պետք է հետևի հավատին, որովհետև դրա դրույթները բացարձակ ճշմարտություններ են: Ինչ-որ բան իմանալու համար նախ պետք է հավատալ, որ այդ առարկան գոյություն ունի: Մարդը, ինքնուրույն ի վիճակի չէ ճանաչելու ճշմարտությունը: Իմացության նպատակը, ըստ Օգոստինոսի, Աստծուն ճանաչելն է: Իսկ քանի որ մարդկային հոգին Աստծո պատկերն է, ուստի ճանաչողության առարկան ոչ թե պետք է

լինի բնությունը, այլ մարդու հոգին, որն անմնությունական, պարզ և անմահ գոյացություն է: Հոգու մեջ չկան բնածին գաղափարներ: Սակայն Օգոստինոսը բնածին գաղափարների մասին տեսության փոխարեն ներմուծում է աստվածային ճառագման կամ լուսավորության (իլյումինացիա) ուսմունքը: Երբ բանականությունը ստանում է Աստծո լույսը, լուսավորվում է և ի վիճակի է դառնում ճանաչելու բոլոր ճշմարտությունները: Այս դեպքում մարդը գիտությունից անցում է կատարում իմաստությանը, որը նախադրյալ է ստեղծում մարդու փրկության իրականացման համար: Ի դեպ, Օգոստինոսի կարծիքով, ոչ բոլոր մարդիկ են արժանանալու փրկության: Փրկության արժանի են միայն՝ Աստծու ընտրյալները:

Օգոստինոսի կարծիքով մարդկային պատմությունն ունի սկիզբ և վախճան: Ինչպես առանձին մարդու, այնպես էլ ամբողջ մարդկության կյանքը նախախնամվում և վերահսկվում է Աստծո կողմից: Պետությունը, ըստ նրա, նախնական մեղսագործության հետևանք է: Դրանից հետո պատմության ընթացքը որոշվում է երկու թագավորությունների կամ քաղաքների՝ աստվածայինի և երկրայինի (Երուսաղեմի և Բաբելոնի) միջև մղվող պայքարով: Երկնային թագավորության քաղաքացիներն ընտրյալ մարդիկ են, իսկ երկրային թագավորության քաղաքացիները նրանք են, ովքեր ձգտում են երկրային բարիքների, մերժում նախախնամությունը, Աստծուն և աստվածային օրենքները: Երկու թագավորությունները որոշ վերապահումներով կարելի է նմանեցնել երկու իշխանությունների՝ աշխարհիկի և հոգևորի, պետության և եկեղեցու հետ: Եկեղեցու գոյության նպատակը մարդկանց հավերժական փրկության հասցնելն է, ուստի պետությունը, առավել ևս քրիստոնեական պետությունը, պարտավոր է աջակցել եկեղեցուն՝ իր աստվածային առաքելությունն իրագործելու համար: Դրանով իսկ Օգոստինոսն աշխարհիկ իշխանությունը ենթարկում է հոգևոր իշխանությանը:

1.6. Ֆրենսիս Բեկոն (1561-1626)

Անգլիացի այս փիլիսոփան նոր ժամանակի մատերիալիզմի նախահայրն է և սխոլաստիկայի դեմ պայքարող մարտիկ: Նա պաշտպանում էր գիտական հետազոտության իրավունքները, մշակում գիտական մեթոդ: Գիտության բարձրագույն նպատակը Բեկոնը համարում էր մարդու իշխանու-

թյունը բնության վրա, իսկ «բնության վրա իշխել կարելի է միայն ենթարկվելով նրա օրենքներին»: Բեկոնը հանդես էր գալիս «Գիտելիքն ուժ է» նշանաբանով: Նրա կարծիքով՝ ուժեղ է նա, ով կարող է, իսկ կարող է նա, ով գիտի: Դեպի իմացություն տանող ուղին դիտարկումն է, վերլուծությունը, համեմատումը և փորձը: Նա ծնվել է բարձր աստիճանավորի ընտանիքում, սովորել Քեմբրիջի համալսարանում, որն ավարտելուց հետո անցել է դիվանագիտական աշխատանքի: 1577-1579 թթ. նա Փարիզում անգլիական դեսպանատան աշխատակիցն էր: Հոր մահից հետո Բեկոնը վերադառնում է Անգլիա և զբաղվում իրավաբանական ու քաղաքական գործունեությամբ: Այդ ասպարեզում նա լուրջ հաջողությունների է հասնում Հակոբ 1-ին Ստյուարդի օրոք՝ դառնալով անգլիական պետության լորդ-կանցլերը: Բայց շուտով Բեկոնը ստիպված էր թողնել քաղաքական գործունեությունը, պառլամենտը նրան մեղադրեց կաշառակերության մեջ և խիստ դատավճիռ կայացրեց: Սակայն թագավորի միջնորդությամբ նա ազատվեց և մինչև կյանքի վերջը զբաղվեց գիտափիլիսոփայական գործունեությամբ:

Բեկոնի փիլիսոփայական ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Նոր օրգանոն» աշխատությունը, որը նրա «Գիտությունների մեծ վերականգնում» երկի երկրորդ մասն է: Նրան են պատկանում նաև «Գիտությունների արժանապատվության և բազմապատկման մասին», «Քաղաքական և բարոյական փորձեր», «Նոր Ատլանտիդա» և այլ երկեր:

Գիտության առաջնահերթ խնդիրը Բեկոնը համարում է բնության ուսումնասիրության միջոցով մարդկանց պահանջմունքների բավարարումը: Հակադրվելով գիտելիքի մասին անտիկ և միջնադարյան ըմբռնումներին՝ Բեկոնը գիտելիքը համարում է ուժ: Բեկոնի համոզմամբ գիտելիքը պետք է ոչ թե լինի ինքնանպատակ, այլ մարդկային պահանջմունքների բավարարման միջոց: Բեկոնը տարբերակում է երկու տեսակի գիտելիք կամ փորձ՝ պտղաբեր, որի նպատակն է մարդուն անմիջական օգուտ բերելը, և լուսաբեր, որի նպատակը ոչ թե անմիջական օգուտն է, այլ բնության օրենքների իմացությունը: Բեկոնը ոչ միայն քննադատում է գիտության մասին իր նախորդների ունեցած պատկերացումները, այլև բացահայտում այն պատճառները, որոնք խոչընդոտում են գիտության առաջընթացին: Նա գիտությունների դասակարգման հիմքում դնում է մարդու ճանաչողական ունակությունները՝ հիշողությունը, երևակայությունը և բանախոհությունը: Հիշողության վրա հիմնվում են պատմական գիտությունները, որոնք ուսումնասիրում են փաստերը: Երևակայության վրա հիմնվում են գրականությունը, պոեզիան և մյուս արվեստները: Բանախոհության վրա խարսխվում են տեսական գիտությունները: Փիլիսոփայության առարկան են Աստված, Բնությունը և Մարդը: Ըստ այդմ էլ փիլիսոփայությունը բաժանվում է երեք մասի՝ բնական աստվածաբանության, բնության փիլիսոփայության և մարդաբա-

սոփայության և մոլորությունների արմատներն են՝ սոփեստությունը և ռացիոնալիզմը, էմպիրիզմը և սնոտիապաշտությունը:

Բեկոնի կուռքերի մասին ուսմունքը կոչված էր բանականությունը մաքրելու կեղծ պատկերացումներից և հող նախապատրաստելու իմացության այնպիսի մեթոդի մշակման համար, որ պիտի դառնա հայտնագործության արվեստ: Այս կապակցությամբ նա քննադատում է ինչպես «սողացող էմպիրիզմը», որը փաստերից չի կարողանում տեսական ընդհանրացումներ անել, այնպես էլ ռացիոնալիզմը, որը, անտեսելով փորձի տվյալները, գիտելիքը բխեցնում է բանականությունից: Բեկոնը դրանց հակադրում է երրորդ ուղին, որը զերծ է էմպիրիզմի և ռացիոնալիզմի թերություններից և միաժամանակ ներառում է դրանց լավագույն կողմերը: Այս երեք ուղիները Բեկոնը արտահայտում է այլաբանորեն՝ էմպիրիկները մրջյունների պես հավաքում են փաստեր, ռացիոնալիստները սարդի նման իրենցից հյուսում են սարդոստայն, իսկ մեղուն հավաքած նյութերից ստեղծում է նոր նյութ՝ մեղր:

Ի հակադրություն արիստոտելյան և սխոլաստիկական մեթոդաբանության, որն ընդհանուրից ընթանում էր դեպի մասնավորը, Բեկոնը ճշմարիտ է համարում այն ուղին, երբ միտքը մասնավոր դրույթներից ընթանում է դեպի ամենաընդհանուր դրույթները: Բեկոնը փորձի վրա հիմնված ինդուկտիվ մեթոդաբանությունը համարում է բնության իմացության բանալի, որի միջոցով մարդու բանականությունը բացահայտում է բնության օրենքները: Այսպիսով, Բեկոնի ինդուկտիվ մեթոդը նեղ փորձարարական բնույթ չունի և նախապատվությունը տալով ինդուկտիվ մեթոդին՝ նա թերագնահատում է ինչպես դեդուկտիվ մեթոդի, այնպես էլ մաթեմատիկայի դերը ճշմարիտ գիտելիքի ձեռքբերման գործում: Այնուհանդերձ, Բեկոնի մշակած գիտական մեթոդը կարևոր դեր խաղաց Նոր ժամանակի փորձարարական գիտության կայացման գործում:

1.7. Ռենե Դեկարտ (1596-1650)

Ռենե Դեկարտը ծնվել է Ֆրանսիայի Թուրեն նահանգի Լեա քաղաքում, ազնվականի ընտանիքում: Շուրջ ինը տարի սովորել է Լա Ֆլեշի ճիզվիտական դպրոցում, որից հետո իրավունք և բժշկություն, փիլիսոփայու-

նության, որի մեջ մտնում են հոգեբանությունը, տրամաբանությունը, բարոյագիտությունը և քաղաքագիտությունը: Բեկոնի կարծիքով՝ փիլիսոփայությունը և աստվածաբանությունն իրարից տարբերվում են իրենց ուսումնասիրության առարկայով, իմացության մեթոդներով և հետապնդած նպատակներով: Փիլիսոփայության մեջ փնտրել աստվածաբանություն, նույնն է, թե մեռյալների մեջ փնտրել կենդանի մնացածներին, և ճիշտ հակառակը:

Բնական օրենքների բացահայտման համար անհրաժեշտ է ունենալ նոր մեթոդաբանություն, նոր օրգանոն, քանի որ հին օրգանոնը՝ արիստոտելյան տրամաբանությունը, ի դեմս սխոլաստիկական փիլիսոփայության, ապացուցել է իր անարդյունավետությունը: Իսկ նոր մեթոդ մշակելու համար անհրաժեշտ է մաքրել մարդու բանականությունը սուբյեկտիվ նախապաշարումներից, արմատացած թյուր տեսություններից: Բեկոնի կարծիքով՝ ճշմարիտ իմացությանը խանգարում են չորս հիմնական կուռքեր կամ ուրվականներ, որոնց նա անվանում է սեռի, քարանձավի, հրապարակի և թատրոնի կուռքեր: Սեռի և քարանձավի կուռքերը բնածին են, այսինքն՝ դրանց արմատները թաքնված են մարդկային բնության մեջ, իսկ հրապարակի և թատրոնի կուռքերը ձեռքբերովի են:

Սեռի կուռքերը բնորոշ են մարդկային սեռին. դրանց առաջացման պատճառներն են՝ մարդկային ոգու միակերպությունը, դրա հավակնությունները, սահմանափակությունը, անընդհատ որոնումները, կրքերից ներշնչվելը, զգայությունների անկարողությունը, ընկալման եղանակները:

Քարանձավի կուռքերը սեռի կուռքերի անհատական շեղումներն են: Յուրաքանչյուր մարդ ունի իր «քարանձավը», իր ներաշխարհը, որն իր կնիքն է թողնում իրականության մասին դատողությունների բնույթի վրա: Քարանձավի կուռքերի առաջացումը կախված է մարդու հոգու և մարմնի հատկություններից, դաստիարակությունից, սովորույթներից, պատահականություններից և արժեքների համակարգից: Սեռի և քարանձավի կուռքերը հնարավոր չէ ամբողջությամբ արմատախիլ անել, բայց կարելի է, իմանալով մարդկանց վրա դրանց ունեցած ազդեցությունը և բնույթը, կանխել սխալների բազմապատկումը:

Հրապարակի կուռքերը հիմնականում առաջանում են բառերի, հասկացությունների սխալ գործածությունից: Մարդիկ գործածում են բառեր, որոնց ծագումը և իմաստը անորոշ է: Այդ կուռքը տիրապետող էր սխոլաստիկական փիլիսոփայության մեջ, որտեղ առատորեն օգտագործվում էին կեղծ, անորոշ, ոչինչ չասող բառեր և հասկացություններ: Հրապարակի կուռքերի հաղթահարման ձևը բառերի ու հասկացությունների ճիշտ կազմավորումը և գործածությունն է:

Թատրոնի կուռքերը բնածին չեն և մարդու բանականության մեջ են թափանցում մտացածին տեսություններից ու ուսմունքներից: Կեղծ փիլի-

թյուն և մաթեմատիկա է ուսումնասիրել տարբեր համալսարաններում: Ստանալով համակողմանի կրթություն, Դեկարտը միևնույն ժամանակ դժգոհ էր տիրապետող ուսուցման բովանդակությունից, մեթոդներից ու ձևերից: 1629-1649 թթ. Դեկարտը ապրում է Հոլանդիայում, որն այդ ժամանակվա եվրոպական ամենազարգացած երկիրն էր: Այս շրջանում հրատարակվում են նրա հիմնական փիլիսոփայական երկերը՝ «Խորհրդածություններ մեթոդի մասին», «Փիլիսոփայության հիմունքներ» և «Մետաֆիզիկական խորհրդածություններ»: 1649 թ. Շվեդիայի թագուհու հրավերով մեկնում է Ստոկհոլմ, որտեղ էլ մեկ տարի անց կնքում է իր մահկանացուն:

Ֆրանսիացի նշանավոր փիլիսոփա, բնագետ, մաթեմատիկոս Ռենե Դեկարտը «հեղաշրջում» կատարեց փիլիսոփայական մտքի պատմության մեջ՝ մարդկային բանականությունը դարձնելով փիլիսոփայական խորհրդածությունների «արքիմեդյան հենակետը»: Նախորդ փիլիսոփայության գոյաբանական ռացիոնալիզմը Դեկարտը վերափոխեց իմացաբանականի:

Բեկոնի նման՝ Դեկարտը փիլիսոփայության գլխավոր խնդիրը համարում է գիտական մեթոդի մշակումը: Սակայն, ի տարբերություն Բեկոնի, որը գիտական մեթոդի հարցը կապում է փորձի և ինդուկցիայի հետ, Դեկարտը հիմք է ընդունում բանականությունը և դեդուկցիան, մտքի հստակությունը և ինտելեկտուալ ինտուիցիան: Թեպետ Դեկարտը մազաչափ անգամ կասկած չուներ մարդու ճանաչողական կարողությունների նկատմամբ, այնուամենայնիվ, հենց կասկածն է համարում այն լավագույն զենքը, որի կիրառմամբ հնարավոր է ջախջախել թե՛ հեղինակավոր փիլիսոփայությունը և թե՛ դեպի ագնոստիցիզմ հակվող սկեպտիցիզմը: Այսինքն՝ կասկածը Դեկարտի ուսմունքում մեթոդաբանական մի հնար է, որի միջոցով նա մերժում և դեն է նետում այն ամենը, ինչը կարող է խանգարել գիտական հետազոտությանը:

Դեկարտի կարծիքով՝ պետք է կասկածի ենթարկել մարդու գիտակցության մեջ առկա բոլոր տեսակի գիտելիքների հավաստիությունը: Բայց կասկածել, շարունակում է Դեկարտը, նշանակում է մտածել: Եթե «Ես կասկածում եմ» դրույթի հավաստիությունն անհնար է կասկածի տակ առնել, նշանակում է հավաստի է նաև «Ես մտածում եմ» դրույթը: Իսկ եթե ես մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ: Եվ քանի որ մտածողության առկայությունը հավաստում է սեփական «Ես»-ի գոյությունը, ապա մտածող «Ես»-ը հանդես է գալիս որպես հոգևոր սուբստանցիա:

Դեկարտի կարծիքով՝ կասկածելն անկատար լինելու մասին է վկայում: Բայց ինչ-որ բան անկատար համարելու համար հարկավոր է պատկերացում ունենալ կատարելության մասին: Դեկարտը դիմում է Աստծո գոյության գոյաբանական ապացույցին, ըստ որի՝ Աստված գոյություն ունի, Նա ամենազոր է և բարի, հետևաբար, Նա մարդուն չի կարող տալ այնպիսի

զգայարաններ, որոնք միշտ կխաբեն նրան: Ուրեմն, հավաստի կարող ենք համարել այն, որ բացի «Ես»-ից, հոգևոր սուբստանցիայից, գոյություն ունի նաև մարմին կամ մարմնական, նյութական սուբստանցիա: Դեկարտը սուբստանցիան սահմանում է որպես մի գոյացություն, որի գոյությունը կախված է ինքն իրենից: Թեև Դեկարտը ընդունում է, որ նյութական և հոգևոր սուբստանցիաների միջև ոչ մի ընդհանրություն չկա, այնուհանդերձ, կարծում է, որ մարդը հոգու և մարմնի միասնություն է և դրանց միջև գոյություն ունի փոխազդեցություն. հոգին ազդում է մարմնի վրա և, ընդհակառակը: Հոգու և մարմնի միավորման վերաբերյալ դեկարտյան մտքերն այնքան էլ համոզիչ չէին:

Թեև Դեկարտին անվանում ենք դուալիստ, այնուհանդերձ, նա ընդունում է միայն մեկ կատարյալ, իսկական սուբստանցիա՝ Աստծուն, որը հանդես է գալիս որպես նյութական և հոգևոր սուբստանցիաների արարիչ: Սակայն նյութական և հոգևոր ոլորտների հստակ սահմանազատումը կարևոր դեր խաղաց Դեկարտի բնագիտական տեսության մշակման գործում: Ի տարբերություն անտիկ և միջնադարյան որակական ֆիզիկայի, դեկարտյան ֆիզիկան քանակական բնույթ ունի. բնությունը զուրկ է կենդանությունից, դա մի հսկա նյութական մեխանիզմ է, որը կարգավորվում է մեխանիկայի օրենքներով: Դեկարտը 17-րդ դարի մտածողներից առաջինն էր, որ փորձեց զարգացման սկզբունքը տարածել տիեզերքի վրա: Դեկարտի տիեզերաբանական տեսության համաձայն՝ սկզբում ամենուր իշխում էր «քաոսը», այսինքն՝ մանրագույն մասնիկների անկարգ շարժումը: Համընդհանուր փոխազդեցության մթնոլորտում մասնիկները նրբանում են՝ վերածվելով ավելի շարժուն տարրերի: Դրա հետևանքով առաջանում են «հողմեր», որոնք սկիզբ են դնում տարբեր կազմավորումների գոյացմանը: Այդ հողմերը երեքն են՝ հրե նյութը, որն ամենաակտիվն ու շարժունակն է, օդային նյութը, որից կազմվում են երկնային մարմինները, և երկրային նյութը, որն ավելի կոպիտն ու դանդաղաշարժն է: Թեև Դեկարտը պատրաստ էր եկեղեցու առաջին իսկ պահանջի դեպքում հրաժարվել իր վարկածից, այնուհանդերձ, նրա տիեզերածնական տեսությունը մեծ տպավորություն թողեց ժամանակի բնագետների վրա:

Դեկարտի իմացության տեսությունն անքակտելիորեն կապված է նրա ռացիոնալիստական մեթոդաբանության հետ: Դեկարտը պնդում է, որ զգայական փորձը կարող է միայն ինչ-որ իմաստով նպաստել ու օժանդակել հավաստի գիտելիքի ձեռքբերմանը: Հավաստի գիտելիքի աղբյուրը բանականությունն է. բոլոր այն գիտելիքները, որոնք հստակ են ու ակնհայտ, բանական իմացության արդյունք են, իսկ բոլոր մշուշոտ ու անորոշ գաղափարների աղբյուրն զգայական փորձն է: Ոչ մի առարկայի էություն չենք կարող ըմբռնել զգայությունների կամ փորձի միջոցով:

Դեկարտը համոզված էր, որ բացառությամբ ինտելեկտուալ ինտուիցիայի և դեդուկցիայի, իմացության մյուս բոլոր եղանակները մոլորության աղբյուրներ են: Դեկարտի կարծիքով՝ ինտուիցիան իր ակնհայտության և հավաստիության հատկություններով գերազանցում է ճշմարտության մինչ այդ գոյություն ունեցող չափանիշները: Ինտելեկտուալ ինտուիցիայի պարզագույն դրույթները իմացության շղթայի առաջին օղակն են, իսկ գիտական մյուս ճշմարտությունները դեդուկտիվ ճանապարհով ածանցվում են դրանցից, ուստի, ըստ Դեկարտի, հենց դեդուկտիվ մեթոդն էլ պետք է համարվի հավաստի ճշմարտությունների հայտնաբերման ու հիմնավորման միակ գիտական մեթոդը:

Դեկարտի ռացիոնալիստական մեթոդաբանության բաղկացուցիչ մասերից է «համընդհանուր մաթեմատիկայի» գաղափարը: Ի տարբերություն Բեկոնի, Դեկարտը համոզված էր, որ մաթեմատիկայում կիրառվող մեթոդն անհրաժեշտ է կիրառել իմացության բոլոր բնագավառներում:

Դեկարտի փիլիսոփայությունը վիթխարի ազդեցություն ունեցավ Նոր ժամանակի գիտության զարգացման վրա:

1.8. Ջոն Լոկ (1632-1704)

Զգայապաշտական-փորձարարական իմացաբանության ավանդույթների շարունակող Ջոն Լոկը ծնվել է 1632 թ. Անգլիայի Ռինգթոն քաղաքում, փաստաբանի ընտանիքում: Օքսֆորդի համալսարանում սովորելիս նա հետաքրքրվում է բնական գիտություններով, հատկապես բժշկությամբ: Լոկը մտերմանում է 17-րդ դարի նշանավոր բնագետ-փորձարար Բոյլի հետ, որի խորհրդով էլ սկսում է զբաղվել փիլիսոփայությամբ: 1667 թ. Լոկը դառնում է կոմս Շեֆթսբերիի տնային բժիշկը և որդու դաստիարակը, ինչպես նաև թագավորին ընդդիմադիր վիգերի կուսակցության առաջնորդը: Հետագայում նա զբաղեցնում է կարևոր պետական պաշտոններ: Քաղաքական հետապնդումների պատճառով շուտով Լոկը տեղափոխվում է Ֆրանսիա, որից հետո մինչև «փառահեղ հեղափոխության» տարին (1688 թ.) ապրում է

Նիդեռլանդներում: Այնուհետև, հեղափոխության ավարտից հետո, Լոկը վերադառնում է հայրենիք և սկսում հրատարակել վաղուց գրված իր աշխատությունները: 1690 թ. լույս է տեսնում նրա «Փորձ մարդկային բանականության մասին» աշխատությունը, որը գրվել էր շուրջ քսան տարվա ընթացքում: Այդ տրակտատում Լոկը քննադատում է բնածին գաղափարների մասին դեկարտյան և Քեմբրիջի նորպլատոնականների տեսությունը, հիմնավորում իր զգայապաշտական-փորձարարական իմացաբանական ուսմունքը, կոնցեպտուալիզմի դիրքերից վճռում ունիվերսալների հիմնահարցը և այլն: 1685-1692 թթ. Լոկը հրատարակում է «Նամակներ հավատի հանդուրժողականության մասին» աշխատությունը: Այդ նամակներում եվրոպական ազատամտական գաղափարախոսության հիմնադիրը պաշտպանում է պետությունից եկեղեցու անջատման գաղափարը, ինչպես նաև խղճի ազատության՝ իբրև անհատի անձնական ազատության իրավունքի մասին հիմնադրույթը: Լոկի սոցիալ-քաղաքական հայացքները շարադրված են «Երկու տրակտատ կառավարման մասին» երկում, որը մի կողմից ուղղված է պետական իշխանության անսահմանափակ իրավունքների մասին Հոբսի դրույթի, մյուս կողմից՝ պետության առաջացման վերաբերյալ աստվածաբանական տեսության դեմ: Ջոն Լոկը մահացավ 1704 թվականին:

Լոկի «Փորձ մարդկային բանականության մասին» տրակտատում դիտարկվում են իմացաբանական հարցեր: Նա քննադատում է բնածին գաղափարների մասին տեսությունը: Լոկի կարծիքով՝ մարդկային բանականության մեջ չկան ոչ բնածին գաղափարներ, ոչ էլ բնածին սկզբունքներ: Բանականության մեջ չկան նաև նախատրված պատկերացումներ՝ սկզբունքներ և աքսիոմներ, որոնք առաջնային լինեն փորձի նկատմամբ: Որպեսզի համոզվենք բնածին գաղափարների մասին ռացիոնալիստական տեսության անհիմնության մեջ, գրում է Լոկը, բավական է ցույց տալ գիտելիքի ստացման ուղին և եղանակները:

Լոկը կարծում է, որ մարդկային գիտելիքը փորձնական ծագում ունի. բոլոր տեսակի գաղափարներն ստացվում են փորձի և զգայությունների միջոցով: Ի ծնե մարդկային հոգին նման է «մաքուր տախտակի» կամ սպիտակ թղթի, որի վրա չկան ոչ նշաններ, ոչ պատկերներ և ոչ էլ գաղափարներ: Գոյություն ունի գաղափարների ստացման երկու աղբյուր՝ զգայական ընկալումները և մտքի գործունեությունը, որոնք Լոկն անվանում է զգայություններ և ռեֆլեքսիա: Արտաքին իրերը մտքին տալիս են զգայական որակների մասին գաղափարներ, իսկ միտքը բանականությանը մատակարարում է իր գործունեության գաղափարները: Եթե Լոկն ընկալման ու մտածողության օբյեկտներն անվանում է գաղափարներ, ապա դրանք առաջ բերող ուժերը կոչում է իրերի որակներ: Նա տարբերակում է երկու տեսակի գաղափարներ՝ առաջնային որակներ և երկրորդային որակներ: Առաջնային

որակի գաղափարները, ի տարբերություն երկրորդայինի, նման են իրերին: Առաջնային որակները ռեալ են, իսկ երկրորդայինները՝ նոմինալ: Լոկը համոզված է, որ ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային որակների մասին գաղափարներն առաջանում են այն ժամանակ, երբ արտաքին իրերը ներգործում են մտքի վրա:

Թե՛ առաջնային և թե՛ երկրորդային որակների գաղափարներն իրենց բովանդակությամբ պարզ են: Պարզ գաղափարների ընկալման ժամանակ բանականությունը գտնվում է պասիվ վիճակում, բայց ակտիվանում է, երբ պարզ գաղափարներից բանականությունը կազմավորում է բարդ գաղափարներ: Լոկը բարդ գաղափարները բաժանում է երեք խմբի՝ մոդուսների, սուբստանցիաների և հարաբերությունների, որոնց կազմավորման ընթացքում օգտագործվում են համապատասխանաբար համակցման, համեմատության և վերացարկման հնարները: Լոկը պնդում է, որ ընդհանուրը և համընդհանուրը բանականության ստեղծագործության արդյունք են, այսինքն՝ իրականում դրանք գոյություն չունեն: Բառերը դառնում են ընդհանուր, եթե հանդես են գալիս որպես ընդհանուր գաղափարների նշաններ, իսկ գաղափարները դառնում են ընդհանուր, եթե հանդես են գալիս որպես բազմաթիվ եզակի իրերի ներկայացուցիչներ: Լոկը նկատում է, որ ընդհանուր հասկացություններն իրենց հիմքում ունեն իրերի նման հատկությունները:

Լոկը բոլոր գաղափարները դասակարգում է երեք խմբի՝ ա) ռեալ կամ ֆանտաստիկ, բ) համապատասխան (նույնական) կամ անհամապատասխան (ոչ նույնական), գ) ճշմարիտ կամ կեղծ: Գաղափարները, ըստ Լոկի, կարող են լինել նաև պարզ և անորոշ, հստակ կամ խճողված:

Գաղափարներն ինքնին դեռևս գիտելիք կամ իմացություն չեն, այլ ճանաչողության իրականացման անհրաժեշտ հիմքեր: Ճանաչողությունը Լոկը սահմանում է որպես գաղափարների համապատասխանության և կապի կամ անհամապատասխանության և անհամատեղելիության ընկալում: Ըստ Լոկի, գիտելիքը կարող է լինել հավաստի և հավանական: Հավաստի գիտելիքն ստացվում է գաղափարների մտահայեցողական քննության ժամանակ, իսկ հավանական գիտելիքն ստացվում է փորձից և ենթարկվում փորձնական ստուգման: Քանի որ փորձը սահմանափակ բնույթ ունի, ուստի այդ կարգի գիտելիքը լինում է ոչ լրիվ, հավանական: Ըստ ակնհայտության՝ Լոկը տարբերակում է հավաստի գիտելիքի կամ իմացության երեք աստիճան՝ ինտուիտիվ, ցուցադրական (ապացուցողական) և զգայական: Թեև Լոկը վստահ է, որ մենք ճշմարիտ գիտելիք կարող ենք ունենալ արտաքին իրերի վերաբերյալ, այնուհանդերձ, նա նաև պնդում է, որ իրերի ռեալ էությունը (ներքին կառուցվածքը) անճանաչելի է:

Լոկի սոցիալ-քաղաքական փիլիսոփայության հիմքում ընկած են բնական իրավունքի և հասարակական դաշինքի ուսմունքները: Լոկը մարդկության պատմության մեջ տարբերակում է երկու վիճակ՝ բնական և քաղաքացիական, սակայն, ի տարբերություն Հոբսի, նա չի կարծում, թե բնական վիճակում «բոլորը պատերազմում են բոլորի դեմ»: Ընդհակառակը, բնական վիճակում մարդիկ, ունենալով հավասար բնական իրավունքներ, ապրում են համերաշխ ու խաղաղ կերպով, ընդհանուր փոխվստահության պայմաններում: Ի տարբերություն Հոբսի, Լոկը պաշտպանում է այն միտքը, որ եթե օրենսդիր իշխանությունը (պետությունը) չի ապահովում մարդկանց անվտանգությունը, մասնավոր սեփականությունը և չի կատարում իր պարտականությունները, ապա ժողովուրդն իրավունք ունի ապստամբելու և հրաժարվելու ենթարկվելուց: Եթե Հոբսը կողմնակից էր գերագույն իշխանության բացարձակությանը և դեմ էր դրա բաժանմանը, ապա Լոկը կառավարման լավագույն ձև է համարում սահմանադրական միապետությունը: Պետական իշխանությունը նա բաժանում է օրենսդիրի (պառլամենտ), գործադիրի (դատարան, բանակ) և դաշնակցայինի (ֆեդերատիվ): Լոկը, ինչպես և Հոբսը, եկեղեցին անջատում են պետությունից և պաշտպանում խղճի ազատությունն ու կրոնական հանդուրժողականությունը:

1.9. Գոթֆրիդ Վիլհելմ Լայբնից (1646-1716)

Գերմանացի Գոթֆրիդ Լայբնիցը ծնվել է 1646 թ., Լայպցիգում, գիտնականի ընտանիքում: Ավարտելով դպրոցը՝ նա ուսումը շարունակում է Լայպցիգի համալսարանում, որտեղ հմտանում է իրավաբանության մեջ: Դրա հետ մեկտեղ նա մեծ հետաքրքրություն է ցուցաբերում մաթեմատիկայի, տրամաբանության և փիլիսոփայության նկատմամբ: 1666 թ. նա փիլիսոփայության ֆակուլտետում պաշտպանում է մագիստրոսական թեզ, այնուհետև, նույն թվականին, Ալտդորֆի համալսարանում՝ իրավագիտության գծով դոկտորական ատենախոսություն: Հրաժարվելով դասախոսական աշխատանքից՝ Գոթֆրիդ Լայբնիցը ծառայության մեջ է մտնում բարոն Բոյնեբուրգի մոտ, ինչը հնարավորություն է տալիս տաղանդավոր գիտնականին զբաղվելու ոչ միայն գիտությամբ, այլև հասարակական-քաղաքական, կրոնական ու ազգային գործունեությամբ: Սակայն Լայբնիցի գիտափիլիսոփա-

յական հայացքների ձևավորման վրա կարևոր նշանակություն ունեցան Փարիզում անցկացրած տարիները, որտեղ նա առավել խորությամբ ուսումնասիրում է մաթեմատիկայի և բնագիտության հարցերը: 1675 թ. Լայբնիցը հայտնագործում է դիֆերենցիալ ու ինտեգրալ հաշվարկումը, հորինում մի հաշվիչ մեխանիկական սարք, որն ի վիճակի էր կատարելու բարդ մաթեմատիկական հաշվարկներ: Վերադառնալով Գերմանիա՝ նա աշխատանքի է անցնում Հաննովերի դքսի մոտ՝ որպես պալատական պատմագիր և դիվանագետ: 1700 թ. ստեղծվում է Բեռլինի գիտական հասարակությունը, որի նախագահ է ընտրվում Լայբնիցը: Գերմանացի մեծ մտածողը մահացավ 1716 թ. Հաննովերում: Նրա գլխավոր փիլիսոփայական աշխատություններն են՝ «Խորհրդածություններ մետաֆիզիկայի մասին», «Բնության նոր համակարգը», «Նոր փորձեր մարդկային բանականության մասին», «Թեոդիցիա», «Մոնադաբանություն» և այլն:

Իր գոյաբանական ուսմունքում Լայբնիցը, մնալով ռացիոնալիստական ավանդույթի շրջանակներում, յուրօրինակ ձևով համադրում է սուբստանցիայի վերաբերյալ Դեկարտի և Սպինոզայի հիմնական գաղափարները: Նա կարծում է, որ գոյություն ունեն ոչ թե մեկ կամ երկու սուբստանցիաներ, այլ բազում, անթիվ սուբստանցիաներ՝ մոնադներ (հունարեն՝ մեկ, միասնական), որոնք ոչ թե նյութական միավորներ են, այլ «իդեալական ատոմներ» կամ «մետաֆիզիկական կետեր»: Լայբնիցը ստեղծեց դեկարտյան «ես»-երի խայտաբղետ մի աշխարհ: Մոնադները կեցության հոգևոր ատոմներ են, որոնք օժտված են էներգիայով, ուժով, գործողությամբ, այսինքն՝ կյանքով: Լայբնիցը տարբերակում է երկու տիպի սուբստանցիա՝ պարզ և բարդ: Պարզ սուբստանցիաները զուրկ են մասերից, իսկ բարդերը կազմված են պարզերից: Պարզ մոնադները ո՛չ առաջանում են, ո՛չ էլ ոչնչանում. դրանք հավերժական են այնքանով, որքանով հավերժական է տիեզերքը: Ամեն մի մոնադ, միավորվելով որոշակի մարմնի հետ, կազմավորում է կենդանի օրգանիզմ, ինչը նշանակում է, որ տիեզերքը լի է կենսուժով, կյանքով: Յուրաքանչյուր մարմին զգում է այն ամենը, ինչ կատարվում է կամ պիտի կատարվի տիեզերքում: Տիեզերքի գեղեցկությունը, գրում է Լայբնիցը, կարելի է ճանաչել յուրաքանչյուրի հոգում, եթե հնարավոր լիներ թափանցել դրա գաղտնարանները:

Ամեն մի մոնադ տարբերվում է մյուսներից իր ներքին հատկություններով: Բնության մեջ չկա բացարձակապես իրար նման երկու գոյացություն. ամեն մի մոնադ անհատականություն է: Փաստորեն, բազմաթիվ սուբստանցիաների մասին լայբնիցյան ուսմունքը նրա կողմից ձևակերպված չտարբերակվող նույնության օրենքի առարկայացումն է: Ըստ այդ օրենքի՝ «բնության մեջ երբեք չի կարող լինել երկու գոյակ, որոնք կատարելապես լինեն նույնը և որոնց մեջ հնարավոր չլիներ գտնել ներքին, կամ դրանցով

Հաղթահարելով հոգևորի և նյութականի, ֆիզիկականի և իդեալականի դուալիզմը՝ Լայբնիցը ստեղծում է տիեզերքի մի օրգանական ու միասնական պատկեր, որտեղ նախասահմանված ներդաշնակության շնորհիվ տիրում է համերաշխության, փոխվստահության և լավատեսության ոգին: Այդ տիեզերքում ամեն ինչ գտնվում է անընդհատ փոփոխության մեջ, սակայն գործում է անընդհատության օրենքը, ըստ որի՝ «բնությունը չի սիրում թռիչքներ գործել»: Զարգացումը տեղի է ունենում անընդհատ ու անվերջ փոքր տարբերությունների միջոցով: Զարգացման մեխանիզմի լայբնիցյան տեսությունը (անընդհատության օրենքը, անվերջ փոքրերի հասկացությունը, պրեֆորմիզմը և այլն) մեծ ազդեցություն ունեցավ 18-19-րդ դարերի թե՛ բնագիտական և թե՛ հոգեբանական մտքի զարգացման վրա:

Նորարարական գաղափարներով հարուստ է նաև Լայբնիցի իմացաբանական տեսությունը, որը հիմնականում շարադրված է նրա «Նոր փորձեր մարդկային բանականության մասին» ծավալուն տրակտատում: Վիճաբանական այդ երկում նա, մի կողմից քննադատում է Ջոն Լոկի սենսուալիստական, մյուս կողմից՝ Դեկարտի ռացիոնալիստական տեսության որոշ ծայրահեղ դրույթներ և փորձում է ստեղծել համադրական՝ սենսուալիզմի և ռացիոնալիզմի ճշմարիտ կողմերը ներառող տեսություն: Լոկը սխալվում է, երբ կարծում է, թե մարդու հոգին ի ծնե նման է «մաքուր տախտակի»: Դրանից էլ հետևում է, որ մեր գիտելիքի ստացման հիմնական աղբյուրը փորձն ու զգայություններն են: Իսկ Լայբնիցի կարծիքով՝ մարդու հոգին երբեք չի կարող լինել «մաքուր տախտակ», քանզի ճանաչողությունն ինքնին ենթադրում է որոշ գիտելիքների առկայություն, որոնք հնարավոր են դարձնում զգայական տվյալների իմաստավորումը: Նա մերժում է ծայրահեղ ռացիոնալիստական այն դրույթը, թե բնածին գաղափարները պատրաստի վիճակում գտնվում են հոգու մեջ: Լայբնիցը մարդու հոգին նմանեցնում է միջներակներ ունեցող մարմարակտորի, որի վրա եղած գծապատկերից քանդակագործը ստեղծում է քանդակը: Լոկի այն փաստարկին, թե եթե գոյություն ունենային բնածին գաղափարներ, ապա մարդը պետք է դրանք մշտապես գիտակցեր, Լայբնիցը պատասխանում է, որ դրանք գոյություն ունեն «փոքր պերցեպցիաների» տեսքով, և գիտակցելու համար անհրաժեշտ է ուշադրություն: Բնածին գաղափարների կամ «կայծերի» բոցավառման համար կարևոր դեր են խաղում զգայությունները: Սակայն զգայական իմացությունը սահմանափակ բնույթ ունի, այն հենվում է մասնավոր օրինակների վրա, որոնցից հնարավոր չէ բխեցնել գիտելիքի համընդհանրականությունը: «Մտքի մեջ չկա ոչինչ, որ նախօրոք եղած չլինի զգայությունների մեջ» սենսուալիստական դրույթին Լայբնիցն ավելացնում է հետևյալը՝ «Բացառությամբ բուն մտքի»: Դա նշանակում է, որ գիտելիքի

պայմանավորված տարբերություններ»: Լայբնիցը տարբերակում է երեք կարգի մոնադ՝ պարզ («մերկ»), հոգի և ոգի: «Մերկ» մոնադներն ունեն մութ ու աղոտ պատկերացումներ, հոգի մոնադները՝ պերցեպցիա, զգայություն, հիշողություն, իսկ ոգի մոնադները՝ նաև բանականություն: Բարձրագույն ակտիվությամբ օժտված են ոգի մոնադները, այսինքն՝ մարդիկ, որոնք ընդունակ են պերցեպցիան վերածելու ապերցեպցիայի, այսինքն՝ գիտակցումից անցնելու ինքնագիտակցության կամ ինքնաճանաչողության: Եթե հոգի մոնադները, որպես կենդանի հայելիներ, արտացոլում են արարված գոյերը, ապա ոգի մոնադները, բացի դրանից, արտացոլում են նաև տիեզերքի արարչին, ընդունակ են ճանաչելու տիեզերական համակարգը և նմանակելու Աստծուն՝ իրենց ստեղծագործական ձգտումներով, քանի որ յուրաքանչյուր ոգի իր ոլորտում կարծես թե մի փոքրիկ աստվածություն լինի: Ոգիների համախմբությունը, ըստ Լայբնիցի, ներկայանում է որպես կատարյալ մի թագավորություն, տիեզերական միապետություն, որը կառավարվում է ամենակատարյալ Միապետի՝ Աստծո կողմից:

Քանի որ Լայբնիցն ի սկզբանե ընդունում է ոչ թե տիեզերքի սուբստանցիոնալ միասնության, այլ բազմազանության և տարբերության գաղափարը, ընդսմին պնդելով, որ մոնադներն անկախ են մեկը մյուսից և «չունեն լուսամուտներ, որոնց միջոցով ինչ-որ բան կարողանար մուտք գործել նրանց մեջ կամ նրանցից դուրս գալ», ուստի նրա առջև խնդիր է ծառանում՝ պարզել, թե ինչպես է սուբստանցիոնալ տարբերությունից գոյանում համատիեզերական միասնությունը: Օկազիոնալիզմի այն բացատրությունը, թե Աստված ամեն անգամ, ներգործելով մոնադների վրա, կարգավորում է նրանց ներդաշնակ փոխհարաբերությունները, Լայբնիցը չի ընդունում՝ պատճառաբանելով, որ նման դեպքում Աստված նման կլիներ վատ ժամագործի կամ մեխանիկի: Լայբնիցը կարծում է, որ Աստված տիեզերքն ստեղծել է կատարյալ, գեղեցիկ և կարգավորված և ի սկզբանե կարգավորել է մոնադների փոխհարաբերությունները: Նախասահմանված ներդաշնակությունն ու միասնությունն անփոփոխ են ու հավերժական: Թեև մոնադները ենթակա չեն ֆիզիկական ներգործության, այնուհանդերձ, նրանք իրարից մեկուսացված չեն: Լինելով հոգևոր ատոմներ՝ մոնադների փոխներգործություններն իդեալական բնույթ ունեն: Նախասահմանված ներդաշնակության տեսության միջոցով Լայբնիցը բացատրում է նաև հոգու և մարմնի միասնության փաստը: Հոգիները գործում են համապատասխան վերջնական (նպատակային) պատճառների օրենքների՝ ձգտումների, նպատակների միջոցով, իսկ մարմինները՝ գործող պատճառների օրենքների համաձայն: Նրանց գործողությունները ներդաշնակ են, որովհետև թե՛ մեկը և թե՛ մյուսը միևնույն տիեզերքի դրսևորումներն են:

համընդհանրականությունն ու անհրաժեշտությունն ապահովում է միայն բանականությունը:

Գիտելիքը, ըստ Լայբնիցի, կարող է լինել մութ ու պարզ, աղոտ ու հստակ, սիմվոլիկ և ինտուիտիվ: Ինտուիտիվ գիտելիքը հենվում է նույնության օրենքի վրա: Ինտուիտիվ ճշմարտությունները հավերժական են, որովհետև անկախ են փորձի արդյունքներից:

Բացի հավերժական ճշմարտություններից՝ Լայբնիցը ընդունում է նաև փաստի ճշմարտությունների գոյությունը, որոնք հիմնվում են բավարար հիմունքի օրենքի վրա: Ըստ այդ օրենքի՝ ամեն մի փաստի գոյության համար կա բավարար մի հիմք, որն էլ պետք է բացահայտել: Այսինքն՝ փորձը բավարար է փաստի ճշմարտությունների հիմնավորման համար: Թեև փաստի ճշմարտությունների ոլորտն ավելի ընդգրկուն է, այնուամենայնիվ, իմացական ավելի մեծ արժեք են ներկայացնում հավերժական ճշմարտությունները:

ՄԱՍ 2. ԳԻՏԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(կազմող՝ Գ. Ս. Պետրոսյան)

2.1. Էռնստ Վեբեր (1795-1878)

Գերմանացի ֆիզիոլոգ. զգայությունների հոգեֆիզիկական չափումների և դրանց մեթոդների մշակման նախորդ: Ծնվել է 1795 թ. գերմանական Վիթթենբերգ քաղաքում, աստվածաբանության պրոֆեսորի ընտանիքում: Սովորել է Լայպցիգի համալսարանում, ուսումնասիրել անատոմիա և ֆիզիոլոգիա: 1815 թ. ստանում է դոկտորական աստիճան:

Նախքան Վեբերի հետազոտությունները, որպես զգայությունների ուսումնասիրության առարկա հանդես էին գալիս հիմնականում տեսողական և լսողական զգայությունների օրինաչափությունները: Սակայն Վեբերն իր փորձարարական հետազոտությունները տարածում է շոշափողական զգայությունների վրա՝ փորձելով գտնել դրանց առաջացման համար անհրաժեշտ գրգռիչների քանակական բնութագիրը: Վեբերի գիտական կառուցումների հիմնական հասկացությունը «զգայության շեմ» հասկացությունն է, որով նշանակվում է ազդող ֆիզիկական գրգռիչի այն սահմանային մեծությունը, որի պայմաններում հնարավոր է որոշակի զգայության առաջացում: Վեբերի հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ մաշկի վրա միաժամանակ ազդող երկու ֆիզիկական գրգռիչները, կախված դրանց հեռավորությունից, կարող են զգայվել որպես մեկ կամ երկու գրգռիչների ազդեցություն: Երկու գրգռիչների միջև ընկած հեռավորության այն սահմանային մեծությունը, երբ դրանց ազդեցությունները զգայվում են որպես առանձին գրգռիչների ազդեցություններ, Վեբերն անվանեց երկկետային շեմ հասկացությամբ: Սահմանային հեռավորությունից առավել մոտ գտնվելու դեպքում առանձին գրգռիչների ազդեցությունները միաձուլվում են և ընկալվում/ զգայվում որպես մեկ գրգռիչի ազդեցություն:

Վեբերը բացահայտում է նաև այն մեծությունը, որը թույլ է տալիս զգալ երկու տարբեր գրգռիչների միջև առկա քանակական տարբերությունը կշռի մկանային զգայության/ընկալման ժամանակ: Հետազոտություններն իրականացվում են տարբեր կշիռ ունեցող կշռաքարերի միջոցով: Հետազոտվողը, բարձրացնելով, կամ ձեռքի վրա պահելով երկու տարբեր կշռաքարեր, պետք է զգար դրանց տարբերությունը: Հետազոտությունների

արդյունքում պարզվեց, որ, եթե կշռաքարերի կշռի տարբերությունն անշան է, ապա հետազոտվողն այն չի զգում: Սակայն կշիռների տարբերության որոշակի մեծությունից սկսած այն դառնում է զգայելի: Զգայվող նվազագույն տարբերությանը Վեբերը տալիս է «հազիվ նկատելի տարբերություն» անվանումը: Հետազոտության արդյունքում պարզվեց, որ անկախ կշռաքարերի բացարձակ ծանրությունից/կշռից/քաշից, հազիվ նկատելի տարբերությունը հաստատուն մեծություն է և կազմում է առաջարկված սկզբնական կշռի 1/40-րդ մասը:

Վեբերի հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ զգայությունների և դրանք առաջ բերող ֆիզիկական գրգռիչների միջև բացակայում է որևէ անմիջական համապատասխանություն, այսինքն՝ դրանց կախվածությունը հարաբերական է:

Չնայած որ Վեբերին հետաքրքրում էին առավելապես զգայությունների ֆիզիոլոգիական գործընթացները, ֆիզիկական գրգռիչների և զգայությունների փոխհարաբերությունների քանակական բնութագրերը, այդուհանդերձ անհնար է անտեսել այն ազդեցությունը, որն ունեցան Վեբերի հետազոտություններն ու հայտնագործությունները զգայությունների փորձարարական հետազոտությունների հետագա զարգացման, հոգեբանական հետազոտություններում մաթեմատիկական և փորձարարական մեթոդների ներմուծման վրա:

2.2. Գուստավ Թեոդոր Ֆեխներ (1801-1887)

Գերմանացի հոգեբան, փիլիսոփա, հոգեֆիզիկայի հիմնադիրը: Ծնվել է 1801 թ., Գերմանիայում: 1817 թ. ընդունվում է Լայպցիգի համալսարանի բժշկական ֆակուլտետ, որտեղ դասախոսություն էր կարդում Վեբերը, որի ազդեցությունն ակնհայտորեն նկատելի է Ֆեխների հետագա գիտական գործունեության վրա:

Ֆեխներն ուներ գիտական հետաքրքրությունների մեծ շրջանակ: Նա հետաքրքրվում է փիլիսոփայական խնդիրներով, ուսումնասիրում և դասավանդում ֆիզիկա, մաթեմատիկա, քիմիա: 30-ականների վերջերին նրան սկսում են հետաքրքրել զգայությունների հետ կապված խնդիրներ: 1835 թ. Ֆեխները դառնում է Լայպցիգի համալսարանի պրոֆեսոր: Սակայն այդ

ժամանակներում նրան տանջում էր ֆիզիկական և հոգեկան տկարությունը: 1844 թ. առողջական վիճակի պատճառով Ֆեխներն ազատվում է աշխատանքից: Այդուհանդերձ, հետագայում նրա առողջությունը լավանում է և մնում հարաբերականորեն կայուն մինչև նրա կյանքի վերջը: Ֆեխները մահացել է 1887 թ. նոյեմբերի 18-ին Լայպցիգում:

Հենվելով Վեբերի հայտնագործությունների վրա և շարունակելով դրանցում նախանշած ուղին, Ֆեխները բացահայտում է, որ գրգռման ուժգնացումը չի հանգեցնում զգայության համարժեք ուժգնացման: Այն դեպքում, երբ գրգռումը մեծացվում է երկրաչափական պրոգրեսիայով, զգայությունն ուժգնանում է թվաբանականով: Հետևաբար, գրգռման և զգայության ինտենսիվությունների միջև կախվածությունն ունի հարաբերական բնույթ:

Ֆեխները հայտնագործում է զգայությունների բացարձակ շեմը, որից դուրս գտնվող գրգռիչների ազդեցությունը չի առաջացնում որևէ զգայական պատկեր, կամ առաջացնում է անորոշ զգայություն: Նրա մյուս հայտնագործությունը զգայության տարբերակման շեմն է: Այս հասկացությամբ նշանակվում է երկու առանձին գրգռիչների տարբերության այն մեծությունը, որն առաջ է բերում զգայության քանակական փոփոխություն:

Այսպիսով, Ֆեխները բացահայտում է, որ զգայությունների քանակական արժեքը կախված է գրգռիչների քանակական արժեքից, և առաջինների քանակական բնութագիրը որոշելու համար անհրաժեշտ է ուղղակի որոշել գրգռիչի մեծությունը: Հետևաբար, զգայությունները նյութական աշխարհից կտրված հոգեկան գործառույթներ չեն, իսկ հոգեկան և ֆիզիկական աշխարհները սերտորեն փոխկապակցված են: Եվ, ընդհանրապես, Ֆեխները գտնում էր, որ ամբողջ Տիեզերքը շնչավորված է, և հոգևորը կազմում է դրա «լուսավոր» կողմը: Իսկ նյութականը Տիեզերքի «ստվերային» կողմն է: Նրա այս հայացքները քննադատվում են մատերիալիստական միտում ունեցող գիտնականների կողմից, և Ֆեխները փորձում է հետազոտությունների միջոցով, մաթեմատիկական ու փորձարարական մեթոդներով հիմնավորել Տիեզերքի շնչավորության գաղափարը: Եթե աշխարհն ունի երկու՝ լուսավոր և ստվերային կողմեր, ապա հնարավոր է տալ դրանց միջև առկա հարաբերությունների քանակական բնութագիրը: 1860 թ. հրատարակվում է Ֆեխների «Հոգեֆիզիկայի տարրեր» աշխատությունը, որտեղ նա ներկայացնում է հոգևոր և նյութական աշխարհների, զգայությունների և դրանց համար անհրաժեշտ ֆիզիկական ազդակների փոխհարաբերությունների հետազոտության մեթոդները: Սակայն անհրաժեշտ է տարբերակել հոգեֆիզիկան և հոգեֆիզիոլոգիան: 1882 թ. իր վերջին աշխատության մեջ Ֆեխները նշում է, որ հոգեֆիզիկան ունի երկու մակարդակ՝ արտաքին և ներքին: Առաջինը վերաբերում է ֆիզիկական և հոգեկան երևույթների փոխհարաբերությանը և կարող է ստանալ մաթեմատիկական հիմնավո-

րում, այն դեպքում, երբ ֆիզիոլոգիական և հոգեկան երևույթների փոխհարաբերություններին վերաբերող ներքին մակարդակը մաթեմատիկորեն հիմնավորելի չէ:

Գուստավ Թեոդոր Ֆեխներն այն հազվադեպ մտածողներից է, որոնք փորձում էին միավորել բնագիտական, փորձարարական և փիլիսոփայական, մետաֆիզիկական մեթոդները, այդ ձևով կառուցել աշխարհի բազմակողմանի պատկերը: Եվ չնայած իրենց մետաֆիզիկական միտվածությանը, Ֆեխների հետազոտություններն ու դրանց արդյունքները մեծ նշանակություն ունեցան փորձարարական հոգեբանության հետագա զարգացման համար:

2.3. Հերման ֆոն Հելմհոլց (1821-1894)

Գերմանացի ֆիզիկոս և ֆիզիոլոգ, որի ֆիզիոլոգիական հետազոտություններն էապես նպաստեցին գիտական հոգեբանության առաջացմանը: Ծնվել է գերմանական Պոտսդամ քաղաքում 1821 թ. օգոստոսի 31-ին: 17 տարեկանում ընդունվում է Բեռլինի բժշկական ինստիտուտ, որն ավարտելուց հետո անցնում է զինվորական ծառայության: Աշխատել է Քյոնիգսբերգի, Բոննի, Հայդելբերգի և Բեռլինի համալսարաններում՝ դասավանդելով ֆիզիկա, մաթեմատիկա և ֆիզիոլոգիա: Հետազոտելով զգայությունների ֆիզիոլոգիական առանձնահատկությունները հրատարակում է «Ֆիզիոլոգիական օպտիկա» և «Տոնի ընկալում» աշխատությունները: 1850 թվականին հայտնագործում և կառուցում է առաջին օֆթալմոսկոպը, որի միջոցով հնարավոր էր ուսումնասիրել կենդանի մարդու աչքի ցանցաթաղանթը:

Ուսումնասիրելով գորտի բնազդային հակազդեցությունն արտաքին գրգռմանը, Հելմհոլցը բացահայտեց, որ նյարդային իմպուլսն ունի տարածման որոշակի, չափելի արագություն: Նախքան այդ հետազոտությունները, գիտության մեջ ընդունված էր, որ նյարդային իմպուլսը տարածվում է ակնթարթորեն, այսինքն այնպիսի արագությամբ, որ հնարավոր չէ այն չափել: Իր փորձերի մեջ փոփոխելով նյարդի գրգռման ենթարկվող հատվածի և շարժվող մկանի միջև տարածությունը, Հելմհոլցը պարզեց, որ այդ տարածության մեծացմանը զուգընթաց, դանդաղում է նաև հակազդեցությունը:

Նա կարողացավ փորձարարական մեթոդով չափել նյարդային իմպուլսի տարածման արագությունը. այն հավասար է 90 ֆութ/վայրկյանում:

Հելմհոլցի այս հայտնագործության արդյունքում պարզվեց, որ կենտրոնական նյարդային համակարգում ընթացող գործընթացները նախորդում են դրանց հետևանք հանդիսացող մկանային շարժումներին և այդ հակազդման համար անհրաժեշտ է որոշակի ժամանակահատված:

Բավականին արժեքավոր են նաև Հելմհոլցի կողմից իրականացված տեսողական և լսողական զգայությունների հոգեֆիզիոլոգիական հետազոտությունները: Դրանց հիմնական նպատակը ֆոկուսավորման (մի կիզակետում հավաքման) ընթացքում ակնամկանների աշխատանքը, ռեզոնանսի (անդրադարձման), լսողության միջոցով տարբեր տոների և ձայնային ներդաշնակության ընկալման օրինաչափությունների բացահայտումն էր: Հելմհոլցը վերանայում և լայնացնում է գունային տեսողության տեսությունը, ամրապնդելով Թոմաս Յունգի կողմից առաջադրված եռաբաղադրիչ գունային տեսողության տեսակետը, ըստ որի բոլոր գույներն առաջանում են երեք հիմնական գույների՝ կարմրի, կանաչի և մանուշակագույնի խառնուրդից: Այդ տեսությունը հետագայում ստանում է Յունգ-Հելմհոլցի տեսություն անվանումը:

Զուտ հոգեբանական տեսանկյունից առավել արժեքավոր են Հելմհոլցի անգիտակցական մտահանգումների և տարածության ընկալման խնդիրներին վերաբերող հետազոտությունները: Ըստ Հելմհոլցի՝ իրականության ընկալումը կախված է մարդու մոտ արդեն առկա ընկալման սովորական միջոցներից, ինչի հետևանքով բոլոր դեպքերում պահպանվում է ընկալելի աշխարհի անընդհատությունը: Նույն կերպ և տարածության ընկալումը, որի ընդունակությունը, Հելմհոլցի կարծիքով, ձևավորվում է կյանքի ընթացքում և պայմանավորված է շրջապատի տեսողական պատկերների և ակնամկանների շարժման ընկալման համադրումով:

Չնայած այն հանգամանքին, որ Հելմհոլցի ժամանակներում դեռևս զարգացած չէին հոգեբանության փորձարարական մեթոդները, և մարդկանց նկատմամբ նրա բազմաթիվ գիտափորձերն անարդյունք էին, այնուամենայնիվ, զգալի է Հելմհոլցի գործունեության նշանակությունը գիտական հոգեբանության հետագա զարգացման համար:

2.4. Վիլհելմ Վունդտ (1832-1920)

Գերմանացի փիլիսոփա, հոգեբան, ֆիզիոլոգ: Առաջին հոգեբանական փորձարարական լաբորատորիայի հիմնադիրը: Ծնվել է 1832 թ. օգոստոսի 16-ին Գերմանիայի Բադեն քաղաքում: Դպրոցական տարիքում աչքի չէր ընկնում առաջադիմությամբ: 19-րդ դարի հիսունականների սկզբներին Հայդելբերգի, Թյուբինգենի և Բեռլինի համալսարաններում ուսումնասիրում է բժշկագիտություն/բժշկություն: 1855 թվականին ստանում է դոկտորի աստիճան: Միառժամանակ դասախոսում է Հայդելբերգի համալսարանում, որպես լաբորանտ աշխատում Հերման ֆոն Հելմհոլցի մոտ: Այդ շրջանում արդեն իսկ սկսում է հետաքրքրվել հոգեֆիզիոլոգիական և հոգեբանական խնդիրներով: 1858-1862 թթ. հրատարակում է զգայությունների մասին հոդվածների շարք, որտեղ նշում է, որ հոգեբանությունը գիտություն է բնության մասին, հետևաբար այն պետք է կիրառի բնագիտական մեթոդներ: Այս հոդվածներում նա առաջին անգամ կիրառում է փորձարարական հոգեբանություն հասկացությունը: 1863 թ. լույս է տեսնում Վունդտի «Դասախոսություններ մարդու և կենդանիների հոգու մասին», 1873-1874 թթ.՝ «Ֆիզիոլոգիական հոգեբանության հիմունքներ» գիրքը:

1875 թ. Վունդտը դառնում է լայպցիգյան համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր: 1879 թ. Լայպցիգում հիմնում է առաջին հոգեբանական լաբորատորիան, որտեղ փորձարարական մեթոդներով հետազոտվում էին զգայությունները, հակազդման օրինաչափությունները, ուշադրությունը, զուգորդումները (ասոցիացիաները), մարդու պարզագույն զգացմունքները: 1881 թ. Վունդտը հիմնադրում է «Փիլիսոփայական ուսումնքներ» պարբերականը, որը 1906 թ. վերանվանում է «Հոգեբանական ուսումնքներ» անվանմամբ:

Առաջին հոգեբանական լաբորատորիայի հիմնադիրը գտնում էր, որ փորձարարական հետազոտության կարելի է ենթարկել միայն պարզագույն հոգեկան գործընթացները՝ զգայությունը, ընկալումը: Սակայն առավել բարդ հոգեկան երևույթներ, ինչպիսիք են հիշողությունը, մտածողությունը, որոնք կապված են բազմաթիվ հասարակական մշակութային գործոնների հետ, անհրաժեշտաբար պետք է դիտարկվեն պատմամշակութային համա-

տեքստում: 1900-1920 թթ. հրատարակում է մշակութապատմական հոգեբանությանը վերաբերող «Ժողովուրդների հոգեբանություն» տասնհատորյակը, որտեղ նա անդրադառնում է մշակույթի պատմական զարգացման և մարդու հոգեկան փոխհարաբերությունների բազմաթիվ խնդիրների:

Վունդտը մահացել է 1920 թ. օգոստոսի 31-ին, թողնելով հսկայական գիտական ժառանգություն:

Վունդտի փորձարարական հետազոտությունների առարկան գիտակցության բովանդակությունն էր, ավելի ճիշտ՝ այդ բովանդակության այն հատվածը, որը մարդուն է տրվում նախկին փորձից անկախ անմիջական փորձի միջոցով: Այդպիսիք են գույների ընկալումը, հարմարավետության և անհարմարության զգայությունը (զգացումը) և այլն:

Ըստ Վունդտի՝ գիտակցության այդպիսի բովանդակությունները կազմված են բազմաթիվ տարրերից, որոնց առանձին հետազոտության արդյունքներում հնարավոր էր բացահայտել գիտակցության էությունը (այստեղից էլ Վունդտի հոգեբանական տեսության «Ստրուկտուրալիզմ» անվանումը: Վունդտը նույնիսկ փորձում էր կառուցել մտածողության տարրերի պարբերական աղյուսակ): Նախ անհրաժեշտ էր պարզել այդ տարրերի բնույթը, այնուհետև դրանց միացման (միավորման) կապերի առանձնահատկությունները և, վերջապես, բացահայտել այն սկզբունքները, որոնք ընկած են այդ միավորման հիմքում: Եվ հենց այս վերջին կետն է, որ տարբերում է Վունդտի տեսակետն՝ ասոցիանիստական տեսություններից:

Չնայած այն հանգամանքին, որ Վունդտը կարևոր նշանակություն էր տալիս գիտակցության առանձին տարրերի հետազոտությանը, նա չէր ժխտում, որ ընկալման մեջ տրվող իրականությունը ներկայանում է որպես մեկ ամբողջություն, որտեղ միավորվում են բազմաթիվ տարրեր: Ըստ Վունդտի՝ այդ միավորման հիմքում ընկած է, այսպես կոչված, ստեղծագործ (ստեղծարար) համադրության սկզբունքը: Այդ համադրության արդյունքում տարբեր առանձին տարրերի միավորումից առաջ է գալիս նոր որակ: Իսկ ցանկացած բարդ հոգեկան երևույթ ավելին է, քան իր իսկ բաղադրիչների հասարակ գումարը: Գիտակցության տարրերի միավորման գործընթացին Վունդտը տալիս է «ապերցեպցիա» ընդհանուր անվանումը:

Ընդ որում, ապերցեպցիան Վունդտի կողմից չի դիտարկվում որպես պասիվ գործընթաց: Նրա կարծիքով, մարդկային ուղեղն օժտված է սեփական բովանդակությունների համակարգման, կազմակերպման ընդունակությամբ. գիտակցական տարրերի միավորումն իրականանում է ուղեղի «կամքով»: Այդ իսկ պատճառով Վունդտի տեսությունը հաճախ ստանում է վոլյունտարիզմ (լատ. voluntas - կամք) անվանումը:

Սակայն հնարավոր չէր իրականացնել գիտակցության բովանդակությունների հետազոտություն, օգտվելով բնագիտական մեթոդներից: Այդ

իսկ պատճառով Վունդտը հենվում է ինտրոսպեկցիայի կամ, ինչպես նա ինքն է անվանում, ներքին պերցեպցիայի մեթոդի վրա: Այս մեթոդը փորձարկվողի կողմից սեփական գիտակցության հայեցման գործընթացն է: Եվ չնայած, որ այն դեռևս հեռու էր գիտական օբյեկտիվ մեթոդներից, այնուամենայնիվ Վունդտը մշակում է ինտրոսպեկտիվ գիտափորձ կատարելու այնպիսի կանոններ, որոնք կոչված էին ապահովելու հետազոտության օբյեկտիվության առավելագույն մակարդակ:

Վիլհելմ Վունդտի հիմնադրած լաբորատորիան, նրա հետազոտությունները և, ընդհանրապես, ամբողջ գիտական գործունեությունը դարձավ որպես մեկնարկիչ՝ հոգեբանության և մասնավորապես գիտական հոգեբանության հետագա վերելքի համար:

2.5. Ֆրանց Բրենթանո (1838-1917)

Ավստրիացի փիլիսոփա, ում հայացքները մեծապես նպաստեցին ֆունկցիոնալիզմի, ֆենոմենոլոգիայի, գեշտալտ և հումանիստական հոգեբանական ուղղությունների առաջացմանը:

Ծնվել է 1838 թ. հունվարի 16-ին Գերմանիայի Մարիենբերգ քաղաքում: Բեռլինի, Մյունխենի և Տյուբինգենի համալսարաններում ուսումնասիրում է աստվածաբանություն: 1864 թ. ձեռնադրվում է որպես կաթոլիկ հոգևորական, սակայն եկեղեցական որոշ դրույթների հետ անհամաձայնության պատճառով զրկվում է իր հոգևոր աստիճանից: 1872 թվականին աշխատում է Վյուրցբուրգի համալսարանում՝ որպես պրոֆեսոր, իսկ երկու տարի անց տեղափոխվում Վիեննայի համալսարան: Նրա ուսանողների շարքին են պատկանում այնպիսի հոգեբաններ, ինչպիսիք են Կարլ Շտուֆֆը, Զիգմունդ Ֆրոյդը: 1874 թ. լույս է տեսնում Բրենթանոյի ամենահայտնի «Հոգեբանությունը էմպիրիկ տեսանկյունից» աշխատությունը, որտեղ նա հեռակա կերպով բանավիճում է Վիլհելմ Վունդտի հետ: Որոշ ժամանակ ապրում է Իտալիայում, չզբաղեցնելով ոչ մի ակադեմիական պաշտոն: Ֆրանց Բրենթանոն մահացել է 1917 թ. մարտի 17-ին, Ցյուրիխում:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ Բրենթանոյի տեսակետը հակադիր էր Վունդտի տեսությանը: Հենվելով արիստոտելյան փիլիսոփայու-

թյան վրա Բրենթանոն առաջադրում է գիտակցության հոգեբանության նոր տարբերակ, որի սահմաններում հստակորեն տարբերակվում են ներքին հոգեկան փորձը և արտաքին ֆիզիկական աշխարհը, փորձի կառուցվածքային և գործողութային կողմերը: Ըստ Բրենթանոյի, զգայության բովանդակությունը՝ զգայվող որակը, տարբերվում է ընկալման գործողությունից. առաջինն ունի ֆիզիկական, երկրորդը՝ հոգեկան բնույթ: Նա դեմ էր Վունդտի այն գաղափարին, որ հոգեբանական հետազոտության հիմնական առարկան գիտակցության կառուցվածքային տարրերն են: Ըստ Բրենթանոյի, նպատակահարմար է հետազոտել ոչ թե հոգեկան գործընթացների կառուցվածքային տարրերը՝ զգայական մտապատկերները, այլ հենց այդ գործընթացները՝ պատկերացումները, դատողությունները, հուզական գնահատականները, որպես ամբողջական գործողություններ: Վերջիններով է պայմանավորված հոգեկան գործունեության ինտենցիան՝ ուղղվածությունը դեպի առարկան: Առարկան, օբյեկտն, ըստ Բրենթանոյի՝ գիտակցությունից անկախ գոյություն ունեցող ֆիզիկական իրականությունը չէ: Այն գոյություն ունի միայն այնքանով, որքանով իրականանում է գիտակցության մեջ՝ որպես երևույթ, որպես հոգեկան գործողության ինտենցիոնալ բաղադրիչ:

Իմացության հիմնահարցերի պարզաբանման համար Բրենթանոն նպատակահարմար էր գտնում հոգեբանության և իմացաբանության միավորումը: Ըստ նրա, միայն այս ճանապարհով էր հնարավոր բացահայտել իմացական գործընթացի օրինաչափությունները: Իր տեսությունը Բրենթանոն անվանում է փսիխոգնոզիա կամ ֆենոմենոգնոզիա, որտեղ հետազոտության հիմնական առարկաները իմացական գործողություններն ու գիտակցության մեջ ներկայացվող ֆենոմեններն են: Այս տեսության կարևորագույն հասկացությունն ինտենցիոնալ գիտակցությունն է, որը նշանակում է, որ գիտակցական գործունեությունն ուղղված է դեպի իր առարկան, գիտակցումը միշտ ինչ-որ բանի գիտակցում է: Հնարավոր չէ վերացական, առարկայից կտրված գիտակցության կամ մտածողության գոյությունը: Իսկ քանի որ առարկան մեր գիտակցության մեջ իրականացող ֆենոմեններն են, հետևաբար, մարդուն հասանելի միակ իրական աշխարհը գիտակցվող առարկաների աշխարհն է: Դրանից դուրս գտնվող առարկաներն ու դրանց ազդեցությունները ենթակա չեն հետազոտության:

Բրենթանոն դեմ էր լաբորատոր պայմաններում գիտակցության բովանդակության արհեստական մասնատմանը: Նրա կարծիքով, հոգեկան գործողությունների հետազոտությունն անհրաժեշտաբար պետք է հիմնվեր էմպիրիկ, բնական պայմաններում իրականացվող դիտման մեթոդի վրա, որն, ըստ Բրենթանոյի, առավել լայն էր, քան ցանկացած այլ փորձարարական մեթոդ: Այսպիսով, նոր զարգացող գիտական հոգեբանության ոլոր-

տում, փորձարարական մեթոդների կողքին իր տեղն է գտնում դիտումը, որպես համակարգված հետազոտական մեթոդ:

Չնայած որ նախնական շրջանում, վունդտյան հոգեբանական համակարգի հետ մրցակցության մեջ Բրենթանոյի հոգեբանական հայացքները շատ դեպքերում մնում էին ստվերում, այդուհանդերձ դրանք մեծ արժեք ունեցան հոգեբանության զարգացման համար:

2.6. Գերման Էբինհաուզ (1850-1909)

Գերմանացի հոգեբան, որն առաջին անգամ փորձարարական հետազոտության ենթարկեց այնպիսի բարդ հոգեկան գործընթաց, ինչպիսին է հիշողությունը: Էբինհաուզը ծնվել է 1850 թ. հունվարի 24-ին Բոնից ոչ հեռու: Նա սովորում է Բոնի, իսկ այնուհետև Գալեի և Բեռլինի համալսարաններում: Հետագա կրթությունն ստանում է Անգլիայում և Ֆրանսիայում: Այդ շրջանում Էբինհաուզին առավելապես հետաքրքրում էին պատմությունը, գրականությունը և փիլիսոփայությունը: Սակայն ծանոթանալով Ֆեխների «Հոգեֆիզիկայի տարրեր» աշխատության հետ, նա իր ուշադրությունը կենտրոնացնում է հոգեբանական խնդիրների վրա: Էբինհաուզը փորձում է հետազոտել բարդ հոգեկան գործընթացները, մասնավորապես հիշողությունը՝ օգտվելով պարզագույն հոգեկան երևույթների հետազոտության ընթացքում Ֆեխների կիրառած մաթեմատիկական մեթոդներից:

1880 թ. Էբինհաուզն աշխատանքի է անցնում Բեռլինի համալսարանում, որտեղ իրականացնում է բազմաթիվ հետազոտություններ: 1885 թ. հրատարակվում է Էբինհաուզի «Հիշողության մասին» աշխատությունը, որտեղ ներկայացվում են խնդրին նրա մոտեցման հիմնական առանձնահատկությունները: Հետագայում Էբինհաուզը հիմնադրում է սեփական հոգեբանական լաբորատորիան, որտեղ փորձարարական հետազոտության են ենթարկվում հիշողության և զգայական ընկալման օրինաչափությունները: Հիմնադրում է «Զգայարանների հոգեբանություն և ֆիզիոլոգիա» պարբերականը: 1894 թ. Էբինհաուզը տեղափոխվում է Բրեսլավլի համալսարան: 1902 թ. լույս է տեսնում նրա «Հոգեբանության սկզբունքներ» աշխատությունը, որը հեղինակը նվիրել էր Գուստավ Ֆոն Ֆեխների հիշատակին: 1980 թվականին հրատարակվում է Էբինհաուզի «Հոգեբանության ակնարկ-

ներ» գիրքը: 1905 թվականին դառնում է Գալեի համալսարանի պրոֆեսոր: Գերման էբինհաուզը մահացել է 1909 թ. փետրվարի 26-ին:

Ի տարբերություն Վունդտի, էբինհաուզը տեսնում էր բարդ հոգեկան գործընթացների փորձարարական հետազոտության հնարավորությունը: Նրա հետազոտական հետաքրքրությունների կենտրոնում է հայտնվում հիշողությունը. էբինհաուզը փորձում է բացահայտել հիշողության գործընթացի քանակական բնութագիրը, զուգորդումների ձևավորման օրինաչափությունները: Իր հետազոտությունների ընթացքում նա կիրառում է անիմաստ և իրար հետ ոչ մի տրամաբանական կապ չունեցող վանկերի մեթոդը: Այդ ընտրությունն ու նորամուծությունը կապված էր այն հանգամանքի հետ, որ հիշողության հետազոտության ընթացքում սկզբունքորեն անհնար էր ազատվել այն զուգորդումների ազդեցությունից, որոնք կարող էին դրսևորվել փորձարարական նյութի ներկայացման ժամանակ: Այդ իսկ պատճառով, հետազոտվողին ներկայացվելիք նյութն անհրաժեշտաբար պետք է զերծ լիներ զուգորդումներ ակտիվացնելու որևէ հնարավորությունից: էբինհաուզը կազմում է 2300 հատ վանկ, որոնք ներկայացնում է փորձարկվողներին: Իր առաջին փորձերում, որպես այդպիսին, հանդես էր գալիս հենց ինքը՝ էբինհաուզը: Նրա փորձերի արդյունքում պարզվեցին բազմաթիվ արժեքավոր փաստեր: Այսպես, պարզվեց, որ ներկայացվող նյութի ընդհանուր քանակից կախված, փոփոխվում է առանձին վանկը մտապահելու համար անհրաժեշտ կրկնությունների քանակը, հետևաբար նաև ժամանակահատվածը: Ըստ այդմ, ամբողջ նյութը մտապահելու համար անհրաժեշտ ժամանակահատվածը, նյութի ծավալի մեծացմանը զուգընթաց, մեծանում է ոչ համեմատական կարգով, այլ յուրաքանչյուր վանկի մտապահման համար անհրաժեշտ ժամանակահատվածի մեծացմամբ:

էբինհաուզի փորձերի արդյունքում պարզվեց նաև, որ մտապահված նյութն առավել մեծ քանակությամբ, արագությամբ և ինտենսիվությամբ մոռացվում է մտապահմանը հաջորդող առաջին ժամերի ընթացքում: Այս երևույթի գրաֆիկական պատկերը հայտնի է «էբինհաուզի կոր» հասկացությամբ:

Գերման էբինհաուզի գիտական գործունեությունը հիմք ստեղծեց բարձրագույն հոգեկան գործընթացների փորձարարական հետազոտությունների զարգացման համար: Նրա փորձերի արդյունքում բացահայտված օրինաչափություններն արժեքավոր էին ուսումնական գործընթացի կազմակերպման համար: Եվ չնայած, որ էբինհաուզն ինքը չստեղծեց հոգեբանական տեսություն, այնուամենայնիվ հիշողության և ուսուցման հոգեբանության բազմաթիվ տեսություններ կրում են էբինհաուզի գործունեության ազդեցությունը:

2.7. Օսվալդ Կյուլպե (1862-1915)

Գերմանացի հոգեբան, մտածողության հետազոտություններով զբաղվող Վյուրցբուրգյան դպրոցի հիմնադիր: Ծնվել է 1862 թ. Գերմանիայում: 1881 թ. ընդունվում է Լայպցիգի համալսարան՝ դառնալով Վունդտի աշակերտը: Սակայն շուտով մեկնում է Բեռլին՝ պատմություն ուսումնասիրելու նպատակով: 1886 թ. վերադառնում է Լայպցիգ: 1893 թ. լույս է տեսնում Կյուլպեի «Հոգեբանության ակնարկներ» գիրքը՝ նվիրված Վիլհելմ Վունդտին: Այդուհանդերձ, նա դեմ է դուրս գալիս Վունդտի որոշ հայացքներին և շուտով՝ 1896 թ., ստեղծում է իր լաբորատորիան, որը մրցակցում է վունդտյան լաբորատորիայի հետ: Մահացել է 1915 թ.:

Գտնվելով Վունդտի անմիջական ազդեցության ներքո, իր առաջին՝ «Հոգեբանության ակնարկներ» աշխատության մեջ Կյուլպեն հիմնական ուշադրության է արժանացնում պարզագույն հոգեկան գործառույթները: Սակայն շուտով, հենվելով էբինհաուզի և Բրենթանոյի հայացքների վրա, մտադրվում է փորձարարական հետազոտության ենթարկել այնպիսի բարդ հոգեկան գործընթաց, ինչպիսին է մտածողությունը:

Կյուլպեն, որպես հետազոտության մեթոդ ընտրելով ինտրոսպեկցիան, առաջ է քաշում դրա սեփական՝ համակարգված փորձարարական ինտրոսպեկցիան: Այն դեպքում, երբ վունդտյան լաբորատորիայում ինտրոսպեկցիայի հաշվետվությունը վերաբերում էր ներկա պահին ստացվող տվյալներին, Կյուլպեն փորձարկվողի հաշվետվությունը կառուցում էր հիշողության օգնությամբ, երբ հետազոտվող մտածական գործողությունն արդեն ավարտված էր: Փորձարկվողի առջև դրվում էր որոշակի կոնկրետ մտածական առաջադրանք, որը լուծելուց հետո նա նկարագրում էր այն բոլոր գործընթացները, որոնց միջոցով հասել էր խնդրի լուծմանը: Այն դեպքում, երբ Վունդտն առավել կարևորում էր քանակական, ժամանակային չափանիշները, Կյուլպեի ինտրոսպեկտիվ հետազոտության արդյունքում բացահայտվում էին մտածական գործունեության բովանդակությունները: Կյուլպեի առաջադրած մեթոդը Վունդտը հեգնաբար անվանում է «ինտրոսպեկցիայի նմանակում»:

Վյուրցբուրգյան լաբորատորիայում, 1901-1905 թթ. ընթացքում Կյուլպեի աշակերտների կողմից կատարվեցին բազմաթիվ հետազոտություններ: Մայերը և Օրտը հետազոտում էին զուգորդումները, Մարբեն՝ դատո-

ությունները. Օրտը՝ զգացմունքները. Ախը՝ մտածողությունը: Կատարվեցին բազմաթիվ հայտնագործություններ: Այսպես, Ախի հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ գիտակցական գործընթացները որոշակի անգիտակցական սկզբունքի՝ դետերմինացնող միտումի ազդեցությամբ ուղղորդվում են դեպի խնդրի լուծումը, նախօրոք տրված ուղիով: Մարբեի հետազոտությունները պարզեցին, որ ինտրոսպեկտիվ մեթոդները չեն բացահայտում դատողությունների կառուցման օրինաչափությունները, իսկ Օրտը ստիպված էր ներմուծել նոր հասկացություններ, որպեսզի ինտրոսպեկտիվ հետազոտության միջոցով նկարագրեր մարդու հուզական կյանքը:

Սակայն Կյուլպեի և վյուրցբուրգյան դպրոցի ձեռքբերումներից ամենանշանակալին անմտապատկեր մտածողության հայտնագործությունն էր: Հետազոտությունների արդյունքում չբացահայտվեցին մտածողության ընթացքում ակտիվացող մտապատկերներ. մտածողությունը գործում էր զգայական մտապատկերներից անկախ: Այս հայտնագործությունը հերքում էր Վունդտի այն կարծիքը, որ գիտակցական փորձը կարելի է մասնատել առանձին տարրերի՝ զգայական մտապատկերների: Վյուրցբուրգյան դպրոցի հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ մտածողությունն ու գիտակցությունը շատ դեպքերում անկախ են զգայական բովանդակություններից:

Այսպիսով, չնայած այն հանգամանքին, որ Կյուլպեի նախաձեռնած հետազոտությունները չբացահայտեցին մտածական գործընթացի օրինաչափությունները, այդուհանդերձ հերքեցին այն կարծիքը, որ մտածողությունն ու գիտակցությունը կազմված են զգայական փորձի միջոցով տրվող տարրերից: Այս հայտնագործությունը խթանեց իմացական գործընթացի հետագայում իրականացված բազմաթիվ հետազոտություններ:

ՄԱՍ 3. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Ֆունկցիոնալիզմ

3.1.1. Ուիլիամ Ջեյմս (1842-1910)

Ամերիկացի փիլիսոփա, հոգեբան, հոգեբանության մեջ ֆունկցիոնալիստական մոտեցման հիմնադիր: Ծնվել է 1842 թ. հունվարի 11-ին Նյու-Յորքում: Նախնական կրթությունը ստացել է Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Շվեյցարիայի, Միացյալ Նահանգների մի շարք դպրոցներում: Հետաքրքրվում էր քիմիայով, կերպարվեստով, կենդանաբանությամբ: Սովորում է Հարվարդի համալսարանին կից բժշկական դպրոցում, 1869-ին ստանալով բժշկության դոկտորի աստիճան: 1872-ից Հարվարդում դասավանդում է ֆիզիոլոգիա: 1875-1876 ուսումնական տարում Ջեյմսը կարդում է «Ֆիզիոլոգիայի և հոգեբանության փոխհարաբերությունների մասին» դասախոսությունների շարքը, որով սկսվում է նրա հոգեբանական գործունեությունը: 1885-ին դառնում է փիլիսոփայության, իսկ մի քանի տարի անց՝ հոգեբանության պրոֆեսոր: 1890 թ. հրատարակվում է Ջեյմսի «Հոգեբանության հիմունքներ» երկհատոր աշխատությունը, որը նա սկսել էր գրել դեռևս 1878-ին: Չնայած իր հաջողությանը, գիրքը քննադատվում է Վունդտի և Թիթչենների կողմից, դուր չի գալիս իրեն՝ Ջեյմսին: Կյանքի վերջին քսան տարիներին Ջեյմսը զբաղվում է փիլիսոփայական խնդիրներով: 1902 թվականին լույս է տեսնում Ջեյմսի «Կրոնական փորձի բազմազանությունը» աշխատությունը, որտեղ վերլուծության են ենթարկվում տարբեր կրոնական համակարգերում գիտակցության, գիտակցական փորձի վարիացիաները: Նա մահացել է 1910 թ. օգոստոսի 16-ին:

Ի տարբերություն իր ժամանակակիցների, Ջեյմսը հրապուրված չէր փորձարարական հոգեբանությամբ: Նրա կարծիքով լաբորատոր գիտափորձերի արդյունքները համոզիչ չեն: Այդ իսկ պատճառով, Ջեյմսի հոգեբանական հայացքները կառուցվում են հիմնականում տեսական մեթոդներով: «Հոգեբանության հիմունքներ» աշխատության մեջ Ջեյմսը ներկայացնում է հոգեբանության մասին իր՝ ֆունկցիոնալիստական մոտեցումը: Ըստ նրա՝ գիտակցությունը մարդու կենսականորեն անհարժեշտ գործառույթ է, որի հիմնական նպատակը հարմարումն է շրջակա կենսամիջավայրի բարդ

պայմաններին: Հետևաբար, հոգեբանության խնդիրը ոչ թե գիտակցական փորձի տարրերի բացահայտումն է, ինչպես կարծում էին ստրուկտուրալիստները, այլ գիտակցության հարմարողական գործառույթի հետազոտությունը: Ինչպես տեսնում ենք, Ջեյմսի հոգեբանական հայացքները հիմնվում են նրա ժամանակներում Դարվինի տեսության ազդեցությամբ ձևավորված կենսաբանական գաղափարների վրա, որտեղ առաջնային էր համարվում օրգանիզմի հարմարվողականությունը շրջակա միջավայրին: Եվ ընդհանրապես, խոսելով մարդու մասին, Ջեյմսը նկատի ուներ կենսաբանականի և հոգեկանի միավորում, որտեղ բոլոր հոգեկան գործընթացները, նույնիսկ մտածողությունը, գործում են համաձայն կենսական պահանջմունքների և հույզերի, որոնք ոչ միշտ կարող են գիտակցվել: Գիտակցության և ընդհանրապես հոգեկանի հետազոտության մեջ Ջեյմսը կարևորում էր դրա նյութական հիմքի, նյարդային համակարգի, ուղեղի հետազոտությունը: Պատահական չէ, որ նրա աշխատության ծավալուն հատված վերաբերում է հենց կենտրոնական նյարդային համակարգի կառուցվածքին և ֆիզիոլոգիային:

Ջեյմսը դեմ էր Վունդտի ստրուկտուրալիստական մոտեցմանը և չէր ընդունում, որ գիտակցական ապրումները կառուցվում են հասարակ տարրերի միավորումից: Նա առաջ է քաշում գիտակցության և, ընդհանրապես, հոգեկան գործունեության, որպես հոսքի, գաղափարը: Գիտակցության հոսքը, ըստ Ջեյմսի, ունի անընդհատ, անդառնալի, ուղղորդված բնույթ և երբեք հնարավոր չէ վերադառնալ գիտակցության նույն բովանդակությանը: Ընդ որում, ուղեղի կողմից ընտրվում են շրջապատի բազմաթիվ ազդակներից այնպիսիք, որոնք չեն խանգարի գիտակցության հոսքին: Վերջինիս անխափան ընթացքով է պայմանավորված շրջակա միջավայրում մարդու հարմարվողականության արդյունավետությունը:

Հոգեբանության համար մեծ նշանակություն ունեցավ Ջեյմսի տեսակետը հույզերի մասին: Ի տարբերություն այն ժամանակներում ընդունված կարծիքի, ըստ որի հուզական վիճակի սուբյեկտիվ ապրումները նախորդում են դրանց ֆիզիկական արտահայտմանը, Ջեյմսը առաջ է քաշում տեսակետ, որտեղ պնդում է, որ ֆիզիկական հակազդեցությունը նախորդում է հույզերին: Նույն տեսակետին էր դանիացի հոգեբան Կարլ Լանգեն, այդ իսկ պատճառով հույզերի այս տեսությունը ստանում է «Ջեյմս-Լանգեի տեսություն» անվանումը: Չնայած, որ փորձարարական հոգեբանության զարգացման գործում աննկատելի է Ուիլիամ Ջեյմսի ներդրումը, այդուհանդերձ նրա ֆունկցիոնալիստական հոգեբանությունը հիմք հանդիսացավ գործնական, կիրառական հոգեբանության բազմաթիվ բնագավառների առաջացման համար: Ջեյմսի հոգեբանական և փիլիսոփայական բազմաթիվ հայացքներն առայսօր շարունակում են մնալ արդիական:

3.2. Հոգեվերլուծություն

3.2.1. Զիգմունդ Ֆրոյդ (1856-1939)

Ավստրիացի հոգեբան, հոգեբույժ և նյարդաբան, հոգեվերլուծության հիմնադիր Զիգմունդ Ֆրոյդը ծնվել է 1856 թ. մայիսի 6-ին, Ֆրեյբերգում: Դեռ գիմնազիայում Ֆրոյդը տարվում է բնական գիտություններով և արդյունքում, 1873 թ. ընդունվում Վիեննայի համալսարանի բժշկական ֆակուլտետ:

19-րդ դարի 80-ական թվականներից Զիգմունդ Ֆրոյդը աշխատել է գործնական բժշկության ոլորտում, այնուհետև՝ 1897-1920 թվականներին մշակել է հոգեվերլուծության տեսությունը, որը հետագայում վերամշակել ու զարգացրել է: Սկզբնական շրջանում հոգեվերլուծությունը դիտվում էր որպես հոգեծին հիվանդությունների բացահայտման և բուժման ուղղություն, իսկ հետագայում՝ որպես մարդու հոգեկան աշխարհի, դրա կառուցվածքի, մարդու կենսագործունեության ներքին շարժիչ ուժերի վերաբերյալ հոգեբանական տեսություն, որի սկզբունքներն օգտագործվեցին մշակութային տարբեր ոլորտների ուսումնասիրության մեջ:

Նրա առաջին լուրջ գիտական աշխատություններից մեկը հրատարակվել է 1895 թվականին (Ի. Բրոյերի հետ համատեղ): Այդ աշխատությունը վերաբերում էր հիստերիայի առաջացման ու հիպնոսի միջոցով նրա բուժման հնարավորությունների խնդրին: Հետագայում Ֆրոյդը հրաժարվեց հիպնոսի կիրառումից և ստեղծեց հոգեվերլուծության միջոցով հիվանդների բուժման այլ եղանակ, որը հիմնված էր զուգորդումների, երազների, հիվանդի սխալ գործողությունների մեկնաբանման վրա:

Որպես ֆիզիոլոգ և բժիշկ-նյարդաբան, զբաղվելով մի շարք հոգեկան հիվանդությունների (հիստերիա, վախ, ատելություն և այլն) պատճառների հետազոտությամբ, Ֆրոյդը եկավ այն եզրակացության, որ շատ հիվանդությունների սկզբնաղբյուր են համարվում հիվանդների կողմից չգիտակցված բարդույթները: Ժամանակին հիվանդը խոր հոգեկան ցնցումներ է ապրել՝ ինչ-որ բանից վախեցել, վիրավորվել կամ ամոթ զգացել, որոնք արտաքնապես կամ գիտակցական մակարդակում «մոռացվել» են, սակայն հայտնվել են անգիտակցականի ոլորտում: Չհանգած հրաբուխի պես

դրանք մերթ ընդ մերթ ժայթքում են, դուրս գալիս գիտակցականի ոլորտ, ինչն էլ պատճառ է դառնում հոգեկան հիվանդագին ապրումների առաջացման: Հոգեբույժի խնդիրն է դառնում անգիտակցական ապրումը վերածել գիտակցականի: Ֆրոյդն առաջադրում է հոգեծին հիվանդությունների բուժման կատարսիստական մեթոդը, որի ժամանակ հիպնոսի միջոցով բժիշկը վերականգնում է հիվանդի հիշողությունը, վերլուծում հիվանդության պատճառ-դեպքը և դրանով իսկ հիվանդին ազատում տառապանքներից:

Մշակելով հոգեվերլուծական իր տեսությունը, Ֆրոյդը մարդու հոգեկանի մեջ առանձնացնում է երեք մակարդակ՝ գիտակցական, ենթագիտակցական և անգիտակցական: Հանդես գալով մարդու հոգեկանի դեկարտյան ըմբռնման դեմ՝ Ֆրոյդը ելակետ է ընդունում այն դրույթը, որ անգիտակցականի առանձնացումն անհրաժեշտ և օրինաչափ է, քանի որ կյանքի փորձը վկայում է այնպիսի հոգեկան երևույթների գոյության մասին, որոնք չեն կարող կոչվել գիտակցական: Լինել գիտակցական, նշանակում է ունենալ լեզվով արտահայտված անմիջական և հուսալի ընկալում: Հոգեկանի ենթագիտակցական ոլորտը, միջանկյալ դիրք զբաղեցնելով անգիտակցականի և գիտակցականի միջև, կատարում է «պահակի» դեր: Ֆրոյդի հոգեվերլուծական տեսության մեջ գլխավորն անգիտակցականի մասին ուսմունքն է: Նրան նախ և առաջ հետաքրքրում են անգիտակցականի բնույթը, կառուցվածքը ու գործունեության մեխանիզմները: Ֆրոյդի կարծիքով՝ անգիտակցականի բովանդակությունը կազմում են գիտակցական ոլորտից դուրս մղված ապրումները, ցանկությունները և հակումները, որոնք անընդունելի են հասարակության համար: Դրանք հիմնականում սեքսուալ բնույթ ունեն: Նկարագրելով երեխայի սեռական հասունացման ընթացքը, Ֆրոյդը եզրակացնում է, որ ի ծնե երեխայի արարքները սեքսուալ բնույթ ունեն: Նա առաջնորդվում է «հաճույքի սկզբունքով», այսինքն՝ անում է այն, ինչ իրեն հաճույք է պատճառում: Երեխայի համար ամեն ինչ թույլատրելի է: Սակայն, հասակ առնելով, նա աստիճանաբար հասկանում է, որ ամեն ինչ չի կարելի անել, նա սկսում է առաջնորդվել ոչ թե «հաճույքի», այլ «ռեալության սկզբունքով»: Հաշվի նստելով իրականության և գիտակցականի պահանջների հետ, երեխան անգիտակցականի ոլորտ է ուղարկում բոլոր այն հակումները և ցանկությունները, որոնք համարվում են հակաբարոյական և հակասոցիալական: Այս կապակցությամբ Ֆրոյդը մշակում է «էդիպ արքայի բարդույթի» մասին տեսությունը, ըստ որի՝ տղան մշտապես սեռական ցանկություն է զգում մոր հանդեպ և, հանձինս իր հոր, տեսնում է մրցակցի, որին սիրում է և միաժամանակ նրանից վախենում:

Անգիտակցականը վերածվում է հզոր էներգիայի աղբյուրի, որն ուղիներ է փնտրում ինքնադրսևորման համար: Բայց քանի որ «օրինական» ճա-

նապարհով արգելված հակումները չեն կարող դրսևորվել, ուստի դրանք փնտրում են զարտուղի ճանապարհներ: Ֆրոյդի կարծիքով՝ այդ զարտուղի ձևերն են նևրոզները, երազների մեջ հանդես եկող սիմվոլները, տարօրինակ արարքները, լեզվական սայթաքումները և այլն: Այդ կապակցությամբ Ֆրոյդն առաջադրում է անգիտակցականի ուսումնասիրության «ազատ զուգորդումների» մեթոդը, որի օգնությամբ վերլուծվում են անգիտակցականի դրսևորումները ենթագիտակցության և գիտակցության ոլորտներում: Ֆրոյդի կարծիքով՝ ամեն մի հոգեկան գործողություն և անգիտակցական գործընթաց ունի որոշակի իմաստ, որի բացահայտումը պետք է դառնա հոգեվերլուծության խնդիրը: Անգիտակցական երևույթների իմաստի բացահայտման գործում Ֆրոյդը չափազանց կարևոր դեր է հատկացնում երազների մեկնաբանությանը:

Ֆրոյդի կարծիքով՝ անգիտակցականի «ճնշումները և գրոհները» դիմակայելու համար գիտակցականը մշակում է մի շարք պաշտպանական մեխանիզմներ: Դրանցից է, օրինակ «պրոյեկցիան», որի ժամանակ մարդը սեփական արգելված հակումները, անթույլատրելի արարքներն անգիտակցաբար «տեղափոխում» է ուրիշների վրա, նրանց վերագրում այն, ինչից ինքն ամաչում կամ խուսափում է: Պաշտպանական մյուս մեխանիզմը ռացիոնալիզացիան է, որի ժամանակ մարդը գիտակցաբար իր արարքների պատճառներ է համարում այնպիսիք, որոնք կեղծ են, բայց բավարարում են գիտակցության պահանջներին:

1920-1939 թթ. Ֆրոյդը վերաիմաստավորում և լրամշակում է մարդու հոգեկանի մասին իր տեսությունը: Նա առաջադրում է հոգեկանի կառուցվածքի նոր սխեմա՝ ԱՅՆ (իդ), որն անգիտակցականի ոլորտն է, ԵՍ (էգո), որը հոգեկանի բանական, բանախոհական ոլորտն է, ԳԵՐ-ԵՍ (սուպեր էգո), որը հանդես է գալիս որպես սոցիալական և բարոյական արժեքների կրող, որպես «ներքին խիղճ»: Այս երեք հոգեկան ուժերից ամենադժբախտը ԵՍ-ն է, որովհետև նրան մի կողմից ճնշում են անգիտակցականում ապրող հակումները՝ Լիբիդոն և Թանատոսը (մահվան նկատմամբ վախը), իսկ մյուս կողմից ԳԵՐ-ԵՍ խիղճը, որը վերահսկում է ԵՍ-ի բոլոր գործողությունները: Պարզվում է, որ ռացիոնալիստների սիրելի հերոսը՝ ԵՍ-ը, խեղճ ու դժբախտ մի էակ է, որը նույնիսկ իր տան տանտերը չէ: ԵՍ-ի դժբախտությունը երկու հակադիր աշխարհների՝ բնականի և արհեստականի (մշակույթի) հակասության արդյունքն է: Ֆրոյդը մշակույթը դիտում է իբրև մարդու բնական հակումները և ցանկությունները ճնշող մի ուժ, որի հետևանքով հիվանդանում է թե՛ մարդը և թե՛ հասարակությունը: Կենդանիները չեն տառապում նևրոզներով, մինչդեռ մարդը, ենթարկվելով իր իսկ կողմից ստեղծած մշակութային, սոցիալ-բարոյական կանոններին, արգելելով իր բնական հակումների ազատ դրսևորումները, հայտնվում է հոգեկան

ցնցումների և հիվանդությունների մեջ: Մշակույթը դիտելով որպես մարդկային բնության ճնշման գործիք՝ Ֆրոյդը միաժամանակ նշում է, որ մշակույթը հանդես է գալիս որպես մարդու ստեղծագործական ներունակության ինքնադրսևորման խթանիչ, պայմաններ է ստեղծում ագրեսիվ, ապակառուցողական հակումների ձևափոխման՝ սուբլիմացիայի համար: Սուբլիմացիայի (վեհացման) ժամանակ արգելված հակումները դրսևորվում են հասարակության համար ընդունելի ձևերով, ինչպիսիք են, օրինակ, կրոնը և արվեստը: Ֆրոյդը գեղարվեստական ստեղծագործությունները դիտում է որպես հոգեբուժության ձևեր, իսկ կրոնը՝ որպես «համամարդկային նևրոզի» բուժման ձև: Կրոնական հավատալիքները, ըստ Ֆրոյդի, պատրանքներ են, որոնք ո՛չ ապացուցելի են, ո՛չ էլ հերքելի, բայց դրանց միջոցով բավարարվում են մարդու անգիտակցական հակումները: Հանդես գալով կրոնական պատրանքների ու հավատալիքների դեմ, Ֆրոյդը, որպես բնապաշտ և ռացիոնալիստ մտածող, իբրև աստված ընդունում է մարդկային բանականությունը, համոզված լինելով, որ դրա միջոցով մարդիկ կարող են հասնել երջանկության: Իբրև անգիտակցականի մասին հոգեվերլուծական տեսության հիմնադիր, նա համոզված էր, որ անգիտակցականի բոլոր գաղտնիքները հնարավոր է բացահայտել, իսկ բոլոր հոգեծին հիվանդությունները՝ բուժել: Ֆրոյդի հավատո հանգանակն էր՝ «Այնտեղ, ուր ԱՅՆՆ է, պետք է լինի ԵՍ-ը»:

Ֆրոյդի ուսմունքը լայն ճանաչում ձեռք բերեց 20-րդ դարի սկզբներին: Նա շատ աշակերտներ ու հետևորդներ ձեռք բերեց, որոնք հետագայում իրենք ստեղծեցին մեզանում հայտնի մի շարք հայեցակարգեր ու տեսություններ: Սակայն Ֆրոյդի տեսության որոշ դրույթներ ժխտվեցին նրա աշակերտների կողմից: Ընդ որում, մարդու կյանքում սեքսուալության հիմնախնդրով չափազանց մեծ տարվածությունը շատ հակասություններ առաջ բերեց և քննադատության առիթ հանդիսացավ Ֆրոյդի հանդեպ:

3.2.2. Ալֆրեդ Ադլեր (1870-1937)

«Անհատական հոգեբանություն» հոգեբանական ուղղության հիմնադիրը: Ծնվել է 1870 թ. փետրվարի 7-ին Ավստրիայի Պենցինգ բնակավայրում: Մանուկ հասակում վատառողջ էր և դպրոցում աչքի չէր ընկնում իր առաջադիմությամբ: Սակայն ջանասիրության և նպատակասլացության

արդյունքում աստիճանաբար դառնում է լավագույն աշակերտներից մեկը: Ավարտել է Վիեննայի համալսարանը՝ ստանալով բժշկի մասնագիտացում, 1895 թվականին ստանում է առաջին գիտական աստիճանը: Հետագայում հետաքրքրվում է հոգեբուժությամբ և նյարդաբանությամբ: 1902 թ. դառնում է վիեննական հոգեվերլուծական խմբակի անդամ, սակայն 1911 թ. Ֆրոյդի հետ տարաձայնությունների հետևանքով լքում է այն: Հիմնում է «Անհատական հոգեբանության ասոցիացիան»: Մահացել է 1937 թվականի մայիսի 28-ին շոտլանդական Աբերդին քաղաքում:

Ի տարբերություն դասական հոգեվերլուծության, որտեղ շեշտադրվում է անձի վարքը պայմանավորող կենսաբանական գործոնների դերը, անհատական հոգեբանության մեջ կարևորվում են սոցիալական գործոնները: Ադլերը դեմ էր Ֆրոյդի կողմից սեռական գործոնների դերի կարևորության ընդգծմանը և առաջ է քաշում «հասարակական հետաքրքրություն» հասկացությունը, որով նշանակում է մարդու մեջ առկա բնածին ձգտումը դեպի այլ մարդկանց հետ համագործակցելն ու հասարակական նպատակներին հասնելը: Ըստ Ադլերի՝ անձի վարքը որոշվում է ոչ թե նրա անցյալով, ինչպես հոգեվերլուծության մեջ, այլ ապագայով՝ նրա նպատակներով, մտադրություններով և սպասումներով: Ի տարբերություն հոգեկանի Ֆրոյդյան հասկացմանը, որտեղ առանձնացվում են անձի տարբեր բովանդակագործառութային հատվածներ, անհատական հոգեբանության մեջ անձը դիտարկվում է որպես մեկ միասնական ամբողջություն:

Ըստ Ադլերի, անձի գործունեության հիմնական նպատակն ու շարժիչը սեփական թերությունների հաղթահարումն ու գերակայության ձգտումն է: Ադլերը ներմուծում է թերարժեքության զգացում հասկացությունը, որով արտահայտում է սեփական ֆիզիկական, հոգեկան և սոցիալական թերությունների գիտակցումն անձի կողմից, դրանց ազդեցությունը նրա գործունեության վրա: Որոշ դեպքերում, երբ անձն ի վիճակի չէ փոխհատուցել սեփական թերությունները, հաղթահարել թերարժեքության զգացումը, առաջ է գալիս թերարժեքության բարդույթ, որն, ըստ անհատական հոգեբանության, ընկած է բազմաթիվ հոգեախտաբանական երևույթների հիմքում:

Սակայն սեփական թերությունների գիտակցումը ոչ միշտ է կրում բացասական բնույթ: Ադլերի կարծիքով, հենց թերարժեքության զգացումն է, որ ստիպում է մարդուն շարժվել դեպի կատարելություն՝ հաղթահարելով սեփական թերությունները, գտնել ինքնադրսևորվելու առավել բարենպաստ հնարավորություններ: Թերարժեքության զգացումի հաղթահարումը, վերջին հաշվով հանգեցնում է գերակայության ձգտումի. սեփական թերությունները գիտակցող մարդը փորձում է դրանք հավասարակշռել, ձերբազատվել դրանցից՝ հասնելով գերակայության: Յուրաքանչյուր առանձին անհատ ընտրում է այդ նպատակին տանող իր ուրույն ուղին: Հա-

մածայն Ադլերի, հենց ընտրված ճանապարհն է որոշում անձի կենսաոճը, նրա վարքը, հակազդեցությունները տարբեր կենսական իրավիճակներում:

Ադլերի մոտ, ի տարբերություն դասական հոգեվերլուծության, մարդու «ես»-ը պասիվ չէ: Չնայած թերարժեքության զգացումի և գերակայության ձգտումի կարևորությանը, դրանք կատարում են միայն մեկնարկիչի դեր: Իսկ այն ուղին, որով շարժվում է անհատը, այն կենսաոճը, որը նա ընտրում է իր նպատակներին հասնելու համար որոշվում և ձևավորվում են մարդու «ես»-ի, դրա ստեղծարար ուժի կողմից: Այս առումով, անհատական հոգեբանության մեջ, ի տարբերություն Ֆրոյդյան հոգեվերլուծությանը, առավել կարևորվում է մարդու «ես»-ը, նպատակների ու դրանց հասնելու միջոցների գիտակցական ընտրությունը:

3.2.3. Կարլ Յունգ (1875-1961)

Շվեյցարացի ականավոր հոգեբան, հոգեբույժ և մշակութաբան Կարլ Յունգը հոգեվերլուծության խոշորագույն ներկայացուցիչներից է, ով սկզբնապես հետևելով Ֆրոյդի տեսությանը, այնուհետև հանդես եկավ դրա քննադատությամբ: 1906-1913 թվականներին աշխատել է Զիգմունդ Ֆրոյդի հետ: Հետագայում առանձնացել է դասական հոգեվերլուծությունից և հիմնադրել սեփական վերլուծական հոգեբանությունը: Մշակել է զուգորդված (ասոցիատիվ) գիտափորձի մեթոդիկաներից մեկը, սահմանել «կոմպլեքս» հասկացությունը: Երկար տարիների կլինիկական հետազոտությունների արդյունքում Յունգը եկավ այն եզրակացության, որ մարդու հոգեկանում էական դեր է խաղում ոչ միայն անհատական, այլև կոլեկտիվ անգիտակցականը, որի բովանդակությունը ներկայացված է նախնիների կողմից ժառանգած նախաձևերով (արխետիպերով): Մշակել է, ներկայումս քիչ հայտնի, անհատի բարդ կառուցվածքը, որը ներառում է «ես»-ը (մարդու կողմից իր մասին ունեցած պատկերացումների ամբողջություն), «պերսոնա»-ն (անձի այն մասը, որը նա ցույց է տալիս աշխարհին), «ստվեր»-ը (գիտակցությունից արտամղված տպավորությունների ամբողջությունը), «անիմա»-ն (հրապուրանքի ու քնքշանքի աղբյուր) և «անիմուս»-ը (կայուն դատողությունների աղբյուր), «ինքնություն»-ը (կյանքի իմաստի գիտակցում): Առաջադրել է երկու նախանշանների վրա հիմնված բնավորության տիպաբանությունը՝

ըստ դիրքորոշման կողմնորոշվածության (էքստրավերսիա-ինտրավերսիա) և ըստ գերիշխող գործառույթի (մտածողություն, զգացմունք, զգացողություն կամ ինտուիցիա):

Յունգը նախ և առաջ քննադատում է Ֆրոյդի տեսության պանսեքսուալիզմը, կարծելով, որ անթույլատրելի է մարդու թե՛ անգիտակցական և թե՛ գիտակցական բոլոր գործողությունները բացատրել սեքսուալ հակումներով կամ էդիպյան բարդույթով: Վերաիմաստավորելով անգիտակցականի մասին Ֆրոյդյան տեսությունը, Յունգն առաջադրում է այն տեսակետը, որ անգիտակցականը ներառում է ոչ միայն անհատական, այլև կոլեկտիվ շերտեր, ընդսմին, կոլեկտիվ անգիտակցականն սկզբունքորեն իռացիոնալ բնույթ ունի և անմիջականորեն չի կարող դրսևորվել լեզվական արտահայտությունների կամ երազների միջոցով: Կոլեկտիվ անգիտակցականի դրսևորման հիմնական ձևերը Յունգն անվանում է արխետիպեր (նախատիպեր, նախակերպարներ), որոնք առկա են բոլոր մարդկանց հոգեկանի մեջ: Կոլեկտիվ արխետիպերն անուղղակիորեն դրսևորվում են առասպելների, գեղարվեստական ստեղծագործությունների, երազների, վարքային շեղումների միջոցով: Ի տարբերություն Ֆրոյդի, Յունգը ձգտում է հոգեվերլուծությունը զուգակցել միստիկական, իռացիոնալիստական ուսմունքների հետ, կապ տեսնել մարդու հոգեկան աշխարհի և մարդկային սոցիալ-մշակութային անդեմ երևույթների հետ: Արխետիպերն օժտված են վիթխարի էներգիայով, մարդու հոգեկան աշխարհը ցնցելու և ավերելու ուժով: Յունգը տարբերակում է մի շարք արխետիպեր՝ անիմա (կանացիության արխետիպ), անիմուս (առնականության արխետիպ), պերսոնա (սոցիալական դերերի, «դիմակների» ամբողջությունն արտահայտող արխետիպ), ստվեր (մարդու ամբողջականությունն արտահայտող արխետիպ) և այլն: Կոլեկտիվ անգիտակցականի արխետիպերից կարևորագույնն ինքնության արխետիպն է՝ որպես անհատականության կենտրոն: Դիտարկելով կոլեկտիվ և անհատական անգիտակցականի փոխներգործության հարցը՝ Յունգն առանձնացնում է երկու ծայրահեղ մոտեցում՝ ա) երբ անհատական սկիզբը տարրալուծվում է «կոլեկտիվ անգիտակցականի» անդեմության մեջ (դա առավել բնորոշ է արևելյան կրոնամիստիկական պաշտամունքին), բ) երբ «ես»-ն իր մեջ ճնշում է կոլեկտիվ անգիտակցականի բովանդակությունը (դա առավել բնորոշ է եվրոպական եսակենտրոն մշակույթին): Երկու մոտեցումներն էլ վտանգավոր են, որովհետև անգիտակցականի էներգիան, միևնույն է, պետք է դրսևորվի: Ժամանակակից եվրոպական մշակույթի ռացիոնալիզմը, որը քայլ առ քայլ հոգեկանից վտարում է արխետիպերի դրսևորման հին ձևերը՝ դիցաբանական, կրոնական, սիմվոլիստական, պատճառ է դառնում անհատական և կոլեկտիվ նևրոզների, բազում հիվանդությունների առաջացմանը: Կորցնելով իրենց արխետիպերը, Եվրոպան

նետվում է Արևելքի գիրկը՝ հույս ունենալով արևելյան արխետիպերի մեջ փնտրել ճգնաժամից դուրս գալու ելքը: Միակ ճանապարհն ակունքներին վերադառնալն է, այսինքն՝ կոլեկտիվ արխետիպերի օբյեկտիվացումը, պրոյեկցիան և վերապրումը:

3.2.4. Կարեն Հորնի (1885-1952)

Կ. Հորնին ուսումնառել է Բեռլինի համալսարանի բժշկական ֆակուլտետում, որն ավարտելով 1918 թ. անցնում է աշխատանքի Բեռլինի հոգեվերլուծության ինստիտուտում: Այնուհետև նացիստական շարժման ի հայտ գալուն պես տեղափոխվում է ԱՄՆ, որտեղ 2 տարվա ընթացքում Հորնին զբաղեցնում է Չիկագյան հոգեվերլուծական ինստիտուտի տնօրենի տեղակալի պաշտոնը: 1934 թ. տեղափոխվում է Նյու-Յորք, որտեղ դասավանդում է հոգեվերլուծության ինստիտուտում:

Ինչպես և Ֆրոյդի բազում այլ հետևորդներ, նա աստիճանաբար հրաժարվում է օրթոդոքսալ հոգեվերլուծությունից և հիմնում է սեփական ասոցիացիան, որը հետագայում դառնում է հոգեվերլուծության ամերիկյան ինստիտուտ:

Հորնին ասում էր, որ փորձում է միայն շտկել Ֆրոյդի տեսության որոշ թերություններ, մասնավորապես այդ տեսության կենսաբանական ուղղվածությունը:

Սակայն հետագայում Հորնին վերանայում է նաև Ֆրոյդի տեսության հիմնարար սկզբունքները: Այնպես, ինչպես Ադլերը և Ֆրոմը, Հորնին մատնանշում է անձի զարգացման վրա սոցիալական միջավայրի գերակշռող ներգործության փաստը, բացի դրանից նա ապացուցում է, որ զարգացումը կանխորոշված չէ միայն բնածին բնազդներով, այլ մարդը կարող է փոփոխվել և զարգանալ ողջ կյանքի ընթացքում: Փոփոխության այդ հնարավորությունը բերում է նրան, որ գոյություն չունի նևրոզի հանդեպ ճակատագրական հակվածություն: Հորնին պնդում է, որ գոյություն ունի հստակ սահման նորմայի և անոմալիայի միջև, դա է պատճառը, որ նույնիսկ նևրոզներով տառապողները հույս ունեն ապաքինվելու:

Հորնիի տեսության ելակետային դրույթն այն է, որ անձի կառուցվածքում գերակշռողը ոչ թե ագրեսիայի և լիբիդոյի բնազդներն են, այլև բուն տագնապի զարգացումը, որը կապված է երեխայի մենակության և անօգնականության զգացման հետ: Այսինքն այս տեսության մեջ պահպանվում է ոչ միայն Ֆրոյդի գաղափարն անգիտակցականի նշանակության մասին, այլև նրա պնդումը մարդու և արտաքին աշխարհի միջև եղած անտագոնիզմի մասին:

Հորնին տարբերում էր տագնապի 2 տեսակ՝ ֆիզիոլոգիական և հոգեբանական: Ֆիզիոլոգիականը կապված է երեխայի ցանկության հետ՝ բավարարել ուտելու, խմելու, կոմֆորտի պահանջմունքները. եթե այս պահանջմունքները բավարարվում են, ապա մեծահասակների կողմից տագնապը վերանում է, հակառակ դեպքում այն աճում է: Հոգեբանական տագնապի հաղթահարումն ավելի դժվար գործընթաց է, քանի որ այն կապված է «Ես-պատկերի» ադեկվատության ձևավորման հետ («Ես-պատկեր» հասկացության ներմուծումը Հորնիի կարևորագույն բացահայտումներից է): Հորնին ասում է, որ «Ես-պատկերը» բաղկացած է 2 մասերից. գիտելիքներ քո մասին և վերաբերմունք դեպի քեզ, ընդ որում «Ես-պատկերի» ադեկվատությունը կապված է նրա կոգնիտիվ մասի հետ:

Հորնին կարծում էր, որ գոյություն ունեն մի քանի «Ես-պատկերներ». իրական «Ես», իդեալական «Ես», «Ես» այլ մարդկանց աչքերում: Միայն այդ երեք պատկերների համընկնման դեպքում կարելի է խոսել անձի նորմալ զարգացման և նևրոզների հանդեպ դիմադրողականության մասին: Եթե իդեալական «Ես»-ը տարբերվում է իրականից, մարդը չի կարող լավ վերաբերվել ինքն իրեն և դա խանգարում է նորմալ զարգացմանը, առաջացնում է տագնապ, լարվածություն, դառնում նևրոզների հիմք: Իրական և այլ մարդկանց աչքերում «Ես»-երի անհամապատասխանությունը ևս բերում է նևրոզների, ընդ որում այս դեպքում կարևոր չէ, թե այլոք ավելի լավ կամ ավելի վատ են մտածում մարդու մասին, քան նա: Սա նշանակում է, որ և՛ արհամարհանքը երեխայի հանդեպ, և՛ չափազանց հիացմունքը նրա նկատմամբ կարող են դառնալ տագնապի զարգացման պատճառ, քանի որ երկու դեպքում էլ մյուսների կարծիքը չի համընկնում երեխայի իրական «Ես-պատկերին»:

Տագնապից ձերբազատվելու համար մարդը կիրառում է հոգեբանական պաշտպանություն, որն ուղղված է հասարակության և մարդու միջև առկա կոնֆլիկտի լուծմանը, որի նպատակն է համապատասխանեցնել 2 «Ես-պատկերները»:

Հորնին առանձնացնում է պաշտպանության 3 ձև՝ ձգտում դեպի մարդկանց (ենթարկվող տիպ), ձգտում ընդդեմ մարդկանց (ագրեսիվ տիպ) և ձգտում մարդկանցից (օտարացված տիպ):

Առաջին դեպքում մարդը փորձում է հաղթահարել սեփական տագնապը՝ համաձայնության գալով շրջապատի մարդկանց հետ՝ հույս ունենալով, որ նրանք, ի պատասխան իր կոմֆորտության, չեն նկատելու իր «ես-պատկերի» ոչ ադեկվատությունը: Այսպիսի մարդիկ տանել չեն կարողանում մենակությունը: Եթե պաշտպանությունը զարգանում է մարդկանցից օտարանալու ձևով, ապա մարդ կարողանում է, ի տարբերություն առաջին տիպի, արհամարհել մյուսների կարծիքը, սակայն այս դեպքում ևս զարգանում են նևրոտիկ պահանջմունքներ, մասնավորապես անկախության և ինքնուրույնության պահանջմունքը, ինչպես նաև կատարյալ և անխոցելի լինելու պահանջմունքները:

Մարդկանց դեմ ուղղվածության դեպքում մարդու մոտ զարգանում են այնպիսի նևրոտիկ պահանջմունքներ, ինչպիսիք են բարձր հավակնությունները, մյուսներին շահագործելը, իշխանության ծարավը: Իշխանությունն իրենց համար սեփական ադեկվատության ապացույցն է:

Հոգեթերապիան, ըստ Հորնիի, թույլ է տալիս ձևավորել ադեկվատ պատկերացումներ սեփական անձի մասին: Պետք է նշել, որ հոգեբանական պաշտպանության հասկացությունը մեծ ներգործություն ունի ժամանակակից հոգեբանության վրա:

3.2.5. Էրիխ Ֆրոմ (1900-1980)

Գերմանա-ամերիկյան հոգեբան և փիլիսոփա, նեոֆրոյդիզմի ներկայացուցիչներից մեկը: Է. Ֆրոմը մարդկության հիմնական խնդիրը համարում էր մարդկային կենցաղում առկա հակասությունները, որոնց էությունը մարդու և բնության, իր և այլ մարդկանց միջև բնական, ներդաշնակ կապի խախտումն է: Մշակել է հումանիստական հոգեվերլուծության հոգեթերապևտիկ մեթոդը, որը կոչված է ներդաշնակել մարդու, բնության ու հասարակության միջև եղած փոխհարաբերությունները:

Մարդկության գոյության հիմնական շարժիչ ուժը, ըստ Է. Ֆրոմի, հանդիսանում է սերը, որպես մարդկային հարաբերությունների դրսևորման հատուկ ձև, որը հնարավորություն է տալիս մարդուն ձեռք բերել իր իրական «Ես»-ը:

Այս տեսակետը նա արտացոլել է իր «Սիրելու արվեստ» գրքում (1964 թ.), որտեղ արտահայտում է նաև այն գաղափարը, որ ժամանակակից հասարակության առողջացման ճանապարհը մարդու բարոյական վերածնունդն ու հոգևոր մաքրությունն է:

Ֆրոմը, հենվելով հոգեվերլուծության գաղափարների վրա, ձգտում էր լուծել մարդկային գոյության հիմնական հակասությունները: Իսկ ճգնաժամից քաղաքակրթության դուրս գալու ելքը տեսնում էր «առողջ հասարակության» ստեղծման մեջ, որը պետք է հենվեր հումանիստական էթիկայի սկզբունքների, այդ թվում՝ սիրո, բնության և անհատի, անձի և հասարակության միջև ներդաշնակության վրա:

է. Ֆրոմի տեսությունը գրավում է հոգեբաններին նախ և առաջ այն հանգամանքով, որ դրանում, ի տարբերություն մյուս տեսությունների, անձի սոցիալական դետերմինանտները նկարագրված են ամբողջությամբ:

Ֆրոմի մոտեցումը, որը ստացել է հումանիստական հոգեվերլուծություն (humanistic psychoanalysis) անվանումը, ենթադրում է, որ մարդու վախի, տագնապի, միայնակության զգացման և օտարացման հիմնական աղբյուրը մարդու հեռացումն է բնությունից:

Հումանիստական հոգեվերլուծությունը մարդուն դիտարկում է ավելի շատ պատմամշակութային, քան զուտ հոգեբանական առումով և ավելի մեծ կողմնորոշում ունի ոչ թե դեպի առանձին մարդուն, այլև դեպի մշակույթն ամբողջությամբ:

Ֆրոմը ծնվել է 1900 թ. մարտի 23-ին, Գերմանիայում: Նա միակ երեխան էր օրթոդոքսալ հրեաների ընտանիքում: Չնայած հետագայում Ֆրոմը գաղափարապես հեռանում է պաշտոնական կրոնից, այդուհանդերձ, նրա հումանիստական հոգեբանությունն անշուշտ պահպանել է կրոնական գաղափարների դրոշմը:

Կրթությունը ստացել է Ֆրանկֆուրտի համալսարանում, որտեղ 22 տարեկան հասակում նրան շնորհվել է սոցիոլոգիայի դոկտորի գիտական կոչում: 1933 թ. Ֆրոմը տեղափոխվում է ԱՄՆ և դասավանդում Չիկագյան հոգեվերլուծության ինստիտուտում, որտեղ աշխատում էր նաև Կ. Հորնին:

Ֆրոմը նշում էր, որ նրա տեսության համար առավել կարևոր էին Մարքսի և Ֆրոյդի գաղափարները: Ֆրոյդից նա գլխավորապես վերցրել է անձի կյանքում անգիտակցականի դոմինանտող դերի մասին գաղափարը, իսկ Մարքսից՝ սոցիալական ֆորմացիայի դերի մասին նրա միտքը հոգեկանի զարգացման համար, ինչպես նաև կապիտալիզմի օրոք օտարացման զարգացման գաղափարը՝ նկատի ունենալով հոգեբանական օտարացումը: Անձի զարգացումը, ըստ Ֆրոմի, պայմանավորված է երկու շարժիչ ուժերով՝ երկու բնածին անգիտակցական պահանջմունքներով, դրանք են՝ անհատականացման և արմատավորման պահանջմունքները: Եթե վերջինը

ստիպում է մարդուն ձգտել դեպի հասարակությունը, ապա անհատականացման պահանջմունքը, ընդհակառակը, դրդում է մարդուն մեկուսանալ մյուսներից, հասարակության պահանջմունքներից և ճնշումներից: Այս երկու պահանջմունքները ներքին հակասությունների պատճառ են դառնում և դրանց հաշտեցման բերելը ոչ միայն անհատական զարգացման, այլև ողջ հասարակության շարժիչ ուժն է դառնում: Ըստ Ֆրոմի, իր զարգացման սկզբում մարդը երջանիկ էր, որովհետև բնության մի մասն էր կազմում և այդ ժամանակ էր, որ արմատավորման հակումը զուգորդվում էր ցեղակիցներից մեկուսանալու հնարավորության հետ:

Այսպիսով, միջոցները, որոնցով մարդ իրացնում է սեփական հնարավորությունները, պայմանավորված են այն հասարակարգով, որի օրոք նա ապրում է, իսկ նրա անձը զարգանում է հասարակության կողմից տրված հնարավորությունների համաձայն: Օրինակ՝ կապիտալիստական հասարակարգի օրոք մարդ կարող էր հասնել անհատականացման՝ կարիերա կամ հարստություն ձեռք բերելով: Միևնույն ժամանակ մարդ կարող է արմատապես դառնալ մեծ կազմակերպության աշխատող: Չնայած դրան, Ֆրոմը նշում է, որ կապիտալիզմի օրոք արմատավորումը համեմատական է, քանի որ մեծ կազմակերպության աշխատակիցները հաճախ միասնական աշխարհընկալում չեն ունենում և ի վերջո ստացվում է, որ անհատականացումը զարգանում է ի հաշիվ արմատավորման: Ի վերջո, մարդը սկսում է զգալ դրա պահանջը և ցանկանում է փախչել ստացված ազատությունից: Փախուստն ազատությունից բնորոշ է այն հասարակությանը, որտեղ մարդիկ օտար են մեկը մյուսի հանդեպ, և դրսևորվում է ոչ միայն կայուն աշխատանք ձեռք բերելու ցանկության մեջ, այլև կայունություն խոստացող կազմակերպության տնօրենի կամ քաղաքական գործչի հետ նույնականացման մեջ: Ազատ լինելու ձգտումը մարդուն հնարավորություն չի տալիս մտորել, թե ինչու՞ է նրան անհրաժեշտ այդ ազատությունը և, ձեռք բերելով այն՝ մարդ չգիտի ինչ անել դրա հետ ու այդ ազատությունը ցանկանում է փոխել արմատավորման հետ: Միևնույն ժամանակ կա այլ ազատություն՝ «ազատության... համար», այսինքն մեր նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ ազատությունը: Այսպիսի ազատությունը չի պահանջում ազատում բոլոր տեսակի կապերից, այլ միայն այնպիսիներից, որոնք խոչընդոտում են նպատակի իրագործմանը: Այդպիսի սիրված մարդկանց հետ ապրելու ազատությունը ծնվում է հենց սիրո մեջ: Այն միաժամանակ բավարարում է երկու հակասական պահանջմունքները և հաշտեցնում դրանք: Դա է պատճառը, որ Ֆրոմը խոսում է երկրի վրա նոր հասարակության՝ «հումանիստական սոցիալիզմի» կառուցման մասին, որը կկառուցվի մարդկային սիրո հիման վրա:

Երկու հակասական ձգտումները կարող են ներքին բախման պատճառ դառնալ, և այդ բախումից ձերբազատվելու համար մարդ դիմում է հոգեբանական պաշտպանության, որը նրան հաշտեցնում է հասարակության և ինքն իր հետ: Ֆրոմն առանձնացնում է պաշտպանական մեխանիզմ՝ սադիզմ, մազոխիզմ, կոնֆորմիզմ և դեստրուկտիվիզմ:

Ֆրոմը նշում է, որ գոյություն ունի սեփական ներքին բնույթի դրսևորման երկու միջոց. «լինելու» և «ունենալու»: Մարդիկ, ովքեր ապրում են «ունենալու» համար, կողմնորոշված են սեփական զարգացման արտաքին կողմի վրա՝ հասարակության մեջ արմատավորվելու վրա: Նրանց համար կարևոր է ցուցադրել սեփական անհատականությունը մյուսների աչքերում բարձրանալու համար: Ընդ որում, կարևոր չէ, թե ինչի շնորհիվ են նրանք ցանկանում ցուցադրել սեփական նշանակալիությունը՝ գործնական գիտելիքների, իշխանության, կրոնի թե սիրո միջոցով: Այդ գիտելիքների կամ կրոնի բնույթը նրանց չի հետաքրքրում, կարևորը բոլորին ի ցույց դնելն է, որ դա իրենց սեփականությունն է: Միևնույն ժամանակ նրանք չեն հանդուրժում ցանկացած մեկին, ով կասկածում է նրանց դիրքի իրական լինելը, քանի որ վախենում են, որ ինչ-որ մեկը կարող է խլել այդ սեփականությունը: Այս ամենը հանգեցնում է նևրոզի՝ ունենալու պահանջմունքը դարձնելով անհագ:

«Լինել» սկզբունքով զարգացումը բնորոշվում է ներքին ազատությամբ և ինքնավստահությամբ: Այսպիսի մարդկանց համար միևնույնն է, թե ինչ են մտածում նրանց մասին, քանի որ կարևոր է ոչ թե ի ցույց դնել գիտելիքները, իշխանությունը, սերը, այլև՝ ինքդ քեզ բանիմաց, սիրող մարդ զգալը: Միաժամանակ այդպիսի մարդիկ չեն ձգտում ազատվել ամեն ինչից, ազատությունը նրանց անհրաժեշտ է ինքնիրացման համար: Ձգտելով լինել այնպիսին, ինչպիսին որ կան, այդպիսի մարդիկ հարգում են մյուսների «լինելու» ցանկությունը և, ըստ Ֆրոմի, հենց այդպիսի մարդիկ կնպաստեն նոր սոցիալական հասարակարգի ձևավորմանը:

Այսպիսով, մարդու և հասարակության հակասական դիրքերը, սոցիալական ֆորմացիայի դերն անձի զարգացման գործընթացում ի ցույց դնելը մեծ նշանակություն են ունեցել ոչ միայն հոգեբանության, այլև պատմության, սոցիոլոգիայի, մանկավարժության և փիլիսոփայության համար:

3.2.6. Էրիկ Էրիկսոն (1902-1994)

Ամերիկյան հայտնի հոգեբան Էրիկ Էրիկսոնը ծնվել է Մայնի Ֆրանկֆուրտում (Գերմանիա), 1902 թ. հունիսի 15-ին, մեծացել է Կարլսրուեում: Նրա ծնողները ծագումով դանիացիներ էին, բայց, քանի որ նրանք բաժանվել էին մինչև նրա ծնվելը, ուստի փոքրիկ Էրիկը դաստիարակվում էր գերմանացի խորթ հոր տանը: Ավարտելով դասական գիմնազիան, Էրիկսոնը այլևս փաստացի կրթություն չի ստացել:

Էրիկ Էրիկսոնը երիտասարդության տարիներին ուսումնասիրել է արվեստ և իր կարիերան սկսել որպես դիմանկարիչ: 1927 թ. մանկության ընկեր Պիտերի կողմից նա հրավիրվում է Վիեննա, որպեսզի պատկերի Աննա Ֆրոյդի և Դորոտեյ Բերլինգհեմի կողմից հիմնադրված փորձարարական դպրոցի երեխաների դիմանկարները, որտեղ այն ժամանակ ղեկավարում էր Բլոսը: Այդ ժամանակ Էրիկսոնը չնչին պատկերացում անգամ չուներ հոգեվերլուծության մասին, սակայն Աննա Ֆրոյդի հետ ծանոթությունը կտրուկ փոխեց նրա ապագայի ծրագրերը:

Քիչ ժամանակ անց, Էրիկսոնը հետևելով երեխաներին և աստիճանաբար ներառվելով Վիեննայի ու Ֆրոյդների հոգեվերլուծության աշխարհ, դարձավ մանկավարժական կոլեկտիվի անդամ: 1927-1933 թթ. ակտիվորեն յուրացրեց հոգեվերլուծության տեսությունն ու պրակտիկան: Անհրաժեշտ է նշել, որ Էրիկսոնն ամբողջ կյանքում ընդգծել է, որ նրա վերաբերմունքը Զ. Ֆրոյդի գաղափարներին չի կարելի անվանել ոչ այլ կերպ, քան պատվելի ու հարգալից, սակայն, շարունակելով հոգեվերլուծության ուսումնասիրումը, նա ստեղծագործաբար ու լիովին քննադատաբար վերաիմաստավորեց Ֆրոյդի ուսմունքը և առաջ քաշեց մանկությունից մինչև ծերություն մարդու զարգացման սեփական յուրօրինակ հայեցակարգը:

1928 թ. Էրիկսոնը սովորում է Վիեննայի հոգեվերլուծական ինստիտուտում: Այն ավարտելուց հետո, 1933 թվականին, քաղաքական պատճառներով, այլ հոգեվերլուծաբանների հետ միասին, տեղափոխվում է ԱՄՆ, որտեղ նրա ակադեմիական կարիերան լիովին հաջողվում է. նա աշխատել է Բոստոնում, ավելի ուշ՝ տեղափոխվել Յեյլ, այնուհետև Բերկլի, որտեղ աշխատում է ավելի քան տաս տարի: Իսկ կյանքի վերջում հասնում է Հար-

վարդի համալսարան: 1939 թ. նա ընդունում է Ամերիկայի քաղաքացիություն և ընտրում իրեն էրիկսոն ազգանունն ի պատիվ անհայտ դանիացի-հայր էրիկի:

1950 թ. լույս է տեսնում էրիկսոնի ամենահայտնի «Մանկություն և հասարակություն» գիրքը, որում նա ընդգծել է պատանեկության առանձին դերը մարդու կյանքի այլ շրջանների համար: Նրա տեսակետից, «կյանքի ցիկլը որոշվում է ճգնաժամերի հաջորդականությամբ, որոնք հաղթահարվում և իրենց տեղը զիջում են նորերին, ինչի շնորհիվ անհատն իրագործում է իր հնարավորությունները»: Ցանկացած տարիքում մարդը կարող է կա՛մ համաձայնել ինքն իր հետ, կա՛մ նրան կարող են տանջել ներքին հակասությունները: էրիկսոնը կարևորել է ներգործությունների լայն սպեկտրի դերը, որոնք որոշում են զարգացումը ոչ միայն մանկության, այլև պատանեկության, հասունության և ծերության տարիներին:

1958 թ. հրատարակված «Երիտասարդ Լյութերը» գրքում էրիկսոնը զարգացրել է անձի նույնականության ձևավորման իր տեսությունը: Այստեղ էրիկսոնը քննարկում է Լյութերի «նույնականության ճգնաժամը» և նրա ներքին կոնֆլիկտները հաղթահարելու եղանակը:

1968 թ. լույս է տեսնում նրա երկրորդ հայտնի «Նույնականություն, պատանեկություն և ճգնաժամ» աշխատությունը, որը նա ամբողջովին նվիրել է «նույնականություն» հասկացության բացահայտմանը: Նույնականությունը, ըստ էրիկսոնի, ի հայտ է գալիս մանկական նույնականացումների փոխգործողություններից, որոնք փոխակերպվում են ինչ-որ նոր փոխդասավորության (կոնֆիգուրացիայի)՝ կախված հասարակության այն գործընթացներից, որոնց օգնությամբ անհատը նույնականացվում է այն բանի հետ, թե ով պետք է նա դառնա: Նույնականությունը ձևավորվում է ակտուալիզացիայի ու սոցիալիզացիայի գործընթացում: Նույնականության գոյության անհրաժեշտ պայմանն էրիկսոնն անվանում է «կյանքի ձև», այսինքն ընդհանուր աշխարհայացք, ներքին տրամաբանություն:

1969 թ. հրատարակվել է «Գանդիի իսկությունն» անվանումով նաև մեկ հոգեկենսագրություն, որն ԱՄՆ ազգային մրցանակ բերեց հեղինակին:

Էրիկ էրիկսոնը մանրամասնորեն ուսումնասիրել է հոգեսոցիալական նույնականության ձևավորման սոցիալ-հոգեբանական մեխանիզմներն ու ձևերը մարդու զարգացման և հասունացման գործընթացում: Նրան հաջողվել է զարգացնել ու ընդլայնել զարգացման հոգեսեռական շրջանների ֆրոյդյան հայեցակարգը՝ անհատի զարգացումը կապելով սոցիալական նորմերի հետ: Հասուն անձը, ըստ էրիկսոնի, իրենից ներկայացնում է ինչպես ներհոգեկան, այնպես էլ հասարակական գործոնների արդյունք: էրիկսոնն առանձնացրել է զարգացման ութ շրջան, դա ներառել է մեկ աղյուսակում, որի վրա աշխատել է շուրջ 20 տարի: Այն հրատարակել է երեք ան-

գամ (1959, 1963, 1968), և ներկայումս պարբերացման այդ աղյուսակն ընդունված է տարիքային հոգեբանության բոլոր գրքերում:

Կյանքի այդ խնդիրների լուծումը յուրաքանչյուր շրջանում էական է՝ հաջորդող շրջաններին անցնելու համար:

Առաջին շրջան. հիմնարար վստահություն անվստահության դեմ:

Երկրորդ շրջան. ինքնավարություն կասկածի և ամոթի դեմ:

Երրորդ շրջան. նախաձեռնություն մեղքի դեմ:

Չորրորդ շրջան. վարպետություն թերարժեքության դեմ:

Հինգերորդ շրջան. նույնականություն նույնականության դիֆուզիայի դեմ:

Վեցերորդ շրջան. մտերմություն մեկուսացման դեմ:

Յոթերորդ շրջան. ստեղծագործություն պարապուրդի, լճացման դեմ:

Ութերորդ շրջան. ամբողջականություն հուսահատության դեմ:

«Երազատեսությունների օրինակներ հոգեվերլուծությունում» աշխատանքում (1954) Էրիկսոնը երազատեսությունը քննարկում է զարգացման իր տեսության դիրքերից՝ դիմելով Ֆրոյդի նամակագրությանը նրա ընկեր Վիլհելմ Ֆլիսսի հետ, նպատակ ունենալով հասկանալ, թե որն է եղել երազատեսությունների մեկնաբանության ծնվելու պատճառը:

Էրիկ Էրիկսոնը մահացել է 1994 թ. մայիսին: Նա հոգեբանական բառարանը հարստացրել է այժմ լայնորեն կիրառվող այնպիսի տերմիններով, ինչպիսիք են՝ «նույնականություն»-ը (identity), «նույնականության ճգնաժամ»-ը, «կյանքի ցիկլ»-ը (life cycle) և այլն:

3.3. Ստրուկտուրալիստական հոգեբանություն

3.3.1. Էդուարդ Բրադֆորդ Թիթչեներ (1867-1927)

Անգլոամերիկյան հոգեբան, ստրուկտուրալիստական հոգեբանական դպրոցի հիմնադիր: Ծնվել է 1867 թ. Անգլիայի Չիչեսթեր բնակավայրում: Սովորել է Սալվերնյան քոլեջում, իսկ այնուհետև Օքսֆորդի համալսարանում, որտեղ ուսումնասիրել է փիլիսոփայություն, գրականություն և ֆիզիոլոգիա: Օքսֆորդում հրապուրվում է Վունդտի գաղափարներով և մեկնում Լայպցիգ, որտեղ 1892 թ. ստանում է դոկտորի գիտական աստիճան: Վերադառնալով հայրենիք, փորձում է Անգլիայում զարգացնել փորձարարական հոգեբանությունը, սակայն հանդիպելով դիմադրության, 1892 թ. մեկնում է Միացյալ Նահանգներ: Մնացած ամբողջ կյանքն անց է կացնում Կորնելում՝ աշխատելով տեղի համալսարանում: 1893 թ. հիմնադրում է սեփական հոգեբանական լաբորատորիան: 1896 թ. հրատարակում է «Հոգեբանության ակնարկներ», 1898-ին՝ «Հոգեբանության նախնական դասընթաց» գրքերը, այնուհետև «Փորձարարական հոգեբանություն. գործնական պարապմունքների ձեռնարկ» քառահատոր աշխատությունը: Թիթչեները մահացել է 1927 թ., անավարտ թողնելով ստրուկտուրալիստական հոգեբանությանը նվիրված իր վերջին աշխատությունը:

Թիթչեներին չէր մտահոգում իր հոգեբանական համակարգի՝ ստրուկտուրալիզմի գործնական նշանակությունը: Նրա կարծիքով գիտնականին չպետք է մտահոգի սեփական հետազոտության գործնական արժեքը:

Ստրուկտուրալիզմի նպատակը հոգեկանի էության բացահայտումն է, այլ ոչ հիվանդների բուժումը, մարդկային գիտակցության ձևափոխությունն ու հասարակության վերափոխումը: Այդ իսկ պատճառով Թիթչեները դեմ էր գործնական հոգեբանական ուղղությունների զարգացմանը:

Թիթչեների կարծիքով հոգեբանության առարկան գիտակցական փորձն է: Եվ այն դեպքում, երբ բնագետները հետազոտում են բնական երևույթները՝ դրանցում ընթացող ֆիզիկական գործընթացների տեսանկյունից, հոգեբանությունն անդրադառնում է դրանց գիտակցման, ընկալման յուրահատկություններին: Գիտակցությունն, ըստ Թիթչեների, տվյալ պահին մարդու ունեցած ապրումների ամբողջությունն է, իսկ կյանքի ընթացքում կուտակված փորձի գումարը՝ բանականությունը: Հետևաբար, գիտակցա-

կան փորձի հետազոտությունների ընթացքում անհրաժեշտ է, որ փորձարկվողի նկարագրությունները կառուցվեն ոչ թե նախկին փորձի, այլ տվյալ պահին առաջացող ապրումների ազդեցությամբ: Ինտրոսպեկցիայի թիթչեներյան մեթոդը պահանջում էր, որ փորձարկվողը նկարագրի միայն այն ապրումները, որոնք նա ունենում է գիտափորձի ընթացքում՝ մի կողմ թողնելով նախկին փորձը: Ինտրոսպեկցիայի իր տարբերակին Թիթչեները, Օսվալդ Կյուլպեի օրինակով, տալիս է համակարգված փորձարարական ինտրոսպեկցիա անվանումը:

Գիտական գործունեության ամբողջ ընթացքում Թիթչեները գտնվում էր Վունդտյան հոգեբանական հայացքների ազդեցության ներքո, հիմնվում էր դրանց վրա: Այդուհանդերձ, որոշ հարցերում, նա հակադրվում է Վունդտի տեսակետին: Վունդտը հետազոտում էր հոգեկան պարզագույն երևույթների և դրանք առաջ բերող գրգռիչների փոխհարաբերությունների քանակական կողմը՝ շեշտադրելով զգայական պարզագույն տարրերից հոգեկան բարդ բովանդակությունների կառուցման երևույթը՝ ապերցեպցիան: Թիթչեները շարժվում էր հակառակ ուղղությամբ: Նա մասնատում է բարդ գիտակցական փորձը բաղադրիչ մասերի, փորձելով գտնել մարդկային հոգեկանի ատոմները: Ըստ Թիթչեների, հոգեբանության հիմնական խնդիրներն են գիտակցական գործընթացների մասնատումը տարրական բաղադրիչների, դրանց միավորման օրինաչափությունների, գիտակցության տարրերի և ֆիզիոլոգիական վիճակների ու գործընթացների միջև առկա կապերի բացահայտումը:

Ավելի ուշ շրջանում Թիթչեները հրաժարվում է իր տեսության որոշ դրույթներից: Նա այլևս չի խոսում հոգեկան տարրերի մասին, առավել մեծ ուշադրություն է դարձնում ընկալման գործընթացների տարբերություններին, հետազոտության ինտրոսպեկտիվ մեթոդը փոխարինում է ֆենոմենոլոգիականով և նույնիսկ առաջարկում իր հոգեբանական մոտեցումը «ստրուկտուրալիստական հոգեբանության» փոխարեն վերանվանել «էքզիստենցիալ հոգեբանություն»: Այդուհանդերձ, այդ փոփոխությունները չունեցան որևէ էական ազդեցություն Թիթչեների ստրուկտուրալիստական հոգեբանության ընդհանուր պատկերի ձևավորման գործում, այնպես որ թիթչեներյան հոգեբանությունը մեզ է ներկայանում իր նախասկզբնական տեսքով:

3.4. Դիֆերենցիալ հոգեբանություն

3.4.1. Ուիլյամ Շտերն (1871-1938)

Հրեական ծագում ունեցող գերմանացի հոգեբան Ուիլյամ Շտերնը ծնվել է 1871 թ. ապրիլի 29-ին: Հիմնական կրթությունը ստացել է Բեռլինի համալսարանում՝ հայտնի հոգեբան Էբինհաուզի մոտ: 1897 թ. գիտությունների դոկտորի կոչում ստանալուց հետո Շտերնը հրավիրվում է Բրեսլաուի համալսարան, որտեղ նա աշխատում է մինչև 1916 թ.: Այստեղ աշխատելու տարիներին նա խորացնում է իր գիտելիքները կիրառական հոգեբանության բնագավառում՝ միաժամանակ սկսելով «Կիրառական հոգեբանություն» ամսագրի հրատարակումը: Սակայն Շտերնն իր ողջ ուշադրությունը կենտրոնացրել էր մանկավարժական հոգեբանության վրա՝ ուսումնասիրելով անգամ ամենաչնչին մանրուքները: Նրան հետաքրքրում էին երեխայի զարգացման փուլերը՝ սկսած նրա ծնված օրվանից: Այդ իսկ պատճառով 1916 թ. հայտնի մանկան հոգեբան Մեմյանի առաջարկով՝ նա տեղափոխվում է Համբուրգի համալսարան: Այստեղ նա դառնում է հոգեբանական լաբորատորիայի վարիչ, ինչպես նաև «Մանկավարժական հոգեբանություն» ամսագրի թղթակից: 1919 թ. բացվում է Համբուրգի ինստիտուտը, որի նախաձեռնողներից մեկը հենց նա էր: 1933 թ. Շտերնը մեկնում է Հոլանդիա, իսկ 1934-ին՝ ԱՄՆ: Այստեղի համալսարաններից մեկում՝ Դյուքսի համալսարանում, նա ստանձնում է պրոֆեսորի պաշտոն: Գերմանացի հոգեբանն իր կյանքի մնացած մասն անց է կացնում ԱՄՆ-ում՝ ծավալելով ակտիվ գործունեություն՝ կատարելով բազում նորամուծություններ հոգեբանության ասպարեզում:

Ուիլյամ Շտերնն իր ուսումնասիրությունների կենտրոնում դրել էր երեխայի անձի զարգացման խնդիրը: Նա առաջարկեց մի տեսություն, որի հիմքում ընկած էր մարդու ամբողջական ուսումնասիրությունը, անձի ձևավորման օրինաչափությունները: Դա մեծ կարևորություն ուներ այդ ժամանակահատվածում (20-րդ դարի 10-ական թվականներին), քանի որ այդ տարիներին երեխայի զարգացումը կապում էին գիտակցված զարգացման հետ: Շտերնն ուսումնասիրել է նաև մտածողության և խոսքի զարգացման փուլերը: Նա հենց սկզբից ձգտում էր հետազոտել կոգնիտիվ գործընթացների

ոչ մեկուսացված զարգացումը, բայց դրա հետ մեկտեղ ամբողջական կառուցվածքի ձևավորումը, երեխայի անձը:

Շտերնը կարծում է, որ անձն ինքնակողմնորոշվող, որոշակի խորություն ունեցող, նպատակասլաց գործող ամբողջություն է (անգիտակից և գիտակից շերտերով): Դա բխում է այն բանից, որ հոգեկան զարգացումը մարդու մեջ գոյություն ունեցող հակումների, ընդունակությունների ինքնազարգացումն է և կախված է միջավայրից, որում ապրում է երեխան: Այս տեսությունը կոչվում է «կոնվերգենցիա», քանի որ նրանում հաշվի են առնվում երկու գործոններ: Դրանք են ժառանգականությունը և արտաքին միջավայրի ազդեցությունը հոգեկանի զարգացման վրա: Ուսումնասիրելով երեխայի գործունեությունը, որը գլխավորապես արտահայտվում էր խաղի մեջ, Շտերնն այս երկու գործոնները վերլուծեց որոշակի սկզբունքներով: Նա առաջին անգամ բացատրեց խաղի բովանդակությունը՝ ապացուցելով, որ դրա ձևն անփոփոխ է և կապված է բնածին ընդունակությունների հետ: Միաժամանակ արտաքին միջավայրն օգնում է երեխային հասկանալ, թե կոնկրետ ինչ գործունեությամբ նա կարող է իրականացնել իր մեջ արդեն գոյություն ունեցող հակումները: Այսպիսով, խաղը անհրաժեշտ է երեխայի սոցիալականացման համար:

«Զարգացում» ասելով Շտերնը հասկանում էր հոգեկան կառույցների աճը, տարբերակումը և վերափոխումը: Դրա հետ մեկտեղ նա, ինչպես և գեշտալտ հոգեբանության ներկայացուցիչները, զարգացումը հասկանում են որպես որոշակի կառուցվածք ունեցող և պարզ գեշտալտով անցում աղոտ կերպարներից հստակներին: Այդ անցումը դեպի հստակ և համարժեք արտացոլման, կատարվում է մի քանի փուլերով՝ վերափոխումներով, որոնք հատուկ են գրեթե բոլոր հոգեկան գործընթացներին: Հոգեկան զարգացումն ունի ոչ միայն ինքնազարգացման միտում, այլև ինքնապահպանման, այսինքն անձի պահպանման՝ երեխայի բնածին առանձնահատկությունների, ամենից առաջ անհատական զարգացման տեմպի պահպանման համար:

Շտերնը դիֆերենցիալ հոգեբանության, ինչպես նաև հոգեկանի առանձնահատկությունների տարբերակման հիմնադիրներից մեկն է: Նա ապացուցել է, որ գոյություն ունեն նորմատիվներ, որոնք ընդհանուր չեն որոշակի տարիքի բոլոր երեխաների համար: Դրանք անհատական նորմատիվներ են, որոնք բնութագրում են տվյալ երեխային: Նա դիմեց նաև փորձարարական մեթոդներին: Շտերնը թեստավորման նախաձեռնողներից մեկն էր: Նա կատարելագործեց երեխայի ինտելեկտի չափման ձևերը, որոնք սկսել էր ուսումնասիրել Ա.Բինեն, և առաջարկեց չափել ոչ թե մտավոր տարիքը, այլ մտավոր զարգացման գործակիցը:

Անհատական կարողությունների, յուրահատկությունների պահպանումը հնարավոր է շնորհիվ այն բանի, որ հոգեկան զարգացման մեխանիզմն ինտրոցեպցիան է, այսինքն երեխայի ներքին նպատակների և շրջապատից եկած տեղեկատվության միավորումը: Շտերնը կարծում էր, որ երեխայի պոտենցիալ հնարավորություններն ի ծնե բավականին անորոշ են: Անգամ հենց ինքը խոստովանում էր, որ մինչև վերջ չի կարողացել բացահայտել ինքն իրեն: Այստեղ մեծ դեր է խաղում արտաքին միջավայրը: Այն օգնում է երեխային որոշ չափով հասկանալ իր ներքին մղումները և դրանց տալ որոշակի ուղղվածություն: Երեխան ձգտում է վերցնել միջավայրից այն, ինչը համապատասխանում է նրա պոտենցիալ հակումներին՝ պատնեշ դնելով ազդեցությունների ճանապարհին, որոնք հակասում են իր ներքին ընդունակություններին: Առաջանում է կոնֆլիկտ արտաքին միջավայրի և ներքին հակումների միջև, որն ունի նաև դրական կողմ, քանի որ հենց բացասական հույզերն են առաջացնում այդ անհամապատասխանեցումը և դրդիչ ուժ են հանդիսանում ինքնիմացության զարգացման համար: Ֆրուստրացիան ստիպում է երեխային հասկանալ իրեն և շրջապատը, գիտակցել, թե կոնկրետ ինչն է նրան հաճելի կամ տհաճ: Այս կերպով Շտերնն ապացուցեց, որ հույզերը կապված են շրջապատի գնահատականի հետ և առաջացնում են զանազան «ռեֆլեքսիաներ»:

Զարգացման ամբողջականությունն արտահայտվում է ոչ միայն նրանով, որ հույզերը և մտածողությունը սերտ կապված են իրար հետ, այլև բոլոր հոգեկան գործընթացների զարգացման միանմանությամբ (ծայրամասից կենտրոն): Այդ իսկ պատճառով, նախ երեխան հասունանում է, սկսում ընկալել, ըմբռնել, ապա առաջանում է հիշողություն, այնուհետև մտածողություն, այսինքն՝ աղոտ պատկերացումներից անցում շրջապատի գիտակցմանը:

Շտերնը կարծում էր, որ խոսքի զարգացումը երեխայի համար մի մեծ հայտնագործություն է, մի բացահայտում, որ ամեն առարկա ունի իր անվանումը: Երեխան այս ամենն սկսում է գիտակցել 1-2 տարեկանում: Շտերնն առանձնացնում էր երեխայի խոսքի զարգացման 5 հիմնական փուլ: Փաստորեն նա մշակեց առաջին նորմատիվները և աշխատեց առանձնացնել միտումներ, որոնցից կարևորներն են անցումը պասիվ խոսքից ակտիվին և բառից՝ նախադասությանը:

Շտերնն ուսումնասիրել է նաև թերհաս երեխաների մտածողությունը: Նա գտնում էր, որ գլխավորն այստեղ սխեմայի դերն է, որն օգնում է երեխաներին պատկերացումներից անցնել հասկացությունների: Դա Շտերնի գաղափարն էր, որն օգնեց բացահայտել մտածողության նոր ձևեր՝ համոզիչ-սխեմատիկ կամ մոդելային մտածողություն, որի հիման վրա մշակված են շատ ժամանակակից հայեցակարգեր:

Շտերնի հետ գիտական ուսումնասիրություններ էր վարում նրա կինը՝ Կլարա Ժոզեֆինան (1878-1945): Նա ևս մանկան հիասքանչ հոգեբան էր: Նրանք ունեին երեք երեխա, որոնք ևս մասնակցում էին ծնողների ակտիվ գործունեությանը:

Կլարայի գիտական օրագրերը հիմք հանդիսացան Շտերնի «Մինչև 6 տարեկան երեխայի հոգեբանությունը» գրքի համար:

Այսպիսով, առանց չափազանցնելու, կարելի է ասել, որ Ուիլյամ Շտերնը մեծ դեր է կատարել մանկավարժական հոգեբանության բոլոր ոլորտներում՝ կոգնիտիվ գործընթացներից մինչև անձի ձևավորումը, ինչպես նաև իր ազդեցությունն է թողել ապագա հայտնի հոգեբանների ուսումնասիրությունների վրա:

3.5. Բիհեվիորիզմ

(Կազմող՝ Գ. Ս. Պետրոսյան)

3.5.1. Էդվարդ Լի Թորնդայք (1874-1949)

Ամերիկացի հոգեբան և մանկավարժ, կենդանիների հոգեբանական (զոոհոգեբանական) հետազոտությունների հիմնադիրներից: Ծնվել է 1874 թ. օգոստոսի 31-ին Միացյալ Նահանգների Մասաչուսեթս նահանգում: Սովորել է Ուեսլի քաղաքի համալսարանում: Հոգեբանության հանդեպ հետաքրքրությունը ձևավորվել է Ջեյմսի «Հոգեբանության հիմունքներ» աշխատության ազդեցությամբ: Վաղ շրջանում առավելապես հետաքրքրվում էր մտքի և գործողության փոխկապակցվածության հարցերով: Հետագայում ուշադրությունը կենտրոնացնում է դրական ամրապնդման և ուսուցման խնդիրների վրա: Որպես հետազոտությունների օբյեկտ (առարկա) Թորնդայքն օգտագործում է կենդանիներ (կատուներ, շներ, կապիկներ)՝ հետազոտելով նրանց վարքը խնդրահարույց իրավիճակում: Իր հետազոտությունների արդյունքները նա ներկայացնում է 1898 թվականին պաշտպանած «Կենդանիների բանականությունը: Կենդանիների զուգորդական գործընթացների փորձարարական հետազոտություն» դոկտորական ատենախոսության մեջ: 1899 թ. տեղափոխվում է Կոլումբիական համալսարան: 1912 թ. զբաղեցնում է Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի նախագահի պաշտոնը: Մահացել է 1949 թ.:

Մարդու գիտակցության հետազոտության գործում Թորնդայքն առավել կարևորում էր մի կողմից իրավիճակի, դրա տարրերի և բաղադրիչների, մյուս կողմից իրավիճակին մարդու հակազդեցությունների, դրա ուղղվածության փոխկապակցվածությունը: Նրա կարծիքով, հնարավոր է հասկանալ մարդու ներքին բովանդակությունները՝ պարզելով այն ազդակները, որոնք ուրախացնում կամ տխրեցնում են մարդուն, հաճույք կամ տհաճություն պատճառում նրան: Ըստ Թորնդայքի՝ մարդու և կենդանիների վարքը որոշվում է իրավիճակի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին բաղադրիչներով, անհատի վրա դրանց ազդեցությամբ, այդ ազդեցության հետևանքով առաջ եկող ներքին գործընթացներով կամ հակազդեցությամբ, իրավիճակի և հակազդեցության փոխկապակցվածությամբ:

Կենդանիների վրա արված իր փորձերում Թորնդայքն առավել մեծ ուշադրության էր արժանացնում դրանց ուսուցման (սովորելու) ընդունակությունը, ուսուցման ընթացքում դրական ամրապնդման դերը: Նա ստեղծում

է, այսպես կոչված, «պրոբլեսայլու արկղեր», որոնց մեջ տեղավորվում էին փորձարկվող կենդանիները: Արկղը փակվում էր, սակայն հատուկ մեխանիզմների միջոցով կարող էր բացվել, եթե կենդանին կարողանար կատարել անհրաժեշտ գործողությունը՝ սեղմեր բռնակը, կամ ձգեր շղթան: Դրսում դրվում էր կերի որոշակի չափաբաժին, որը, որպես պարգև, հասնում էր խնդիրը լուծած կենդանուն: Հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ կենդանին իր առջև դրված խնդիրն առաջին անգամ լուծում է պատահականության արդյունքում: Սակայն հետագայում, հայտնվելով նույն պայմաններում, կենդանին դրսևորում է նախկին փորձի արդյունքում ձեռք բերած հմտությունը: Եվ որքան ավելի շատ անգամ է կենդանին հայտնվում միևնույն իրավիճակում, այնքան փոքրանում է պատահականության դերակատարությունը: Հենվելով իր հետազոտությունների արդյունքների վրա, Թորնդայքը ներմուծում է փորձերի և սխալների միջոցով ուսուցման գաղափարը, ըստ որի, հայտնվելով խնդրահարույց իրավիճակում կենդանին կատարում է բազմաթիվ գործողություններ, փորձում լուծման բազմաթիվ տարբերակներ, որոնցից հաջողության հասցնողներն ամրապնդվում են, իսկ անհաջողները՝ մոռացվում:

Իր հետազոտությունների արդյունքում Թորնդայքը ձևակերպում է ուսուցման հիմնական օրենքները: Արդյունքի (կամ արդյունավետության) օրենքը ցույց է տալիս, որ տվյալ իրավիճակում առավել արդյունավետ գործողությունը զուգորդվում է այդ իրավիճակի հետ և, հայտնվելով նմանատիպ պայմաններում, կենդանին ինքնաբերաբար կրկնում է այն: Ի հակադրություն դրան, անհաջող գործողություններն առանձնանում են իրավիճակից և հետագայում ընդհանրապես չեն դրսևորվում: Զուգորդական տեղաշարժի օրենքի համաձայն, միաժամանակ ազդող ազդակներից մեկին տրված հակազդեցությունը հետագայում դրսևորվում է մյուս ազդակների ազդեցության պայմաններում: Ըստ վարժանքի օրենքի, իրավիճակի և դրան տրվող հակազդեցության միջև զուգորդական կապերի ամրությունը որոշվում է նմանատիպ իրավիճակներում այդ հակազդեցության դրսևորման հաճախականությամբ: Ինչպես տեսնում ենք, Թորնդայքի տեսակետը նման է ասոցիանիստական մոտեցմանը, սակայն ի տարբերություն վերջինի, որտեղ կարևորվում են գաղափարների միջև առաջացող զուգորդումները, Թորընդայքը շեշտադրում է իրավիճակի և հակազդեցության կապերը:

Թորնդայքի հետազոտությունները մեծ նշանակություն ունեցան հոգեբանության մեջ օբյեկտիվ մեթոդների ներմուծման և ուսուցման հոգեբանական մեխանիզմների բացահայտման զարգացման համար: Նրա հայացքները հիմք հանդիսացան բիհեվիորիստական հոգեբանության ձևավորման համար:

3.5.2. Ջոն Բրոդես Ուոթսոն (1878-1958)

Ամերիկացի հոգեբան, բիհեվիորիզմի հիմնադիր: Ծնվել է 1878 թվականի հունվարի 9-ին, Միացյալ Նահանգների Հյուսիսային Կարոլինա նահանգում: 1894 թ. Ուոթսոնն ընդունվում է Գրինվիլի բապտիստական համալսարան, մտադրություն ունենալով դառնալ հոգևորական: Սակայն, ավարտելով այդ համալսարանը, հրաժարվում է իր մտադրությունից և ընդունվում Չիկագոյի համալսարան, որն ավարտում է 1903 թ.: Հենց այստեղ էլ նա իրականացնում է առնետների վրա առաջին փորձերը: 1908 թ. տեղափոխվում է Բալտիմորի համալսարանի փորձարարական համեմատական հոգեբանության ամբիոն: 1913 թ. հրատարակվում է Ուոթսոնի «Հոգեբանությունը բիհեվիորիստի տեսանկյունից» գիրքը, որտեղ նա ներկայացնում է նոր զարգացող «Հոգեբանություն» գիտության իր հասկացումը: Քսանականների սկզբներին, Ուոթսոնը թողնում է գիտական և ակադեմիական գործունեությունը և աշխատում որպես գովազդային գործակալ: Այդուհանդերձ նա շարունակում է զարգացնել իր հայացքները, և 1930 թվականին լույս է տեսնում նրա «Բիհեվիորիզմ» աշխատությունը, որտեղ դասախոսությունների տեսքով ներկայացվում են բիհեվիորիստական հոգեբանության հիմնական դրույթները: Եվ, չնայած նշված աշխատություններում Ուոթսոնը հետևողականորեն ներկայացնում է իր հայացքները, այդուհանդերձ հայտնի է, որ նրա բազմաթիվ գրառումներ այդպես էլ չեն համակարգվում և հրատարակվում: Ուոթսոնը մահացել է 1958 թ.:

Հիմնվելով Թորնդայքի հայացքների վրա, Ուոթսոնը փորձում է հոգեբանությունը վերածել օբյեկտիվ գիտության, որտեղ հաշվի չեն առնվի գիտակցության բովանդակությունները: Նրա կարծիքով հոգեբանության հիմնական առարկան մարդու վարքն է, այլ ոչ գիտակցությունը, ապրումներն ու զգացմունքները, ինչպես կարծում էին հոգեբանական այլ ուղղությունների և դպրոցների ներկայացուցիչները: Նա գտնում էր, որ հոգեբանությունը օբյեկտիվ բնական գիտություն է, որի հիմնական նպատակները վարքի կանխատեսումն ու վերահսկումն են: Ըստ Ուոթսոնի, հոգեկան վիճակները ենթակա չեն դիտարկման: Նա կոչ է անում հրաժարվել գիտակցության էությանն ու բովանդակությանը վերաբերող խնդիրներից, վարքը դիտարկել գիտակցությունից անկախ, տարանջատում է սեփական մոտեցումը հոգեկան վիճակների ինտրոսպեկտիվ մեթոդներով հետազոտու-

թյուններ իրականացնող հոգեբանությունից, բիհեվիորիզմը հռչակում է որպես ինքնուրույն, օբյեկտիվ գիտություն:

Ուոթսոնի բիհեվիորիստական մոտեցումը մեծմասամբ հիմնվում է ֆունկցիոնալիզմի հիմնադրույթների վրա: Ինչպես մարդը, այնպես էլ ցանկացած օրգանիզմ որոշակիորեն հակազդում է իր կենսամիջավայրի ազդեցությանը և հարմարվում դրա պայմաններին: Ընդհանուր առմամբ, հարմարվելը (հարմարվողականությունը) հակազդեցության արդյունք է: Ուոթսոնն իր առջև նպատակ է դնում, պարզել հարմարվողականության մեխանիզմները, հարմարվելու գործընթացի հիմքում ընկած ազդակների և այդ իսկ գործընթացում դրսևորվող հակազդեցությունների բնույթը: Համաձայն Ուոթսոնի, մենք կարող ենք դատել ազդակի մասին ըստ դրան տրված պատասխանի և կանխատեսել պատասխանը, եթե հայտնի է ազդակը: Նա առաջարկում է վարքի հետազոտության ազդակ-հակազդեցություն (S-R) պարզագույն սխեման:

Իր հետազոտությունների ընթացքում Ուոթսոնը չէր ընդունում մարդու և այլ կենդանիների միջև որևէ բաժանիչ սահմանի առկայություն: Նրա կարծիքով մարդու վարքի բարդությունը պայմանավորված է քանակական գործոնով, այդ բարդության հիմքում ընկած են պարզագույն հակազդեցություններ, որոնք միավորվելով առաջ են բերում բարդ դրսևորումներ: Միավորումն իրականանում է դրական ամրապնդման արդյունքում և ներկայանում որպես պայմանական կապ: Մարդու ամբողջ զարգացումը՝ պատմական և անհատական, Ուոթսոնը բացատրում է դրական ամրապնդման հետևանքով նորանոր միավորումների մեջ պարզագույն հակազդեցությունների համախմբվելու երևույթով: Նույնիսկ մտածողությունը, զգացմունքները, խոսքը նա բացատրում է այս երևույթի օգնությամբ: Ընդ որում, այդ միավորման արդյունքում ձևավորվող բարդ վարքը հանգեցվում է դրա հիմքում ընկած տարրական հակազդեցությունների հասարակ թվաբանական գումարին: Հետևաբար, հետազոտելով պարզագույն հակազդեցությունները և մեխանիկորեն գումարելով դրանք, հնարավոր է կառուցել մարդկային վարքի առավել բարդ դրսևորումների ճշգրիտ պատկերը: Հակազդեցությունների հիերարխիայում ամենաստորին, պարզագույն մակարդակը Ուոթսոնի մոտ զբաղեցնում են անատոմոֆիզիոլոգիական՝ մկանային և գեղձային տարրական հակազդեցությունները և դրանց հետ կապի մեջ են հետազոտվում մտածողությունը, հիշողությունը, խոսքը, զգացմունքները և այլն:

Ուոթսոնի մոտեցումը շրջադարձային էր հոգեբանության, որպես օբյեկտիվ գիտության, զարգացման համար: Նախկինում իրականացվող ինտրոսպեկտիվ հետազոտություններում, որպես փաստ, դիտարկվում էին փորձարկվողի գիտակցության բովանդակությունները: Ուոթսոնի նորամու-

ծությունը հոգեբանական դաշտ բերեց «մաքուր», գիտակցությունից անկախ փաստեր: Այդուհանդերձ, ներհոգեկան փորձի, որպես հոգեբանության առարկայի, մերժումը խիստ քննադատության արժանացավ նրա ժամանակակիցների և նույնիսկ հետևորդների կողմից:

3.5.3. Բերես Ֆրեդերիկ Սքիներ (1904-1990)

Ամերիկացի հոգեբան, քննադատում է նեոբիհեվիորիզմը և գտնում, որ հոգեբանությունը պետք է հետազոտի միայն ազդակների և հակազդեցությունների արտաքին, դիտարկման ենթակա կապերի օրինաչափությունները: Ծնվել է 1904 թ. մարտի 20-ին Միացյալ Նահանգների Փենսիլվանիա նահանգում: 1926 թ. ավարտել է Նյու-Յորք նահանգում գտնվող Համիլթոնի քոլեջը: Այստեղ նա հետազոտում է անգլերեն լեզու և գրականություն: 1928 թ. Սքիներն ընդունվում է Հարվարդի համալսարանի հոգեբանության բաժնի ասպիրանտուրա: 1931 թ. ստանում է դոկտորի գիտական աստիճան: Նույն թվականին հրատարակում է «Ռեֆլեքս հասկացությունը վարքի նկարագրություններում» հոդվածը, որտեղ ներկայացնում է պայմանական ռեֆլեքսի սեփական հասկացումը: 1931-36 թթ. Հարվարդում հետազոտում է կենդանիների վարքը: 1936 թվականին տեղափոխվում է Մինեսոթայի համալսարան, որտեղ աշխատում է մինչև 1945 թ.: Այստեղից նա մեկնում է Ինդիանա նահանգ՝ գլխավորելու այդտեղի համալսարանի հոգեբանության ամբիոնը: 1947 թվականին վերադառնում է Հարվարդ և այստեղ աշխատում մինչև 1974 թ.: Բերես Սքիները մահացել է 1990 թ. օգոստոսի 18-ին:

Սքիները առաջ է քաշում օպերանտ ամրապնդման և օպերանտ վարքի գաղափարը: Նրա կարծիքով վարքը կանխատեսող գիտության միավորը ոչ թե հակազդեցությունն է, այլ հակազդեցությունների դասը, քանի որ հնարավոր չէ կանխատեսել և վերահսկել արդեն իրականացած հակազդեցությունը: Կարելի է միայն ենթադրել, որ նմանատիպ հակազդեցություններ կհանդիպեն նաև հետագայում: Եվ հենց հակազդեցությունների դասերի բնութագրման նպատակով է Սքիները ներմուծում «օպերանտ» հասկացությունը:

Սքիներին նախորդող տեսություններում և մասնավորապես պավլովյան տեսության սահմաններում ամրապնդումը զուգորդվում է ազդակի հետ: Սակայն ոչ միշտ է հնարավոր գտնել վարքին նախորդող ազդակը:

Սքիներն ուշադրություն է դարձնում վարքի այնպիսի ձևերի, որոնց դրսևորմանը նախորդող ազդակները կամ չեն ենթարկվում դիտարկման, կամ ընդհանրապես չկան: Պարզվում է, որ կենդանու և մարդու վարքի բազմաթիվ ձևեր ամրապնդվում են ոչ թե շրջակա միջավայրի նախորդող ազդեցությամբ, այլ հակազդեցության արդյունքով: Եվ, եթե մարդու գործողությունները հանգեցնում են ցանկալի հետևանքների, ապա հետագայում, հայտնվելով նմանատիպ պայմաններում, նա կրկնում է դրանք: Հակառակ դեպքում մարդը հրաժարվում է վարքի այդ ձևից: Գործունեության հետևանքների ազդեցությամբ իրականացող ամրապնդման տարբերակը Սքիներն անվանում է օպերանտ ամրապնդում, իսկ դրա արդյունքում ձևավորվող վարքը՝ օպերանտ վարք:

Այսպիով, օպերանտային ամրապնդման միջոցով հնարավոր է մարդու կամ կենդանու մոտ ձևավորել վարքի ցանկալի տարբերակներ: Սքիներն առաջ է քաշում դրական օպերանտային ամրապնդման միջոցով վարքի վերահսկման կամ ձևափոխման մեթոդը, որը լայնորեն կիրառվում է հոգեբուժական հիվանդանոցներում, գործարաններում, ուղղիչ հիմնարկություններում, դպրոցներում: Վարքին հաջորդող խրախուսանքի և պատժի մեթոդը լայն կիրառում է ստանում բազմաթիվ ոլորտներում:

Չնայած այն հանգամանքին, որ Սքիների բիհեվիորիզմը հրաժարվում է բոլոր տիպի տեսական կառուցումներից, այնուամենայնիվ նրա հետազոտությունները զգալի նշանակություն ունեցան ուսուցման և դաստիարակության գործընթացի կազմակերպման, հասարակական վարքի ձևավորման համար:

7-62

3.6. Նեոբիհեվիորիզմ

(Կազմող՝ Գ. Ս. Պետրոսյան)

3.6.1. Էդուարդ Չեյս Թոլմեն (1886-1959)

Ամերիկացի հոգեբան, նեոբիհեվիորիզմի ներկայացուցիչ: Դեմ էր այլ հոգեբանական ուղղությունների նկատմամբ Ուոթսոնի անհանդուրժողականությանը, փորձում էր միավորել բիհեվիորիստական մոտեցումը գեշտալտ հոգեբանության և հոգեվերլուծության գաղափարների հետ: Ծնվել է 1886 թվականի ապրիլի 14-ին Միացյալ Նահանգների Մասաչուսեթս նահանգում: Սովորում է տեղի տեխնոլոգիական ինստիտուտում, սակայն չավարտելով այն, 1911 թ. ընդունվում է Հարվարդի համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ: 1912 թ. ստանում է մագիստրոսի, իսկ 1915 թվականին՝ դոկտորի կոչում: 1918-ին տեղափոխվում է Կալիֆորնիա՝ Բերքլիի համալսարան, որտեղ դասախոսություններ է կարդում համեմատական հոգեբանությունից: Իրականացնում է բազմաթիվ գիտափորձեր առնետների վրա, փորձում է պարզել թաքնված ուսուցման օրինաչափությունները: 1932 թվականին հրատարակվում է Թոլմենի «Կենդանիների և մարդու նպատակասլաց վարքը» աշխատությունը, որտեղ նա ներկայացնում է բիհեվիորիստական մոտեցման սեփական տարբերակը: Սակայն Թոլմենի հայացքները, բիհեվիորիստական շրջաններում հանդիպում են ակնհայտ դիմադրության: 1951 թ. հրատարակվում է նրա «Հոգեբանական մոդել» գիրքը, որտեղ ներկայացվում է թոլմենյան բիհեվիորիզմի վերանայված տարբերակը: Գիրքը հաջողություն ունեցավ, և այդտեղ ներկայացվող բազմաթիվ գաղափարներ հիմք հանդիսացան ուսուցման խնդիրների և դրանց հանդեպ նախկինում ձևավորված մոտեցումների վերանայման և վերաիմաստավորման համար: Թոլմենը մահացել է 1959 թ. նոյեմբերի 19-ին, Կալիֆորնիայում:

Ուոթսոնյան արմատական բիհեվիորիզմի համեմատությամբ, Թոլմենի հայացքներն ունեն երկու հիմնական տարբերություն: Նախ, բիհեվիորիզմի թոլմենյան տարբերակում վարքի բարդ ձևերը դիտարկվում էին որպես ավելին, քան դրանց բաղադրիչների պարզ, թվաբանական գումարն է: Եվ եթե Ուոթսոնը վարքը դիտարկում է որպես մոլեկուլյար երևույթ, Թոլմենի մոտ այն ձեռք է բերում մոլյար բնույթ, այսինքն, ըստ Թոլմենի, վարքն ունի սեփական որակներ, որոնցով այն բնութագրվում է և որոնք այլ են, քան վարքի հիմքում ընկած ֆիզիկական և ֆիզիոլոգիական գործընթացների

որակները: Բարդ հակազդեցությունները չեն հանգեցվում տարրական անատոմոֆիզիոլոգիական հակազդեցություններին. դրանք որակապես տարբերվում են, ունեն զուտ հոգեբանական բնույթ:

Մյուս կողմից, Թոլմենը վերանայում է վարքի հետազոտության ուոթսոնյան S-R բանաձևը: Նրա կարծիքով, հնարավոր է միայն ազդակի կամ հակազդեցության բնույթի պարզաբանման միջոցով բնութագրել մարդու և կենդանիների բարդ վարքը: Թոլմենն առանձնացնում է վարքի երեք հիմնական բնութագրիչներ: Դրանք են՝ նպատակային ուղղվածությունը, նպատակին հասնելու համար ընտրվող միջոցների և նպատակին տանող ամենակարճ ճանապարհի ընտրությունը: Թոլմենը ներմուծում է «միջանկյալ փոփոխականներ» հասկացությունը, որով նշանակում է այն բոլոր դրդապատճառային, նպատակային, իմացական գործոնները, որոնք ընկած են ազդակի և դրան տրվող հակազդեցության միջև և որոնց ազդեցությամբ ձևավորվում է վարքը: Հետևաբար վարքն անհրաժեշտ է դիտարկել որպես նպատակային, իմացական, ընտրական գործողությունների ամբողջություն:

Թոլմենի նորամուծությունները հաղթահարեցին բիհեվիորիստական մոտեցման միակողմանիությունը և նպաստեցին ուսուցման գործընթացի հետագա հետազոտությունների ընթացքում ներհոգեկան իմացական, դրդապատճառային, նպատակային գործոնների դերի մեծացմանը:

3.6.2. Ալբերտ Բանդուրա (1925-1988)

Կանադա-ամերիկյան հոգեբան, սոցիալ-բիհեվիորիստական կամ սոցիալ կոգնիտիվ տեսության հիմնադիր: Ծնվել է 1925 թ., Կանադայում: 1952 թվականին Միացյալ Նահանգների Այովա նահանգի համալսարանում ստանում է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: 60-ականների սկզբներին առաջարկում է սոցիալ-բիհեվիորիստական հոգեբանական տեսությունը, որը հետագայում վերանվանում է սոցիալ-կոգնիտիվ հոգեբանական տեսություն: 1974 թվականին Բանդուրան զբաղեցնում է Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի նախագահի պաշտոնը:

Ի տարբերություն բիհեվիորիզմի սքիներյան տարբերակին, որի վրա է հիմնվում բանդուրային տեսությունը, այստեղ կարևորվում է մարդու դրսևորումների մեջ իմացական, կոգնիտիվ գործոնների դերը: Որպես այդպիսի

գործոններ առանձնացվում են սպասումները, հավատը, նախօրոք տրված հրահանգները: Բանդուրան կարևորում է արտաքին ամրապնդման վրա դրանց ունեցած ազդեցությունը. ըստ նրա՝ ներկայացվող ազդակին մարդու կողմից տրվող հակազդեցության բնույթը պայմանավորված է հենց այդ ազդեցությամբ: Բանդուրայի կարծիքով, մարդը կանխատեսում է իր հակազդեցությունների արդյունքները, ընտրում տվյալ իրավիճակում վարքի առավել նպատակահարմար տարբերակներ:

Բանդուրայի տեսության առանձնահատկություններից մեկն այն է, որ ի տարբերություն դասական բիհեվիորիզմի, որտեղ առավել կարևորվում է անհատական փորձի դերը, սոցիալ-բիհեվիորիստական մոտեցումն ընդունում է այլ մարդկանց փորձի վրա հիմնվող վարքի տարբեր ձևերի յուրացման հնարավորությունը: Այս երևույթը նշանակելու համար Բանդուրան ներմուծում է «անուղղակի ամրապնդում» հասկացությունը: Անուղղակի ամրապնդման արդյունքում անձի մեջ ձևավորվում է որոշակի իրավիճակի նկատմամբ այլ մարդկանց կողմից ցույց տրված հակազդեցությունների յուրահատուկ կոգնիտիվ մոդել: Հետագայում այդ մոդելը կարող է դրսևորվել նմանատիպ պայմաններում սեփական վարքի կարգավորման ընթացքում՝ ունենալով որոշիչ ազդեցություն: Եվ եթե մարդու վարքը պայմանավորված է առկա կոգնիտիվ մոդելներով, ապա սեփական վարքը վերահսկելու համար անհրաժեշտ է հասկանալ և վերահսկել այդ իսկ մոդելների ձևավորման, ամրապնդման գործընթացը: Կոգնիտիվ մոդելները Բանդուրայի տեսության մեջ կատարում են միջանկյալ, կապող դեր ազդակի և հակազդեցության միջև:

Բանդուրայի մոտեցումը ստանում է «Սոցիալական ուսուցման տեսություն» անվանումը: Այս մոտեցման կարևորագույն տարբերությունը բիհեվիորիստական այլ մոտեցումներից, որտեղ հետազոտություններն իրականացվում էին կենդանիների նկատմամբ, իսկ մարդկային վարքի մեկնաբանությունները կառուցվում էին դրանց ընդհանրացման ճանապարհով, Բանդուրան կարևորում է որոշակի իրավիճակի պայմաններին մարդու հակազդեցության, մարդկային վարքի, դրա ձևավորման և ձևափոխման գործընթացի, տվյալ հասարակության սահմաններում առավել մեծ ազդեցություն ունեցող կոգնիտիվ մոդելների և մարդկանց վարքի վրա դրանց ազդեցության հետազոտությունը: Որպես հասարակության մեջ առավել մեծ ազդեցություն ունեցող չափանիշային մոդելներ են հանդիսանում առավել բարձր հասարակական դիրք գրավող, ակնհայտ հաջողությունների հասած մարդկանց, ինչպես նաև զանգվածային լրատվական միջոցներում ներկայացվող վարքի մոդելները:

Կենսական բարդ իրավիճակներին առավել համապատասխան հակազդեցություն տալու ընդունակությունը Բանդուրան անվանում է

«անձի արդյունավետություն»: Ըստ նրա, բարձր անձնային արդյունավետություն ունեցող մարդկանց շրջանում առավել բարձր է ինքնահարգանքի, ինքնագնահատականի, համարձակության, ինքնավստահության, հավակնությունների մակարդակը: Ի տարբերություն նրանց, ցածր անձնային արդյունավետությամբ մարդիկ անհամարձակ են, անվստահ, անօգնական և, բախվելով բարդ կենսական իրավիճակների հետ, շուտ հիասթափվում են, հուսալքվում: Բանդուրան նշում է, որ անձնային արդյունավետությունն իր առավելագույն մակարդակին է հասնում միջին տարիքում:

Չնայած այն հանգամանքին, որ Բանդուրայի սոցիալական ուսուցման մոտեցումը քննադատվում է ավանդական բիհեվիորիզմի որոշ ներկայացուցիչների կողմից, դժվար է թերագնահատել նրա ավանդը մարդկային վարքի, դրա ձևավորման հետազոտության գործում:

3.7. Գեշտալտ-հոգեբանություն

3.7.1. Մաքս Վերտհայմեր (1880-1943)

Գերմանացի հոգեբան, գեշտալտ հոգեբանության հիմնադիր: Ծնվել է 1880 թ. ապրիլի 15-ին, Պրահայում: Սովորել է Պրահայի Հառլովյան համալսարանում: Բեռլինի համալսարանում լսել է Կառլ Շտումպֆի դասախոսությունները, Վյուրցբուրգում աշխատել է Օսվալդ Կյուլպեի լաբորատորիայում: Հենց այստեղ էլ, 1904 թ. ստանում է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Այնուհետև վերադառնում է Բեռլին, իսկ 1910 թ. մեկնում Մայնի Ֆրանկֆուրտ: 1910 թ. Մաքս Վերտհայմերի կողմից կատարված գիտափորձերի արդյունքների հրապարակումը սկիզբ է դնում գեշտալտ հոգեբանական ուղղության ձևավորմանը: 1921 թ., Կուրտ Կոֆկայի և Վոլֆգանգ Քյոլերի հետ համատեղ հիմնադրում է «Հոգեբանական հետազոտություններ» պարբերականը: 1929 թ. Վերտհայմերը ստանում է պրոֆեսորի կոչում: 1933 թ. արտագաղթում է Միացյալ Նահանգներ, որտեղ էլ մահանում է:

Հետազոտելով թվացյալ շարժման երևույթը, Մաքս Վերտհայմերը հանգում է այն եզրակացության, որ հնարավոր չէ զգայությունների հասարակ գումարման միջոցով բացատրել տեսողության միջոցով ընկալվող շարժումը: Հետևաբար, հնարավոր չէ բխեցնել ընկալումն ու ընկալական փորձն այն կազմող տարրերի որակներից: Արդյունքում ձևակերպվեց գեշտալտ հոգեբանության գլխավոր դրույթը, ըստ որի, կան կապեր, որոնց առկայության դեպքում այն, ինչը կատարվում է ամբողջի ներսում, չի բխեցվում իրև առանձին կտորներ գոյություն ունեցող, և հետագայում միավորվող տարրերից, այլ ընդհակառակը, այն, ինչը դրսևորվում է ամբողջի ցանկացած առանձին հատվածում, որոշվում է ամբողջի ներքին կառուցվածքային օրենքով: Այսինքն, ամբողջական համակարգը՝ գեշտալտը, ավելին է քան այն կազմող բաղադրիչների հասարակ գումարը: Այդ բաղադրիչների որակները որոշվում են ամբողջի մեջ նրանց գրաված դիրքի և ունեցած փոխհարաբերությունների ազդեցությամբ, այլ ոչ հակառակը:

Տարածելով գեշտալտ սկզբունքն իմացական ավելի բարդ գործընթացների վրա Վերտհայմերը ձևակերպում է պրեգնանտության օրենքը, ըստ որի, ամբողջական դաշտի կազմակերպումը միտված է լինել առավելագույնս պարզ և հասարակ, որքան թույլ են տալիս պայմանները: Այսինքն,

ցանկացած ամբողջ ձգտում է իր այն տարբերակին, որտեղ այն ավելի ամբողջական և ներդաշնակ է, դրա առանձին հատվածները կառուցվածքա-գործառութային տեսակետից դասևորվում են լավագույն ձևով, իսկ բոլոր դատարկ խոռոչները լցվում են համապատասխան բովանդակությամբ:

Ներկայացվող խնդրի ազդեցությամբ խախտվում է իրավիճակի ամբողջականությունը, քանզի մտածողության առջև ծառանում է անորոշը:

Անդրադառնալով ուսուցման գործընթացի օրինաչափություններին, Վերտհայմերը հենվելով գեշտալտ հոգեբանության հիմնական դրույթի վրա՝ առաջ է քաշում ուսուցման իր տեսությունը: Ըստ նրա, ուսուցման հիմքում ընկած է ինսայթի երևույթը, երբ նախկինում անհասկանալի, աղոտ, անիմաստ բանը դառնում է հասկանալի, պարզ: Այս դեպքում, առաջադրված խնդիրը և մտածողությունը կայանում է կառուցվածքային պահանջների և առանձնահատկությունների գիտակցման ու նկատառման մեջ, այն գործողություններում, որոնք համապատասխանում են այդ պահանջներին ու որոշվում դրանցով, և դրանով իսկ, իրավիճակի կառուցվածքի բարելավման ուղղությամբ դրանց փոփոխության մեջ:

Մտածողությունն ուղղորդվում է ձգտումով հասնել՝ իրականությանը, իրավիճակի սկզբնաղբյուրներին, կառուցվածքային հիմքը գտնելուն, անորոշ, ոչ ադեկվատ վերաբերմունքից իրադրությունում հիմնական հակասության հստակ պատկերին, բացահայտին անցնելուն, խնդիրն ամբողջությամբ ընբռնելու վիճակին:

S_1 իրավիճակը (մտածողության սկզբնական իրավիճակ) համեմատած S_2 իրավիճակի (մտածողության վերջնական իրավիճակ) հետ կառուցվածքայնորեն ավարտուն չէ, այն ունի ինչ-որ չլրացված տեղեր կամ կառուցվածքային խանգարումներ, մինչդեռ S_2 իրավիճակն այդ տեսակետից կառուցվածքայնորեն ավելի լավն է, չլրացված տեղերն ադեկվատորեն լրացված են, կառուցվածքային խանգարումները չքացել են, S_2-ը բացահայտ ամբողջական է S_1-ի համեմատությամբ:

Ինքնին S_1 խնդրահարույց իրադրության կառուցվածքային առանձնահատկությունները ստեղծում են վեկտորներ, որոշում են դրանց ուղղությունը, բնույթը, մեծությունը, ինչն իր հերթին բերում է իրավիճակի պահանջվող փոփոխություններին համապատասխանող օպերացիաների և գործընթացների:

Իրավիճակը պետք է հասկացվի կառուցվածքայնորեն, այսինքն խնդրի կառուցվածքային դերը պետք է հասկացվի՝ որպես տվյալ իրավիճակի մաս: Հաճախ այդպիսի ձևափոխումը պայթեցնում, քանդրտում, բացարձակ փոխում է S_1 խնդրահարույց իրավիճակի նախկին տեսքը:

Երբ մենք ընբռնում ենք խնդրահարույց իրավիճակը, նրա կառուցվածքային առանձնահատկություններն ու պահանջները ստեղծում են որոշակի

լարվածություն և դեֆորմացիաներ մտածողության դաշտում: Իրական մտածողությունում այդ լարվածությունն ու դեֆորմացիաները ծնում են վեկտորներ իրավիճակի լավարարման ուղղությամբ և համապատասխանաբար փոխում այն: S_2 իրավիճակն այնպիսի վիճակ է, որը որպես լավ կառուցվածք պահպանվում է ներքին ուժերով, որում առկա է փոխադարձ պահանջների ներդաշնակություն և որում մասերը որոշվում են ամբողջի կառուցվածքով, իսկ ամբողջը՝ մասերի կառուցվածքով:

Այդ գործընթացում ոչ միայն ուղղակի փոխակերպվում են տվյալ մասերը. այն կապված է անցյալի փորձի հաջորդող գիտելիքներից ու կողմնորոշումից ընտրված կառուցվածքային ռելեվանտ նյութի հետ:

Ամբողջ նյութից ընտրվում են այն քայլերն ու գործողությունները, որոնք հաջորդաբար փոխում են գործերի ընթացքը S_1-ում՝ S_2 կառուցվածքի ուղղությամբ:

Անհաջողությունը կախված է տեսադաշտից (շատ նեղ կամ շատ լայն):

Շատ դեպքերում հենց օբյեկտիվ իրավիճակի կառուցվածքն է առավելապես որոշում քայլեր ու վեկտորներ, այնինչ «ես»-ը՝ էգոն, և նրա անձնական միտումներն ու հետաքրքրությունները միայն աննշան դեր են խաղում կամ բոլորովին ոչ մի դեր չեն խաղում:

Խնդիրը կարող է անլուծելի լինել, քանի դեռ մենք կենտրոնացած ենք մեր սեփական ցանկությունների ու պահանջմունքների վրա: Այն լուծելի է դառնում միայն այն դեպքում, երբ մենք մեր ցանկությունը դիտարկում ենք որպես իրավիճակի մաս, գիտակցում ենք օբյեկտիվ կառուցվածքային պահանջները:

Առաջին նվաճումը հենց այն բանի գիտակցումն է, որ այստեղ կա խնդիր: Խնդրի ճիշտ առաջադրումը կամ պատկերը հաճախ ավելի կարևոր է, քան առաջադրված խնդրի լուծումը:

$$S_1 \longrightarrow S_2; \ldots\ldots S_1 \ldots\ldots S_2 \ldots\ldots S_1 \ldots\ldots S_2 \ldots\ldots S_1 \ldots\ldots S_2$$

Եթե իրական կառուցվածքը հասկանալու ցանկությունը թույլ է արտահայտված, ապա գերազանցում է կառուցվածքը պարզեցնելու ձգտումը:

Գեշտալտ հոգեբանության այս դրույթն ուղղված էր վունդտյան հոգեբանության ատոմիզմի դեմ: Վերտհայմերն ու նրա հետևորդներն ընդունում էին հոգեբանության համար գիտակցության և գիտակցական երևույթների կարևորությունը, սակայն նրանք դեմ էին գիտակցական փորձի մասնատմանը, բաժանմանն առանձին տարրերի: Եվ, չնայած Միացյալ Նահանգներում ձևավորված բիհեվիորիստական շարժումը նույնպես դեմ էր վունդտյան ատոմիզմին, այդուհանդերձ, նրանք մերժում

էին գիտակցության հետազոտության կարևորությունը հոգեբանության համար:

3.7.2. Կուրտ Կոֆկա (1886-1941)

Գերմանացի հոգեբան Կուրտ Կոֆկան Մաքս Վերտհայմերի և Քյոլեր Վոլֆգանգի հետ հանդիսանում է գեշտալտ հոգեբանության դպրոցի հիմնադիրներից մեկը: Կոֆկան ծնվել է 1886 թ. մարտի 18-ին, Բեռլինում:

Գեշտալտ հոգեբանության հիմնադիրների շարքում Կ. Կոֆկան, հնարավոր է, եղել է ամենահնարամիտը: Նա ծնվել և մեծացել է Բեռլինում և տեղի համալսարանում էլ ստացել կրթություն՝ դրսևորելով բացառիկ հետաքրքրություն փիլիսոփայության ու բնական գիտությունների հանդեպ: Հետագայում Կարլ Շտումպֆի ղեկավարությամբ նա ուսումնասիրում է հոգեբանություն և 1909 թ. ստանում դոկտորի գիտական աստիճան: 1910 թ. Կոֆկան Ֆրանկֆուրտի համալսարանի պատերի ներքո սկսում է իր երկարատև և բեղմնավոր համագործակցությունը Վերտհայմերի և Քյոլերի հետ: 1912 թ. Կ. Կոֆկան հրատարակում է իր առաջին՝ «Պատկերացումների և դրանց օրինաչափությունների վերլուծություն» հոդվածը:

1911-1924 թթ. Կոֆկան կապված է եղել Հեսսենյան համալսարանի հետ և, ինչպես Վ. Քյոլերը, մասնակցել է Մ. Վերտհայմերի կողմից անցկացվող ընկալման ուսումնասիրման գիտափորձերին՝ որպես հետազոտվող: Այդ հետազոտությունների արդյունքները Կոֆկային, Քյոլերին և Վերտհայմերին հանգեցրին ամբողջական մոտեցման առանձնացմանը: Համաձայն այդ մոտեցման սկզբունքների, հոգեբանական երևույթները չեն կարող մեկնաբանվել որպես առանձին տարրերի համակցություն. մասը ստանում է իր հատկությունները՝ ամբողջի հատկություններից, և մարդն ավելի շուտ ընկալում է ամբողջը, քան դրա մասերը:

Կ. Կոֆկան կատարել է բազմաթիվ փորձարարական հետազոտություններ, բայց նա ամենից շուտ հայտնի է՝ կապված գեշտալտ հոգեբանության առավել ընդհանուր խնդիրների լուծման սկզբունքների համակարգված կիրառման հետ: Իր գլխավոր աշխատանքներից մեկում («Հոգեկանի զարգացման հիմունքները», 1921) նա գեշտալտ հոգեբանության տեսակետը կիրառել է երեխաների հոգեբանության հարցերի նկատմամբ և ապացու-

ցել, որ երեխաներն ի սկզբանե աշխարհն ընկալում են ամբողջապես և թույլ են տարբերակում իրենց շրջապատող օբյեկտները:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նա աշխատում է հոգեբուժական կլինիկայում՝ օգնելով զանգի և գլխուղեղի վնասվածքներով, ինչպես նաև անխոսությամբ տառապող հիվանդներին:

Պատերազմից հետո՝ 1922 թ., երբ Միացյալ Նահանգների հոգեբանները ծանոթանում են Գերմանիայում ձևավորված նոր գիտական դպրոցի հետ, Կոֆկան գրում է հոդված՝ «Հոգեբանական տեղեկագիր» ամերիկյան ամսագրի համար: «Պերցեպցիա: Գեշտալտ հոգեբանության ներածություն» անվանմամբ այդ հոդվածով նա առաջին անգամ անմիջականորեն դիմում է ամերիկյան լսարանին: Հոդվածը ներառում էր գեշտալտ հոգեբանության հիմունքները, ինչպես նաև մի շարք հետազոտությունների արդյունքներն ու դրանց գնահատականները:

1924 թ. Կ. Կոֆկան այցելում է բազմաթիվ ամերիկյան համալսարաններ, իսկ 1927 թ. նա նշանակվում է Մասաչուսեթս նահանգի Սմիթյան քոլեջի հոգեբանության պրոֆեսոր, որտեղ էլ աշխատում է մինչև իր կյանքի վերջին օրերը:

1935 թ. նա հրատարակում է իր գլխավոր՝ «Գեշտալտ հոգեբանության հիմունքներ» աշխատանքը: Դրանում նա քննարկում է կիրառական հոգեբանության հարցերի լայն շրջանակ, բայց գլխավորապես այն նվիրված է հիշողության և իմացության ընկալման ուսումնասիրմանը:

Կ. Կոֆկան մահացել է 1941 թ. նոյեմբերի 22-ին, ԱՄՆ Մասաչուսեթս նահանգում՝ Նորթհեմփթոնում:

3.7.3. Վոլֆգանգ Քյոլեր (1887-1967)

Վոլֆգանգ Քյոլերը ծնվել է 1887 թ. հունվարի 21-ին, Էստոնիայում, Ռեվելում (Թալին): Նրա մանկությունն անցել է Գերմանիայում: Սովորել նա սկսել է նույնպես գերմանական դպրոցներից մեկում:

Քյոլերը փայլուն կրթություն է ստացել Տյուբինգենի, Բոննի և Բեռլինի համալսարաններում: 1909 թ., երբ լրացավ Վոլֆգանգի 22 տարին, նա Բեռլինի համալսարանի հոգեբանության բնագավառում ստացավ փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան և ընդհուպ մինչև 1935 թվականը գլխավորեց Բեռլինի հոգեբանության ինստիտուտը:

Քյոլերի գիտական գործունեության սկիզբը նույնպես դառնում է 1909 թվականը: 1913-ից մինչև 1920 թվականների ընթացքում Վոլֆգանգ Քյոլերը գլխավորել է մարդանման կապիկների վարքի ուսումնասիրման հետազոտական աշխատանքները Տեներիֆ կղզում: Իր դիտարկումների ավարտին Վոլֆգանգը գրել է «Մարդանման կապիկների ինտելեկտի հետազոտություն» գիրքը (1917), որում փորձարարական ճանապարհով ապացուցել է ինսայթի դերը, որպես կենդանիների վարքի կազմակերպման սկզբունք: Քյոլերի կարծիքով, ինտելեկտուալ խնդիրը հաջող լուծելիս, տեղի է ունենում ամբողջապես իրադրության պատկերացում և նրա ձևափոխում գեշտալտի («գեշտալտ» բառը՝ գերմաներենից թարգմանված, նշանակում է ձև, կերպար կամ կառուցվածք), ինչի արդյունքում փոփոխվում է հարմարողական ռեակցիաների բնույթը: Քյոլերի հետազոտություններն ընդլայնեցին կենդանու և մարդու վարքի նոր ձևերի ու հմտությունների բնույթի մասին պատկերացումների շրջանակները:

Ավարտելով հետազոտությունները և վերադառնալով կղզուց, 1920 թ. Վոլֆգանգ Քյոլերը ստանձնում է Բեռլինի համալսարանի հոգեբանության ինստիտուտի տնօրենի պարտականությունները: Եվ 1922 թ., Քյոլերին միջազգային ճանաչում բերած շիմպանզեների ընկալումների ու ինտելեկտի ուսումնասիրման մի շարք փայլուն գիտափորձերից հետո, նա նշանակվում է նույն ինստիտուտի տնօրեն:

Այստեղ Քյոլերը շարունակում է գեշտալտ տեսության վրա հիմնված հետազոտությունները և 1929 թ. հրատարակում իր կողմից՝ Կուրտ Կոֆկայի և Մաքս Վերտհայմերի հետ համատեղ ստեղծված «Գեշտալտ հոգեբանություն» աշխատությունը:

Այս ուղղությունը մշակած հոգեբան-գիտնականներն ամուր հիմք դրեցին ընկալման տեսության հենքում: Ամբողջականության և կառուցվածքայնության օրենքների բացահայտումն ու հետազոտումը տարբեր գնահատականներ ստացան մի շարք քննադատների կողմից, բայց ժամանակի հետ հասարակությունն, այնուամենայնիվ, ընդունեց ու հավանություն տվեց դրանց:

Ինքնին՝ գեշտալտի հայեցակարգը հիմնավոր զարգացում ստացավ Քյոլերի աշխատանքներում, ստեղծված 1920 և 1940 թվականներին: Դրանցում Քյոլերն ուշադրություն է դարձրել դաշտերի ֆիզիկայի որոշ տեսակետների և պերցեպտիվ կազմակերպման երևույթների միջև եղած ապշեցուցիչ նմանությանը: Նա մատնանշել է գործառնական ամբողջությունների օրինակներ ֆիզիկայում, որոնք չեն կարող դիտարկվել որպես առանձին մասերի համալիրներ: Գոյություն ունեն մակրոսկոպիկ ֆիզիկական վիճակներ, որոնք ձգտում են զարգանալ դեպի հավասարակշռության կողմը և առավելագույնս՝ կանոնավորության ուղղությամբ:

Երբ 1920 թ. Ջյոլերը մասնակցել է գեշտալտ հոգեբանության հիմնադրմանը, նա ձևափոխել է Գեորգ Մյուլլերի աքսիոմները (1897) ոչ վերլուծական դինամիկայի նոր հայեցակարգերին համապատասխան: Հենց նա է առաջարկել «իզոմորֆիզմ» տերմինն՝ այդ հոգենեյրոլոգիական հարաբերությունները նկարագրելու համար, հենց նա և իր գործընկերներն են այդ հայեցակարգն այդքան կարևոր դարձրել գեշտալտ հոգեբանության համար, որ նրանց աշխատանքներում ոչ միշտ է հնարավոր տարբերել, թե որ դաշտի մասին է խոսվում՝ երևութաբանական, թե ուղեղային: Սակայն Ջյոլերն արտահայտվել է խիստ որոշակի: Հարաբերություններն այդ երկուսի միջև ոչ թե չափի և ձևի նույնության, այլ տոպոլոգիական բնույթի են:

Ջյոլերը հիմնարար ճշգրտում է արել կեղևային գործընթացների հայեցակարգում: Այսպես, տեսողական ոլորտը նրա կողմից դիտարկվել է որպես էլեկտրոլիտ: Գրգռման լոկալ հատվածները շրջապատված են դաշտերով, որոնք ներկայացնում են այդ վիճակները շրջապատող միջավայրում և փոխգործում գրգռման համանման կերպով ներկայացված ուրիշ ոլորտների հետ: Սրա հիման վրա Ջյոլերն առաջադրել է վարկած, որ գոյություն ունեն ֆիզիոլոգիական գործընթացներ, որոնք իրենցից ներկայացնում են ֆիզիոքիմիական գեշտալտների նմուշներ, և դրանք հանդիսանում են երևութաբանական գեշտալտների կոռելյատներ:

Այսպիսի ձևակերպումը տարբերվում է լայնորեն ընդունված տեսակետից, որ երևութաբանական և ֆիզիոլոգիական դաշտերը չունեն առանձնահատուկ նմանություն, չնայած որ կապված են մեկը մյուսի հետ: Իզոմորֆիզմի կանխադրույթը կոչված է դառնալ էվրիստիկ՝ հետազոտողների համար: Այսպես էր Ջյոլերն ընդհանուր բացատրություն տալիս նեյրոֆիզիոլոգիական և հոգեբանական փաստերին, ֆիզիկական երևույթների բնագավառում:

1938 թ. իր «Արժեքների դերը փաստերի աշխարհում» գրքի «Երևութաբանությունից դուրս» գլխում նա գրում է. «Մեր մտադրությունը չէ տվյալ հետազոտությունը սահմանափակել երևութաբանական նկարագրերի հարցերով»: Չնայած Ջյոլերը նշում է, որ «հիմնարար սկզբունքների հետ կապված բոլոր հարցերը կարող են լուծվել միայն երևութաբանական հենքի վրա», նա արտահայտում է ձգտում հաղթահարելու մաքուր երևույթները, դիմելու «տրանսերևութաբանական իրողությանը»:

Քննարկելով հիշողության երևույթը, Ջյոլերը գրում է. «Գոյություն ունի միայն բնության մի մաս, որը, ինչպես ցույց են տալիս ժամանակակից գիտելիքները, կարող է այս դեպքում գտնվել սերտ շփման մեջ երևութաբանական տվյալների հետ: Բնության այդ մասը սովորաբար կոչվում է ուղեղի գործունեություն»:

1935 թ. Քյոլերը հրաժարական տվեց, որպես բողոք ընդդեմ նացիստների համալսարանի գործերին խառնվելուն և գաղթեց ԱՄՆ: 1955 թ. նա դարձավ Պրինստոնյան համալսարանի հեռանկարային հետազոտությունների ինստիտուտի աշխատակից, իսկ 1958-ին՝ Դարտմուտի քոլեջի հոգեբանության պրոֆեսոր: Քյոլերը մահացել է 1967 թ. հունիսի 11-ին, Էնֆիլդում (Նյու-Հեմպշիր նահանգ):

3.7.4.Կուրտ Լևին (1890-1947)

Գերմանացի հոգեբան, «հոգեբանական դինամիկ դաշտի տեսության» հիմնադիր: Լևինի հայեցակարգի հիմքում ընկած է այսպես կոչված «Կենսական տարածությունը»: «Կենսական տարածությունը», ըստ Լևինի, փոխկապակցված գործոնների ամբողջություն է, որոնք որոշում են անհատի վարքը տվյալ պահին: Այն ներառում է թե՛ անձը, թե՛ նրա հոգեբանական շրջապատը՝ ձևավորելով միասնական հոգեբանական դաշտ: Անհատի դիտվող վարքը պետք է դիտարկվի որպես իրադրության որոշակի «գենոտիպի» «ֆենոտիպային» արտահայտում: Այդ իրադրությունները տեղի են ունենում անհատի կենսական տարածության մեջ և իրենցից ներկայացնում են կա՛մ անհատի կողմից կենսական մի տարածությունից մյուսին անցում, կա՛մ էլ կենսական տարածության «կոգնիտիվ» կառուցվածքի փոփոխություն (ինսայթ): Լևինի կատարած ուսումնասիրությունները ընդհատված գործողությունը հիշելու և վերսկսելու, ֆրուստրացիայի, ձգողականության մակարդակի վերաբերյալ անձի փորձարարական հոգեբանության զարգացման համար դարակազմիկ արժեք ունեն:

Լևինի «դաշտի տեսության» հիմքում ընկած հոմեոստատիկ հիմնական մոդելը շատ անգամ քննադատվել է խորհրդային և արտասահմանյան այլ հոգեբանների կողմից:

Հայտնի հոգեբան և սոցիոլոգ Լևին Կուրտը ծնվել է Գերմանիայում, 1890 թ. սեպտեմբերի 9-ին: Նրա ընտանիքը պատկանում էր հրեական համայնքին: Կուրտի ծնողները հրեականություն էին դավանում: 1926 թվականից մինչև նացիստների կառավարությանն անցնելը (1933 թ.) նա զբաղեց-

նում էր պրոֆեսորի պաշտոն Բեռլինի համալսարանում, որտեղ նախկինում կրթություն էր ստացել և պաշտպանել դոկտորական ատենախոսություն հոգեբանությունից (1914 թ.): 1933 թ., երբ Հիտլերի կուսակցությունը հայտնվեց կառավարությունում և սկսվեցին հրեաների մասսայական ճնշումները Լևինը ստիպված էր թողնել հայրենիքը և գաղթել ԱՄՆ, որտեղ նա երկու տարի աշխատեց Ստենֆորդի համալսարանում: Հաջորդ ինն տարիներին Լևինը դասավանդում է Իովայի համալսարանում: 1944 թ. մինչև իր մահը (1947 թ. փետրվարի 12) գիտնականը ղեկավարում է Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի խմբային դինամիկան ուսումնասիրող կենտրոնը:

Արդեն իր երիտասարդության տարիներին Լևինը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում հոգեբանության նոր ու առաջադեմ ուղղվածություններից մեկի՝ գեշտալտ հոգեբանության նկատմամբ, որն այն ժամանակ իսկ զարգացող գիտություն էր: Բանակում ծառայելուց հետո նա վերադառնում է Բեռլինի համալսարան և մտերմանում գեշտալտ հոգեբանների հետ, որոնք փորձում էին նոր ուղղություն մտցնել դասական հոգեբանության մեջ: Գիտության երիտասարդ ասպետները պատրաստվում էին հարստացնել հոգեբանությունն այլ գիտությունների ամենաժամանակակից նվաճումներով և առնմանեցնել դրանք այնպես, որ ստանան հնարավորինս մեծ արդյունք: Մասնավորապես, նրանք մեծ ուշադրություն էին դարձնում բնական գիտությունների, հատկապես, ոչ դասական ֆիզիկայի ժամանակակից նվաճումներին: Հիմնական ոգեշնչման աղբյուրը գեշտալտ հոգեբանների համար ֆիզիկոս Բրիջմենի մտքերն էին (մասամբ մեծ հետաքրքրություն էր առաջացնում միջանկյալ փոփոխականների մասին գաղափարը): Այդ մտքերին ավելացան նաև 1920-ական թվականների նեոպոզիտիվիզմի (այսպես կոչված տրամաբանական պոզիտիվիզմի) փիլիսոփայական դպրոցի եզրակացությունները, որոնց հիմքում ընկած էր ֆիզիկայի լեզվի ճանաչումը, որպես միակ գիտական, և ձգտումը՝ դրան միացնելու մյուս հումանիտար, բնական ու ճշգրիտ գիտությունների լեզուները: Նմանատիպ նախադրյալներից ելնելով, գեշտալտ հոգեբանների կողմից հոգեբանությունը կարող էր դիտարկվել որպես ուսմունք հոգեբանական փաստերի մասին:

Սակայն, ժամանակի ընթացքում, սկզբնապես գեշտալտ հոգեբանության մտքերն ամբողջովին պաշտպանող Լևինը սկսեց հեռանալ դրանից՝ տեսության մեջ մտցնելով իր անձնական նվաճումները:

Լևինի առաջին կարևոր աշխատանքը դարձավ «Համեմատական գիտություն գիտությունների մասին» խորագրով գիրքը, որտեղ նա ընդգրկել է լուրջ մեթոդաբանական հետազոտություններ հնարքների և տարբերությունների վերաբերյալ, որոնց օգնությամբ գիտության երկու այնպիսի

հռչակավոր կորիֆեյներ, ինչպիսիք են Արիստոտելը և Հեգելը, բացատրում են բնության երևույթները (Արիստոտելի «Ֆիզիկա» և Հեգելի «Բնության փիլիսոփայություն» ստեղծագործությունները): Իր հետազոտությունում գիտնականը հանգել է այնպիսի եզրակացության, որ յուրաքանչյուր գիտությունում առաջընթացի հայտանիշը համարվում է անցումն այսպես կոչված առարկայական հասկացություններից «հարաբերական» հասկացությունների: Հետևաբար, հոգեբանությունում էլ անխուսափելիորեն պետք է նմանատիպ անցում կատարվի, և գիտությունը պետք է վերջապես սկսի մեկնաբանել ուսումնասիրվող երևույթները ոչ որպես միանշանակ որոշակի առարկաներ, այլ ինչպես փոփոխվող հարաբերություններ:

1917 թ. Լևինը հրատարակեց իր ամենահայտնի «Հոգեկան գործունեությունը կամային գործընթացների ուշացման դեպքում և զուգորդման հիմնական օրենքը» խորագրով աշխատանքը: Գիրքը շատ արագ հայտնի դարձավ ամբողջ աշխարհում և վաստակած հաջողություն բերեց հեղինակին: Այդ գրքում գիտնականը քննադատում է կամային գործողության մեկնաբանման համար կիրառվող «դետերմինավորող միտումների» մասին հասկացությունը, որը բացատրվում է որպես սուբյեկտի ընդունակություն հաղթահարելու սովորական զուգորդումները, այսինքն՝ ենթադրվում էր, որ կա գիտակցության գործընթացների երկակի դետերմինացիա: Մի կողմից զուգորդումները պայմանավորված են իրենց սեփական օրենքներով, իսկ մյուս կողմից՝ սուբյեկտի այդ զուգորդումների նպատակներով:

Լևինը քննադատեց այդպիսի մեկնաբանությունը և դրա փոխարեն առաջարկեց խնդրի սեփական տեսակետը: Նա համարում էր, որ զուգորդումն իրենից ներկայացնում է ընդամենը միացման օղակ հոգեկան երևույթների խմբերում, և դրա համար ինքնին չի կարող լինել մարդու հոգեկանի ամբողջ մեխանիզմի շարժիչ ուժ: Սակայն, մյուս կողմից գիտնականը չխիզախեց իր աշխատանքում կասկածի ենթարկել հոգեկան երևույթների դետերմինացիայի երկրորդ կողմը, այսինքն դրանց պայմանավորվածությունը սուբյեկտի գործունեությամբ, քանզի հակառակ դեպքում վերջինս կզրկվեր կամքից:

Կենտրոնը, որի շուրջ քննարկում էին ծավալում գեշտալտ հոգեբանները, դարձավ այն ժամանակ Ֆիզիկայում մշակված դինամիկ դաշտի հասկացությունը, որում յուրաքանչյուր առանձին վերցրած կետ փոխգործողության մեջ է գտնվում բոլոր մնացածների հետ, ինչի հետ կապված դաշտի հատվածներից մեկում լարվածության փոփոխություններն առաջացնում են միտում հեռացնելու լարվածությունը և վերականգնելու դինամիկ հավասարակշռությունն ամբողջ համակարգում: Սակայն, ի տարբերություն գեշտալտ հոգեբանությանը կողմնորոշված այլ հեղինակների, Լևինն իր ուշադրությունը կենտրոնացրեց ոչ թե պերցեպտիվ գոյացությունների վրա, այլ

մարդկային մղումների (գործունեության շարժառիթների) խնդրի վրա, ինչը և պայմանավորեց նրա աշխատանքների ինքնատիպությունը:

Դրդապատճառայնության խնդիրը, նախքան Լևինը, էական ուշադրություն չէր գրավում իր հանդեպ: Լևինը կարծում էր, որ մարդկային վարքի դրդապատճառները համարվում են տարբեր տեսակի առարկաները: Ըստ նրա, մարդու վարքը դետերմինավորող միտումները բխում են ոչ թե հենց սուբյեկտից (նրա ներքին, աշխարհընկալման նախադրյալներից), այլ շրջապատող միջավայրի առարկաներից, որոնք մարդու մոտ առաջացնում են դրանք օգտագործելու ձգտում:

Դրդապատճառների ամբողջ համակարգը, Լևինի մոտ, գտնվում է դինամիկ դաշտում, որն իրենից ներկայացնում է ոչ թե գիտակցության, այլ վարքի դաշտ: Այդ վարքը, պարզվում է, յուրատեսակորեն պայմանավորված է ողջ հոգեկան դաշտով, որպես համակարգ, որը գտնվում է կարծես միջավայրի և անհատի միջև հավասարակշռության խախտման դեպքում առաջացող մշտական լարվածության մեջ: Լարվածության ուժեղացումը մարդու հոգեկանում ծնում է տարբեր բնույթի փոփոխություններ:

Այդ մտքից ելնելով Լևինը ստեղծեց յուրատեսակ հոգեբանական մեթոդիկա, որի օգնությամբ տարբերում էին մարդու այսպես կոչված ավարտված և անավարտ գործողությունները: Այդ մեթոդիկայի կիրառմամբ անցկացված գիտափորձերի ընթացքում պարզվել է, որ անավարտ գործողությունների հետ կապված իրադարձությունները մարդու կողմից զգալիորեն ավելի լավ են հիշվում: Այսպիսով, Լևինը հաստատեց անհատի հոգեբանական դաշտում դինամիկ լարվածության առկայության մասին իր ենթադրությունը:

Զբաղվելով մտքի հետագա վերամշակմամբ՝ հեղինակը եկավ եզրակացության, որ հոգեկան դաշտի դրդապատճառային լարվածությունը կարող է ստեղծվել ոչ միայն հենց անհատի, այլև ուրիշ մարդկանց կողմից:

Այսպիսի եզրակացությունները ճանապարհ հարթեցին դրդապատճառայնության ուսումնասիրման նոր մեթոդիկաների համար: Հոգեկան դաշտի դինամիկայի դիտումները հնարավորություն տվեցին դիտարկել անհատի հավակնությունների մակարդակը, որոշման կայացման համակարգը և նպատակներին հասնելու համար միջոցների ընտրությունը, այսինքն մարդու ողջ գործունեությունը դիտել որպես որոշակի կառուցվածքավորված ամբողջություն: Այդ գաղափարները Լևինը շարադրել է՝ «Անհատի դինամիկ տեսություն» (1935), «Տիպաբանական հոգեբանության սկզբունքները» (1936 թ.) աշխատություններում:

3.7.5. Դանիել Կանեման (1934)

Դանիել Կանեմանը ծնվել է 1934 թ., Թել-Ավիվում՝ Իսրայել: Մանկությունն անցկացրել է Ֆրանսիայում և վերադարձել Իսրայել՝ 1946 թ.: 1951 թ. ավարտում է դպրոցը և սկսում ուսումնասիրել հոգեբանություն և մաթեմատիկա հրեական համալսարանում: Ինչպես ինքն է նշում իր ինքնակենսագրականում. «Ես բավականին թույլ էի մաթեմատիկայից, սակայն հոգեբանությունը ինձ հմայեց: Դեռևս առաջին կուրսում նրան հետաքրքրում են Կուրտ Լևինի տեսության հիմնադրույթները: 50 տարի անց նա դեռևս շարունակում է Պրինստոնի համալսարանում իր կողմից կարդացվող ներածական դասախոսության սահմաններում ընդգծել մարդու վարքի փոփոխության Լևինյան մոտեցումը:

1954 թ. Կանեմանն անցնում է ծառայության, ուր զբաղվում է մարզումների համար սպաների ընտրությամբ: Նրա հիմնական պարտականությունների մեջ էր մտնում նաև նորակոչիկների դասակարգումը՝ անձի գնահատման տարբեր հարցազրույցների միջոցով, որոնք Կանեմանն ինքն էր մշակում: Ազատագրվելուց հետո Կանեմանը վերադառնում է հրեական համալսարան, ուր լսում է գիտության փիլիսոփայության և տրամաբանության դասընթացներ:

Բացատրելով, թե ինչու ընտրեց հոգեբանությունը, Կանեմանը գրում է. «Դա տեղի ունեցավ 1941 թ. վերջին կամ էլ 1942 թ. սկզբին: Հրեաները ստիպված էին կրել Դավթի աստղը, և սկսած 18:00-ից ենթարկվեին պարետային ժամին: Ես գնացել էի խաղալու իմ քրիստոնյա ընկերոջ տուն և մնացել մինչև ուշ երեկո: Երբ քայլում էի դատարկ փողոցով՝ նկատեցի մոտեցող գերմանացի զինվորի: Նա կրում էր սև համազգեստ, որից, ինչպես ինձ ասել էին, ես պետք է առավել շատ վախենայի և զգուշանայի: Մոտենալով նրան՝ փորձեցի արագ շրջանցել և նկատեցի, որ շատ ուշադիր ինձ է նայում: Նա կանչեց ինձ ու գրկեց: Ես վախեցա, որ նա կտեսնի իմ հագուստի վրայի աստղը: Սակայն նա խոսում էր իմ հետ շատ հուզական՝ գերմաներենով: Դրանով նա ինձ գրավեց, հետո բացեց դրամապանակը, ցույց տվեց տղայի լուսանկարը և դրամ տվեց: Ես տուն վերադարձա՝ համոզված նրանում, որ մայրս ճիշտ է. մարդիկ անսահման բարդ ու հետաքրքիր են»:

Դ. Կանեմանի կյանքը վառ ցուցադրում է ժամանակակից գիտնականների կոսմոպոլիտիզմը: Սկսելով ուսումը հրեական համալսարանում

(1954՝ բակալավրի աստիճան «Հոգեբանություն և մաթեմատիկա» մասնագիտությամբ), Կանեմանն այն ավարտում է Բերկլիում (1961՝ «Հոգեբանություն» մասնագիտությամբ դոկտորի աստիճան): Հաջորդող 17 տարիների ընթացքում դասավանդում է Երուսաղեմի հրեական համալսարանում՝ համատեղելով ԱՄՆ-ի և Եվրոպայի մի շարք առաջատար բուհերում դասախոսական աշխատանքը (Քեմբրիջ, Հարվարդ, Բերկլի): Այդ տարիներին հիմնականում դասավանդում է «Վիճակագրական մեթոդները հոգեբանությունում» և «Ընկալման հոգեբանություն» դասընթացները: Զուգահեռ Կանեմանը զբաղվում է գիտական հետազոտական աշխատանքով միանգամից մի քանի իրեն հետաքրքրող ուղղություններով՝ տարբեր համալսարաններում:

Կանեմանն իր առաջին հաջողված փորձը կատարել է 1965 թ., որն ուղղված էր տարբեր մտային աշխատանքների կատարման ընթացքում աչքի բիբի փոփոխությունների գրանցմանը: Դրա արդյունքում մտային ճիգի ուսումնասիրումը դառնում է նրա գիտական ուսումնասիրությունների կիզակետը Հարվարդի համալսարանում անցկացրած հետագա մեկ տարվա ընթացքում: 1967 թ., երբ վերադառնում է Երուսաղեմ, Կանեմանն արդեն իրեն համարում է լիովին կայացած փորձարարական հոգեբան: 1970թ-ին առժամանակ թողնում է աշխատանքն Իսրայելում՝ համատեղ գիտական ուսումնասիրություններ կատարելով ամերիկյան և կանադական մի շարք գիտնականների հետ: 1993 թ. զբաղեցնում է պրոֆեսորի պաշտոն ԱՄՆ Պրինստոնի համալսարանում, իսկ 2000 թ.՝ նորից զուգահեռ դասավանդում հրեական համալսարանում:

1979 թ. լույս է տեսնում հանրահայտ «Հեռանկարների տեսությունը. ռիսկի պայմաններում որոշումների ընդունման վերլուծությունը» համատեղ հոդվածը: Հոդվածի հեղինակներ Դ. Կանեմանը և Ա. Տվերսկին, հիմնադրելով վարքային տնտեսագիտությունը (behavioral economics), ներկայացնում են մեծ թվով փորձերի արդյունքներ, որոնց ընթացքում մարդկանց առաջարկվում էր տարբեր այլընտրանքների միջև կատարել ընտրություններ:

1992 թ. Դ. Կանեմանն ու Ա. Տվերսկին ընդլայնում են հեռանկարի սկզբնական տեսությունը, որի արդյունքում լույս աշխարհ է գալիս «գումարային հեռանկարի» տեսությունը: Նախ և առաջ այն հաշվարկված է մեծ թվով հեռանկարների համար, որոնց բախվում է անհատը: Տեսության գործնական ստուգումը ցույց է տալիս, որ անհատները սխալվում են ռեսուրսների օպտիմալ բաշխման մեջ՝ փոխանակ դիվերսիֆիկացնեն ռիսկերը, նրանք «դնում են բոլոր ձվերը մեկ արկղի մեջ»:

2002 թ. Դանիել Կանեմանն առաջին հոգեբանը և երրորդ ոչ տնտեսագետն էր (մաթեմատիկոսներ Լեոնիդ Կանտորովիչից (1974 թ.) և Ջոն Նեշից (1994 թ.) հետո), ով արժանացավ Շվեդական բանկի մրցանակին:

Նոբելյան հանձնաժողովի պաշտոնական եզրակացությունում ասվում է, որ Դ. Կանեմանին մրցանակը շնորհվում է. «տնտեսագիտական գիտության վրա հոգեբանության ինտեգրացված ազդեցության մշակման համար, հատկապես այն խնդիրներում, որոնք վերաբերում են անորոշության իրավիճակում մարդկային դատողություններին և որոշումների ընդունմանը»:

Նոբելյան մրցանակը ստանալուց հետո իր առաջին ելույթում Կանեմանը նշում է, որ մրցանակը նշանակում է վարքային տնտեսագիտության հաջողությունների ընդունում, քանի որ արդեն իսկ ստեղծվել են վարքի ճշմարտանման հոգեբանական մոդելներ, որոնք թույլ են տալիս բացատրել տնտեսագիտական տեսության դրույթները և բազում տնտեսագիտական երեվույթներ: Ըստ Կանեմանի, տնտեսագիտության և հոգեբանության փոխհարաբերություններն ավելի ու ավելի բարդ և բազմակողմանի են դառնում: «Տնտեսագիտության «եկեղեցին», - նշում է Կանեմանը, - արդեն իսկ պարգևատրել է մի քանի գիտնականների, ում հերետիկոս կհամարեր ավելի վաղ ժամանակաշրջանում:

Ավանդական տնտեսագիտական վերլուծությունն այժմ կատարվում է որոշ բուն հոգեբանական գործոնների հաշվառմամբ: Սակայն տնտեսագիտության վերլուծական մեթոդաբանությունը կայուն և անփոփոխ է, որն էլ սահմանափակում է այս երկու գիտությունների ամբողջական երկխոսությունը: Այժմ նկատելի է, որ տնտեսագիտության ու հոգեբանության անջրպետը նեղանում է, սակայն դեռևս չկան անմիջական հեռանկարներ, որ այս երկու գիտությունները կգտնեն մարդու վարքի մեկնաբանման ընդհանուր տեսություն»:

3.8. Հոգեհամադրում

3.8.1. Ռոբերթո Ասաջիոլի (1888-1974)

Տրանսպերսոնալ հոգեբանության հզոր ներկայացուցիչ, իտալացի հոգեբույժ, հոգեվերլուծաբան Ռ. Ասաջիոլին ստեղծել է անձի վերակառուցման տեխնիկան, որն անվանել է «հոգեհամադրման» տեսություն: Անձի մասին պատկերացումը հոգեհամադրման մեջ տարբերվում է հոգեվերլուծականից, չնայած մասամբ հարաբերակցվում է դրա հետ: Ասաջիոլին դիտարկում է հոգեկանի վեց բաղադրիչներ.

- ներքին անգիտակցական (բնազդային մղումներ, կրքեր, պարզագույն ցանկություններ և այլն),
- միջին անգիտակցական (մտքեր, Ֆրոյդյան նախագիտակցականի համանման, հեշտորեն գիտակցվող զգացմունքներ),
- բարձրագույն անգիտակցական, կամ գերգիտակցական (բարձրագույն զգացմունքներ և ընդունակություններ, ներըմբռնողություն, ներշնչում),
- գիտակցության դաշտ (վերլուծվող զգացմունքներ, մտքեր, մղումներ),
- «Ես»-գիտակցական ինքնություն (հստակ գիտակցման կետ),
- բարձրագույն ինքնություն (յուրատեսակ «ներքին Աստված»):

Ասաջիոլին տարբերակում է հոգեհամադրման աշխատանքի երկու մակարդակ՝ պերսոնալ և տրանսպերսոնալ: Պերսոնալ հոգեհամադրումն ուշադրությունը կենտրոնացնում է անձնային «Ես»-ի շուրջ անձի ինտեգրմանը: Տրանսպերսոնալ հոգեհամադրումը զբաղված է անձի և տրանսպերսոնալ «Ես»-ի վերամիավորմամբ: Նա նշում է, որ անձնային «Ես»-ը հիմնականում իրենից ներկայացնում է տրանսպերսոնալ «Ես»-ի արտացոլում:

Ասաջիոլիի համար ելակետ է համարվում ձգտումը՝ ներթափանցելու մարդու հոգեկան կենտրոն՝ այն ոլորտը, որը կրոնական և արևելյան փիլիսոփայական ուսմունքների կողմից նշվում է որպես մարդկային անհատականության բարձրագույն «Ես», որպես վերգիտակցություն: Յունգը, Ֆրոմը և Ասաջիոլին, հենվելով վեդանտական ավանդույթի վրա, մարդու մասին եվրոպական գիտությունը կարողացան հարստացնել ավելի արգասավոր մոտեցումներով:

Հոգեհամադրման իր գաղափարները Ռոբերթո Ասաջիոլին վերցրել է ոչ միայն Վեդանտայի տեքստերից: 1940 թ., ձերբակալված լինելով Իտալիայի ֆաշիստական իշխանությունների կողմից, նա մոտ մի ամիս անցկացնում է մենախցում և արդյունքում՝ պատմում ընկերներին, որ այդ հետաքրքիր ու արժեքավոր փորձը նրան հնարավորություն տվեց անցկացնել մի շարք հոգեհոգևոր վարժություններ: Նա նույնքան արդյունավետ է օգտագործում հարկադրված մենակեցությունը 1943 թ., երբ հեռավոր լեռնային գյուղերում թաքնվում է Մուսոլինիի ռեժիմից:

Ասաջիոլիի խնդիրն էր բուժել մարդկանց հոգեկան առաջխաղացման արդյունքում առաջացող նյարդային հիվանդությունները: Բայց հոգեկան աճ և հիվանդություն բառակապակցությունը կարծես թե տարօրինակ է. ինչի՞ համար է այդպիսի աճը, եթե այն ուղեկցվում է հիվանդությամբ: Եվ, իսկապես, նյարդային հիվանդությունների մեծամասնությունն առաջանում է ոչ թե հոգեկան աճի արդյունքում, այլ որպես դրա շեղման հետևանք: Ասաջիոլին չի նշում, թե որքա՞ն դժվար ու երկարատև է «հոգեհամադրական» բուժումը, այնինչ տարրական կանխարգելումը թույլ է տալիս խուսափել բազմաթիվ հոգեբանական ծուղակներից և, ամենից առաջ, մարդու հոգեկան ոլորտ ինչ-որ մեկի ու ինչ-որ բանի բռնի ներխուժումից:

Հոգեհամադրումը կիրառվում է խորքային և վաղ խանգարումների բուժման գործընթացում, իսկ հոգեհամադրման գործնական պարապմունքները թույլ են տալիս հասնելու կատարելության: Հոգեհամադրման ժամանակակից ներկայացուցիչների մեծ մասը միավորում է հոգեհամադրումը զարգացման և անձի հոգեբանության, ինչպես նաև կլինիկական տեսության և հետազոտությունների հետ:

Ասաջիոլիի ստեղծագործություններից են. «Նյարդային խանգարումները հոգեկան աճի դեպքում» (1971), «Հոգեհամադրում» (1971, ռուսերեն թարգմանությունը՝ 1994), «Ցանկության օրենքը» (1973):

3.9. Գործունեական մոտեցում

3.9.1. Սերգեյ Ռուբինշտեյն (1889-1960)

Խորհրդային հոգեբան և փիլիսոփա, հոգեբանության մեջ գործունեական մոտեցման հիմնադիրներից մեկը՝ Սերգեյ Լեոնիդի Ռուբինշտեյնը, ծնվել է 1889 թ. հունիսի 18-ին, Օդեսայում: 1908 թ. նա ոսկե մեդալով ավարտել է գիմնազիան: Փիլիսոփայական և հոգեբանական կրթությունն ստացել է Մարբուրգում:

1914 թ. ավարտում է Մարբուրգի փիլիսոփայության ֆակուլտետը, և այդ ժամանակ էլ լույս է տեսնում նրա «Մեթոդի խնդրի հանդեպ» առաջին մեծ հոդվածը, որի մի մասն էլ դառնում է նրա դոկտորական ատենախոսությունը:

Առաջին համաշխարհային պատերազմը Ս. Ռուբինշտեյնին ստիպում է վերադառնալ Օդեսա, և 1917 թ. նա դասավանդում է գիմնազիայում:

1919 թ. ապրիլին Նովոռոսիյսկի համալսարանի պատմափիլիսոփայական ֆակուլտետի հրավերով Ռուբինշտեյնը դասավանդում է հոգեբանություն, տրամաբանություն, փիլիսոփայության պատմություն, իսկ նույն թվականի դեկտեմբերից նաև՝ «Փիլիսոփայության ներածություն» դասընթացը: 1921 թվականին ընտրվում է որպես հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր:

1922 թ. նա ձևակերպում է գիտակցության և գործունեության միասնության սկզբունքը: Այդ սկզբունքը հիմք է հանդիսանում ոչ միայն հոգեբանությունում, այլև մանկավարժությունում: Ռուբինշտեյնի կարծիքով, սուբյեկտն իր ստեղծագործական գործունեությունում և գործողություններում ոչ միայն դրսևորվում է, այլև կողմնորոշվում ու ստեղծագործում: Հետագայում նա բազմիցս ընդգծում է այս սկզբունքի կարևորությունը մանկավարժական պրակտիկայի համար:

1928 թ. Օդեսայում Ռուբինշտեյնը հրատարակում է մի շարք հոդվածներ, այդ թվում՝ «Մտածողության զարգացումը դեռահասների շրջանում»:

1930 թ. Ռուբինշտեյնը տեղափոխվում է Լենինգրադ, որտեղ գլխավորում է մանկավարժական ինստիտուտի հոգեբանության ամբիոնը: Աշխատելով Լենինգրադում, 1935 թ. նա հրատարակում է «Մանկավարժություն և հոգեբանություն» գիրքը, որում շարադրել է սովորողների հետ ուսուցչի համագործակցության մասին իր գաղափարը: Նրա կարծիքով, մանկավարժական գործընթացում մարդու գիտակցության և նրա անձի ձևավորման վրա ազդող

բոլոր հարաբերությունները յուրահատուկ բնույթ են ստանում: Ուսուցման որակի վրա, ըստ Ռուբինշտեյնի, ազդում են ոչ միայն սովորողների ինտելեկտուալ տվյալներն ու ուսուցման կազմակերպումը, այլև նրանց վերաբերմունքը ուսուցչի և առարկայի հանդեպ:

Ռուբինշտեյնն ուշադրություն է դարձնում նրան, որ ուսուցչի վերաբերմունքը սովորողների հանդեպ, և սովորողների վերաբերմունքն ուսուցչի հանդեպ, որոնք որոշում են մանկավարժական իրավիճակի էությունը, ամենևին էլ հավասարազոր չեն: Բոլոր այս դրույթների հիման վրա նա դուրս է բերել հետևյալ եզրակացությունը. մանկավարժը պետք է հոգ տանի սովորողների հետ ճիշտ հարաբերությունների հաստատման մասին, եթե նա իր առջև խնդիր է դնում ոչ միայն փոխանցելու գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, այլև ձևավորելու անձնավորություն:

Այս գրքում Ռուբինշտեյնը ներկայացրել է նաև մտածողության ստեղծագործական գործընթացների հետազոտությունները: Նա մտածողությունը սահմանում է որպես ճանաչողության օբյեկտների հետ սուբյեկտի անընդհատ փոխգործողությունը կազմող գործընթաց: Առավել ցայտուն կերպով այդ գործընթացը հանդես է գալիս կյանքի տարբեր ոլորտների (տնտեսության, մանկավարժության, օրենսդրական, գիտական, արտադրական և այլն) կողմից առաջադրվող խնդիրները մարդու կողմից լուծելու դեպքում: Դա տեղի է ունենում, ինչպես կարծում էր Ռուբինշտեյնը, որովհետև խնդրայնությունը համարվում է ճանաչողության անբաժանելի մասը: Իսկ մտածողությունը, հանդիսանալով անմիջական ճանաչողություն, հիմնվում է նրա խնդրայնության մեջ: Արդյունքում այս տեսությունը փորձարարական ճանապարհով հաստատվեց գիտնականների կողմից:

1940թ-ին Ռուբինշտեյնը հրատարակում է «Ընդհանուր հոգեբանության հիմունքներ» գիրքը, որի վրա աշխատել էր մի քանի տարի: Դրանում նա, մասնավորապես, արտացոլել է անձի իր տեսությունը:

Մինչև 1942 թ. մարտի 19-ը Ռուբինշտեյնը մնում է Լենինգրադում, որտեղ ղեկավարում է հոգեբանության ինստիտուտի գիտական աշխատողների պատրաստման գործընթացը: 1943 թ. Մոսկվայի պետական համալսարանում հիմնադրել է Մ. Վ. Լոմոնոսովի անվան ամբիոնը, հետո նաև հոգեբանության բաժինը, իսկ ԽՍՀՄ Փիլիսոփայության ինստիտուտում՝ հոգեբանության բաժինը (1945 թ.):

Ռուբինշտեյնը զարգացրել է անձի հումանիստական հայեցակարգը, որն անհամատեղելի էր խորհրդային կարգերում ձևավորված գաղափարախոսության հետ: Նրա աշխատանքները քննադատվում էին, որը սակայն չէր կոտրում նրա գիտական ոգին: Այդ ժամանակ նա իրեն նվիրում է գործունեական մոտեցման տեսության խորացմանը, որի արդյունքում 1957 թ. հրատարակվում է «Գիտակցություն և կենցաղ» հիմնարար աշխատությունը:

Սերգեյ Լեոնիդի Ռուբինշտեյնը մահացել է 1960 թ.: Նրա մահից հետո, 1973-ին լույս է տեսնում «Մարդ և աշխարհ» աշխատանքը, որում մարդու խնդիրը հոգեբանական և բարոյագիտական տեսակետից նա քննարկում է անձնային, սոցիալ-փիլիսոփայական մակարդակներում:

3.9.2. Ալեքսեյ Լեոնտև (1903-1979)

Հայտնի հոգեբան Ալեքսեյ Նիկոլաևիչ Լեոնտևը ծնվել է 1903 թվականի փետրվարի 5-ին, Մոսկվայում: Ալեքսեյ Լեոնտևի գիտական գործունեությունը սկզբնավորվում է դեռևս ուսանողական տարիներից: 1924 թ. նա ավարտում է Մոսկվայի համալսարանի հասարակական գիտությունների ֆակուլտետը, որտեղ Գ. Ի. Չելպանովը դասավանդում էր ընդհանուր հոգեբանություն:

Այդ տարիներին Չելպանովը ղեկավարում էր Մոսկվայի պետական համալսարանին առընթեր հոգեբանության ինստիտուտը՝ գլխավորելով ուսանողների խումբը հետազոտական աշխատանքների համար: Հենց այդ համալսարանի պատերի ներսում է Ա. Ն. Լեոնտևը գրում իր առաջին գիտական աշխատանքները. «Ջեյմսի ուսմունքը հոգեշարժողական գործողությունների մասին» ռեֆերատը և Սպենսերի մասին աշխատանքը: Համալսարանն ավարտելուց հետո Լեոնտևը դառնում է ասպիրանտ հոգեբանության ինստիտուտում: Այստեղ 1924 թ. էլ տեղի է ունենում Լեոնտևի հանդիպումը Լ. Ս. Վիգոտսկու և Ա. Ռ. Լուրիայի հետ:

Շուտով սկսվում է նրանց համատեղ աշխատանքը և Լեոնտևի ու Լուրիայի կողմից հրատարակված «Մարդկային կոնֆլիկտի բնույթը» հոդվածն ապշեցուցիչ հաջողություն է ունենում, քանի որ հենց դրանում է ներկայացվում «Զուգակցված շարժողական ռեակցիաների» մեթոդիկան և ծնվում խոսքային ելքով աֆեկտի տիրապետման գաղափարը: Այնուհետև, Լեոնտևն անձամբ մշակում է այդ գաղափարը և այն կյանքի կոչում «Շղթայական զուգորդումների շարքերի կառուցվածքային վերլուծության փորձը» խորագրով հոդվածում:

Լեոնտևի հետաքրքրությունները պտտվում էին հոգեբանության ամենատարբեր բնագավառների շուրջը՝ ստեղծագործական գործունեության հոգեբանությունից մինչև առարկայականության ընկալման փորձարարա-

կան հետազոտությունը: Լեոնտևը շատ անգամներ անդրադարձել է նաև հոգեֆիզիոլոգիական հետազոտությունների բովանդակության ու առարկայի բոլորովին նոր մոտեցում փնտրելու անհրաժեշտությանը:

1925 թ. վերջին ծնվում է նրա հանրահայտ «պատմամշակութային հայեցակարգը», որը հենվում է Լ. Ս. Վիգոտսկու S-X-R բանաձևի վրա, որտեղ՝ S-ը խթանն է, շարժառիթը, X-ը միջոցն է, R-ը գործունեության արդյունքը: Լեոնտևը սկսում է զարգացնել այդ աշխատանքի գաղափարները, բայց հոգեբանության ինստիտուտում, որն այդ պահին զբաղված էր բոլորովին այլ հարցերով, դա իրականացնել հնարավոր չի լինում:

Հենց այդ պատճառով էլ Լեոնտևն ու Լուրիան տեղափոխվում են կոմունիստական դաստիարակության Ակադեմիա՝ միաժամանակ աշխատելով նաև Գ. Ի. Ռոսոլիմոյի կլինիկայում և ախտաբանության ինստիտուտում: Մոտավորապես 1930 թ. Ուկրաինայի առողջապահության կոմիտեն որոշում է Ուկրաինայի հոգենյարդաբանական ինստիտուտում հիմնադրել հոգեբանության բաժին, որտեղ Լուրիան ժամանակավորապես զբաղեցնում է վարիչի, իսկ Լեոնտևը՝ մանկական և գենետիկ հոգեբանության բաժնի վարիչի պաշտոնը:

Ավելի ուշ Լեոնտևը դառնում է ուկրաինական հոգեբանների խմբի առաջնորդը: Ղեկավարում է Խարկովի «Գործունեական դպրոցը» և ծեռնամուխ լինում գործունեության հիմնախնդրի տեսական ու փորձարարական մշակմանը: Մշակելով նորանոր նախագծեր, Լեոնտևը հրատարակում է «Անձ: Գիտակցություն: Գործունեություն» գիրքը, որտեղ պնդում է իր տեսակետն այն մասին, որ մարդը ոչ թե ուղղակի կառուցում է իր գործունեությունը հասարակության արտաքին պայմանների ներքո, այլ հասարակության այդ պայմաններն իրենց մեջ կրում են նրա գործունեության նպատակներն ու շարժառիթները:

1930-ական թվականների երկրորդ կեսին Լեոնտևը մշակում է հետևյալ խնդիրները.

ա) հոգեկանի ֆիլոգենետիկ զարգացումը, մասնավորապես զգայունակության գենեզիսը,

բ) հոգեկանի «գործառնական զարգացումը», այսինքն գործունեության ձևավորման և գործածության խնդիրը,

գ) գիտակցության խնդիրը:

Այս խնդիրները մանրամասն լուսաբանվում են 1940 թ. Լեոնտևի կողմից պաշտպանված «Հոգեկանի զարգացումը» թեմայով դոկտորական ատենախոսությունում:

Ատենախոսությունը պարունակում է մի շարք հոդվածներ, որոնք նվիրված են հիշողությանը, ընկալմանը, հույզերին և կամքին: Հոգեբանության մեջ Լեոնտևի կողմից առաջարկված դրդապատճառվածության

ոլորտի կառուցվածքի հետ (շարժառիթ-նպատակ-պայման) հարաբերակցված գործունեության սխեմայի հիման վրա (գործունեություն - գործողություն - օպերացիա - հոգեֆիզիոլոգիական ֆունկցիաներ) ուսումնասիրվել են հոգեկան գրեթե բոլոր գործառույթները, ինչը խթանել է հոգեբանական նոր ճյուղերի առաջացմանը և զարգացմանը:

Այս հայեցակարգի տրամաբանական զարգացումը՝ որպես «գործունեության ընթացքում իրականության հոգեկան արտացոլման կառուցման և գործելու մասին գիտություն», հոգեկան ամբողջական համակարգ ստեղծելու հնարավորությունն է:

1966 թ. Ա. Ն. Լեոնտևը վերջնականապես տեղափոխվում է Մոսկվայի համալսարանի հոգեբանության ֆակուլտետ, որտեղ էլ մինչև կյանքի վերջին օրերն աշխատում է որպես ֆակուլտետի անփոխարինելի դեկան և ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ: Ա. Ն. Լեոնտևը մահացել է 1979 թ. հունվարի 21-ին: Անհնար է գնահատել նրա գիտական ավանդը, քանզի հենց նրան է հաջողվել մի շարք մասնագետների ստիպել վերանայել իրենց հայացքները և բոլորովին այլ կերպ մոտենալ հոգեֆիզիոլոգիական հետազոտությունների առարկային ու բովանդակությանը:

3.10. Զարգացման հոգեբանություն

3.10.1. Լև Վիգոտսկի (1896-1934)

Ականավոր խորհրդային հոգեբան, հոգեկան բարձրագույն գործառույթների պատմամշակութային զարգացման հայեցակարգի հիմնադիր: Մինչ 1920-ական թվականների երկրորդ կեսը զբաղվել է ստեղծագործության ընկալման խնդիրներով: Արվեստի այս կամ այն ստեղծագործությունն ընկալող մարդու հուզական դաշտում առանձնացրել է երկու տարբեր ուղղվածության աֆեկտներ, որոնց հակադրությունը դուրս է բերվում կատարսիսում՝ հանդիսանալով գեղագիտական հակազդումների հիմք: Սակայն ավելի ուշ, «Հոգեբանական ճգնաժամի պատմական իմաստը» աշխատությունից սկսած, Վիգոտսկին սկսեց հոգեբանության ընդհանուր մեթոդաբանական հիմնախնդրի վերլուծությունը, որի արդյունքում կողմնորոշվելով մարքսիզմի մեթոդաբանությամբ, մշակեց ուսմունքներ հոգեկան գործառույթների զարգացման մասին՝ միջնորդավորված անձի կողմից մշակութային արժեքների յուրացման հաղորդակցման գործընթացով: Հետագայում Վիգոտսկին ներմուծեց «մերձակա զարգացման գոտի» հասկացությունը: Այդ խնդիրը նրա կողմից իր գործնական իրագործումը գտավ դեֆեկտալոգիայում: Վիգոտսկին հիմնադրեց «Անոմալ մանկության հոգեբանության» լաբորատորիա (1925-1926)՝ ձևակերպելով անոմալ երեխայի զարգացման նոր տեսություն: Իր աշխատանքի վերջին փուլում նա հետազոտեց մտածողության ու խոսքի փոխհարաբերությունը, օնտոգենեզի զարգացման նշանակությունը, եսակենտրոն խոսքը:

Լև Սեմյոնովիչ Վիգոտսկին ծնվել է 1896 թ. նոյեմբերի 17-ին, ցարական Ռուսաստանի կազմի մեջ մտնող Բելոռուսիայի Օրշա քաղաքում: Հայրը բանկային ծառայող էր: Մայրը երիտասարդ ժամանակ երազել էր ուսուցչուհի դառնալ, և իր ամբողջ կյանքը նվիրեց երեխաների դաստիարակությանը: Լևն այդ ընտանիքի երկրորդ երեխան էր: Նրա ծնունդից մեկ տարի անց նրանց ընտանիքը տեղափոխվում է Գոմել (մոտ 400 մղոն Մոսկվայից արևմուտք):

Վիգոտսկիների ընտանիքում սիրում և գնահատում էին գրականությունն ու արվեստը: Լևը, ինչպես և իր քույրերը, մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրում էին դրանք: Սկզբնական կրթությունը հիմնականում ստացել է տանը: Միայն վերջին երկու դասարաններն ուսանել է Գոմելի մասնավոր գիմնազիայում, որն էլ ավարտել է ոսկե մեդալով: Հրեական ծագումով նրա ընտանիքը

հանդիպում էր բազմաթիվ սոցիալական դժվարությունների և կրթական սահմանափակումների: Վիգոտսկին տարիներ շարունակ ուսանել է մասնավոր ուսուցչի մոտ, այնուհետև ընդունվել հրեական գիմնազիայի կրտսեր բարձրագույն դպրոցը: Երիտասարդ տարիներին նա հետաքրքրվում է գրականությամբ ու գրական վերլուծություններով և դառնում պոեզիայի ու փիլիսոփայության լուրջ գիտակ: Տասնութ տարեկան հասակում նա գրում է Շեքսպիրի «Համլետ»-ի վերաբերյալ խոհագրություն, որը հետագայում վերածվում է իր հոգեբանական աշխատություններից մեկի: Վիգոտսկին պատրաստ էր արդեն համալսարան ընդունվելու: Սակայն ցարական Ռուսաստանում դա այնքան էլ դյուրին խնդիր չէր հրեա դիմորդի համար: Նա պետք է քննություն հանձներ հատուկ հանձնաժողովին, որի նախագահն ուներ ընդգծված հակահրեական տրամադրություններ: Այդ ժամանակաշրջանում Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի համալսարանների դիմորդների միայն 3%-ը կարող էր հրեա լինել: Ինչևիցե, որոշվեց ընդունել բոլոր ոսկե մեդալակիրներին և արծաթե մեդալակիրների կեսին: Այդ պարագայում ոսկե մեդալակիր Լ. Վիգոտսկին կարող էր ընդունվել համալսարան: Սակայն թեստի հանձնման ընթացքում ընտրության չափանիշները փոխվեցին: Կրթության նախարարի նոր որոշմամբ պահպանվեց 3%-ի սահմանափակումը, սակայն դիմորդները պետք է ընտրվեին անկանոն կերպով: Այս փոփոխությունը, իհարկե, նվազեցրեց հրեա դիմորդների թիվը բարձրագույն կրթության համակարգում: Հակառակ իր սպասումների՝ նա շահում է համալսարանական «վիճակախաղում» և ընդունվում Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետ: 1917-1919 թթ. Լև Վիգոտսկին սովորել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում: Միևնույն ժամանակ նա հաճախում է համալսարանի իրավունքի դպրոց: Ընդունվում է նաև Շանյավսկու մասնավոր համալսարանի պատմության և փիլիսոփայության բաժինները: Այդ համալսարանը ցարական կառավարության կողմից մերժված և աշխատանքից հեռացված պրոֆեսորների ոչ պաշտոնական կենտրոն և հավաքատեղի էր համարվում: Հանրահայտ համալսարանի քննադատական մթնոլորտը միգուցե ավելի մեծ ազդեցություն ունեցավ Վիգոտսկու իմացական կարողությունների զարգացման վրա, քան Մոսկվայի համալսարանի իրավունքի ֆակուլտետում ուսանելու շրջանը: Նրա վերլուծական մտածողությունը և բարոյական հայացքները, անկասկած, ձևավորվել են վաղ տարիքում՝ հասարակական շարժումների ազդեցությամբ:

1919 թ. Լ. Վիգոտսկին ավարտում է երկու համալսարանները: Այնուհետև նա վերադառնում է Գոմել, նվիրվում սոցիալական և մանկավարժական գործունեությանը: Յոթ տարի շարունակ գրականություն է դասավանդում երեկոյան բանվորական դպրոցներում: Սակայն Վիգոտսկին հիմնականում հետաքրքրվում էր պատմությամբ և գեղարվեստով: Դերասանների համար գրված նշումները նա օգտագործել է իր «Մտածողությունը և լեզուն» գրքում:

Այնուհետև Վիգոտսկին դասավանդում է ուսուցչական քոլեջում, ուր և կարդում է հոգեբանության իր առաջին դասախոսությունը: Համարում են, որ Վիգոտսկին սկսում է հետաքրքրվել հոգեբանությամբ միայն 28 տարեկան հասակում՝ չունենալով հոգեբանական հատուկ կրթություն: Սակայն նրա կենսագրության ավելի մանրամասն ուսումնասիրությունները հերքում են այդ տեսակետը: Վիգոտսկին ունեցել է ուսուցիչ՝ ռուս հայտնի հոգեբան և մանկավարժ Պ. Պ. Բլոնսկին, որին նա ուսանել է Շանյավսկու համալսարանում: Ինչպես հիշում է ինքը՝ Վիգոտսկին, այնուհետև նա երբեք չի դադարեցրել իր հոգեբանական ուսումնասիրությունները: Ավելին, սկզբից նեթ Վիգոտսկու գիտահոգեբանական գործունեությունը կառուցվում էր որպես Բլոնսկու ծրագրի իրականացում, որի համար էլ ձևակերպեց իր գիտական հավատամքը:

1924 թ. Լենինգրադում կայացած «Ռեֆլեքսային և հոգեբանական մեթոդաբանությանը» նվիրված երկրորդ հոգեբանական վեհաժողովում 27-ամյա Վիգոտսկու ելույթը ցնցեց Ալեքսանդր Լուրիային, որն այդ ժամանակ Մոսկվայի հոգեբանության ինստիտուտի գիտական քարտուղարն էր: Հետագայում Լուրիան հիշում է. «Բեմ ելավ մի երիտասարդ, որի քսանյոթը դեռ չէր լրացել: Նա խոսեց մոտ կես ժամ պարզ, հստակ և անթերի տրամաբանությամբ»: Ա. Լուրիան Վիգոտսկուն հրավիրում է Մոսկվա՝ միանալու իր հետազոտական խմբին:

Լև Վիգոտսկու գործընկերներն էին Ալեքսանդր Լուրիան և Ալեքսեյ Լեոնտևը: Նրանք օգնում էին մշակել այն հետազոտության կմախքը, որն այժմ հայտնի է որպես «վիգոտսկյան մոտեցում»: Իր կենդանության օրոք Վիգոտսկին այդ աշխատանքը տպագրված չտեսավ: Դրա հրատարակումը հետագայում իրականացրին նրա աշակերտները: Կենաց օրոք Վիգոտսկին ենթարկվում է մեծ ճնշման: Նրան պարտադրում էին իր մոտեցումները հարմարեցնել Ռուսաստանում ընդունված քաղաքական գաղափարախոսությանը, հոգեբանական հարցերը քննարկել մարքս-լենինյան ուսմունքի լույսի ներքո: Մահից հետո Վիգոտսկու գաղափարներն արգելվում են խորհրդային կառավարության կողմից: Սակայն նրա աշակերտները պահպանում և հետագայում վերակենդանացնում են իրենց ուսուցչի աշխատությունները: Զարգացնող հոգեբանության վերաբերյալ Վիգոտսկու աշխատությունները մեծ ազդեցություն ունեցան Ռուսաստանի դպրոցական կրթական համակարգի վրա: Սակայն Վիգոտսկու գաղափարներն առավել հայտնի դարձան միայն մեր օրերում: Նրա աշխատանքների նկատմամբ հետաքրքրությունն այժմ էլ շարունակում է աճել ամբողջ աշխարհում: Վիգոտսկին աշխատել է տարբեր ոլորտներում: Նա զբաղվել է նաև փախստականների վերաբնակեցման հարցերով, աշխատել ֆիզիկական և հոգեկան արատներ ունեցող մարդկանց հետ՝ տարբեր ինստիտուտներում և համալսարաններում:

Լ. Ս. Վիգոտսկին մահացել է 1934 թ. տուբերկուլյոզից: Նա գրել է 7 գիրք և տասնյակ հոդվածներ: Նրա աշխատանքները հրատարակվել են մահից հետո՝ 1934 թ., արգելվել՝ 1936 թ. և Արևմուտքի համար անհայտ մնացել մինչև 1958 թ.: Իր հետազոտական մի քանի տարիների ընթացքում Վիգոտսկին գրել է մոտ 200 աշխատություն, որոնցից շատերը կորսված են: Հիմնական աղբյուրը մնում է «Աշխատությունների լրիվ հավաքածուն»: Այն հրատարակվել է 1982-1984 թթ. և նույնպես չի ներառում Վիգոտսկու բոլոր աշխատանքները:

Լ. Ս. Վիգոտսկու աշխատանքները Սովետական Միությունում լայն տարածում գտան ստալինյան ռեժիմի տապալումից հետո: Այժմ՝ մահից մոտ 70 տարի անց, Վիգոտսկին մեծ ճանաչում ունի: Նրա աշխատությունները շարունակվում են հրատարակվել: Նա առավել հայտնի է մշակույթի և ուսուցման մասին իր գաղափարներով, հատկապես «Պրոքսիմալ զարգացում» և «Լեզուն որպես մարդկային մտածողության և ճանաչողության զարգացման կարևոր տարր» տեսություններով:

Նույնիսկ այսօր դժվար է արժևորել Վիգոտսկու դերը մանկավարժության մեջ, քանի որ դեռևս լիովին չեն կարողացել գնահատել այս գիտնական այրի ամբողջ ներուժը:

3.10.2. Բորիս Անանև (1907-1972)

Խորհրդային հոգեբան, «Մարդագիտության», որպես մարդու մասին տարբեր գիտությունների միավորման, ջատագով: Ծնվել է 1907 թ. օգոստոսի 1-ին, Վլադիկովկասում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվում է Գորսկի մանկավարժական ինստիտուտ, որտեղ զբաղվում է երեխաների մտավոր ընդունակությունների հետազոտություններով և կրթության կազմակերպման հարցերով: Անանևի ավարտական աշխատանքը նվիրված էր դեռահասության և պատանեկան տարիքում աշխարհայացքի և աշխարհընկալման ձևավորման և զարգացման խնդիրներին:

1928 թ. տեղափոխվում է Լենինգրադ (Սանկտ Պետերբուրգ): Զբաղվում է գիտությունների դասակարգման, հոգեբանության մեթոդաբանական և հոգեկանի ձևավորման խնդիրներով: Երեսնականների սկզբներին զբաղեցնում է «Ուղեղի ինստիտուտի» «Դաստիարակման հոգեբանության լաբորատորիայի» ղեկավարի պաշտոնը, Լենինգրադի դպրոցներից մեկում

կազմակերպում հոգեբանական ծառայություն: Զբաղվում է պեդոլոգիական հիմնախնդիրներով:

Սակայն 1936 թ. Խորհրդային Միությունում արգելվում են պեդոլոգիական հետազոտությունները: Անանևը փոխում է իր գիտական գործունեության ոլորտը՝ զբաղվելով զգայական արտացոլման խնդիրներով: Հետագայում նա տարվում է հոգեբանության պատմությամբ և 1939 թ. պաշտպանում հոգեբանության պատմությանը նվիրված դոկտորական ատենախոսություն:

Հիսունականների երկրորդ կեսից Անանևն իր ուշադրությունը կենտրոնացնում է մարդու հետազոտության, հետազոտական մեթոդների և ոլորտների միավորման խնդիրների վրա: Նրա կարծիքով, մարդու էության բացահայտման և հասկացման համար, անհրաժեշտաբար պետք է միավորվեն, համադրվեն բոլոր մարդաբանական գիտելիքները: Անանևի կարծիքով, մարդաբանական հետազոտության ընթացքում նպատակահարմար է ընդունել, համադրել և կիրառել բոլոր գիտական դպրոցների տեսական եզրակացությունները:

60-ականներին Անանևը զբաղվում է մեծահասակների հոգեֆիզիոլոգիական գործառույթների տարիքային դինամիկայի հետազոտությամբ: Այդ հետազոտություններում բացահայտվում են անձի զարգացման ընթացքում տարբեր գործոնների դերակատարումները:

1967 թ. Անանևը զբաղեցնում է Լենինգրադի պետական համալսարանի հոգեբանության նորաբաց ֆակուլտետի դեկանի պաշտոնը: Բորիս Անանևը մահացել է 1972 թ. մայիսի 18-ին:

3.10.3. Անտոնիո Մենեգետի (1936)

Օնտոհոգեբանություն կամ կեցության հոգեբանություն գիտական ուղղությունը ձևավորվել է իտալացի փիլիսոփա, հոգեբան Ա. Մենեգետիի կողմից, որի հայացքները ձևավորվել են Զ. Ֆրոյդի, Ա. Ադլերի, Օ. Ռանկի և Կ. Յունգի աշխատանքների ազդեցությամբ:

Մենեգետին ծնվել է 1936 թ. մարտի 9-ին, Ավեցանոյում (Իտալիա): Պատերազմից անմիջապես հետո, մինչև 1971 թ., 11-ամյա տղան սկսում է եկեղեցական գիտություններ սովորել Հռոմի կաթոլիկ եկեղեցում: Այդ ժամանակահատվածում Ա. Մենեգետին փիլիսոփայության և աստվածաբա-

նության բնագավառում ձեռք է բերում իմացության բարձրագույն մակարդակ: 60-ական թվականներին, բռնելով քահանայի ծառայության ուղին, Մենեգետին բախվում է մարդկության էքզիստենցիալ խնդիրների հետ դրանց ամբողջ ծավալով մեկ: Նա սկսում է ակտիվորեն գործել այդ ուղղությամբ: Եկեղեցում ստացած նրա կրթությունը հնարավորություն է տալիս հոգուն նայել ավելի լայն սպեկտրով՝ ի տարբերություն բացառապես ակադեմիական բժշկական կրթությամբ այլ հետազոտողների: Ա. Մենեգետին ուսումնասիրում ու համադրում է ժամանակակից հոգեբանության և հոգեբուժության տարբեր տեսական մոտեցումներ: Իր առաջին շարադրանքներում Մենեգետին կռահողաբար ըմբռնում է, որ խնդիրը, որպես այդպիսին, կապված է ոչ թե մարդու, այլ ինչ-որ առումով ռացիոնալության ու դրա կիրառման տեսակետի հետ: Մենեգետին չի բավարարվում իրականության կաղապարային չափմամբ: Նա ուզում է կոնկրետ, ստույգ, էմպիրիկ արդյունք: 60-ական թվականների սկզբում պրոֆեսոր Մենեգետին Հռոմում ստեղծում է օնտոհոգեբանական թերապիայի առաջին կենտրոնը, որտեղ հաճախակի աշխատում է ծանր հոգեկան խանգարումներով այցելուների հետ, որոնց չեն կարողանում օգնել պետական բուժհաստատություններում: Այստեղ նա մեծ հաջողությունների է հասնում մարդկանց առողջացման գործում և հղկում «ռեզիդենս» կոչվող թերապևտիկ միջոցը: Կրթություն ստանալուց հետո, 1970-1974 թթ. Ա. Մենեգետին դասավանդում է Հռոմի Սուրբ Ֆ. Ակվինացու անվան Պապի համալսարանում, որտեղ կարդում է «Քահանայի հոգեբանության հիմունքներ», «Մարդու օնտոհոգեբանություն» և «Ռոջերսի այցելուակենտրոն թերապիա» կուրսերը: 1972 թ. Միլանի Սակրո Կուորե համալսարանում ստանում է փիլիսոփայության և հոգեբանության դոկտորի գիտական աստիճան: 1978 թ. Ա. Մենեգետին հիմնադրում է օնտոհոգեբանության միջազգային ասոցիացիա, որը 90-ականների վերջին ստանում է հատուկ խորհրդատվական կարգավիճակ: Օնտոհոգեբանությունը գործում է իրականության արդյունավետ, չափվող համապատասխանության հիման վրա, և դրա կիրառումը հանգեցնում է հավաստի արդյունքների: Այս բացահայտումների հավաստիությունը Ա. Մենեգետին փորձարկել է իր վրա: Օնտոհոգեբանությունը փորձարկվել է բոլոր աշխարհամասերում, իսկ դրա արդյունավետությունը ապացուցվել է տարբեր մշակույթներում ու ավանդույթներում, ինչը հաստատում է մարդկային արարածների ընդհանուր ներքին բնույթը: 1981 թ. սկսած Մենեգետին անցկացնում է տարբեր միջոցառումներ, սեմինարներ ու գիտաժողովներ, իսկ 1998 թ. սկսում է «Օնտոհոգեբանություն» մասնագիտացմամբ պրոֆեսիոնալ վերապատրաստման միջազգային ծրագիրը:

Օնտոհոգեբանության տեսական-մեթոդաբանական հիմքը կազմել են Հ. Հուսերլի երևութաբանությունը, Մ. Հայդեգգերի և Կ. Յասպերսի էքզիս-

տենցիալիզմը, ինչպես նաև Ֆ. Նիցշեի և Ա. Շոպենհաուերի կյանքի փիլիսոփայությունը: Օնտոհոգեբանությունը դիտարկում է մարդուն որպես կյանքի ակտիվ սուբյեկտի: Նրա կարևոր նպատակն է հետազոտել, թե ինչպես են արտաքին իրադրությունների ներգործության ներքո ձևավորվում ստեղծագործող անհատականությունն իրեն բնորոշ հոգևոր աշխարհով, հակումներով, արժեքներով, սեփական անձի, սեփական կյանքում ուրիշների և նրանց դերի մասին պատկերացումներով: Օնտոհոգեբանությունն ուսումնասիրում է, թե ինչպես է անկրկնելի անհատականությունը կառուցում սեփական կյանքը, իրացնում ինքն իրեն գործունեության, հաղորդակցման, ստեղծագործության մեջ:

Ա. Մենեգետին պնդում է, որ կյանքում գործում է հիմնարար օրենքը, որից խուսափել մարդիկ չեն կարող, այն է. յուրաքանչյուր մարդու մեջ առկա է էներգետիկ միջուկ, որը ձևավորվում է սեփական կամքի միջոցով և դրսևորվում օրգանիզմի բոլոր ֆիզիկական և հոգեկան գործընթացներում:

Այդ միջուկը, որը կոչվում է ին-սե (էություն ինքն իր մեջ), դրսևորվում է մարդու ողջ կեցության մեջ, չնայած ծնվում է նրանից դուրս և մնում է տրանսցենդենտ: Այն չի գիտակցվում, ին-սեն մարդու անտեսանելի հոգին է, գիտակցության և մարմնականի միավորում: Այն ներքինից կառավարում է մեր արարքները, գործողությունները և դրսևորվում է բոլոր որակներում ու անձի հատկություններում: Այդ ներքին էությունը պատասխանատու է առողջության, հիվանդությունների, համակրանքի և հակակրանքի, խառնվածքի, հումորի, բնազդների, ցանկությունների համար:

Օնտոհոգեբանության մեջ անձի և հոգեկանի բոլոր հիվանդագին փոփոխությունները տեղի են ունենում այն պատճառով, որ մարդն ի վիճակի չէ լսել ին-սեի ձայնը, չի հասկանում արդի կյանքի իրավիճակը, չի գիտակցում, թե ինչ է նրան իսկապես անհրաժեշտ: Այդպիսի վիճակը Մենեգետին անվանում է «էկզիստենցիալ շիզոֆրենիա», որը դրսևորվում է հատուկ աշխարհընկալման մեջ, երբ անձը չի ցանկանում գործել սեփական սրտի թելադրանքով, այլ անհրաժեշտաբար ենթարկվում է ինչ-որ մեկին կամ ինչ-որ բանի (երեխաները՝ ծնողներին, քաղաքացիները՝ պետությանը): Այդպիսի եզրակացությունը կարող է բերել ներքին անհամաձայնության, ձևավորվում է անդունդ՝ «ես ուզում եմ»-ի և «իրենք պահանջում են»-ի միջև: Այս ամենի ակունքները հասարակական դիրքորոշումներն են և սոցիալական նախապաշարմունքները, իսկ ապաքինման հիմնական միջոցը երազների վերլուծությունն է և իմագոգիկան: Իմագոգիկա (լատիներենից՝ imago - պատկեր)՝ անգիտակցական բովանդակությունների գիտակցումն ու մեկնաբանությունն է: Դրա միջոցով է, որ հոգեթերապևտը կարող է շփման մեջ մտնել այցելուի անգիտակցական ապրումների հետ: Իմագոգիկան նե-

ռառում է գեղարվեստական ստեղծագործության արդյունքների վերլուծությունն ու մեկնաբանումը, ինչպես նաև ինքնաբուխ ֆանտազիաների և երևակայության գործընթացների վերլուծությունը:

Օնտոհոգեբանությունն ունի երազների մեկնաբանման սեփական մեթոդը: Մենեգետիի կարծիքով երազների վերլուծության ժամանակ պետք է հաշվի առնել, որ երազն անձի որևէ պահանջմունքի պատասխանն է: Երազը մատնանշում է այն, ինչ պետք է սուբյեկտին, նրա կյանքի իրողությանը: Երազը կարող է վերլուծվել միայն անձի կյանքի և նրա ին-սեյի աշխատանքի համատեքստում: Ին-սեն ինչ-որ չափով մոտ է յունգյան ինքնության արքետիպին, բայց այն նախ և առաջ բնազդային, կենսաբանական էություն է:

Մենեգետին անդրադառնում է սոցիալական կանոնների բացասական ներգործությանը: Նրա կարծիքով ի հայտ է գալիս բախում բնության և հասարակության պահանջների միջև, և մարդ ի վերջո ենթարկվում է սոցիալական նորմերին՝ ի վնաս ին-սեյի, ինչի հետևանքով նրա մոտ ձևավորվում է տագնապի զգացողություն: Շեղումների էկրանը գլխուղեղի բացասական գործառույթն է, որի միջոցով օտար սոցիալական ներգործություններն ընկալվում են մարդու կողմից որպես սեփական իրականության պրոյեկցիա: Սա կեղծ գիտակցություն է, որի միջոցով մարդ հեռանում է ինքն իրենից:

Օնտոհոգեբանության մի շարք դրույթները շատ յուրօրինակ են և երբեմն բազմաթիվ քննադատությունների են արժանանում, սակայն այնուամենայնիվ օնտոհոգեբանությունն օժտված է բազմաթիվ տրամաբանորեն ճիշտ կառուցված դրույթներով:

3.11. Գենետիկական հոգեբանություն

3.11.1. Ժան Պիաժե (1896-1980)

Շվեյցարացի հոգեբան, Ժնևյան գենետիկական հոգեբանության դպրոցի հիմնադիր: Երեխայի հոգեկանի փուլային զարգացման հայեցակարգի հեղինակն է: Իր գործունեության սկզբնական շրջանում նկարագրել է աշխարհի մասին երեխաների ունեցած պատկերացումների յուրահատկությունները՝ աշխարհի և սեփական «ես»-ի անբաժանելիություն, անիմիզմ, արտիֆիկացիզմ (աշխարհի ընկալումը՝ որպես մարդու ստեղծագործության արդյունք): Մանրամասնորեն վերլուծել է մանկական մտածողության յուրահատկությունները («Երեխայի խոսքն ու մտածողությունը», 1923): Երեխաների պատկերացումները բացատրելու համար օգտագործել է եսակենտրոնություն (էգոցենտրիզմ) հասկացությունը, ինչը հասկանում էր որպես շրջապատող միջավայրի մասին որոշակի տեսակետ, որը հաղթահարվում է սոցիալականացման ընթացքում և ազդում մանկան տրամաբանության կառուցվածքի վրա: Հետագայում հատուկ ուշադրություն է դարձրել ինտելեկտի զարգացման վրա: Իր հետազոտություններում նա փորձում էր ապացուցել, որ մտածողության զարգացումը կապված է արտաքին գործողություններն օպերացիաների վերածելու միջոցով ներքնայնացնելու հետ: Ինտելեկտի ոլորտում նրա կողմից կատարված հետազոտությունների զգալի մասը տեղ են գտել նրա «Ինտելեկտի հոգեբանություն» գրքում, 1946 թ.:

Ժ. Պիաժեի կատարած հետազոտությունները լայն ճանաչում ձեռք բերեցին, ինչը նպաստեց գիտական ուղղության ստեղծմանը, որն անվանեց գենետիկ էպիստեմոլոգիա:

Ժան Պիաժեն ծնվել է 1896 թ. օգոստոսի 9-ին, շվեյցարական Նեշատել քաղաքում: Նրա առաջին գիտական հոդվածը հրատարակվել է, երբ բոլորել է հեղինակի միայն տասը տարին: Նույն տարում, 1906 թ. Ժ. Պիաժեին հաջողվում է անցնել աշխատանքի բնական պատմության թանգարանում, որպես լաբորանտ: Չորս տարի շարունակ նա աշխատել է այդտեղ, միջնակարգ դպրոցի դասերից հետո: Այդ ընթացքում տարբեր լրագրերում նա հրատարակել է 25 հոդված, որոնք նվիրված են եղել կակղամորթաբանությանը և կենդանաբանության հարակից հարցերին:

Դպրոցն ավարտելուց հետո Պիաժեն ընդունվել է Նեշատելի համալսարան, որտեղ 1915 թ. ստացել բակալավրի, իսկ 1918 թ.՝ բնական գիտու-

թյունների դոկտորի աստիճան: Ուսումնառության տարիներին նա շատ գրքեր է կարդացել՝ կենսաբանությունից, հոգեբանությունից, ինչպես նաև փիլիսոփայությունից, սոցիոլոգիայից և կրոնից: Համալսարանն ավարտելուց հետո Պիաժեն կարճատև ժամանակահատվածներով աշխատել է Ռեշների և Լիպսի լաբորատորիայում, Բլեյերի հոգեբուժական կլինիկայում, ինչպես նաև Սորբոնում: Եվ, վերջապես, 1919 թ. Պիաժեն առաջարկ է ստանում աշխատելու ֆրանսիական բարձրագույն դպրոցում՝ Բինեյի լաբորատորիայում, որտեղ նրան հանձնարարվում է մշակել երեխաների տրամաբանության միօրինակացված թեստեր: Սկզբից այդ աշխատանքը Պիաժեին ձանձրալի էր թվում, բայց աստիճանաբար հետաքրքրվեց և ինքն սկսեց մասնակցել հետազոտությունների անցկացմանը: Որոշակի ձևափոխելով հոգեբուժական հետազոտության այդ մեթոդը, որը նա սովորել էր Բլեյերի կլինիկայում, շուտով Պիաժեն սկսեց հաջողությամբ կիրառել «կլինիկական մեթոդը»: Իր հետազոտությունների արդյունքները նա շարադրել է չորս հոդվածում, որոնք հրատարակվել են 1921 թ.:

Սկզբնապես, Պիաժեի կլինիկական մեթոդը ձևավորվեց որպես հակազդեցություն հոգեբանական թեստի ընթացակարգին: Թեստային մեթոդիկան կառուցվում էր ճիշտ պատասխանների քանակի գնահատականով, բայց Պիաժեն կարծում էր, որ առավել կարևոր են սխալ դատողությունները, քանի որ հենց դրանք են «տալիս» այն սխեմաները, որոնք բնորոշ են երեխայի մտածողությանը: Ընդ որում, ինտելեկտուալ գործունեության հետազոտման գործընթացը ներկայանում է արդեն ոչ թե որպես երեխայի արարքների ու դատողությունների անխոով գրանցում, այլ որպես փորձագետի և հետազոտվողի փոխգործունեություն, որի ընթացակարգի վերջում կատարվում են որոշակի եզրակացություններ:

1929 թ. եղել է Ժնևի Ժան-Ժակ Ռուսսոյի անվան համալսարանի տնօրեն և իր կյանքի հաջորդ երկու տարին նվիրել երեխայի հոգեբանության հետազոտությանը:

Պիաժեն ուսումնասիրում էր երեխայի խոսքային վերլուծությունը: Ինտելեկտուալ զարգացման առաջատար գործոնը նա համարում էր սոցիալականացման գործընթացը:

Միաժամանակ լինելով թե՛ հոգեբանական, թե՛ սոցիալական, ինտելեկտի ուսումնասիրումը դառնում է հիմնականը սոցիալական գործունեության և անհատական հոգեբանական զարգացման միջև փոխհարաբերության խնդրի մեջ: Համաձայն ինտելեկտի օպերացիոն համակարգման («Ինտելեկտի հոգեբանություն», 1946 թ.)՝ հոգեկանի զարգացումը և գործառականությունը իրականանում են շրջապատին անհատի ադապտացիայի, ինչպես նաև կոնկրետ իրավիճակներին այդ սխեմաների հարմարվելու՝ ակոմոդացիայի շնորհիվ:

Ըստ Պիաժեի՝ սուբյեկտի և օբյեկտի հավասարակշռման բարձրագույն ձևն օպերացիոն կառուցվածքի ստեղծումն է: Օպերացիան, ըստ Պիաժեի, իրենից ներկայացնում է սուբյեկտի «ներքին գործունեություն»՝ արտաքին առարկայական գործունեությունից գենետիկորեն արտադրված և որոշակի համակարգի մյուս գործունեությունների հետ կոորդինացված:

Պիաժեն առանձնացրել և մանրակրկիտ ուսումնասիրել է ինտելեկտի զարգացման չորս փուլ. զգայաշարժողական, մինչօպերացիոն, կոնկրետ օպերացիաների և ձևական օպերացիաների:

Օպերացիոն համակարգման հիման վրա նա ուսումնասիրել և վերլուծել է շատ այլ հոգեկան գործընթացներ՝ ընբռնում, զգացմունքներ, խորհրդանշական արտահայտությունների գործառույթ և այլն:

Նա մեծ դեր ունեցավ մտածողության հոգեբանության, երեխայի հոգեբանության, հոգեբանության և մտածողության փոխհարաբերության խնդրի ուսումնասիրման մեջ:

Նա է առաջարկել նաև գենեզիսի, պերցեպտիվ գործընթացների կառուցվածքի և գործառույթների ուսումնասիրման խնդրի «պրակսեոլոգիական» մոտեցման գաղափարը: 1955 թ. Պիաժեն հիմնադրել է գենետիկական էպիստեմոլոգիայի միջազգային կենտրոնը Փարիզում:

Ժան Պիաժեն մահացել է 1980 թ. սեպտեմբերի 16-ին, Ժնևում: Պիաժեի մտքերը երեխայի հոգեբանության բնագավառում առայսր կիրառվում են ամբողջ աշխարհի հոգեբանների և մանկավարժների կողմից:

3.12. Հոգեֆիզիոլոգիա

3.12.1. Իվան Պավլով (1849-1936)

Ռուս հռչակավոր բնագետ, ֆիզիոլոգ, նոբելյան մրցանակի դափնեկիր Իվան Պավլովը ծնվել է 1849 թվականի սեպտեմբերի 14 (26)-ին, Ռյազանում, հոգևորականի ընտանիքում: Նա ավարտում է Ռյազանի հոգևոր վարժարանը, այնուհետև, 1864 թ. ընդունվում՝ Ռյազանի հոգևոր սեմինարիա:

1870 թ. Պավլովն ընդունվում է Պետերբուրգի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, որն ավարտելով, 1875 թ. ընդունվում է Բժշկավիրաբուժական ակադեմիայի երրորդ կուրս: Ակադեմիայում սովորելու տարիներին նա միաժամանակ աշխատում է ֆիզիոլոգ Կ. Ն. Ուստիմովիչի լաբորատորիայում:

1879 թ. Պավլովն ավարտում է Բժշկավիրաբուժական ակադեմիան և շարունակում գիտական գործունեությունը: 1881 թ. Պավլովը պաշտպանում է բժշկական գիտությունների դոկտորի ատենախոսություն: Այնուհետև նրա կյանքի և գործունեության 46 տարիները կապվում են փորձարարական բժշկության ինստիտուտի հետ, որտեղ նա ղեկավարում է ֆիզիոլոգիայի բաժինը:

Պավլովյան ֆիզիոլոգիան ուսումնասիրում է գլխուղեղի աշխատանքի մեխանիզմները: Պավլովի աշխատանքները նպաստել են միջավայրի վճռական դերի մասին պատկերացումները զարգացնելուն: Նա ձգտում էր բացահայտել վարքի, ուսուցման համընդհանուր օրենքները և դրանց համապատասխանող նյարդային մեխանիզմները:

Ի տարբերություն բիհեվիորիզմի, Պավլովի ուսմունքը հաճախ օգտագործվել է բարդ վարքագծի գիտական բացատրման համար: Նրա նպատակն էր փորձարարական ուսումնասիրություններից ստացված օրինաչափություններն օգտագործել մարդու բարձրագույն նյարդային գործունեության համար: Այդ մասին նա խոսել է Մադրիդում 1903 թ. կայացած միջազգային բժշկական կոնգրեսում:

Պավլովն իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրեց ռեֆլեքսային գործընթացի հոգեկան տարրի ինտեգրալ բաժնի վրա, որի շնորհիվ

օրգանիզմը, որպես փակ համակարգ, կարող է ակտիվորեն հարմարվել միջավայրին: Պավլովը նշում է, որ գլխուղեղի աշխատանքի օբյեկտիվ ուսումնասիրության գլխավոր «մղիչը» եղել է Ի. Մ. Սեչենովի «Գլխուղեղի ռեֆլեքսներ» (1863) խորագրով գրքի ազդեցությունը:

Բարձրագույն նյարդային գործունեության մասին Պավլովի ուսմունքը ստեղծել է ուղեղի ֆիզիոլոգիայի զարգացման նոր ուղի: Նրա ուսումնասիրություններն ուղղված են եղել կենդանիների բարձրագույն նյարդային գործունեության օբյեկտիվ ֆիզիոլոգիական պատկերն ստանալու նպատակին, այսինքն՝ գլխուղեղի բարձրագույն բաժնի՝ կեղևի գործունեությանը, ի տարբերություն մինչ այդ օգտագործվող արհեստական գրգռման և քայքայման մեթոդի:

Պավլովի հետազոտություններով սկսվում է գլխուղեղի ռեֆլեկտոր գործունեության նոր, բացառիկ նվաճումներով հարուստ ժամանակաշրջան: Գիտնականը պարզորոշ գիտակցել է, որ ինքն ընդհուպ մոտեցել է այն «երևույթների ոլորտին», որոնց նա երկար տարիներ անվանել է հոգեկան: Դրա հետ միասին Պավլովը շատ բարձր է գնահատել այն հանգամանքը, որ այդ ոլորտ ինքը թափանցել է առանց «մեթոդական ճակատի» փոփոխման, այսինքն՝ պահպանել է օրգանիզմի բոլոր երևույթների ֆիզիոլոգիական մեկնաբանումն առանց բացառության: Պավլովի ուսմունքի մեջ առավել մեծ տեղ են զբաղեցնում արտաքին պայմաններին օրգանիզմի պայմանառեֆլեկտոր հարմարվողականության օրենքները: Եվ նա առաջ է քաշում հոգեկանը որպես հարմարվողական պրոցեսների որոշիչ գործոն:

Ըստ Պավլովի՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ֆիզիոլոգիական մեխանիզմներում, որոնք ընկած են արտաքին աշխարհի արտացոլման հիմքում, ի հայտ են գալիս նաև բնության ընդհանուր օրինաչափություններ (աչքի, ականջի, ուղեղի կառուցվածքը): Օրինակ՝ արտաքին աշխարհի առարկաները և երևույթները փոխկապակցված են մեկը մյուսին: Եվ երբ երկու երևույթների միջև, ասենք՝ էլեկտրական լամպի լույսի և նրան հաջորդող սննդի միջև ստեղծվում է ժամանակավոր կապ, դա համապատասխանում է արտաքին աշխարհի պատճառահետևանքային հարաբերության օրենքին, որի հետ էլ կենդանին գործ ունի: Բնության այդ օրենքն ընդհանուր է բոլոր կենդանիների համար, զարգացման ինչ աստիճանում էլ նրանք գտնվեն: Մեկ այլ դեպքում կարելի է ձևակերպել նոր ժամանակավոր կապ՝ ասենք ձայնը սննդի հետ և այլն: Պավլովը նշում է, որ ժամանակավոր նյարդային կապը համընդհանուր ֆիզիոլոգիական երևույթ է կենդանական աշխարհում և մարդկանց համար: Եվ դրա հետ միասին նաև այն հոգեկանն է, որը հոգեբաններն անվանում են զուգորդություններ: Այս ժամանակավոր կապը կազմում է զուգորդումների հիմքը:

Կենդանին լույսի միացմանը պատասխան է տալիս գլխի շրջապտույտով դեպի ձայնի սկզբնաղբյուրը: Զուգորդման նման տեսակը ուսուցման տարրն է: Ըստ Պավլովի՝ ուսուցումը նորի յուրացումն է հայտնի հնի հիման վրա՝ կապված պայմանական ռեֆլեքսի ձևավորման օրինաչափությունների հետ և հիմնվում է հիշողության վրա:

Որպես բնության անբաժանելի մաս՝ յուրաքանչյուր կենդանի օրգանիզմ իրենից ներկայացնում է բարդ համակարգ, որի ներքին ուժերը հավասարակշռվում են շրջապատող միջավայրի արտաքին ուժերի հետ: Որքան բարդ է օրգանիզմը, այնքան նուրբ ու բազմապիսի են հավասարակշռության տարբեր տարրերը: Ըստ Պավլովի, ամբողջ կյանքը, ցածրակարգերից մինչև բարձրակարգերը, ներառելով նաև մարդուն, արտաքին միջավայրի «հավասարակշռվածության» բարդացման միասնական շարք է:

Պավլովի ուսմունքը կարևոր դեր է խաղացել մարդու նյարդային համակարգի զարգացման գործընթացում երկրորդ ազդանշանային համակարգի նշանակությունը պարզաբանելու համար (ինչպես են կենսաբանական գործընթացները զգալի չափով ենթարկվում երկրորդ ազդանշանային համակարգի ազդեցությանը):

Պավլովյան ուսմունքի հիմքն այն էր, որ գիտակցությունը դիտվի որպես հատկանիշ կամ բարձրակարգ մատերիայի արդյունք և հետևաբար հոգեկան երևույթներն ուսումնասիրվեն որպես ուղեղի բարձրագույն բաժնի գործառույթ: Մի առիթով Պավլովը գրում է. «Ես համոզված եմ, որ մոտենում է մարդկային մտածողության նոր փուլ, երբ ֆիզիոլոգիականը և հոգեկանը, օբյեկտիվը և սուբյեկտիվը իսկապես կմիանան, երբ բնական ճանապարհով կլուծվի կամ կքանդվի գիտակցությանս և մարմնիս տանջող հակասությունը կամ հակամարտությունը»:

Պավլովն առաջինն էր, որ համարձակություն ունեցավ ձեռնարկել ֆիզիոլոգիայի համար ավանդականորեն արգելված գործառույթի ուսումնասիրությունը, որը կոչվում է հոգեկան, և գտնվում է հոգեբանության ու փիլիսոփայության տնօրինության ներքո: Հատկապես դժգոհ էին հոգեբանները: Հայտնի է, որ նույնիսկ նյարդաբաններից ոչ բոլորն են ընդունել Պավլովի մտքերը: Պավլովը բոլոր տեսակի իդեալիստների հետ լրջորեն պայքարել է ամբողջ կյանքի ընթացքում:

3.12.2. Նիկոլայ Բեռնշտեյն (1896 - 1976)

Նիկոլայ Ալեքսանդրովիչ Բեռնշտեյնը ծնվել է 1896 թ. հոկտեմբերի 5-ին, Մոսկվայում: Նրա հայրը հայտնի ռուս հոգեբույժ էր, իսկ պապը՝ բժիշկ, ֆիզիոլոգ և հասարակական գործիչ: Պատանեկան հասակում ի հայտ են գալիս ապագա գիտնականի ինժեներական, մաթեմատիկական, լեզվաբանական, գրական և երաժշտական արտակարգ ընդունակությունները: Նա հեշտությամբ էր սովորում օտար լեզուներ և դաշնամուր նվագում:

Ն. Ա. Բեռնշտեյնը կրթություն է ստացել Մոսկվայի համալսարանում: Սկզբում նա ընդունվում է պատմափիլիսոփայական ֆակուլտետ, մտադրվելով դառնալ բանասեր, բայց Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուն պես, տեղափոխվում է բժշկական ֆակուլտետ: Նա դասվեց շուտ ավարտողների շարքերին. պատերազմում պետք էին բժիշկներ, և այն ուսանողներին, ովքեր սովորել էին 4 տարի, ուղարկում էին ռազմաճակատ: 1919 թ., երբ Բեռնշտեյնն ավարտեց համալսարանը, արդեն սկսվել էր քաղաքացիական պատերազմը: Ն. Ա. Բեռնշտեյնը զորակոչվում է Կարմիր բանակ՝ որպես ռազմական բժիշկ:

Զորացրվելուց հետո 1920 թ. նա որոշ ժամանակով, որպես հոգեբույժ, աշխատում է Վ. Ա. Գիլյառովսկու կլինիկայում, բայց շուտով տեղափոխվում աշխատանքի կենտրոնական ինստիտուտ, որտեղ գլխավորում է կենսամեխանիկայի լաբորատորիան: Հիմնական խնդիրը, որով զբաղվում էր այդ լաբորատորիան, մարդու աշխատանքային շարժումների ուսումնասիրումն էր բնական պայմաններում՝ աշխատանքի հեշտացման և արդյունավետության բարձրացման նպատակով: Մինչ այդ մարդու շարժման կառավարման խնդիրը լուծվում էր միայն մեկ ձևով՝ ազատության ավելորդ չափերի հեռացմամբ: Բեռնշտեյնն առաջարկեց ուրիշ լուծում՝ անկանխատեսելի, շարժման ընթացքում ծավալվող իրադրությունը պետք է հսկել ծայրամասում՝ կանխելով փոփոխությունները «առաջ անցնող շտկման» միջոցով: Այսպիսով, նա սենսորային շտկումը հասկանում էր որպես շարժողական ակտի անբաժանելի տարր, որն ըստ բարդության, համեմատելի է ինտելեկտուալ գործընթացների հետ: Այսինքն՝ շարժումը, գիտնականի կարծիքով, շարժողական խնդրի լուծման գործընթացը, նյարդային համակարգից ստացվող հրամանի մեխանիկական կատարումը չէ:

Ն. Ա. Բեռնշտեյնի այսպիսի տեսությունները հակասում էին Աշխատանքի ինստիտուտի հիմնադիր Ա. Կ. Գաստևի գաղափարներին ու մտադրություններին, ով մտադրվել էր կառուցել շարժումներն այնպես, ինչպես կառուցում են մեքենա՝ մարդուն տալով ցանկացած շարժողական դիրքորոշումներ: 1925 թ. Բեռնշտեյնը թողնում է աշխատանքը և տեղափոխվում Հոգեբանության ինստիտուտ, որտեղ կենդանի շարժման խնդիրը մեծ հետաքրքրություն էր առաջացնում: 1926 թ. լույս է տեսնում նրա «Ընդհանուր կենսամեխանիկա» հիմնական աշխատությունը:

Բեռնշտեյնը՝ որպես բազմակողմանի հետաքրքրություններով մարդ, գրել է մի շարք աշխատանքներ, որոնք նվիրված են կենսաբանության, մաթեմատիկայի, կիբեռնետիկայի, բժշկության, երաժշտության բնագավառների խնդիրներին: Լինելով հրաշալի դաշնակահար՝ նա ուսումնասիրել է երաժշտական ուսուցման և ստեղծագործությունների օրինաչափությունները, նվիրելով դրանց բազմաթիվ գիտական աշխատանքներ, որոնց թվում՝ «Դաշնամուրային հարվածի կենսադինամիկայի հետազոտություններ» (1930), «Ժամանակակից տվյալներ նյարդաշարժողական գործընթացի կառուցվածքի մասին» (1939), ինչպես նաև «Դաշնամուր և ջութակ նվագելու տեխնիկայի մասին» գլուխը՝ «Շարժումների կրկնողության մասին» գրքում:

Բեռնշտեյնի տեսության գլխավոր ընդդիմախոսը եղել է Ի. Պ. Պավլովը: Նրանց բանավեճը երկար է ձգվում, և որպես առարկություն Պավլովին, Բեռնշտեյնը գրում է «Նյարդային ազդակի ուսմունքի պատմություն» գիրքը: Փորձարարական բժշկության համամիութենական ինստիտուտում 1936 թ. ծրագրավորվում է նրանց առերես բանակցությունը: Բայց Պավլովը մահանում է: Իմանալով, որ իր ընդդիմախոսն այլևս երբեք չի կարող իրեն պատասխանել, Բեռնշտեյնը դադարեցնում է գրքի հրատարակումը:

Ուսումնասիրելով շարժման խնդիրները՝ Բեռնշտեյնը մեծ ուշադրություն է դարձնում կլինիկական բժշկությանը: Նա եղել է հրաշալի նյարդաբան, զբաղվել է տարբեր շարժողական հիվանդությունների և նյարդային համակարգի վնասվածքների վերականգնմամբ: Այս հետազոտությունները թույլ տվեցին նյարդային համակարգում սկզբունքորեն փոխել պատկերացումները գործառույթների տեղայնացման մասին, ինչպես նաև առաջարկել խախտված գործառույթների վերականգնման արդյունավետ ձևեր, ինչը շատ կարևոր եղավ Հայրենական Մեծ պատերազմի վիրավորներին բուժելու համար:

1947 թ. լույս տեսավ Բեռնշտեյնի «Շարժումների կառուցման մասին» մենագրությունը: Այս տեսության մեջ հատուկ տեղ է զբաղեցնում գործողությունների և հմտությունների նեյրոֆիզիոլոգիական և նյարդաբանական

կառուցվածքի կազմավորումը: Գիտնականը կարծում էր, որ շարժումների կառուցման մեջ մասնակցում են գլխուղեղի բոլոր մակարդակները:

Ստորին, (A) ենթակեղևային մակարդակը բուն ֆիզիոլոգիական է: Այն ապահովում է մկանային տոնուսի այն նախակարգավորումը, որը հնարավոր է դարձնում տարբեր բարդության շարժողական ակտերի իրականացումը: Այնուհետև հաջորդում է վերին (B) ենթակեղևային մակարդակը, որը կենդանական աշխարհի ֆիլոգենեզի որոշակի փուլերում առաջատար դեր է կատարում: Մարդու մոտ այն ենթարկվում է կորտիկալային մակարդակներին, բայց նրա դերը զգալիորեն մեծ է: Շարժողական հարստությամբ այն որոշ իմաստներով գերազանցում է վերին մակարդակներին: Այս մակարդակը ղեկավարում է այնպիսի շարժումները, որոնցում պահանջվում է ժամանակի մեջ ռիթմիկ կրկնվող, բոլոր վերջույթները և իրանը ընդգրկող (օրինակ՝ քայլք, վազք, լող և այլն) բարդ շարժումների ճշգրիտ համաձայնեցվածություն: Ըստ Բեռնշտեյնի, այս մակարդակը «իր վրա է վերցնում բարդ շարժման ողջ ներքին սևագործ աշխատանքը», երբ մյուս, վերն ընկած մակարդակն ապահովում է հարմարումը՝ արտաքին աշխարհին և առարկաներին:

Շարժումների կառուցման կորտիկալ մակարդակների միջև առաջինը (C), հեղինակի կարծիքով, հետաքրքրություն է ներկայացնում արդեն ոչ միայն ֆիզիոլոգների, այլև հոգեբանների համար: Նրա կազմում են ընդգրկվում ենթակեղևային հանգույցների բարձրագույն բաժինը և գլխուղեղի կեղևի մի քանի շերտեր (տեսողական դաշտը, շոշափողական դաշտը և այլն): Այս մակարդակի ամենահրաշալի հատկանիշը՝ դրա օբյեկտիվորվածությունն է: Այն ազատված է սեփական մարմնի ֆիզիոլոգիայի ազդեցությունից, որը ծանրացած էր նախորդող մակարդակների վրա: Այն ձեռք է բերել ճշգրտություն և դիպուկություն տարբեր չափի, ձևի և զանգվածի օբյեկտներով լցված տարածության յուրացման գործում: C մակարդակի շարժումները հստակ արտահայտված նպատակային բնույթ ունեն:

Շարժումների հաջորդ մակարդակի (D) մենաշնորհը գրեթե պատկանում է միայն մարդուն: Հենց այստեղ, Բեռնշտեյնի կարծիքով, կարելի է տեսնել ֆիզիոլոգիականի և հոգեբանականի միաձուլման սկիզբը, նրանց փոխադարձ անցումները: D մակարդակն օժտված է մեծ վարժվողականությամբ և բարձր ավտոմատացմամբ: Ավտոմատացվում են ոչ թե իմաստային տարրերը, այլ շարժման կատարման տեխնիկական հատկությունները: Դրա համար ներգրավվում են ստորին մակարդակները, ընդհուպ մինչև C մակարդակը: Բայց դրանցում առարկայական մակարդակը չի գտնում պատրաստի հմտություններ, և պետք է մշակի դրանք:

D մակարդակից վեր ընկած է E մակարդակների խումբը: Բեռնշտեյնը գտնում էր, որ այս մակարդակները միավորում են նախորդ բոլոր մակար-

դակների գործողությունները: Այստեղ ձևավորվում են այնպիսի բարդ շարժում-հմտություններ, ինչպիսիք են ինքնաթիռ վարելը, տիեզերագնացի աշխատանքը և այլն: Է մակարդակը պատասխանատու է խոսքային գործունեության բոլոր տեսակների համար՝ երաժշտական, պարարվեստի և այլն: Դրա անկման դեպքում տուժում են գործունեության այս բարձրագույն հոգեբանական ձևերը: Արդյունքում «Շարժումների կառուցման մասին» մենագրությունն արժանացել է ստալինյան պարգևի:

1950 թ. ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի և բժշկական գիտությունների ակադեմիայի միավորված նիստի ժամանակ, որը հայտնի է որպես «Պավլովյան նիստ», Բեռնշտեյնի աշխատանքները քննադատվեցին «հակապավլովյան» ուղղվածության համար: Շուտով հենց ինքը հեռացվեց ինստիտուտներից և մինչև կյանքի վերջին օրերը, աշխատելու համար չուներ լաբորատոր պայմաններ:

Ն. Ա. Բեռնշտեյնը վերականգնվեց Խրուշչովյան «քայքայման» շրջանում: Նրա մոդելները միանգամից դարձան պահանջված՝ ֆիզիոլոգների, կիբեռնետիկների և հոգեբանների կողմից: 1960-ականների սկզբներին նա շատ էր շփվում ֆիզիկոսների ու մաթեմատիկոսների հետ, երիտասարդ մաթեմատիկոսների, կենսաբանների և ֆիզիկոսների կողմից կազմակերպված սեմինարների ժամանակ հանդես էր գալիս դասախոսություններով:

Այդ ժամանակ սկսեցին կազմավորվել այն բանի հիմքերը, ինչն արդյունքում ստացավ ակտիվության ֆիզիոլոգիա անվանումը:

1960-ական թվականների կեսերին նրա լյարդում հայտնաբերվեց քաղցկեղ: Գիտնականը հաշվարկեց իր ապրելու մնացած կյանքի տարիները, թողեց լաբորատորիան և զբաղվեց ակտիվության ֆիզիոլոգիայի տեսական խնդիրների հետագա մշակմամբ:

Բեռնշտեյնը եղել է բազմակողմանի կրթված մարդ. աշխատել է ֆիզիոլոգիայի և հոգեբանության կցակետում, նրա տեսությունները նվիրված են ավելի մեծ թվով ոլորտների խնդիրներին, նրա մտքերն օգտագործվում են հոգեբանությունում, մաթեմատիկայում, կենսաբանությունում, ֆիզիոլոգիայում և կիբեռնետիկայում: Ուսումնասիրելով շարժումների կառուցման մակարդակները, նա հանգեց ակտիվության ֆիզիոլոգիայի հայեցակարգի ստեղծմանը: Նրա աշխատանքները հիմք են ծառայել այնպիսի հոգեբանների ստեղծագործությունների համար, ինչպիսիք են Բ. Մ. Վելիչկովսկին, Վ. Պ. Զինչենկոն, Յու. Բ. Հիպենրեյտերը և այլոք:

3.13. Հումանիստական հոգեբանություն

3.13.1. Գորդոն Օլպորտ (1897-1967)

Գ. Օլպորտը համարվում է հումանիստական հոգեբանության հիմնադիրներից մեկը, որը նա հակադրում էր հոգեվերլուծությանը և բիհեվիորիզմին: Օլպորտը անհիմն էր համարում հիվանդ մարդկանց շրջանում հայտնաբերված փաստերի տարածումն առողջ մարդկանց վրա: Օլպորտն անհրաժեշտ էր համարում ոչ միայն հավաքագրել և նկարագրել դիտարկվող փաստերը, այլև, ինչպես բիհեվիորիզմի մեջ, բացատրել դրանք:

Օլպորտի տեսության կարևորագույն գաղափարներից էր, որ մարդ իրենից ներկայացնում է բաց և ինքնազարգացող համակարգ: Նա ելնում էր այն դրույթից, որ մարդ նախ և առաջ սոցիալական էակ է և չի կարող զարգանալ առանց շրջապատող մարդկանց հետ շփվելու:

Պնդելով, որ անձը բաց համակարգ է, նա ընդգծում էր շրջապատող միջավայրի դերը նրա զարգացման գործընթացում: Ընդ որում Օլպորտը նշում էր, որ անձի և հասարակության այդ շփումն իրենից չի ներկայացնում միջավայրի հետ հավասարակշռությունը պահպանելու ցանկություն, այլ հանդիսանում է փոխազդեցություն, փոխհաղորդակցում: Այսպիսով, Օլպորտը դեմ էր այն ժամանակ ընդունված գաղափարին, որ զարգացումը մարդու ադապտացիան է շրջապատող միջավայրին՝ ապացուցելով, որ մարդու զարգացման հիմքում ընկած է այդ հավասարակշռությունը խախտելու պահանջմունքը, ինչպես նաև կատարելագործվելու և զարգանալու պահանջմունքը:

Օլպորտն առաջիններից էր, ով խոսեց յուրաքանչյուր մարդու յուրահատկության մասին: Մարդ յուրահատուկ է, որովհետև հանդիսանում է որակների և պահանջմունքների ինքնատիպ համադրության կրողը, որոնց Օլպորտը անվանում էր «traits»-գիծ: Այդ գծերը նա ստորաբաժանում էր հիմնականների և գործիքայինների (ինստրումենտալների): Հիմնական գծերը բնածին են, դրանք ուղղորդում են վարքը, իսկ ինստրումենտալները ձևավորում են վարքը և ձևավորվում են կյանքի ընթացքում: Այդ գծերի համալիրն անձի առանցքն է, որը նրան յուրահատկություն է հաղորդում: Հասարակությունը նպաստում է որոշակի որակների զարգացմանը և խոչընդոտում մյուս որակների ձևավորմանը: Օլպորտը զարգացնում էր այն դրույթը, որ մարդու բոլոր որակներն ինքնավար են: Երեխայի այդ գծերը

դեռևս ինքնավար չեն և միայն մեծահասակի դեպքում են դրանք ձեռք բերում ինքնավարություն և անկախություն՝ կենսաբանական պահանջմունքներից ու հասարակության ճնշումներից: Ինքնավարությունը ձևավորված անձի կարեվոր բնութագրումն է: Այն հնարավորություն է տալիս բաց լինելով հասարակության առջև՝ պահպանել սեփական անհատականությունը: Այս կերպ Օլպորտը լուծում է հումանիստական հոգեբանության կարևորագույն խնդիրներից մեկը. այն է նույնականացում-օտարացում հիմնախնդիրը:

Օլպորտը ձևավորեց մարդու հոգեկանի համակարգային հետազոտման սեփական մեթոդները: Նա ելնում էր այն գաղափարից, որ որոշակի գծեր առկա են յուրաքանչյուրի անձի մեջ, տարբերությունը դրանց զարգացածության մակարդակի, ինքնավարության աստիճանի և անձի կառուցվածքում զբաղեցրած տեղն է: Հիմնվելով այս դրույթին՝ Օլպորտը ստեղծում է սեփական բազմագործոնային հարցարանները, որոնց միջոցով հետազոտվում են մարդու անձնային գծերի զարգացման օրինաչափությունները: Ամենահայտնի հարցարաններից է Մինեսոտայի համալսարանի հարցարանը (MMPI), որն այժմ կիրառվում է ոչ միայն անձի կառուցվածքի հետազոտման համար, այլև մասնագիտական պիտանելիության և համատեղության ուսումնասիրության համար:

Այսպիսով, Օլպորտը ձևակերպեց անձի հոգեբանության հումանիստական դպրոցի նոր ուղղության հիմնական դրույթները:

3.13.2. Կարլ Ռոջերս (1902-1987)

Ամերիկացի հոգեբան, հումանիստական հոգեբանության հիմնադիրներից մեկը: Որպես անձի «միջուկ-էություն» դիտում էր «Ես» հայեցակարգը, որը ներկայանում է իրական «Ես»-ի և իդեալական «Ես»-ի փոխհարաբերությունների դինամիկայի տեսքով: Ըստ նրա պատկերացումների, մարդու մեջ գոյակցում են երկու աստիճաններ (ինստանցիաներ), որոնք պետք է գործեն համաձայնեցված. իրական «Ես»-ը, որն իրենից ներկայացնում է իր մասին ունեցած գնահատականների ու պատկերացումների ամբողջություն, կախված է մարդու անհատական փորձից և շրջապատողների իրական գնահատականներից, և իդեալական «Ես»-ը, որն իրենից ներկայացնում է այն, թե ինչպիսին է ուզում լինել մարդը: Մշակել է ոչ դիրեկտիվ (չղեկավարող) հոգեթերապիան, որը

կենտրոնացած է այցելուի վրա, և որի հիմքում ընկած է այցելուին խորհուրդներ չտալու կանոնն ու նրա վարքագծի գնահատումներից խուսափելը, ինչպես նաև նրա ստեղծագործական ընդունակությունների ակտիվացումը, ինչը հանգեցնում է նրա խնդիրների, դժվարությունների ինքնուրույն լուծմանը:

Կ. Ռոջերսը ծնվել է 1902 թ. հունվարի 8-ին, Իլլինոյս նահանգում: Ավարտել է Վիսկոնսինի համալսարանը և հրաժարվելով հոգևորականի կարիերայից, որին նրան նախապատրաստում էին ծնողները, սկսեց հետաքրքրվել հոգեբանությամբ: Աշխատանքի անցնելով մանկական կենտրոնում և այնտեղ մեծ քանակությամբ հետաքրքիր նյութ հավաքելով, 1939 թ. Ռոջերսը գրում է «Կլինիկական աշխատանք դժվար երեխաների հետ» գիրքը, որն ունեցավ մեծ հաջողություն, ինչի շնորհիվ Ռոջերսին հրավիրում են Օհայոյի համալսարան, պրոֆեսորի պաշտոն զբաղեցնելու համար: Այսպես սկսվում է նրա ակադեմիական գործունեությունը: 1945 թ. Չիկագյան համալսարանը նրան հնարավորություն է տալիս հիմնել խորհրդատվական կենտրոն, որտեղ Ռոջերսը ձևավորում է ինդուկտիվ կամ «այցելուակենտրոն» թերապիայի հիմքերը: Ռոջերսը հեղինակել է նաև «Այցելուի վրա կենտրոնացված թերապիա» գիրքը (1954), իսկ 1963 թ. նրա գործունեությունը կապվում է անձի ուսումնասիրման կենտրոնի հետ:

Ինչպես հումանիստական հոգեբանության մյուս ներկայացուցիչների, այնպես էլ Ռոջերսի համար կենտրոնական է հանդիսանում մարդու բացառիկության և արժեքավորության գաղափարը:

Ռոջերսի բոլոր աշխատանքների ելակետային գաղափարն այն էր, որ մարդը դիտարկելով ու գնահատելով սեփական փորձը ճանաչում է ինքն իրեն, ընդ որում մարդու կենսափորձը նրա «ես»-ի անքակտելի մասն է կազմում: Այդ փորձը, որը Ռոջերսն անվանում է «ֆենոմենալ դաշտ», յուրահատուկ է և անհատական: Մարդու կողմից ստեղծված աշխարհը կարող է համընկնել իրականությանը կամ չհամընկնել: Տվյալ դաշտի և իրականության համապատասխանության աստիճանը Ռոջերսն անվանում էր կոնգրուենտություն: Կոնգրուենտության խախտումը բերում է նրան, որ մարդը կամ չի գիտակցում իրականությունը, կամ չի արտահայտում այն, ինչն իսկապես ուզում է անել կամ ասել: Սա բերում է լարվածության աճին, տագնապայնությանը և, ի վերջո, հանգեցնում է անձի նևրոտիզացիայի:

Նևրոտիզացիայի է բերում նաև փախուստը սեփական անհատականությունից, որը, ինչպես Մասլոուն, այնպես էլ Ռոջերսը համարում էին անձի կարևորագույն պահանջմունքներից մեկը:

«Ես»-ը (self) գտնվում է փորձի դաշտում: Այն անկայուն և մշտապես փոփոխվող էություն է, այսինքն, ի տարբերություն շատ հեղինակների, որոնք «Ես»-ը դիտարկում են որպես կայուն և անփոփոխ անձնային տարր,

Ռոջերսի համար «Ես»-ը գործընթաց է, համակարգ, որը մշտապես փոփոխվում է:

Խոսելով «Ես»-ի կառուցվածքի մասին՝ Ռոջերսը գալիս էր այն եզրակացության, որ մարդու ներքին էությունը՝ ինքնությունը, դրսևորվում է նրա ինքնագնահատականի մեջ: Փոքր երեխաների այդ ինքնագնահատականը չգիտակցված է, սակայն արդեն վաղ տարիքային փուլում այն ղեկավարում է մարդու վարքը՝ օգնելով հասկանալ ու ընտրել շրջապատից այն, ինչ հատուկ է հենց տվյալ անհատին՝ հետաքրքրությունները, մասնագիտությունը, շփումները որոշակի մարդկանց հետ: Այն դեպքում, երբ վարքը կառուցվում է՝ ելնելով ինքնագնահատականից, ապա այն արտահայտում է անձի բուն էությունը, նրա կարողությունները, ընդունակությունները և հետևաբար անձին հաջողություն է բերում, այսինքն այս դեպքում մարդու կարծիքը սեփական անձի մասին, մյուսների կարծիքն իր մասին և նրա ինքնությունը համապատասխանում են՝ հանգեցնելով կոնգրուենտության: Սակայն արդեն վաղ մանկության ժամանակ երեխան կարող է օտարանալ սեփական իրական ինքնագնահատականից: Հիմնականում այդ տեղի է ունենում մեծահասակների ճնշման տակ, որոնք սովորաբար ունենում են սեփական պատկերացումները երեխայի ընդունակությունների և ներուժի մասին: Այդ գնահատականը նրանք պարտադրում են երեխային, որպեսզի երեխան այն ներքնայնացնի: Որոշ երեխաներ դիմադրում են դրան, ինչը հանգեցնում է շրջապատի հետ բախումների, ինչպես նաև նեգատիվիզմի ու ագրեսիայի: Երբեմն նեգատիվիզմի մեջ երեխան դիմադրում է նույնիսկ այն բանին, ինչն իսկապես համընկնում է նրա հետաքրքրություններին: Սակայն ավելի հաճախ երեխաները համաձայնվում են մեծահասակների հետ, քանի որ երեխան կարիք ունի ընդունվելու նրանց կողմից: Շրջապատի սիրուն արժանանալու այդպիսի ցանկությունը Ռոջերսն անվանում է «արժեքայնության պայման»: Այն խոչընդոտում է անձնային աճին, քանի որ աղավաղում է իրական «Ես»-ի գիտակցումը, այն փոխարինելով այնպիսի պատվերով, որը հաճելի է ուրիշներին: Խնդիրն այն է, որ զբաղվելով պարտադրված գործունեությամբ մարդ չի կարող հաջողակ լինել:

Ռոջերսի կողմից կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ մարդու արդյունավետ սոցիալականացումը, նրա բավարարվածությունն աշխատանքով և ինքն իրենով ուղիղ ձևով կոռելյացվում են նրա ինքնագիտակցության մակարդակի հետ:

Ռոջերսը պնդում էր նաև, որ ինքնագնահատականը պետք է լինի ոչ միայն համարժեք, այլև ճկուն և կարողանա փոփոխվել իրավիճակից ելնելով: Ի տարբերություն այլ հայեցակարգերի, որոնք մատնանշում են ապագայի արժեքը (Ադլեր) կամ անցյալի ներգործությունը (Յունգ, Ֆրոյդ), Ռոջերսը նշում էր ներկայի նշանակությունը՝ խոսելով այն մասին, որ մարդիկ

պետք է սովորեն ապրել ներկայով, գնահատել սեփական կյանքի ամեն պահը:

Ռոջերսի բացահայտումները կապված են ոչ միայն ինքնիրացման և ինքնագնահատականի վերաբերյալ նոր հայացքների հետ, այլև վերաբերում են հոգեշտկմանը: Նա ելնում էր այն մտքից, որ հոգեթերապևտը սեփական կարծիքը չպետք է պարտադրի այցելուին, այլ պետք է հանգեցնի ճիշտ որոշման, որը նա ինքն է կայացնելու: Թերապիայի ընթացքում մարդ սովորում է ավելի շատ վստահել ինքն իրեն, սեփական զգայություններին, ներընթռնողությանը, ավելի լավ հասկանալ ինքն իրեն, ապա նաև այլոց: Սա բերում է ինքնագնահատականի վերակառուցմանը, ինչը բարձրացնում է կոնգրուենտությունը, և իջեցնում լարվածությունն ու տագնապայնությունը: Ռոջերսը պնդում էր, որ բոլոր մարդիկ օժտված են բնածին թերապևտիկ ընդունակություններով և երբեմն այդպիսի թերապիան անցկացվում էր խմբային ձևով: Այս մոտեցումը թույլ տվեց Ռոջերսին ձևավորել հանդիպող խմբերի գաղափարը:

Կ. Ռոջերսը գրել է 16 գիրք և 200-ից ավելի հոդվածներ: Նրա աշխատանքները թարգմանվել են 60 լեզուներով ու մինչ օրս մնում են արդիական՝ հուզելով գիտական հանրությանը:

3.13.3. Աբրահամ Մասլոու (1908-1970)

Ամերիկացի հոգեբան Ա. Հ. Մասլոուն ծնվել է Նյու-Յորքում, 1908 թ.: Նա հրեական ընտանիքից էր, որն արտագաղթել էր Ռուսաստանից: Նրա ծնողներն անուս էին, բայց շատ էին ցանկանում, որ Աբրահամը՝ յոթ երեխաներից ավագը, կրթություն ստանար և աջակցում էին նրան, սակայն նա խոստովանում էր, որ իր մանկության գրեթե բոլոր տարիներին եղել է միայնակ ու տխուր: Նրա հարաբերությունները մոր հետ համարյա թշնամական էին. մայրը հաճախ սպառնում էր, որ Աստված նրան կպատժի իր արած ամեն մի սխալի համար: Արդյունքում նա սկսեց կասկածի տակ դնել Աստծո գոյությունը: Նա ավարտել է Վիսկոնսինի համալսարանը և 1934 թ. ստացել հոգեբանական գիտությունների դոկտորի աստիճան: Նրա սեփական տեսությունը երևան է եկել հիմնական հոգեբանական հայեցակարգերին ծանոթանալուց հետո: Մասլոուի հիմնական գաղափարն այն մասին է, որ որպես բիհեվիորիզմի և հոգեվերլուծու-

թյան այլընտրանք երրորդ ուղղության անհրաժեշտություն կա: Կյանքի վերջին տարիներին նա Ամերիկյան Հոգեբանական Ասոցիացիայի տնօրենն էր: 1970 թ., 62 տարեկան հասակում նա մահացավ սրտի կաթվածից, որը սրտի քրոնիկական հիվանդության արդյունք էր:

Նոր մոտեցման ձևավորման անհրաժեշտության մասին խոսելիս նա նշում էր, որ չի մերժում առկա ուղղությունները, այլ մերժում է դրանց փորձը բացարձակի հասցնելը:

Հոգեվերլուծության ամենամեծ թերությունը նա համարում էր այն, որ հոգեկանի զարգացումը դիտարկվում էր որպես շրջապատող միջավայրին օրգանիզմի ադապտացիա:

Մասլոուի հիմնական միտքն այն էր, որ ի տարբերություն կենդանու մարդ չի ցանկանում գալ հավասարակշռության շրջապատի հետ, այլև հակառակը՝ ցանկանում է հաղթահարել այդ հավասարակշռությունը, որը մահ է նշանակում անձի համար: Հարմարումը խոչընդոտում է անձի ինքնիրացմանը: Անձի զարգացման հիմքը ինքնիրացման հասնելու ձգտումն է:

Մյուս կողմից, ընդդիմանալով բիհեվիորիզմին, Մասլոուն պնդում էր, որ ամենաարժեքավորը, ինչ կա հոգեկանում՝ ինքնությունը, ձգտումը հասնել ինքնիրացմանը, չեն կարող նկարագրվել և հասկացվել բիհեվիորիզմի սահմաններում և դա է պատճառը, որ վարքի հոգեբանությունը պետք է լրացվի գիտակցության հոգեբանությամբ, որը կհետազոտեր անձի «Ես-հայեցակարգը», նրա ինքնությունը:

Ի տարբերություն հոգեվերլուծողների, Մասլոուն կարծում էր, որ անձի բնույթը պետք է ուսումնասիրվի ոչ թե շեղվող վարք ունեցող մարդկանց հետազոտելով, այլև մարդկության լավագույն ներկայացուցիչներին ուսումնասիրելով: Մասլոուի կողմից ընտրված խումբը բաղկացած էր 18 մարդուց, ինն մարդ նրա ժամանակակիցներն էին, իսկ մյուս ինն՝ պատմական անձինք (Ա. Լինկոլն, Ա. Էյնշտեյն, Բ. Սպինոզա և այլոք): Հետազոտությունները նրան տվեցին մարդու պահանջմունքների հիերարխիայի առկայության գաղափարը: Այդ հիերարխիան հետևյալն էր.

1. Ֆիզիոլոգիական պահանջմունքներ՝ սնունդ, ջուր, քուն:
2. Անվտանգության պահանջմունք՝ կայունություն:
3. Պատկանելության և սիրո պահանջմունք՝ ընտանիք, ընկերություն:
4. Հարգանքի պահանջմունք՝ ինքնահարգանք, ճանաչում:
5. Ինքնիրացման պահանջմունք՝ ընդունակությունների զարգացում:

Մասլոուի տեսության խոցելի կողմն այն էր, որ նա պնդում էր, թե տվյալ պահանջմունքները (ինքնահարգանք, ինքնիրացում) ի հայտ են գալիս նախորդ ավելի տարրականները բավարարելուց հետո: Մասլոուից հետո հումանիստական հոգեբանության շրջանառության մեջ մտան «ինքնիրացում» և «ինքնիրացվող անձ» տերմինները: Ինքնիրացվող մարդիկ, ըստ հեղինակի,

բնական, համարժեք և արդյունավետ են ընկալում իրավիճակը, կենտրոնանում են խնդրի, և ոչ թե սեփական անձի վրա: Սրանք մի կողմից բաց են այլոց համար, մյուս կողմից նրանց հատուկ է ինքնավարությունն ու անկախությունը շրջապատող միջավայրից:

Գիտնականը կարծում էր, որ յուրաքանչյուր ոք ծնվում է որակների, ընդունակությունների որոշակի համալիրով, որոնք նրա «ես»-ի էությունն են կազմում և որոնք մարդ պետք է գիտակցի ու դրսևորի սեփական կյանքում: Դա է պատճառը, որ գիտակցված ցանկություններն ու դրդապատճառներն են, որ կազմում են անձի էությունը և տարբերում նրան կենդանիներից: Ինքնիրացման ճանապարհին առկա խոչընդոտները երբեմն ստիպում են մարդուն ետ կանգնել զարգացման այդ ուղուց, ինչի հետևանքով կարող են զարգանալ նևրոզներ: Մասլոուի հետազոտությունները ցույց են տվել, որ նևրոտիկներն ինքնիրացման չգիտակցված կամ թերի զարգացած պահանջմունք ունեցող մարդիկ են:

Այսպիսով, մի կողմից հասարակությունն անհրաժեշտ է անձին, քանի որ ինքնիրացվել նա կարող է միայն հասարակության մեջ, մյուս կողմից այն խոչընդոտում է ինքնիրացմանը և հեռացնում մարդուն իր էությունից: Դա է պատճառը, որ մարդ անհրաժեշտ է, որ հավասարակշռություն պահպանի այդ երկու մեխանիզմների միջև: Օպտիմալը, ըստ Մասլոուի, արտաքին աշխարհի հետ շփման մեջ նույնականացումն է արտաքին պլանում և օտարվածությունը ներքին պլանում: Միայն այդպիսի մոտեցումն է, որ թույլ կտա մարդուն արդյունավետ շփվել շրջապատի հետ և միևնույն ժամանակ մնալ այնպիսին, ինչպիսին կա:

Մեծ ճանաչում է ստացել Մասլոուի դրույթն այն մասին, որ անձնային զարգացման նպատակն ինքնիրացման ցանկությունն է, մինչդեռ անձնային աճի դադարումը՝ անձնային մահ է: Ընդ որում, հոգևոր աճին խանգարում են ոչ միայն ֆիզիոլոգիական պահանջմունքները, մահվան վախը, վատ սովորությունները, այլև խմբի ճնշումը, սոցիալական քարոզչությունը, որոնք նվազեցնում են մարդու ինքնավարությունը և անկախությունը:

Գնահատելով Մասլոուի տեսությունը, անհրաժեշտ է նշել, որ նա առաջին հոգեբանն էր, որն իր ուշադրությունն ուղղել էր ոչ միայն անձի բացասական, այլև դրական կողմերի վրա: Առաջիններից էր, որ հետազոտեց անձնային փորձի դրական ձեռքբերումները և բացահայտեց ինքնազարգացման և ինքնակատարելագործման ուղիները յուրաքանչյուրի համար:

3.14. Կոգնիտիվ հոգեբանություն

3.14.1. Ջորջ Քելլի (1905-1962)

Ջորջ Ալեքսանդր Քելլին ծնվել է 1905 թ. ապրիլի 18-ին, ԱՄՆ-ում: Համալսարանում սովորելիս հետաքրքրվում է հոգեբանությամբ: Նրա առաջին հոդվածները լույս են տեսել 20-րդ դարի 1930-ական թվականներին և նվիրված են եղել պրակտիկ հոգեբանությանը, հաղորդակցման խնդիրներին:

1930-ականների վերջին Ջ. Քելլին հետաքրքրվում է անձի հոգեբանության խնդիրներով: Այդ ժամանակ գոյություն ունեցող տեսությունները չէին համապատասխանում երիտասարդ գիտնականի հայացքներին, այդ պատճառով էլ նա որոշեց ստեղծել սեփական հայեցակարգը: Դրա համար նա նույնիսկ ստիպված էր մշակել անձի հետազոտման հատուկ մեթոդ, որը ստացավ «ռեպերտուարային ցանցերի մեթոդ» անվանումը:

Դոկտորական ատենախոսության պաշտպանությունից հետո Ջ. Քելլին դասավանդում է համալսարանում և զուգահեռաբար անցկացնում լաբորատոր հետազոտություններ: Նա փայլուն փորձագետ էր և ակտիվորեն կիրառում էր իր մեթոդը: Արդյունքում նրա կողմից մշակվեց անձի նոր հայեցակարգ, որն ստացավ անձնային կառույցների (կոնստրուկտների) տեսություն անվանումը: Այդ տեսությունն ի հայտ եկավ նաև գիտական շրջանակներում հասունացած բիհեվիորիստական և նեոբիհեվիորիստական տեսություններից հիասթափվելու պատճառով:

1955 թ. ապրիլի 15-ին լույս տեսավ Ջ. Քելլիի «Անձնային կոնստրուկտների հոգեբանություն» գիրքը: Այդ աշխատանքում հեղինակը քննարկել է, թե ինչպես է մարդն իր գիտակցությունում կառուցում աշխարհի ամբողջական պատկերը և դրա օգնությամբ կարողանում կանխատեսել ու վերահսկել իրեն շրջապատող մարդկանց վարքն ու իրադարձությունները:

Ջ. Քելլիի կողմից ստեղծված տեսության մեջ անձի առանցքը կազմող հիմնական հասկացությունը հանդիսանում է «անձնային կոնստրուկտը»: Այդ տեսությունում անձն իրենից ներկայացնում է քիչ թե շատ կարևոր կոնստրուկտների կազմակերպված համակարգ: Եվ, որպեսզի հասկանանք անձին, բավական է իմանալ այդ կոնստրուկտներում ներառված իրադարձությունները, այն կոնստրուկտները, որոնք նա ստեղծում է ու կիրառում, և այն, թե ինչպես են դրանք հարաբերակցվում մեկը մյուսի հետ:

Եթե կոնստրուկտը հեշտացնում է իրադարձությունների կանխատեսման համարժեքությունը, այն պահպանվում է անձի կողմից, իսկ եթե կանխատեսումը չի հաստատվում, ապա կոնստրուկտը ենթարկվում է վերանայման կամ բացառվում է: Այդ կառուցվածքի գործունեությունն անձի կողմից ստուգվում է դրա կանխատեսման արդյունավետության տեսակետից, որի աստիճանը կարող է փոփոխվել: Անձնային կառուցվածքը կազմակերպում ու կարգավորում է վարքը, կառուցում փոխհարաբերությունների համակարգը՝ իրականացնելով օբյեկտների նմանության և տարբերությունների հասկացումը, կառուցելով «ես» կերպարը:

Տարրերի հանդեպ իրականացվող հսկողության բնույթին համապատասխան՝ Ջ. Քելլին առանձնացրել է անձնային կոնստրուկտների յուրահատուկ տիպեր. նախազգուշացնող, կոնստելյացիոն և ենթադրող:

Նախազգուշացնող կոնստրուկտը պատասխան է տալիս իր՝ մեջ ներառվող տարրերի միօրինակացման համար: Կոնստելյացիոն կոնստրուկտը միաժամանակ կարող է պատկանել տարբեր բնագավառների, բայց հաստատուն է միայն իր բնագավառում: Ենթադրող կոնստրուկտն իր տարրերը թողնում է բաց այլընտրանքային կառուցվածքների համար և թույլ է տալիս անձին լինել բաց նոր փորձի համար: Կոնստրուկտները, որպես բարդ գոյացություններ, ունեն մի շարք հատկություններ:

Այսպիսով՝ նա հանգեց յուրահատուկ մետատեսություն ստեղծելու գաղափարին, որը կարող է կիրառելի լինել ինչպես գիտական հետազոտությունների, այնպես էլ առանձին մարդու կոնկրետ խնդիրների դեպքում: Այս գիտնականի մոտեցումը խիստ տարբերվում էր ընդհանուր ճանաչում գտած սկզբունքներից: Այդ ժամանակների հոգեբանների մեծամասնության կողմից կիրառվող օբյեկտիվ մոտեցման փոխարեն Ջ. Քելլին առաջարկեց սուբյեկտիվը:

Հոգեբանությունում Ջորջ Քելլին հանդես է եկել նորարարի դերում, քանզի նրա գեղափարները մի քանի տարով կանխագործեցին գիտության զարգացումը: Նա ստեղծեց անձի յուրատեսակ տեսություն, որը խոր գիտական էր և միաժամանակ ուներ պրակտիկ նշանակություն: Քելլին այն հակադրեց բիհեվիորիստների հայացքներին. նա յուրաքանչյուր մարդու հասկանում էր որպես հետազոտողի, ով կոնստրուկտների օգնությամբ անընդհատ զբաղվում է իր սեփական «աշխարհի պատկերի» կառուցմամբ:

3.14.2. Լեոն Ֆեստինգեր (1919-1989)

Լեոն Ֆեստինգերը համարվում է 1950-ական թվականների վերջում և 1960-ականների սկզբում ԱՄՆ-ում ի հայտ եկած հոգեբանության հատուկ ուղղության՝ կոգնիտիվ հոգեբանության հիմնադիրներից մեկը: Կ. Լևինի, Է. Թոլմենի և Ջ. Քելլիի հետ նա ձևակերպեց հիմնական հասկացությունները, որոնց արդյունքում կառուցվեց գիտություն: Այդպիսի հասկացություն դարձավ Լ. Ֆեստինգերի կողմից մշակված «կոգնիտիվ դիսոնանսի» տեսությունը: Կոգնիտիվ կամ, այլ կերպ, ճանաչողական դիսոնանսը (անհերդաշնակությունը) նա մեկնաբանում է որպես՝ սուբյեկտի, իրավիճակի ունեցած ընկալմամբ գոյություն ունեցող տեղեկատվության տարածում: Ընդ որում այդպիսի տարածումն անհատի մոտ առաջացնում է բացասական հույզեր, որոնցից նա ձգտում է ազատվել:

Լեոն Ֆեստինգերը ծնվել է 1919 թ., ԱՄՆ-ում: Պատանեկության տարիներին նա հրապուրվում է հոգեբանությամբ: Բարեբախտաբար տանը կային այդ գիտությանը նվիրված շատ գրքեր: 1937 թ. նա ընդունվում է Ստենֆորդի համալսարանի հոգեբանության ֆակուլտետ: Ավարտելով այն, Լ. Ֆեստինգերը մնաց աշխատելու հոգեբանության ամբիոնում:

1950-ական թվականների կեսերին Լ. Ֆեստինգերը ստեղծեց նոր սոցիալ-հոգեբանական տեսություն, որն ստացավ «կոգնիտիվ դիսոնանս» անվանումը: Այդ հասկացությունը կազմավորվել է լատիներեն «cognito» բառից, որը նշանակում է «գիտելիք», «ճանաչողություն»: Ստանալով գիտելիքներ առարկայի մասին, մարդը կարող է բախվել հակասությունների հետ, որոնք նրա մոտ առաջացնում են անհարմարավետության զգացում: Այդ հակասական գիտելիքներին գիտնականը վերագրել է որոշ դրդապատճառային կարգավիճակ, որի հաշվին անհարմարավետության զգացումը կարող է հեռացվել: Լ. Ֆեստինգերը կարծում էր, որ գոյություն ունի մարդկանց և օբյեկտների մասին գիտելիքների որոշակի համակարգ, որը նա անվանել է կոգնիտիվ համակարգ: Այդ համակարգը կարող է ունենալ բարդության, փոխկապվածության և համաձայնեցվածության տարբեր մակարդակ, ինչը մեծամասամբ կախված է այն կազմավորող գիտելիքների բնույթից:

Այսպիսով, կոգնիտիվ դիսոնանսը յուրատեսակ ինտելեկտուալ կոնֆլիկտ է, որն ի հայտ է գալիս այն իրադրությունում, երբ եղած կարծիքներին

ու պատկերացումներին հակասում է նոր տեղեկատվությունը. այն դրսևորվում է մարդու վարքի, մտքերի ու զգացմունքների աններդաշնակության մեջ: Լ. Ֆեստինգերը համարում էր, որ մարդիկ ձգտում են ազատվել այդ դիսոնանսից և նշում է մի քանի հնարավոր ձևեր: Այսպես՝ օրինակ, անհատը կարող է մերժել կամ անգիտակցորեն խուսափել նոր տեղեկատվությունից, որն ունակ է ստեղծել հակասություններ: Բացի դրանից, մարդը կարող է համոզել իրեն, որ իրականում հակասություններ գոյություն չունեն: Այս ձևերից յուրաքանչյուրը որոշիչ չէ ցանկացած առանձին մարդու համար: Դրա ընտրությունն իրագործվում է անգիտակցորեն և կախված է իրադրությունից:

Լ. Ֆեստինգերն իր աշխատություններում բերում է կոնֆլիկտի այդպիսի վերացման մի օրինակ: Եթե մարդ իրեն ստիպում է ծիծաղել և ուրախանալ, երբ նա տխուր է (այսինքն գտնվում է կոգնիտիվ դիսոնանսի տարածված իրադրությունում), ապա ինչ-որ պահ նա անպայման կարձագանքի դրան, և կա՛մ կդադարի ձևացնել, կա՛մ էլ իսկապես կզվարճանա: Ամեն դեպքում դրսևորված վարքն այլևս չի լինի կեղծավորություն:

1957 թ. Լ. Ֆեստինգերն իր աշխատակիցների հետ հրատարակում է «Երբ չիրականացավ կանխատեսությունը» գիրքը: Այդ աշխատանքում նրանք տեղեկություններ են հավաքել բազում չիրականացված կանխատեսումների և չհաջողված գուշակությունների մասին: Հատկապես մանրամասնորեն ուսումնասիրվում է հերթական համաշխարհային ջրհեղեղի մասին կանխատեսումը, որը պետք է տեղի ունենար 1956 թ. դեկտեմբերին: Հետազոտողները միացան մարդկանց խմբին, ովքեր իսկապես սպասում էին այդ աղետին, ուսումնասիրեցին և գրքում մանրամասնորեն նկարագրեցին նրանց ռեակցիան, երբ կանխատեսումը չիրականացավ: Դրանով իսկ նրանք ցույց տվեցին, թե պրակտիկայում ինչպես է գործում կոգնիտիվ դիսոնանսի երևույթը:

1968 թ. Լ. Ֆեստինգերը դարձավ Նյու Յորքի սոցիալական հետազոտությունների Նոր դպրոցի պրոֆեսոր: Այդ աշխատանքը նրան հնարավորություն տվեց ստանալ դպրոցում աշխատած մի շարք հետազոտողների կողմից կուտակված հարուստ էմպիրիկ նյութեր: Բացի այդ, այստեղ Ֆեստինգերը սկսեց անցկացնել ոչ միայն դաշտային, այլև լաբորատոր հետազոտություններ, քանզի ստացավ սարքավորումներն օգտագործելու հնարավորություն:

Կոգնիտիվ դիսոնանսի տեսությանը նվիրված հետազոտությունների շրջանակներում Լ. Ֆեստինգերը Ջ. Մ. Կարլսմիտի հետ համատեղ անցկացնում է ձևավորված պատկերացումները փոփոխելու պրակտիկ գիտափորձ: Մի շարք ընտանիքներում տարածված պատժի և խրախուսանքի մեթոդը երեխաներին դաստիարակելիս իրականում բոլորովին անարդյունավետ է:

Եթե պետք է փոխել մարդու կարծիքն ինչ-որ բանի մասին, ապա բարձր պարգևը, ընդհակառակը, կամրապնդի այդ պատկերացումը: Անհրաժեշտ է, որպեսզի մարդն ինքը հասկանա բոլորը, առանց արտաքին ներգործության, լինի դա խրախուսում, թե կշտամբում:

Այսպիսով՝ կոգնիտիվ դիսոնանսի տեսությունն արագորեն կիրառություն գտավ մանկավարժությունում: Դրա օգնությամբ կարելի է մշակել երեխայի կողմից որոշակի վերաբերմունք՝ օրինակ ագրեսիայի, անկեղծության կամ կարեկցանքի հանդեպ: Ստեղծելով աններդաշնակության զգացում, դրանով իսկ մանկավարժը դրդում է նրան ձևավորելու որոշակի կարծիք: Կոգնիտիվ դիսոնանսի երևույթը կարող է ունենալ ոչ միայն դրական, այլև բացասական հետևանքներ: Բոլոր մարդկանց բնորոշ տարբեր մոլորությունների և նախապաշարմունքների կողքին, հետևանք կարող են լինել ստախոսությունն ու անարդարությունը, որոնք սովորաբար բերում են բացասական հետևանքների:

3.15. Գործոնային վերլուծություն

3.15.1. Ռայմոնդ Բեռնարդ Քեթթել (1905-1998)

Ռայմոնդ Քեթթելը ծնվել է 1905 թ., Անգլիայում: Նա ունեցել է երջանիկ մանկություն, որը սակայն դադարում է լինել այդպիսին, երբ Անգլիան ընգրկվում է Առաջին համաշխարհային պատերազմի մեջ: 16 տարեկան հասակում Քեթթելն ընդունվում է Լոնդոնի համալսարանի թագավորական քոլեջ, որտեղ ուսումնասիրում է ֆիզիկա և քիմիա, սակայն նրա հետաքրքրությունների շրջանակը հետզհետե ընդգրկում է մի շարք սոցիալական խնդիրներ, որոնց այդ գիտություններն ի զորու չէին պատասխանել և Քեթթելը որոշում է զբաղվել հոգեբանական հետազոտություններով: 1929 թ. նա ստանում է փիլիսոփայական գիտությունների դոկտորի կոչում: 1932-1937 թվականներին Քեթթելն աշխատում է Անգլիայի հոգեբանական կլինիկայի տնօրեն, որից հետո մեկնում Նյու Յորք: 1938 թ. նա աշխատում է Քլարկի համալսարանում, իսկ ավելի ուշ, 1941 թ. զբաղեցնում է հոգեբանության դասախոսի պաշտոն Հարվարդում: 1945 թ. Քեթթելը տեղափոխվում է Իլլինոյսի համալսարան, որտեղ գրեթե 30 տարի զբաղեցնում է անձի և խմբային վերլուծության լաբորատորիայի ղեկավարի պաշտոնը: 1973 թ. Կոլորադո նահանգում հիմնում է ինքնիրացման և բարոյականության հիմունքների հետազոտման ինստիտուտ: 1977 թ. Հավայան համալսարանի խորհրդատու ու պրոֆեսոր է, ինչպես նաև Իլլինոյսի պատվավոր պրոֆեսոր:

Քեթթելն իր կյանքի ընթացքում հրատարակել է 35 գիրք և 400 հետազոտական հոդված: Առավել ուշադրության են արժանի նրա հետևյալ գրքերը՝ «Անձի չափումները և նկարագիրը» (1946), «Անձնավորություն. համակարգային տեսական և փաստարկային հետազոտություն» (1950), «Անձի գիտական վերլուծություն» (1965), «Անձի և ընդունակությունների ժառանգում» (1982) և այլն:

Քեթթելը մահացել է 92 տարեկան հասակում, 1998 թ. փետրվարի 2-ին:

Անձնային գծերի տեսություն: Քեթթելը համոզված էր, որ անձի տեսությունը համարժեք է այն դեպքում, եթե հաշվի է առնվում անհատականության բովանդակությունը կազմող բազմաթիվ գծերը, այդ գծերի պայմանավորվածությունը ժառանգականությամբ ու արտաքին միջավայրի ներգոր-

ծությամբ, ինչպես նաև, թե ինչպիսի փոխազդեցության մեջ են գտնվում ժառանգական ու սոցիալական գործոնները: Անձի հետազոտման համար Քեթթելն առաջարկում էր փաստարկափոփոխակվող վիճակագրություն և գործոնային վերլուծություն: Ըստ Քեթթելի, անձը նա է, ով մեզ հնարավորություն է տալիս կանխորոշել իր վարքը տվյալ իրավիճակում:

Քեթթելը նշում է, որ բավականին դժվար է կանխորոշել որևէ մեկի վարքը տվյալ իրավիճակում: Կանխորոշման ճշգրտությունը բարձրացնելու համար պետք է դիտարկել ոչ միայն անձնային գծերը, այլև այդ գծերին չվերաբերող փոփոխականները, ինչպիսիք են տվյալ իրավիճակում մարդու տրամադրությունը և իրավիճակի պահանջից ծագած սոցիալական դերերը: Բացի դրանից, ցանկացած գիծ անհրաժեշտ է դիտարկել տվյալ իրավիճակում՝ նրա նշանակալիության տեսանկյունից: Քեթթելն առաջարկել է բանաձև, որի միջոցով հնարավոր է կանխատեսել մարդու վարքը R = f (S, P):

Մարդու յուրահատուկ պատասխան հակազդման բնույթը (R), որը նշանակում է, թե ինչ է նա անում կամ մտածում, իրենից ներկայացնում է անորոշ ֆունկցիա (f) կոնկրետ ժամանակահատվածում՝ կախված իրավիճակից (S) և անձի կառուցվածքից (P): Այսինքն, վարքը պայմանավորված է իրավիճակային փոփոխականների և անձնային գծերի փոխազդեցությամբ:

Անձնային գծերն արտացոլում են կայուն և կանխատեսելի հոգեբանական բնութագրիչներ: Քեթթելն առանձնացնում է մակերեսային և ելակետային գծեր: Մակերեսային գիծն իրենից ներկայացնում է վարքային բնութագրիչների համալիր, որոնք հանդես են գալիս անքակտելի կապի մեջ, բայց քանի որ այդ գծերն օժտված չեն միևնույն հիմքով և ժամանակային կայունությամբ, ուստի Քեթթելը դրանք էական չի համարում վարքի բացատրման համար:

Ելակետային գծերը հիմնարար կառույցներ են անձի համակարգում, որոնք գոյություն ունեն անձի ավելի «խորը մակարդակում» և պայմանավորում են վարքի տարբեր ձևեր: Քեթթելն իր հետազոտական աշխատանքում եկել է հետևյալ եզրահանգման՝ անձի հիմնարար կառուցվածքը ձևավորված է 16 ելակետային գծերից, որոնք ներառված են նաև Քեթթելի «16 անձնային գործոններ» հարցարանում: Ելակետային գծերը կարելի է բաժանել երկու ենթատիպերի՝ կախված դրանց աղբյուրից, 1) կոնստիտուցիոնալ գծեր, որոնք զարգանում են անհատի կենսաբանական և ֆիզիոլոգիական տվյալներից, 2) արտաքին միջավայրի կողմից ձևավորված գծեր, որոնք արտացոլում են ուսուցման գործընթացում ձեռք բերված վարքի ոճը և բնութագրիչները:

Քեթթելը համոզված էր, որ անհրաժեշտ է տարբերակել ընդհանուր և հատուկ գծեր: Ընդհանուր է այն գիծը, որը գոյություն ունի միևնույն մշա-

կույթի տարբեր ներկայացուցիչների մոտ (օր.՝ ինտրովերսիա, ինքնագնահատական): Հատուկ գծերով օժտված են շատ քչերը, դրանք հաճախ դրսևորվում են հետաքրքրությունների և դիրքորոշումների ոլորտում:

Քեթթելի տեսությունն ընդգրկում է հիմնախնդիրների մեծ շրջանակ, սակայն այն չի արժանացել պատշաճ գնահատականի մի շարք հոգեբանների և քննադատների կողմից, որոնք նշում էին, որ Քեթթելի աշխատությունները գրված են շատ դժվար լեզվով և դժվար են հասկանալու համար, ինչպես նաև քննադատվում էր նրա ձևակերպումների սուբյեկտիվությունը:

3.12.2. Հանս Յուրգեն Այզենկ (1916-1997)

Բանականության գործակիցը (IQ) որոշող բազմաթիվ թեստերի հեղինակ: Ծնվել է 1916 թ. Մարտի 4-ին Բեռլինում, կինոդերասանների ընտանիքում: Բարձրագույն կրթությունն ստացել է Փարիզում և Լոնդոնում: Նախնական շրջանում հետաքրքրվում էր առավելապես պատմությամբ և գրականությամբ: Հետագայում հետաքրքրվում է փիլիսոփայությամբ և հոգեբանությամբ, 1940 թ. ստանում է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Այզենկը մահացել է 1997 թ. սեպտեմբերի 4-ին:

Երիտասարդ տարիքում Այզենկը տարվում է նացիստական Գերմանիայում տիրող գաղափարախոսությամբ, պաշտպանում է ընտրյալների ռասայի գաղափարը: Որպես հետևանք, անգամ Գերմանիայից հեռանալուց հետո, նրա հոգեբանական հայացքներն ընդունվում են բացահայտ քննադատությամբ, որոշ դեպքերում՝ արհամարհվում:

Դեռևս գործունեության վաղ շրջանում Այզենկին արդեն իսկ հետաքրքրում էին մարդու բանականության խնդիրները: Նա փորձում էր կապ գտնել մարդու ինտելեկտուալ զարգացածության և նրա ուղեղի չափերի միջև: Այզենկի հետագա հետազոտություններում բացահայտվում է, որ մարդու ինտելեկտուալ զարգացածության մակարդակն էապես կախված է ժառանգականությունից. կյանքի օրոք ինտելեկտի զարգացումը, ըստ Այզենկի, չի հանգեցնում որևէ էական փոփոխության:

Ինտելեկտի իր հետազոտություններում Այզենկը որպես հիմք է ընդունում ֆրանսիացի հոգեբան Ալֆրեդ Բինեի թեստային մեթոդը: Երեխաների

ինտելեկտուալ ընդունակությունները որոշելու համար նախատեսված այդ թեստերը հարմարեցնելով և կիրառելով մեծահասակների նկատմամբ. Այզենկը մշակում է բանականության գործակցի (IQ) որոշման մեթոդ, որը նրան մեծ ճանաչում է բերում: 1946 թ. Այզենկը զբաղեցնում է Լոնդոնի Հոգեբուժության Ինստիտուտի տնօրենի պաշտոնը:

Այզենկը բազմիցս քննադատության է ենթարկում հոգեկան ախտահարումների բուժման ֆրոյդյան մեթոդը, նշելով, որ որոշ հիվանդներ առավել շուտ են ապաքինվում ինքնուրույնաբար, քան ենթարկվելով հոգեվերլուծական բուժման: Նրա կարծիքով, ավելի արդյունավետ է, երբ հիվանդին ուղղակի ստիպում են, որ նա ապաքինվի: Այզենկը կիրառում էր էլեկտրաշոկ և շնչահեղձություն առաջացնող բազմաթիվ դեղամիջոցներ: Արդյունքում, բուժումն ընդունում էր այնպիսի տհաճ տեսք, որ հիվանդն ուղղակի ստիպված էր ապաքինվել:

Սակայն այս մոտեցումը քննադատության է ենթարկվում հասարակության կողմից: Դրան գումարվում է այն հանգամանքը, որ յոթանասնականների սկզբներին Այզենկին մեղադրում են ռասիզմի մեջ: Իր «Ռասա, բանականություն, կրթություն» հոդվածի մեջ գիտնականը ցույց է տալիս, որ սևամորթ ռասայի ինտելեկտի զարգացածության մակարդակը (IQ) ցածր է եվրոպոիդ ռասայի մակարդակից: Այս երևույթն Այզենկը բացատրում էր ժառանգականությամբ:

Եվ ընդհանրապես Այզենկի մոտ հանգուցային էր ժառանգականության դերը: Ըստ նրա, հիվանդությունները չեն առաջանում ինչ-որ պատճառներով, դրանք ունեն ժառանգական պայմանավորվածություն, կախված են անձի տիպից: Եվ նույնիսկ ծխելը, ըստ Այզենկի, ոչ թե հանգեցնում է հիվանդության, այլ ինքնին անձի ժառանգականությամբ պայմանավորված որոշակի խանգարումների ախտանիշ է:

Բնական է, որ Այզենկի այսպիսի մոտեցումներն ու հայացքները նրան պետք է բերեին ռասիստի, ֆաշիստի և սկանդալիստի համբավ: Եվ, չնայած նրա բազմաթիվ հայտնագործություններ այդպես էլ չճանաչվեցին գիտական հասարակության կողմից, Հանս Յուրգեն Այզենկն իր ուրույն տեղն է զբաղեցնում հոգեբանական մտքի զարգացման պատմության մեջ:

3.16. Էկզիստենցիալ հոգեբանություն

3.16.1. Վիկտոր Ֆրանկլ (1905-1995)

Վիկտոր Էմիլ Ֆրանկլը ծնվել է 1905 թ. մարտի 26-ին, Վիեննայում: Դպրոցում սովորելու տարիներին նա հետաքրքրվում է հոգեվերլուծությամբ: Այդ տարիներին Վիեննայում էր ապրում Զիգմունդ Ֆրոյդը:

Վ. Ֆրանկլը հիացական նամակ է գրում Ֆրոյդին և, շուտով ստանում պատասխան, այդպիսով նրանց միջև ծավալվում է նամակագրական կապ: Հոգեվերլուծության հիմնադրին դուր է գալիս հետաքրքիր մտքեր արտահայտող ակտիվ ու հետաքրքրասեր պատանին: Նա օգնում է Ֆրանկլին հրատարակել իր հոդվածը հոգեվերլուծության միջազգային ամսագրում: Սակայն, Ֆրանկլը ուսումնասիրելով հոգեվերլուծական գիտության տարբեր ուղղությունները, հետաքրքրվում է Վիեննայի հոգեվերլուծության երկրորդ դպրոցը հիմնած Ադլերի գաղափարներով, որն առանձնացել էր Ֆրոյդյան ուղղությունից:

1924 թ. Վիկտոր Ֆրանկլը ընդունվում է Վիեննայի համալսարան, որտեղ սկսում է ուսումնասիրել հոգեթերապիա: Մի քանի տարի անց նա վերջնականապես կողմնորոշվում է իր ընտրության հարցում և միանում անհատական հոգեբանության ադլերյան դպրոցին: Ընտրության նշանավորումը դարձավ նրա հոդվածն անհատական հոգեբանության միջազգային ամսագրում, որն ամբողջովին համապատասխանում էր այդ դպրոցի բոլոր գաղափարներին:

Այդ հատուկ հոգեբանական-թերապևտիկ համակարգի էությունը կայանում է նրանում, որ ամբողջովին մարդու վարքը կարող է հասկացվել նրա իշխանության ու ազդեցության ձգտումից: Երեխան, ամենից հաճախ, չի կարողանում իրականացնել իր անհատականությունը, ինչի արդյունք են դառնում բարդույթները, որոնց ի հայտ գալը նույնպես կարող է հրահրվել մարդու սոցիալական դրության անկատարությամբ: Այդ բարդույթները դառնում են կա՛մ աշխարհի նկատմամբ գերազանցության զգացման (որն արտահայտվում է մտերիմներին բռնանալու, մոլագարության, մեծամտանալու ճանապարհով), կա՛մ ընդհակառակը՝ անօգնականության չարաշահման առաջացման պատճառը, ինչը հաճախ բերում է սոցիալական անլիարժեքության և նյարդային հիվանդության: Անհատական հոգեբանության

հիմնական խնդիրն այն է, որ գտնի նյարդայնության պատճառը դարձած կյանքի գիծը և ապաքինի այցելուին քաջալերելու մեթոդով:

Բայց այս ուղղությունը նա ամբողջովին չէր համապատասխանում հենց Ֆրանկլի մոտ ծնված գաղափարներին: Նա հաճախ տարաձայնություններ էր ունենում գործընկերների հայացքների հետ և 1927թ-ին լքում է «Անհատական հոգեբանության հասարակությունը»: Բայց և այնպես Ադլերի հետ շփումը մեծ ազդեցություն ունեցավ նրա վրա և Ֆրանկլի բոլոր ստեղծագործություններն այսպես, թե այնպես կապված են հենց անհատական հոգեբանության հետ:

Այդ ժամանակաշրջանում նա ձևակերպում է «լոգոթերապիա» տերմինը, որն արդյունքում դառնում է նրա հոգեվերլուծական հայեցակարգի հիմնական հասկացություններից մեկը: Նրա համար հունական «լոգոս»-ը ուղղակի «որպես վերբալ գործողության բառ չէ», այլ՝ «որպես հիմնական մտքի, էության բառ»:

1928 թ. Վ. Ֆրանկլը հիմնադրում ու գլխավորում է երիտասարդության խորհրդատվության կենտրոնը Վիեննայում, իսկ 1930 թ. ստանում բժշկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան և սկսում աշխատել նյարդահոգեբանական համալսարանական կլինիկայում: Նա մշակում ու ստեղծում է բուժման հատուկ տեխնիկա, որն ստանում է «պարադոքսալ ինտենցիայի տեխնիկա» անվանումը: Այդ մեթոդը հիմնվում էր «տհաճից» սկզբունքի վրա և ուներ շրջադասական (ինվերսիոն) բնույթ: Բժիշկը «խրախուսում» էր այցելուի նևրոպաթիկ դրսևորումները, ամրապնդելով նրա մտավախությունները՝ դրանով իսկ հասնելով դրական արդյունքի: Այդ փորձի հիման վրա կլինիկական հոգեբուժությունում աստիճանաբար ձևավորվեցին լոգոթերապիայի կամ, ըստ Ֆրանկլի, էքզիստենցիալ վերլուծության գաղափարները: Լոգոթերապիայում նա ժխտում էր ինչպես հոգեվերլուծական, այնպես էլ անհատական հոգեբանության մեթոդները: Ստեղծելով հոգեբուժության այս մեթոդը, նա ձգտում էր ճանաչել ոչ թե անձի բնազդային, այլ հոգեկան բովանդակությունը:

Այս ուղղությունից բացի, Ֆրանկլը մշակում է պրակտիկ հոգեբանության ևս մի շարք խնդիրներ: Այսպես, օրինակ, 1933 թ. նա հետազոտում է այսպես կոչված գործազրկության նևրոզը:

1942 թ. Ֆրանկլին ուղարկում են համակենտրոնացման ճամբար, որտեղ նա անցկացնում է երեք տարի և ազատվում արդեն 1945 թ., երբ ավարտվում է պատերազմը:

Ազատվելուց հետո Ֆրանկլը հրատարակում է «Հոգեբանը համակենտրոնացման ճամբարում» գիրքը, որն այդ երեք տարիների արդյունքն էր:

Այդպիսի ծանր շրջանից հետո Ֆրանկլի համար սկսվում է ստեղծագործական վերելքի շրջան: Քառասնական թվականների վերջում նա ահռելի քանակությամբ գրքեր է հրատարակում հոգեբանությունից և հոգեբուժությունից. «Հոգին և բժիշկը», «Էկզիստենցիալիզմ և հոգեբուժություն», «Պատասխանատվություն և ժամանակ», «Հոգեթերապիան պրակտիկայում»:

Իր «Մտքի կամքը» մենագրությունում նա շարունակում է զարգացնել լոգոթերապիայի տեսության տարբեր տեսակետները: Վերլուծելով գոյություն ունեցող հոգեվերլուծական ուսմունքների հիմնական սկզբունքները, նա Ֆրոյդյան հաճույքի սկզբունքը սահմանում է որպես կամք հաճույքի նկատմամբ, իսկ Ադլերյան կարգավիճակի ձգտումը՝ որպես իշխանության կամք:

Դասական հոգեբուժությունը, ըստ Ֆրանկլի, մտքի հանդեպ այդ կամքը մեկնաբանում է որպես թուլություն, այն ընկալում է որպես նևրոտիկ բարդույթներից մեկը: Դրանով իսկ, մարդու հոգևոր կողմն անտեսող այդպիսի հոգեբուժությունը սխալմամբ ժխտում է մարդկային հիմնական արժեքներից մեկը: Կիրառելով լոգոթերապիայի մեթոդը կարելի է խուսափել բուժման այդ թերություններից, քանի որ այստեղ հաշվի են առնվում մարդու հոգեկան առանձնահատկությունները, նրա մտքի կամքը:

1946 թ. Ֆրանկլն ընտրվում է Վիեննայի նևրոլոգիական հիվանդանոցի տնօրեն: Նա սկսում է դասավանդել Վիեննայի համալսարանում, որտեղ էլ, 1949 թ. ստանում է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: 1950 թ. Ֆրանկլը գլխավորում է հոգեբույժների ավստրիական հասարակությունը: 1960-ական թվականների կեսերին Ֆրանկլի բազմաթիվ աշխատանքներ թարգմանվում են անգլերեն, ինչը նրան բերում է համաշխարհային ճանաչում:

Վիկտոր Ֆրանկլը մահացել է 1995 թ., Վիեննայում: Ժամանակակիցները նրան անվանում են հոգեվերլուծության վիեննյան երրորդ դպրոցի հիմնադիր, քանի որ նրա կողմից ստեղծված հայեցակարգը գործառնապես տարբերվում է Ֆրոյդի և Ադլերի տեսություններից: Ֆրանկլը պնդում էր, որ մարդու գոյության հիմնական սկզբունքը համարվում է «մտքի կամքը», այսինքն իր կյանքը մտքով առավելագույնս լցնելու ցանկությունը: Հենվելով սրա վրա, նա ստեղծեց իր յուրօրինակ լոգոթերապիայի հայեցակարգը, որում վերացրեց հոգեվերլուծության դասական հայեցակարգերում իր կողմից գտած թերությունները:

3.17. Տրանսպերսոնալ հոգեբանություն

3.17.1. Ստանիսլավ Գրոֆ (1931)

Հայտնի ամերիկյան բժիշկ և ծագումով չեխ Ստանիսլավ Գրոֆը ծնվել է 1931թ-ի հուլիսի 1-ին, Պրահայում: Ավելի քան քառասուն տարի հետազոտել է հոգեկան աճը և գիտակցության անսովոր վիճակները: Նա համարվում է տրանսպերսոնալ հոգեբանության ականավոր ներկայացուցիչներից և հիմնադիրներից մեկը:

1956-ից մինչև 1967 թ. Ս. Գրոֆը հանդիսանալով պրակտիկ հոգեբույժ-կլինիցիստ, միաժամանակ հետաքրքրվում է հոգեվերլուծությամբ: 1959 թ. Գրոֆը հոգեբուժության բնագավառում առավել նշանավոր ավանդի համար արժանանում է ամենամյա շնորհվող չեխոսլովակյան ազգային պարգևի՝ Կյուֆֆների հեղինակավոր մրցանակի: Սկսած 1961 թ. Չեխոսլովակիայում նա գլխավորում է հոգեկան խանգարումները բուժելու հետազոտությունները:

Իր բժշկական կարիերայի սկզբում, հանդիսանալով դասական հոգեվերլուծաբան, անկեղծորեն հավատում է, որ հոգեբուժությունում կիրառվող հոգեմետ նյութերը վերահսկվող պայմաններում կարող են զգալիորեն արագացնել հոգեվերլուծության գործընթացը: Սակայն, շատ չանցած, հետազոտությունների արդյունքում առաջ է գալիս նոր, Ֆրոյդյանից տարբեր հոգեկանի քարտեզագրություն, որը բաղկացած է երեք մասից.

1) Ֆրոյդի կողմից մշակված անձնային և կենսագրական անգիտակցականից,

2) Յունգի կողմից մշակված տրանսպերսոնալ անգիտակցականից,

3) նախածննդյան փուլի (պերինատալային) անգիտակցականից, որը յուրատեսակ «կամուրջ» է հանդիսանում անձնային և տրանսպերսոնալ անգիտակցականի և կոնկրետ ապրումներով ու սիմվոլիզմով լցված մահվան ու վերածննդի միջև:

Գրոֆի կողմից ձևակերպված և անընդհատ զարգացվող հոգեկանի ընդլայնված քարտեզագրությունը համապատասխանում է ոչ միայն արևմտյան հոգեբանության քարտեզագրությունների մեծամասնությանը, այլև գործնականում բոլորին հայտնի արևելյան և միստիկական քարտեզագրություններին:

Գրոֆյան քարտեզագրության բացառիկությունն ու համընդհանրությունն այն է, որ անկախ այն բանից, թե մարդը հոգեկան-փիլիսոփայական զարգացման որ ուղուն է հետևում, նա անխուսափելիորեն ստիպված է լուծել միևնույն խնդիրները՝ էներգիայի որոշակի մակարդակի տիրապետելու տեսակետից:

1967 թ. Գրոֆը ստանում է հոգեբուժական հետազոտությունների աջակցության Ֆոնդի (ԱՄՆ) կրթաթոշակ, ինչպես նաև նրան հնարավորություն է տրվում երկամյա ստաժավորում անցնել Ջոն Հոպկինսի համալսարանում: Այնուհետև, արդեն մշտական բնակություն հաստատելով ԱՄՆ-ում, նա շարունակում է իր գիտահետազոտական գործունեությունը հոգեբուժական հետազոտությունների Մերիլենդյան կենտրոնում: 1973-1987 թվականների ընթացքում Ս. Գրոֆն ապրում ու աշխատում է Էսալենի ինստիտուտում (Բիգսուր, Կալիֆորնիա): Այդ շրջանում կնոջ՝ Քրիստինայի հետ միասին, նա մշակում է հոլոտրոպային շնչառության տեխնիկան, որն ինքնաճանաչման, անձնային աճի և հոգեթերապիայի յուրատեսակ մեթոդիկա է:

Որպեսզի հասկանանք հոլոտրոպային շնչառության տեխնիկայի էությունն ու նշանակությունը, անհրաժեշտ է պատկերացում կազմել Գրոֆի կողմից օգտագործվող տերմինաբանության մասին: Յուրաքանչյուր մարդ ամբողջ կյանքի ընթացքում ունենում է ոչ սովորական ինտենսիվության և հագեցածության ապրումներ, ինչը, որպես կանոն, հատուկ է մարդկային կյանքի արտակարգ իրադրություններին (էքստազ, վթար, մահ, կատարսիս): Այդ ոչ սովորական վիճակների միջև առանձնանում են գիտակցության ամբողջական կամ հոլոտրոպային վիճակները, որոնք տիրապետում են բացառիկ հզոր թերապևտիկ և վերականգնող ներուժի (holism - «ամբողջական» և trepein - «շարժվել դեպի» բառերից): Սովորական կամ հոլոտրոպային վիճակներն իրենցից ներկայացնում են մարդկային կյանքին բնորոշ հավասարակշռված վիճակներ:

Գիտակցության հոլոտրոպային վիճակների բազմաթիվ հետազոտությունները ցույց են տալիս, որ հոգեսոմատիկ և էմոցիոնալ հիվանդությունները, ներառյալ մի շարք վիճակներ, որոնք ներկայումս կարող են ախտորոշվել որպես պսիխոզներ, ելնելով ետծննդյան զարգացման խնդիրներից, չեն կարող համարժեքորեն բացատրվել. դրանք կամ լիբիդոյի զարգացման, կամ օբյեկտիվ փոխհարաբերությունների ձևավորման շեղումներ են:

Այսպիսով, հոգեպաթոլոգիան, ըստ Գրոֆի, առավել ամբողջովին բացատրվում է ոչ միայն կենսագրական, այլև նախածննդյան և տրանսպերսոնալ դինամիկայի հաշվառմամբ:

Բուժման ռազմավարությունն առավել հաջող է ներկայանում, երբ չգիտակցվող պերինատալային ապրումները հոգեպաթոլոգիայի տարբեր տե-

սակների համար կազմում են պոտենցիալ աղբյուր կազմակերպող բարդ հույզերի և մարմնի զգայությունների մատրիցա:

3.17.2. Քեն Ուիլբեր (1949)

Տրանսպերսոնալ հոգեբանության մեծագույն ներկայացուցիչ Քեն Ուիլբերը ծնվել է 1949 թ. հունվարի 31-ին, ԱՄՆ Օկլահոմա նահանգի Օկլահոմա Սիթի քաղաքում, զինվորական օդաչուի ընտանիքում: Նա փորձել է միավորել արևելյան և արևմտյան հոգեբանությունը մեկ մոդելի մեջ: Ըստ Ուիլբերի՝ հոգևոր զարգացումն օգնում է հաղթահարել մարդու հոգեկանի մի շարք դիսոնանսներ: Նախ և առաջ՝ գիտակցության և ենթագիտակցության մեջ եղած անդունդը, այնուհետև բանականության և մարմնի, օրգանիզմի և շրջապատող միջավայրի առանձնացումը: Հոգևոր զարգացման վերջին փուլը Տիեզերքի ներդաշնակության հետ միստիկ միավորումն է:

Երբ Ուիլբերը սովորում է դպրոցի ավարտական դասարաններում, նրա ընտանիքը տեղափոխվում է Նեբրասկա նահանգ, Լինքոլն: Ուիլբերը հաճախակի տեղափոխությունները նկարագրում է որպես բարդ կյանքի փորձ: Ավարտելով Լինքոլնի միջնակարգ դպրոցը, Ուիլբերը սկսում է բժշկություն ուսումնասիրել Դյուկի համալսարանում և «Կենսաքիմիա ու կենսաֆիզիկա» մասնագիտությունից ստանում մագիստրոսի աստիճան: Սակայն արդեն կրթության առաջին տարում Ուիլբերն ամբողջովին կորցնում է հետաքրքրությունը գիտական կարիերայի հանդեպ և զբաղվում հոգեբանական ու փիլիսոփայական (ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան) գրքերի ընթերցանությամբ:

Գրելով տասնվեց գրքեր հոգևորի ու գիտության մասին, որոնք թարգմանվել են քսան երկրներում, ներկայումս Ուիլբերը Միացյալ Նահանգներում համարվում է ամենաթարգմանվող հեղինակը:

Դեռ մինչև համալսարանն ավարտելը, 1973 թ. նա գրում է իր առաջին «Գիտակցության սպեկտր» գիրքը, որը հրատարակվում է 1977 թ.: Այդ գրքում առաջին անգամ ներկայացվում է «ինտեգրալային մոտեցումը», որի համաձայն ինչպես ակադեմիական, այնպես էլ հոգեկան (կամ տրանսպեր-

սոնալ) գիտությունների տարբեր դպրոցներ հասկացվում են որպես մրցակցող կամ փոխբացառող, բայց որպես ճշմարիտ՝ միայն ամբողջական «գիտակցության սպեկտրի» որոշ մասերում և հետևաբար նաև մեկը մյուսին լրացնող: 1978-1982 թթ. նա դառնում է «Ռեվիժը» ամսագրի հիմնադիրն ու գլխավոր խմբագիրը, որը կարևոր դեր է խաղում տրանսպերսոնալ հոգեբանության զարգացման և նոր գիտական պարադիգմայի քննարկման համար: 1979 թ. լույս է տեսնում Ուիլբերի «Ոչ մի սահման» վերնագրով երկրորդ գիրքը, որն իրենից ներկայացնում է «Գիտակցության սպեկտրի» հանրաճանաչ տարբերակը:

1979-1984 թթ. Ուիլբերը հրատարակում է մի շարք գրքեր ու հոդվածներ, որոնցում քննարկվում են անհատական զարգացման (1980, 1981), սոցիալական և մշակութային էվոլյուցիայի (1983), գիտության փիլիսոփայության (1982, 1983), սոցիոլոգիայի (1983), ինչպես նաև հոգեախտաբանության և հոգեթերապիայի (1986) ինտեգրալային մոդելները: Վերջին տարիների գրքերում Ուիլբերը շարունակում է զարգացնել իր հիմնական գաղափարն այն մասին, որ մարդու էվոլյուցիայի, ինչպես նաև ամբողջ կյանքի և նույնիսկ ամբողջ աշխարհի բարձրագույն նպատակը՝ որպես անհատական հասկացվող հոգու իրականացումն է:

«Եդեմից դեպի վեր» գրքում նա անհատական զարգացման մոդելն օգտագործում է որպես հայեցակարգային սխեմա մարդկային իմացության ու գիտակցության էվոլյուցիայի մշակութային պատկերման համար: 1984-1986 թթ. Ուիլբերը հրատարակում է «համակարգային-էվոլյուցիոն» բնույթի մի շարք հոդվածներ:

1993 թ. տրանսպերսոնալ հոգեբանության ասոցիացիայի 25-ամյակի առթիվ Ուիլբերը Ս. Գրոֆի հետ միասին ստանում է դիպլոմ, որը նշում է նրա ներդրումն այդ բնագավառի զարգացման համար:

Ուիլբերին է պատկանում քառամաս մոդելի ձևավորումը: Այն իրենից ներկայացնում է հզոր մետատեսություն, որն ընդգրկում է մարդկային փորձի և վարքի հետազոտման հնարավոր մոտեցումների մեծ մասը: Չորս մասերը ձևավորող փոփոխականները ցուցադրված են նկար 1-ում և միավորում են անհատականն ու կոլեկտիվը, ինչպես նաև ներքինն ու արտաքինը՝

	Ներքին	Արտաքին
Անհատական	Սուբյեկտիվ փորձ	Վարք
Կոլեկտիվ	Մշակույթ	Սոցիալական համակարգեր

Նկ. 1. Քառամաս մոդելի փոփոխականների գծանկարը

Վերին աջ քառակուսին ներառում է վարքային հոգեբանության ու ֆիզիոլոգիայի ոլորտները, ինչը համապատասխանում է անհատին վերաբերող օբյեկտիվորեն դիտարկվող տեսակետին: Վերին ձախ քառակուսին ներկայացնում է անհատական սուբյեկտիվ փորձը, որը ներառում է մտքերը, զգացմունքները, արժեքներն ու գիտակցությունը: Ստորին ձախ քառակուսին ներառում է գիտակցության առանձնահատկությունները (պատտերն), որոնք միանման են միևնույն մշակույթի ներկայացուցիչների մոտ: Ներքին աջ քառակուսին ներկայացնում է մշակութային պատտերների օբյեկտիվ կոռելյացիաները: Ուիլբերը դրանց անվանում է սոցիալական համակարգի «ինտերսուբյեկտիվ իրողություններ», որոնք ներառում են կոմունիկացիայի պատտերնայի նմուշները, ինչպես նաև տնտեսական և քաղաքական կառուցվածքներ: Բացի դրանից, Ուիլբերը նկարագրել է անձի զարգացման ու հոգևոր աճի գործընթացները երկու հիմնական մեթոդիկաների կիրառության տեսանկյունից: Առաջին, գոյություն ունեցող արտաքին «աղեղ»-ին (վերին արտաքին կիսաշրջան) համապատասխանող անձի զարգացման մեթոդիկան՝ էգոյի զարգացումն է: Երկրորդ մեթոդիկան՝ ներքին, տրանսպերսոնալ աղեղն է, ինքնագիտակցականից դեպի գերգիտակցությանը հոգևոր զարգացումը: Արտաքին աղեղում մենք զգում ենք սեփական «ես»-ը, որպես հասարակության մաս, այնուհետև, երբ գիտակցում ենք սեփական «ես»-ի միտքը, ի հայտ է գալիս մենքալ, սուբյեկտիվորեն կողմնորոշված «ես»-ի փուլը և մեզ մոտ ձևավորվում է առողջ, ներդաշնակ էգո: Արտաքին աղեղի վերջնական փուլը՝ ինտեգրված «ես»-ն է՝ ինքնիրացումը, որը զարգացման բարձրագույն մակարդակն է:

Զարգացման ներքին աղեղը սկիզբ է առնում խոր «բարակ» «ես»-ից, որն օժտված է զարգացած ներընկալողությամբ և էքստրասենսոր ընկալմամբ: «Բարակ» «ես»-ի հաջորդ փուլը նկարագրվում է իբրև Աստծո իշխանությունը տեսնելը: Վերջնական փուլերը նկարագրվում են իբրև լուսավորվածության և հոգևոր ձեռքբերումների բարձրագույն մակարդակներ:

Կնոջ հիվանդության և մահվան հետ կապված երկարատև լռությունից հետո, 1995 թ. Ուիլբերը թողարկում է «Սեռ, էկոլոգիա, հոգևորականություն. էվոլյուցիայի ոգի» 800 էջանոց հատորը: Այդտեղ նա վերլուծում է մարդու՝ նրա ուղեղի, գիտակցության, հասարակության ու մշակույթի էվոլյուցիան, և հարաբերակցում այն այնպիսի երևույթների հետ, ինչպիսիք են սեռերի փոխհարաբերությունների էվոլյուցիան, մարդու վերաբերմունքն աշխարհի, տեխնոլոգիայի, կրոնի և այլնի հանդեպ:

Ուիլբերի հրատարակած վերջին գրքերի թվին են դասվում. «Հոգու աչք» (1997) ինտեգրալային մոտեցման շարադրանքը, «Մտքի և հոգու միություն. կրոնի և գիտության ինտեգրացիա» (1998), «Մի ճաշակ» (1999) նրա գաղափարներն ու պրակտիկան նկարագրող անձնական օրագիրը.

«Ինտեգրալային հոգեբանություն»-ը (1999) և «Միայն տեսություն. ինտեգրալային ներածություն բիզնեսի, քաղաքականության գիտության և հոգևորականության համար» (2000) ինտեգրալային մոտեցման պրակտիկան: 2006 թվականի վերջում Ուիլբերը հրատարակում է իր «Ինտեգրալային հոգևորականություն», իսկ 2007 թվականի օգոստոսին՝ «Ինտեգրալային մտապատկեր» գրքերը:

ՄԱՍ 4. ՀԱՅ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԻՏՔԸ 19-20-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Համաշխարհային հոգեբանության պատմության ուսումնասիրումը միաժամանակ ենթադրում է ազգային պատմության շրջանակներում հոգեբանական մտքի զարգացման դիտարկում: Հայաստանն ունենալով հարուստ և հին պատմություն չէր կարող շրջանցել հոգեբանական մտքի զարգացման միտումները:

19-րդ դարի հայ իրականությունում հոգեբանական լուրջ ներդրումներ են կատարել փիլիսոփայական հայացքների տեր մտածողներ Խաչատուր Աբովյանը, Միքայել Նալբանդյանը և մի շարք արևմտահայ մանկավարժներ, որոնց թվում՝ Մինաս Չերազը, Ստեփանոս Նազարյանցը և այլոք: 1878 թ. Թիֆլիսում լույս է տեսնում «Մանկավարժական թերթ»-ը, իսկ 1882-ից՝ «Վարժարան» թերթը: Սրանք և այլ հրապարակումներ ներառում էին հոդվածներ եվրոպական ու ռուսական հոգեբանական դպրոցների մասին:

Մ. Նալբանդյանը գործել է 19-րդ դարի կեսերին՝ դառնալով հայ հասարակական մտքի ամենանշանակալից դեմքը: Նա ստեղծել է փիլիսոփայական, հրապարակախոսական և գեղարվեստական գործեր: Հոգեբանությանը նվիրված հատուկ աշխատություններ չունի, բայց իր երկերում շարադրել ու քննարկել է մի շարք հոգեբանական խնդիրներ՝ հետևյալ ուղղվածություններով.

- հոգեբանության փիլիսոփայական հիմքերի խնդիրը,
- իմացական հոգեբանություն և խոսք,
- անձի հոգեբանություն,
- էթնիկական հոգեբանության հարցեր,
- արվեստի հոգեբանության խնդիրներ:

Մ. Չերազը զբաղվել է երեխայի զարգացման խնդիրներով, հետաքրքիր դիտողություններ է կատարել ժան-Ժակ Ռուսսոյի հոգեբանական հայացքների վերաբերյալ: Արևմտահայ մանկավարժ-հոգեբաններից Մ. Չերազը, Մ. Մամուլյանը, Ռ. Պերպերյանը, ինչպես նաև Համբարձում Իփոքչյանը՝ իրենց հրապարակումներում մեծ ուշադրություն են դարձրել երեխայի մտածողության, հիշողության, բնավորության, կամքի, զգացմունքների և խաղի հոգեբանության հարցերին:

Նշանակալի է նաև Ն. Չարայանի ներդրումն արևմտահայ հոգեբանության մեջ: Նա իր «Ազգային դաստիարակության նկարագիր» (Պոլիս, 1849), «Ընթերցասիրություն» (Պոլիս, 1852) աշխատություններում հետաքրքրական մտքեր է առաջադրել զգայական իմացության և մտածողության կապի և այլ հոգեբանական խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև արտահայտել է մի շարք տեսակետներ երեխաների մտավոր ընդունակությունների նախադրյալների մասին՝ թելադրված սոցիալական գաղափարներով:

Հայերեն լույս տեսած առաջին զուտ հոգեբանական «Հաղագս փորձնական հոգեբանության ճառ» աշխատությունը 1851 թվականին հրատարակել է Ս. Նազարյանցը: Հենվելով Արիստոտելի գաղափարների վրա, նա հանգում է այն մտքին, որ հոգեբանությունը գիտություններից լավագույնն է, նախապատվելին, և գիտական գիտելիքների տարածումը պետք է սկսել հոգեբանությունից: Հիշյալ աշխատության մեջ Ս. Նազարյանցը շարադրում է իր ժամանակի հոգեբանության հիմունքները, մանրամասնորեն խոսելով նաև ախտաբանական հարցերի մասին, նկարագրելով իրական, այլ ոչ թե իդեալական մարդուն: Մի ամբողջ գլուխ նվիրված է մանկավարժության բնագավառում հոգեբանության կիրառության խնդիրներին: Հեղինակը մանրամասնորեն խոսում է նաև երեխաների տարիքային առանձնահատկությունների մասին, հմտորեն ու հետևողականորեն քննարկում հոգեբանության առարկան, մեթոդները (հատկապես ինքնադիտումն ու արտաքին, առարկայական դիտումը), մարդկանց անհատական տարբերությունները, միջավայրի ազդեցությունն անձի ձևավորման վրա:

Այսպիսով, Ս. Նազարյանցը սկզբնավորեց նորագույն շրջանում հայ հոգեբանական գիտական գրականության ստեղծումը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հայ հոգեբանական միտքը 19-րդ դարում գրեթե համաքայլ էր ընթանում ռուսականի և եվրոպականի հետ: Ու թեև Հայաստանն անկախ երկիր չէր և չուներ բարձրագույն դպրոցներ, այնուամենայնիվ մտավորականության մի շերտ կար, որը գտնվում էր ժամանակի մտածողության մակարդակի վրա:

20-րդ դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում հայ մտավորականները չէին կարող, ազգային գոյության ամենօրյա խնդիրները թողած, զբաղվել գիտությամբ, թեև առանձին անհատների դա հաջողվեց, հատկապես, Հայաստանից դուրս: Միայն 1918-1920 թթ., երբ ստեղծվեց Հայաստանի առաջին հանրապետությունը, երբ հիմնվեց պետական համալսարան, հայ գիտնականները սկսեցին ի մի գալ՝ դասավանդելու և գիտությամբ զբաղվելու նպատակով:

Մեր որոնումները բացահայտեցին, որ 1920 թ., երբ հիմնադրվել է Երևանի պետական համալսարանը, ԵՊՀ պատմալեզվաբանական ֆակուլտետի դասացուցակում ներառվել է նաև հոգեբանություն առարկան, որն առաջին անգամ դասավանդել է Ս. Տիգրանյանը: Հայաստանում 20-րդ դարի հոգեբանության զարգացումը, հոգեբանական ուսումնական և գիտական օջախների ստեղծումը սկսվեց միայն 30-ական թվականներին: Այդ շրջանից սկսած Հայաստանում կայացան հոգեբանական տարբեր գիտական կենտրոններ ու դպրոցներ.

- Գ. Էդիլյանը 1934 թ. Երևանում հիմնում է հոգետեխնիկայի գիտահետազոտական լաբորատորիա: Սա ընդհանրապես Հայաստանում առա-

ջին հոգեբանական գիտահետազոտական լաբորատորիան էր: Գ. Էդիլյանը զբաղվել է մտածողության, ընկալման և այլ խնդիրներով: Հայաստանում հոգեբանության դասավանդումը բարձրացնելով, մոտեցրել է եվրոպական մակարդակի:

- Հայաստանի լուսավորության նախարար-հոգեբան Շ. Սիմոնյանի և Մ.Մազմանյանի նախաձեռնությամբ 1957 թ. Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում ստեղծվում է հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա, որը գործում է մինչև այժմ: Այստեղ անցած տարիների ընթացքում, հիմնականում Մ. Մազմանյանի, Մ. Երիցյանի, Է. Ալեքսանդրյանի, Դ. Հովհաննիսյանի և Կ. Սանթրոսյանի գլխավորությամբ, հետազոտություններ են կատարվել տարիքային և մանկավարժական հոգեբանության, պրոֆտեխկրթության, ինչպես նաև բուհում ուսանողների հարմարման խնդիրների վերաբերյալ: Մ. Մազմանյանը հետազոտություններ է կատարել հիմնականում զգայական իմացության և ստեղծագործության հոգեբանության բնագավառներում: Կատարված աշխատանքների շարքում՝ Մ. Երիցյանի հետազոտությունները նվիրված են եղել երեխաների և մանկավարժական հոգեբանության հարցերին, հատկապես կրտսեր դպրոցականների մտածողության զարգացմանը: Մ. Երիցյանն ավանդ ունի նաև Հայաստանում ինժեներական հոգեբանության զարգացման և գիտական կադրերի պատրաստման գործում: Այդ տարիներին, ինստիտուտի հոգեբանության բաժնում աշխատել են դասախոսներ՝ Ս. Արզումանյանը և Կ. Ոսկանյանը:
- 1956-1990թթ. Հայաստանում գործում էր ՍՍՀՄ հոգեբանների կազմակերպության սեկցիա (Մ. Մազմանյանի, Ա. Նալչաջյանի, Ա. Հակոբյանի նախագահությամբ), որն իրավունք չուներ առանց Մոսկվայի գիտության ու թույլատրության համագործակցել արտասահմանյան կազմակերպությունների հետ:
- Սպորտի հոգեբանության զարգացումը Հայաստանում կապված է պրոֆեսորներ՝ Հ. Մ. Թութունջյանի, Ա. Ա. Լալայանի և Ա. Հ. Կոստանյանի անունների հետ, որոնք անգնահատելի ներդրում են ունեցել հայրենական սպորտի հոգեբանության կայացման գործում՝ հրատարակելով բազմաքանակ գիտամեթոդական գրականություն: Նրանց է պատկանում Հայաստանում սպորտի հոգեբանության դպրոցի ստեղծման վաստակը և նրա ճանաչումը ոչ միայն նախկին ՍՍՀՄ-ում, այլև մի շարք արտասահմանյան երկրներում: Այդ գիտնականների և նրանց իրավահաջորդների աշխատանքներն ուղղված էին մարզիկների պատրաստման համակարգի կատարելագործմանը, նրանց աշխատունակության բարձրացման հոգեբանական մեթոդների ստեղծմանը: Սպորտի հոգեբանությունը Հայաստանում իր հիմնական զարգացումն

ունեցավ սկսած 1945 թվականից, երբ Երևանում հիմնադրվեց Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը (ՖԿՀՊԻ), որտեղ բացվեց հոգեբանության ամբիոն: Ամբիոնի առաջադեմ աշխատակիցներից են եղել՝ Ա. Ա. Լալայանը, Ա.Բ. Արարատյանը, Հ. Մ. Ավանեսյանը, Մ. Պ. Մկրտումյանը, Հ. Ա. Բաբայանը: Այնուհետև, 1961 թ. ինստիտուտին կից ստեղծվում է սպորտային մարզման տեսության և մեթոդիկայի գիտահետազոտական պրոբլեմային լաբորատորիա (ԳՀՊԼ): Լաբորատորիայում աշխատող մասնագետներին գրավում էին սպորտային նվաճումների, մարզիկների պատրաստության հոգեբանական տեսակետները և այդ գիտական բնագավառի այլ հրատապ հարցեր: 1985-1990 թթ. պրոբլեմային լաբորատորիայի հիմքի վրա զարգացվում են սպորտի հոգեբանության կիրառական տեսակետները, հայերեն լեզվով թարգմանվում են մի շարք աշխատություններ, առապատացվում մեծ քանակությամբ հոգեբանական թեստեր և մշակվում ու կիրառվում համակարգչային հոգեախտորոշման համալիր: ՖԿՀՊԻ գիտահետազոտական պրոբլեմային լաբորատորիան 1995 թ. վերանվանվում է ֆիզկուլտուրայի և սպորտի գիտահետազոտական կենտրոնի, որի գործունեությունն ընդգրկում է նաև ՀՀ հավաքական թիմերի գիտամեթոդական սպասարկման ծառայությունը: 1988 թ. Հայաստանում հիմնադրվում է սպորտային հոգեբանության ֆեդերացիա (ՍՀՖ) միավորելով ՖԿՀՊԻ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը, ՖԿՀՊԻ ԳՀՊԼ-ի սպորտային հոգեբանության բաժինը և ՀՍՍՀ պետական կոմիտեի սպորտի հոգեբանական ծառայությունը: Սպորտի հոգեբանության ֆեդերացիան, որի նախագահը մինչ օրս Հ. Մ. Ավանեսյանն է, հանդիսանում է Սպորտի հոգեբանության Եվրոպական ֆեդերացիայի (FEPSAC) և Սպորտի հոգեբանության միջազգային կազմակերպության (ISSP) անդամ, իսկ 1995 թ. համագործակցում է Սպորտի կիրառական հոգեբանության Ամերիկյան ասոցիացիայի (AAASP) հետ:

- Հայաստանում հոգեբանության տարածման ու զարգացման գործում որոշակի աշխատանք է կատարել Հ. Թութունջյանը: Նրա գործադրած ջանքերի շնորհիվ Երևանի պետական համալսարանում 1976 թ. հիմնադրվեց հոգեբանության ամբիոնը: Նա հիմնականում զբաղվել է հոգեբանության պատմության, մեթոդաբանության, սպորտի հոգեբանության, մասամբ նաև հոգեբանության տեսության հարցերով: Հայ հոգեբանական մտքի պատմության ուսումնասիրման գործում մեծ ավանդ ունի նաև ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր է. Գրինը, ով հոգեբանության պատմություն ծրագրի մշակման համար արժանացել է գրանտ-մրցանակի: Համալսարանում դասախոսելու տարբեր տարիներին է. Գրինն ավանդել է նաև հետևյալ հատուկ դասընթացները. հոգե-

բանության հիմունքներ, հոգելեզվաբանություն, կառավարման հոգեբանություն, հոգեախտորոշում, միջանձնային կոնֆլիկտներ, իրավաբանական հոգեբանություն, դատահոգեբանական փորձաքննություն: Այժմ տիկին Էլդա Աշոտի Գրին-Աբրահամյանը պատվով ու հաջողությամբ շարունակում է զբաղեցնել ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի պրոֆեսորական պաշտոնը: Այդ տարիներին ԵՊՀ հոգեբանության բաժնում աշխատել են դասախոսներ՝ Ս. Ամիրյանը, Է. Զաքարյանը:

- 1979 թ. Երևանի պետական համալսարանում հիմնվեց ինժեներական հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա (այժմ՝ «Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գ/հ լաբորատորիա»): Լաբորատորիայի ստեղծմանը մեծ օգնություն և աջակցություն ցուցաբերեցին ԵՊՀ ռեկտորատը, ԽՍՀՄ ԳԱ հոգեբանության ինստիտուտը՝ ի դեմս անվանի գիտնականներ Բ. Ֆ. Լոմովի, Ա. Պ. Չերնիշևի, Յ. Մ. Զաբրոդինի, Լ. Մ. Դուբովոյի և ուրիշների: Լաբորատորիայի գիտական ղեկավար նշանակվեց Ռ. Վ. Աղուզումցյանը: Սկզբում ուսումնասիրությունները գլխավորապես վերաբերում էին «մարդ-տեխնիկա» համակարգի փոխադարձ կապի արդյունավետության և հուսալիության հոգեբանական խնդիրներին: Այնուհետև, որպես գիտական ուսումնասիրության գլխավոր ուղղություն ընդունվեց մասնագիտական հոգեբանական ընտրության և ավտոմատիզացված կառավարման համակարգերում մարդու հոգեբանական դրսևորման խնդիրները: Քիմիական արտադրության օպերատորների գործունեությունն ուսումնասիրել են Ս. Ս. Ամիրյանը, Ս. Բ. Մուսայելյանը, Ն. Ս. Հաջյանը և ուրիշներ: Ռ. Ռ. Ստեփանյանը, Ա. Ա. Մարտիրոսյանը և Է. Լ. Փափազյանը զբաղվել են էներգետիկ համակարգերի օպերատորների գործունեության ուսումնասիրությամբ: Ս. Ջ. Գյումիշյանի, Գ. Ծ. Զաքարյանի, Ռ. Ռ. Ստեփանյանի և Ա. Ա. Սողոմոնյանի հետազոտություններն ուղղված են եղել օդաչուների ու տիեզերագնացների գործունեության ուսումնասիրմանը: 1991-ին լաբորատորիայի բազայի վրա կազմակերպվում են հոգեբանների պատրաստման մեկուկես-ամյա դասընթացներ, որոնք գործում են մինչ օրս: 1993 թ. լաբորատորիան վերսկսել է հետազոտական գործունեությունը «Մասնագիտական ուսուցման մեթոդաբանական պրոբլեմները» թեմայի շրջանակներում: 1996-1999 թվականների ընթացքում լաբորատորիայի գիտական թեման եղել է «Կառավարման հոգեբանությունը փոքր և միջին բիզնեսում»: Աշխատանքներին մասնակցում էին ԵՊՀ հոգեբանության ամբիոնի և լաբորատորիայի աշխատակիցներ Ա. Ա. Սողոմոնյանը, Ա. Ս. Գալստյանը, Գ.Հ. Ղազարյանը, Դ. Ս. Ամիրյանը, Մ. Մ. Սահակյանը և Ն. Գ. Խաչատրյանը:

- 1981 թ. հիմնվում է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի հոգեբանության բաժինը (բաժնի վարիչ՝ Ա. Ա. Նալչաջյան), որտեղ անցած տարիների ընթացքում ուսումնասիրություններ են կատարվել անձի և սոցիալական հոգեբանության բնագավառներում: Այստեղ հատկապես մանրամասնորեն մշակվել են ֆրուստրացիայի, սթրեսի, հոգեբանական ինքնապաշտպանության և աղապտացիայի խնդիրները: 1991 թվականին Ա. Ա. Նալչաջյանը հիմնում է Հոգեբանական հետազոտությունների անկախ կենտրոն և 1992 թ.՝ նրան կից «Հոգեբան» հրատարակչություն:
- 1990-ական թվականների սկզբներին Ա. Ս. Թադևոսյանի կողմից հիմնվում է «Սթրես» հոգեկան առողջության կենտրոն, որտեղ անցկացվում են մի շարք հետազոտություններ ու թերապևտիկ աշխատանքներ:
- 1990-ականներին, Երևանում ստեղծվում են մի շարք մասնավոր համալսարաններ, դրանց թվում՝ Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանը (հիմնադիր, ռեկտոր՝ Ս. Ա. Սեդրակյան), Գլաձոր համալսարանը, Հրաչյա Աճառյանի համալսարանը, Հայկական Բաց Համալսարանը և այլն, որոնց նպատակն է պատրաստել մասնագետներ հոգեբանության տարբեր բնագավառներում:
- Գիտական որոշ աշխատանքներ են կատարվում նաև Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտի (տարիներ շարունակ ուսանողները հնարավորություն ունեին ընտրել «հոգեբանությունը» որպես երկրորդ մասնագիտություն), Գյումրիի և Վանաձորի մանկավարժական ինստիտուտների հոգեբանության ամբիոններում:
- 1992 թ. ստեղծվում է Հայ հոգեբանների միությունը, որի նախագահն է՝ Ս. Արզումանյանը:
- 1994 թ. ստեղծվում է Հայկական հոգեբանական ասոցիացիան, որի նախագահն է՝ Ռ. Աղուզումցյանը:
- 1995 թ.՝ հիմնվում է Հայկական հոգեվերլուծական միավորումը, որի նախագահն է՝ Ա. Վարդանյանը:

Ներկայումս Հայաստանում ստեղծվում են նոր հետազոտական կենտրոններ, հասարակական կազմակերպություններ և ուսումնական հաստատություններ: Վերջին տարիների ընթացքում Հայաստանում բացվել են մի շարք օտարերկրյա բուհերի (օր.՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան ևն) մասնաճյուղեր: Դրա հետ մեկտեղ ամենուրեք խիստ մեծացել է հետաքրքրությունը հոգեբանության նկատմամբ:

Վերջին տարիներին Հայաստանում հոգեբանության զարգացման մյուս միտումը կիրառական աշխատանքների ընդլայնումն է: Մեծացել է նաև հոգեբանական խորհրդատվությամբ զբաղվող հոգեբանների թիվը, սակայն

լուրջ աշխատանք պետք է կատարել նրանց մասնագիտական պատրաստության և ատեստավորման գործում:

Սույն ձեռնարկի շրջանակներում, անշուշտ, հնարավոր չէ լիովին ներկայացնել այն, ինչ արված է հայ մտածողների կողմից անցյալում, և պրոֆեսիոնալ հոգեբանների կողմից՝ 19-20-րդ դարերում, սակայն պետք է նշել, որ հայ հոգեբանական մտքի զարգացման գործում շոշափելի ներդրում են կատարել նաև մի շարք սփյուռքահայ հոգեբաններ, որոնց թվում Ու. Սահակյանը, Ա. Մեհրաբյանը և այլոք:

5.1. Գուրգեն Էդիլյան (1885-1942)

Հոգեբան, մանկավարժ, պրոֆեսոր: Ծնվել է Քարվանսարայում (Իջևան): 1896-1898 թթ. սովորել է Ներսիսյան դպրոցում: 1898 թ. ընդունվել և 1903 թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի լսարանական բաժինը: 1904 թ. մեկնում է արտասահման: Մի քանի տարի Գերմանիայում՝ Ենայի և Լայպցիգի համալսարաններում սովորելուց հետո ուսումնառությունը շարունակում է Շվեյցարիայի՝ Բեռնի համալսարանում:

1909 թ. Գ. Էդիլյանը վերադառնում է հայրենիք և շուրջ 30 տարի զբաղվում մանկավարժական գործունեությամբ: Գևորգյան ճեմարանում աշխատելու տարիներին (1909-1914 թթ.) դասավանդում է հոգեբանություն, մանկավարժության տեսություն և պատմություն, փիլիսոփայություն, հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, գերմաներեն: 1914-1919 թթ. աշխատել է Ներսիսյան դպրոցում:

1921 թ. Էդիլյանը հրավիրվում է համալսարան և նշանակվում մանկավարժական ֆակուլտետի դեկան: 1922-1925 թթ. աշխատում է Ամերկոմի դպրոցների վերատեսչի պաշտոնում: 1928-1933 թթ. կրկին աշխատում է պետական համալսարանում, դասավանդելով հոգեբանություն, մայրենի լեզվի մեթոդիկա:

1934 թ. հրավիրվում է նոր կազմակերպված հայկական մանկավարժական ինստիտուտ՝ որպես հոգեբանության և մանկավարժության դասախոս: Նույն թվականին ստանում է պրոֆեսորի կոչում:

Էդիլյանը հեղինակ է հոգեբանությանը, մանկավարժությանը, մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկային, հայ գրականության պատմությանը վերաբերող մի շարք աշխատությունների:

5.2. Մկրտիչ Մազմանյան (1910-1977)

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ ՄԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտությունների վաստակավոր գործիչ Մկրտիչ Մազմանյանը ծնվել է 1910 թվականի մարտի 8-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի):

1930 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի մանկավարժական ֆակուլտետը: 1933-69 թթ. դասավանդել է պետական համալսարանում: 1940 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ստեղծագործական երևակայության մի քանի առանձնահատկությունների մասին» թեմայով: 1941 թ. ստացել է դոցենտի կոչում: Կատարել է ակտիվ դասախոսական և կազմակերպչական աշխատանք: Տարբեր տարիներ դասախոսել է ԵՊՀ-ում, վարել է դեկանի և պրոռեկտորի պաշտոններ Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտում: 1951 թ. անընդմեջ մինչև իր կյանքի վերջը ղեկավարել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի հոգեբանության ամբիոնը: 1948-52 թթ. եղել է «Սովետական մանկավարժ» ամսագրի խմբագիր: 1957 թ. Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում հիմնադրել է հոգեբանության պրոբլեմային լաբորատորիան և ղեկավարել այն մինչև 1964 թվականը, ապա 1972-77 թթ.:

1965 թ. Մանկավարժական գիտությունների ակադեմիայի հոգեբանության ԳՀ ինստիտուտի գիտական խորհուրդը Մ. Մազմանյանին շնորհում է դոկտորի գիտական աստիճան: Ատենախոսության մեջ համակարգված ու ընդհանրացված է նրա հիմնական աշխատությունների և դասագրքերի բովանդակությունը: Նույն տարում նա արժանանում է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի, իսկ 1966 թ. պրոֆեսորի կոչման: 1967 թվականին նա ընտրվում է ԽՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ:

Մ. Մազմանյանի գիտական հետաքրքրություններից էին. հոգեբանական ստեղծագործության գործընթացը, ներշնչման և անգիտակցականի, երևակայության և հույզերի դերը, հայ և ռուս հոգեբանների գիտական ժառանգությունը, պատմական հոգեբանության, զգայական ընբռնումների, մանկավարժական հոգեբանության տեսական և գործնական հարցերը և այլն: Նա առանձնահատուկ ուշադրություն է դարձրել ուսումնահոգեբանա-

կան խնդիրներին: Մեծ է նրա վաստակը մեր հանրապետությունում հոգեբանական գիտելիքների տարածման և հոգեբան մասնագետներ պատրաստելու գործում:

Հարկ է նշել Մ. Մազմանյանի հետևյալ գրքերն ու դասագրքերը. «Կամքի դաստիարակությունը և ընտանիքը» (1939), «Հոգեբանության ձեռնարկ» (1940), «Քուն և երազ» (1948), «Ուրվագծեր հոգեբանությունից» (1951), «Դասախոսություններ հոգեբանությունից» (1957), «Սեր, ամուսնություն և ընտանիք» (1959), «Բնավորություն» (1969), «Մանկավարժական հոգեբանության մի քանի հարցեր» (1975):

5.3. Հովսեփ Թութունջյան (1918-1994)

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ծնվել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: 1929-1937 թթ. նախնական կրթությունն ստացել է Կահիրեի Գալուստյան ազգային վարժարանում, այնուհետև (1937-1940 թթ.) Ֆրանսիական լիցեյում: 1943-1947 թթ. սովորել և ավարտել է Կահիրեի ամերիկյան համալսարանի մանկավարժական ֆակուլտետը, իսկ 1942-1947 թթ. ուսմանը զուգընթաց ուսուցչություն արել Գալուստյան վարժարանում:

1948 թ. հոգեբանություն մասնագիտությամբ ընդունվում է ասպիրանտուրա, 1956 թ. ստանում է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 1960 թ. արժանանում ավագ գիտաշխատողի կոչման:

Բազմաբովանդակ է Հ. Թութունջյանի գիտական հետազոտությունների ոլորտը՝ սպորտի, մանկան ու մանկավարժական, փորձարարական, ստեղծագործական հոգեբանություն: Հայրենական և արտասահմանյան հոգեբանության գրականության մեջ առաջին անգամ նա վերլուծության ենթարկեց Ֆրանսիայում գիտական հոգեբանության ձևավորման ու զարգացման պատմության մի շարք հարցեր և 1967 թ. պաշտպանեց դոկտորական ատենախոսություն:

Պրոֆեսորի գիտական ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում տարիքային ու մանկավարժական հոգեբանության վերաբերյալ ուսումնասիրությունները, որոնք ամփոփված են չորս մենագրություններում: Նրա մենագրությունների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում «Հոգեբանական էտյուդներ» գիրքը:

Նրա գործադրած ջանքերի շնորհիվ Երևանի պետական համալսարանում (ԵՊՀ) 1976 թ. հիմնադրվեց հոգեբանության ամբիոնը, իսկ 1979 թ.՝ ինժեներական հոգեբանության լաբորատորիան:

5.4. Ալեքսանդր Լալայան (1925-1983)

Ալեքսանդր Արծրունի Լալայանը ծնվել է Երևանում, 1925 թ. օգոստոսի 22-ին: 1946 թվականին ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը, 1949-ին՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: 1949-1951 թթ. դասավանդել է բժշկական ինստիտուտում, այնուհետև 1951-1954 թթ.՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում (ՖԿՀՊԻ):

1954 թվականից մինչև իր մահը (1983 թ.) ղեկավարել է ՖԿՀՊԻ հոգեբանության և մանկավարժության ամբիոնը: 1952 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն («Հայաստանում Ի. Պավլովի ուսմունքի տարածման պատմությունից» թեմայով) և ստացել բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 1953-ին՝ դոցենտի կոչում:

Ա. Լալայանը 1966 թ. ստանում է բժշկական գիտությունների դոկտորի աստիճան («Ռուս-Հայկական բժշկական կապեր» թեմայով): 1967 թ. նրան շնորհվում են պրոֆեսորի և Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչումներ:

1976 թ. նա ընտրվում է սպորտի հոգեբանության Եվրոպական ֆեդերացիայի անդամ:

Պրոֆեսոր Ա. Լալայանի գիտական ժառանգությունը ընդգրկում է ֆիզիկական դաստիարակության և սպորտի, այդ թվում՝ մարզիկի և մարզիչի, մարզումների և մրցումների, տարբեր սպորտաձևերի, սպորտային դատա-

վորների, պրոֆեսիոնալ կողմնորոշման, անհատական տարբերությունների հոգեբանության, ինչպես նաև բժշկության և ֆիզիոլոգիայի, ռուս-հայկական բժշկագիտական կապերի պատմության հարցեր: Նրա աշխատություններում զգալի տեղ է գրավում նաև սպորտային մատենագրությունը, որի նախաձեռնողն է եղել մեր երկրում:

Պրոֆեսոր Լալայանը սպորտի հոգեբանության միջազգային կոնգրեսների ակտիվ մասնակից է եղել տարբեր երկրներում (1971, 1974, 1975, 1978, 1979, 1980 և 1983 թթ.): Նրա աշխատությունները (հոդվածներ և թեզիսներ) լույս են տեսել Բեռլինում, Սոֆիայում, Պրահայում և այլուր:

Առանձին լույս են տեսել նրա «Սպորտային մրցման հոգեբանական հարցեր» (1959 թ.), «Մարզիչը և մարզիկը» (1962 թ.), «Սպորտային մրցման հոգեբանական առանձնահատկությունները» (1963 թ.), «Սպորտի հոգեբանություն» (1966 թ.), «Ֆիզիկական դաստիարակության ուսուցիչը» (1969 թ.), «Նշանավոր հայ ֆիզիոլոգ Վ. Ի. Վարդանովը» (1969 թ.), «Անձի անհատական-հոգեբանական առանձնահատկությունները» (1971 թ.), «Պրոֆեսիոնալ կողմնորոշում» (1973թ.), «Դպրոցը և պրոֆեսիոնալ կողմնորոշումը» (1977 թ.), «Հոգեբանության և սպորտի մատենագրությունը» (1980 թ.), «Հոգեբանության մի քանի հարցեր» (համահեղինակ՝ Շ. Ս. Սիմոնյան, 1980 թ.), «Պրոֆեսիայի ընտրության հիմունքներ» (1983 թ.) գործերը:

Հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակվել են նաև (Կ. Ն. Վարդանյանի հեղինակությամբ) Ա. Լալայանի հետևյալ գրքերը՝ «Բասկետբոլի հոգեբանության ակնարկներ» (1960 թ., 1964 թ.), «Բասկետբոլիստի կամային որակները» (1963 թ., 1972 թ.), «Բասկետբոլի տակտիկայի հոգեբանությունը» (1966 թ., 1972 թ.): Հետմահու (1985 թ.) լույս է տեսել նրա «Մարզիկի հոգեբանական պատրաստությունը» մենագրությունը:

Գիտության պատմության բնագավառի նրա աշխատությունները վերաբերում են՝ բժշկության, ֆիզիոլոգիայի, հոգեբանության և այդ ասպարեզներում ռուս-հայկական կապերի պատմությանը:

Պրոֆեսոր Ա. Լալայանը «Եվրոպայում սպորտի հոգեբանության զարգացման համար» պարգևատրվել է արտասահմանյան մեդալով:

5.5. Ալբերտ Կոստանյան (1927-1996)

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ծնվել է քաղաք Երևանում: 1942-1946 թթ. ընդունվել և ավարտել է կոոպերատիվ տեխնիկումը, այնուհետև, 1946-1951 թթ.՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և ստացել որակավորման դիպլոմ՝ «Հայերեն լեզու, տրամաբանություն և հոգեբանություն» մասնագիտությամբ: 1951-1955 թթ. սովորել և ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի Հայկական պետական ինստիտուտը, իսկ 1963 թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1970 թվականին Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը՝ «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն» մասնագիտությամբ և ստացել հոգեբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Ա. Հ. Կոստանյանը հանդիսացել է Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, եղել է վաստակավոր մարզիչ և միակ պրոֆեսորը, ով 1977-1990 թթ. ղեկավարել է Զրագնդակի Օլիմպիական հավաքականի հետազոտական լաբորատորիան:

1960-ական թվականներից սկսել է մանկավարժական գործունեությունը, սկզբում որպես լողի մարզիչ, այնուհետև՝ ՖԿՀՊԻ լողի ամբիոնի վարիչ, ՖԿՀՊԻ հոգեբանության և մանկավարժության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆեսոր (1983-1985 թթ.):

Ա. Կոստանյանը ակտիվորեն մասնակցել է նաև ՀՀ սպորտի հոգեբանության ֆեդերացիայի հիմնադրմանը և հետագա գիտական ու կիրառական գործունեությանը:

Բազմաբովանդակ է Ա. Հ. Կոստանյանի գիտական հետազոտությունների ոլորտը, սպորտի և ֆիզիկական դաստիարակության հոգեբանության, հոգեֆիզիոլոգիայի, տարիքային, մանկավարժական և հատուկ հոգեբանության հետ կապված հարցերը: Իսկ վերջին 10-12 տարիներին տարբեր գիտական հոգեբանական և սպորտային ամսագրերում հրատարակված տեսական և կիրառական հետազոտությունների առանցք են կազմել մարզիկների հոգեբանական պատրաստության հարցերը: Մենագրության, ուսումնական ձեռնարկների և դասագրքերի հեղինակ է:

5.6. Էլդա Գրին-Աբրահամյան (1928)

Էլդա Աշոտի Գրին-Աբրահամյանը ծնվել է 1928 թ. մարտի 10-ին Թիֆլիսում: Մանկության և ուսումնառության առաջին տարիներն անցել են Մոսկվայում: 1937 թ. է. Գրինի հորը՝ հին բոլշևիկ Աշոտ Գրիգորյանին (Գրին), որպես ժողովրդի թշնամու, դատապարտել և աքսորել են, և նրանց ընտանիքը տեղափոխվել է Երևան: Այստեղ էլ ընդունվել է Ալ. Պուշկինի անվան միջնակարգ դպրոց: Միջնակարգ կրթություն ստանալով վեց տարում, այնուհետև սովորել է ռուսական մանկավարժական ինստիտուտի օտար լեզուների ֆակուլտետում: Ուսմանը զուգահեռ աշխատել է հայկական հեռագրական գործակալությունում (Արմենպրես)՝ որպես թղթակից: Պարգևատրվել է «Հայրենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում ցուցաբերած աշխատանքային արիության համար» մեդալով: Ավարտելով ինստիտուտը, սովորել է Մոսկվայի օտար լեզուների ինստիտուտի ասպիրանտուրայում: 1955 թ., պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն՝ «Գերմաներենի հնչյունաբանության ուսուցման հոգեբանական առանձնահատկությունները հայկական դպրոցներում» թեմայով, ստացել է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Ատենախոսության գիտական ղեկավարը եղել է դոկտոր, պրոֆեսոր Վ. Ա. Արտյոմովը: Վերադառնալով Երևան, նույն թվականին դասախոսական աշխատանքի է անցել պետական համալսարանում: 1971 թվականին համամիութենական որակավորման հանձնաժողովը նրան շնորհում է դոցենտի գիտական կոչում: 1972 թ. գտնվել է դոկտորանտուրայում, և Մոսկվայի սոցիոլոգիայի ինստիտուտում աշխատել «Արտադրական գործունեությանը երիտասարդ բանվորի ադապտացման սոցիալ-հոգեբանական մեխանիզմները» թեմայով դոկտորական թեզի վրա: Աշխատանքը ղեկավարել է ինստիտուտի փոխտնօրեն՝ դոկտոր, պրոֆեսոր Գ. Լ. Օսիպովը: Ատենախոսության պաշտպանությունը խոչընդոտվել է քաղաքական նկատառումներով:

Երևանի պետական համալսարանում դասախոսական աշխատանքի տարբեր տարիներին ավանդել է հետևյալ հատուկ դասընթացները. հոգեբանության հիմունքներ, հոգեբանության պատմություն (ծրագրի մշակման համար արժանանալով գրանտի), հոգելեզվաբանություն, կառավարման հո-

գեբանություն, հոգեախտորոշում, միջանձնային կոնֆլիկտներ, իրավաբանական հոգեբանություն, դատահոգեբանական փորձաքննություն: Ղեկավարել և շարունակում է ղեկավարել հայցորդների ու ասպիրանտների ատենախոսական աշխատանքներ, որոնցից մի քանիսն արդեն պաշտպանել են:

Է. Գրինը հեղինակ է ավելի քան հարյուր գիտական հոդվածների, մենագրությունների, մեթոդական ձեռնարկների, դասագրքերի, այդ թվում՝ «Կադրերի հոսունությունը և դրա մի քանի պատճառները», «Դատական գործունեության հոգեբանություն», «Ուղղիչ (պենիտենցիար) հոգեբանություն», «Փաստաբանական գործունեության հոգեբանություն», «Մեղք, ապաշավանք, կատարսիս» և այլն: Դոկտոր-պրոֆեսոր Ս. Զ. Արզումանյանի հետ համահեղինակ է «Իրավաբանական հոգեբանություն» մայրենի լեզվով առաջին դասագրքի: 2007 թ. տպագրվել է «Հոգեբանությունը քրեակատարողական գործունեությունում» ուսումնական ձեռնարկը: Է. Գրինը «Տաքն» գիտակրթական համալիրի «Ջանգակ-97» հրատարակչության «Հոգեբանությունը և կյանքը» ամսագրի խմբագրակազմի, իրավաբանական ու մշակութային տարբեր հանձնաժողովների անդամ է: Մասնակցել է հոգեբանության գծով բազմաթիվ համագումարների և գիտաժողովների՝ ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ արտերկրում:

ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ բարձրագույն որակավորման հանձնաժողովը, 2003 թ. նոյեմբերի 20-ին է. Գրինին շնորհել է պրոֆեսորի գիտական կոչում՝ հոգեբանության մասնագիտությամբ: Մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովի որոշմամբ նա ստացել է մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիայի իսկական անդամի կոչում:

Է. Գրինը, մանկավարժական գործունեությանը զուգահեռ, վերջին երեք տասնամյակում աշխատում է նաև որպես դատական փորձագետ-հոգեբան: Արժանացել է մի քանի պատվոգրերի, գովասանագրերի, պետական համալսարանի 75-ամյա հոբելյանի կապակցությամբ՝ արծաթե մեդալի, իսկ ծննդյան 80-ամյակի առթիվ՝ ոսկե մեդալի:

1985 թվականից ԽՍՀՄ, այնուհետև Հայաստանի գրողների միության անդամ է, իսկ 1997 թվականից՝ գրողների միջազգային ասոցիացիայի անդամ: Է. Գրինը հրատարակել է պատմվածքների 11 ժողովածու, նրա մի շարք պատմվածքներ թարգմանված են լիտվերեն, լեհերեն, չեխերեն, ճապոներեն և այլ լեզուներով: 2006 թ. վերջին Չեխիայում հրատարակվեց «Սպիտակ թռչուններ» ժողովածուն՝ Պրահայում շահած գրանտի և մշակույթի նախարարության միջոցներով:

Այժմ տիկին Էլդա Աշոտի Գրին-Աբրահամյանը պատվով ու հաջողությամբ շարունակում է զբաղեցնել ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի պրոֆեսորական պաշտոնը՝ ծավալելով ակտիվ գիտամանկավարժական գործունեություն, վայելելով ուսանողների ու դասախոսական կոլեկտիվի ջերմագին հարգանքը, օրինակ ծառայելով համալսարանական նոր սերնդին:

5.7. Սերգեյ Արզումանյան (1941-2009)

Անվանի հայ հոգեբան Սերգեյ Ջումշուդի Արզումանյանը ծնվել է 1941 թվականի հոկտեմբերի 4-ին Արցախի Շահումյանի շրջանի Երքեջ գյուղում: 1961 թ. ընդունվել և 1968 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ մանկավարժության և տարրական կրթության մեթոդիկայի ֆակուլտետը: Բուհն ավարտելուց հետո հրավիրվում է աշխատանքի ՀՀ ԿԳՆ անչափահասների վարչություն, որպես մանկական սենյակի տեսուչ, որտեղ և ուրվագծվում են նրա հիմնական գիտական հետաքրքրությունները՝ անչափահաս հանցագործների անձի ձևավորումը, նրանց հոգեբանությունն ու սոցիալական վարքի առանձնահատկությունները և այլն:

1969 թ. մինչև 1979 թ. ղեկավարել է ՀՀ Մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտի տարիքային և մանկավարժական հոգեբանության լաբորատորիան: 1972 թ. պրոֆեսոր Թութունջյանի ղեկավարությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, որը նվիրված է եղել անչափահասների վարքի շեղումներին և ասոցիալ դիրքորոշումների կազմավորմանը: 1979 թվականից աշխատել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում, որպես հոգեբանության լաբորատորիայի վարիչ: 1980 թ. լույս է տեսնում Արզումանյանի «Միկրոմիջավայրը և երեխաների ու դեռահասների սոցիալական վարքի շեղումները» առաջին խոշոր մենագրությունը, որն արտացոլում է նրա գիտական փնտրտուքների ու երկարատև ուսումնասիրությունների արդյունքը և մինչ օրս գիտական ուղեցույց է շեղվող վարքի ու «դժվար երեխաների» հիմնախնդրով զբաղվող մասնագետների համար: 1988 թվականին Սերգեյ Արզումանյանը Սովետական Միության ԿԳՆ ակադեմիայի փակ, գաղտնի նիստում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, որը ներկայացնում է հանցագործի անձի կայացման հոգեբանաքրեաբանական տեսությունը, բացահայտելով իրավախախտի անձի բարոյական և իրավական գիտակցության դեֆորմացիայի սոցիալ-հոգեբանական պատճառներն ու պայմանները, նրա սոցիալական դիրքորոշումների քրեականացման շարժընթացն ու օրինաչափությունները շեղվող վարքի կազմավորման ընթացքում: Ավելի ուշ այս դրույթները լույս են տեսնում ծավալուն մի մենագրության մեջ

սումնամեթոդական ձեռնարկներ, դասագրքեր և հարյուրավոր գիտական հոդվածներ: Վերջին տարիներին ակտիվորեն զբաղվում էր քաղաքական հոգեբանությամբ և էթնոհոգեբանությամբ. «Քաղաքականությունը և անձի քրեականացման սոցիալ-հոգեբանական օրինաչափությունները» (2000), «Կրոնական աղանդը որպես մարդու բարոյական և հոգեբանական անկման պատճառ» (2000), կարդում էր հատուկ դասընթացներ՝ «Հոգեբանության հիմունքներ», «Կառավարման հոգեբանական հիմքերը» (որի շուրջ կան բազմաթիվ աշխատություններ, հատկապես «Ազգային դպրոցի դաստիարակչական համակարգի ստեղծման ու կառավարման մանկավարժա-հոգեբանական հիմունքները» մենագրությունը), «Դիրքորոշում և վարք» և այլն:

Նա երեք զավակների հայր էր և չորս թոռնիկների պապիկ:

(Օրինախախտի անձի կայացման հոգեբանաքրեաբանական տեսություն, 2000), որտեղ բացահայտվում են քրեածին դիքրորոշման ծագումը, ձևավորումը և զարգացման դինամիկան: 1991 թվականին ստանում է հոգեբանության պրոֆեսորի գիտական կոչում:

1992 թվականին նա ընտրությամբ նշանակվում է մանկական և ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնում: 1995 թվականին Սերգեյ Արզումանյանի նախագահությամբ և ակտիվ մասնակցությամբ կազմավորվում է գիտական աստիճաններ շնորհող հոգեբանամանկավարժական մասնագիտական խորհուրդ: 1998-2005 թթ. նա զբաղեցնում է մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալի, այնուհետև խորհրդի անդամի պաշտոնը հոգեբանության գծով:

1996 թվականին Ս. Արզումանյանի ջանքերով ստեղծվում է հոգեբանության և մանկավարժության ֆակուլտետը՝ իրավաբանական, ռազմական և տարիքային հոգեբանության մասնագիտություններով, որտեղ նա եղել է ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար մինչև 1998 թ.: 1998 թվականին ճանաչվում է «Տարվա մարդ» աշխարհի գիտնականների՝ կենսագրությունների ամերիկյան համալսարանի կողմից:

2005 թվականին Սերգեյ Արզումանյանն ընտրվել է զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնում: 2006 թվականին պարգևատրվել է Խ. Աբովյանի անվան հուշամեդալով, իսկ 2008 թ. արժանացել Հայաստանի Հանրապետության Կրթության և Գիտության նախարարության ոսկե մեդալին:

Արզումանյանի ներգործուն աջակցությամբ Հանրապետությունում զարգացել են հոգեբանության մի շարք բնագավառներ. իրավաբանական, ռազմական, սոցիալական, տարիքային և մանկավարժական և այլն: Նա առաջինն է հանրապետությունում հիմնադրել իրավաբանական հոգեբանությունը, մշակելով նոր բանգավառներ այդ ոլորտում, մասնավորապես «Սոցիալական ախտաբանություն», «Քրեաբանական հոգեբանություն» և «Իրավախախտումների վաղ հոգեբանական կանխարգելում», որոնք լույս տեսան էլդա Գրինի հետ համատեղ գրված «Իրավաբանական հոգեբանություն» դասագրքում (2004), որով նա իրավաբանների և հոգեբանների ուշադրությունը կենտրոնացրեց հանցավոր արարքին նախորդող ժամանակաշրջանում տեղի ունեցող անձի բարոյահրավական գիտակցության աստիճանական խեղման, ախտահարման շարժընթացի, ինչպես նաև սոցիալական դիրքորոշումների քրեականացման օրինաչափությունների վրա, այլ կերպ ասած դա կոչ էր ժամանակին ախտորոշել սոցիալական վարքի շեղումները, արդյունավետ կանխարգելում կազմակերպելու նպատակով:

Աճեցրել է երեսունից ավելի հոգեբանական կադրեր, հրատարակել բազմաթիվ գիտական աշխատանքներ՝ շուրջ տասը մենագրություններ, ու-

Ի՞նչ է նշանակում «Ψ» խորհրդանիշը (պայմանանշանը)

Հարց 1. Որտե՞ղ և ե՞րբ է ծագել «պսի» տառը:

Մ.թ.ա. 19-րդ դարում հույները ծանոթացան փյունիկյան այբուբենին: Այդ այբուբենը հույներին դուր եկավ և նրանք այն յուրացրեցին: Պետք է նշել, որ փյունիկյան այբուբենում բացակայում էին ձայնավորները (կարդացողը ինքը պետք է կռահեր, թե որ տառերն են բացակայում), հույները մտցրեցին դրանք և դրանով իսկ ստեղծեցին առաջին իսկական այբուբենը: Նրանք ընդգրկեցին նաև հինգ նոր պայմանանշաններ՝ Ω (օմեգա), Υ (իպսիլոն), Φ (ֆի), Χ (խի) և (պսի):

Հարց 2. Ի՞նչ է նշանակում «պսի» տառի արտաքին տեսքը:

Ենթադրվում է, որ «Ψ» տառի արտաքին տեսքը խորհրդանշում է ծովերի հունական աստված Պոսեյդոնի եռժանին (τρεζυбец), որի պաշտամունքն այն ժամանակ շատ լայն տարածում ուներ Հին Հունաստանում: Պոսեյդոնի եռժանիի մասին կան շատ առասպելներ: Համարվում էր, որ Պոսեյդոնն իր եռժանիով ճեղքում էր երկրագունդը և, խորը կակղեցնելով (փափկեցնելով) դրա մարմինը ստեղծում նեղուցներ ու ծովածոցեր: Ավանդազրույց կա այն մասին, թե ինչպես Պոսեյդոնը փրկեց փոքրիկ աղջկան նրան հետապնդող այծամարդուց (սատիրից): Նա այնքան ուժեղ արձակեց իր եռժանին նրա մեջ, որ երկաթը խոցելով այծամարդու մարմինը մխրճվեց ժայռին: Այն բանից հետո, երբ եռժանին հանվեց, ժայռից զուլալ աղբյուր հորդեց: Ավելի ուշ այդտեղ տաճար կառուցվեց:

Ինքնին Պոսեյդոնի եռժանին խորհրդանշում է աշխարհի տարանջատումը երեք ոլորտների՝ երկրային, երկնային և հոգևոր, և համարվում է երեք առաջնային տարրերի (օդ, ցամաք և ջուր) միասնությունը:

Հարց 3. Ի՞նչ կապ կա այդ տառի և հոգեբանության միջև:

Ինչպես հայտնի է, «հոգեբանություն» տերմինն ունի հին հունական ծագում: Այն կազմված է երկու բառերից՝ ψυχη (պսյուխե) - հոգի և λογος (լոգոս) - գիտելիք կամ ուսումնասիրում: Այս տերմինը առաջարկվել է ոչ թե Հին Հունաստանում, այլ Եվրոպայում՝ 16-րդ դարում: «Հոգեբանություն»

բառը ստեղծել է փիլիսոփա Գոկլենիուսը, որը 1590 թ. այն կիրառել է նրա համար, որպեսզի հնարավոր լինի դրանով անվանակոչել մի շարք հեղինակների գրքերը: Այդ բառը համընդհանուր ճանաչում գտավ գերմանացի փիլիսոփա Քրիստիան Վոլֆի աշխատանքներից հետո, որի գրքերը կոչվում էին «Ռացիոնալ հոգեբանություն» (1732) և «Էմպիրիկ հոգեբանություն» (1734):

Ռուսերենում «հոգեբան» բառի օգտագործման մասին վկայում է պուշկինյան տեսարանում Մեֆիստոֆելի վերջնաբառը (ռեպլիկը) «Ֆաուստից»՝ «Ես հոգեբան եմ..., այ քեզ գիտություն...»: Բայց այն ժամանակ հոգեբանությունը որպես առանձին գիտություն դեռ չկար: Հոգեբան նշանակում էր մարդկային բնավորությունների և կրքերի գիտակ:

Այն բանից հետո, երբ հոգեբանությունը դարձավ գիտություն, «Հոգեբանություն» բառը սկսեցին ավելի հաճախ կիրառել: Ըստ տարբերակներից մեկի, «Հոգեբանություն» տերմինը հունական «ψ» տառով նշանակելն առաջին անգամ սկսեցին կիրառել փիլիսոփայական բուհերի ուսանողները հոգեբանության լեկցիաների գրառումներն արագացնելու նպատակով, որտեղ այդ բառը գործնականում օգտագործվում էր անընդհատ:

Հարց 4. Բացի հոգեբանությունից էլ որտե՞ղ է օգտագործվում «պսի» տառը:

Հայտնի է, որ հին հույները «պսի» պայմանանշանը կիրառել են նաև 700 թվի նշանակման համար, որպեսզի այն տարբերակեն համանման տառից: Նրանք թվի աջ կողմում նկարել են գիծ և տառը՝ «-ψ»: Սակայն հռոմեական, և այնուհետև արաբական թվերի տարածման հետ թվերի գրառման հունական համակարգը մոռացվեց: Ներկայումս հունական «ψ» տառը լայնորեն կիրառվում է ֆիզիկայում (քվանտային մեխանիկայում այն կիրառում են ալիքային գործառույթը նշելու համար) և մաթեմատիկայում (պոլիգամմա-գործառույթը նշելու համար):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Զաքարյան Ս. Ա.** Փիլիսոփայության պատմություն, Ուսումնական ձեռնարկ ԲՈՒՀ-ի հումանիտար ֆակուլտետների համար, երկրորդ հրատ./Պատ. խմբ.՝ պրոֆ. Հ. Ղ. Միրզոյան. Եր.: «Նոյյան Տապան», 2007: – 359 էջ
2. **Հայկական սովետական հանրագիտարան.** «Սովետական Հայաստան», «Հ. 1 - Հ. 12». - Եր., ՀՍՀ գլխավոր խմբագրություն, 1974 - 1987:
3. **Նալչաջյան Ա., Թակուշյան Հ.** Հոգեբանական մտքի զարգացումը Հայաստանում, Եր., «Հոգեբան», 1997, 83 էջ:
4. **Августин** "О бессмертии души". — М., ООО "Издательство АСТ", 2004. — 511 с.
5. **Аристотель** "Сочинение в четырех томах". Т.1. — М., 1975.
6. **Блейхер В. М., Крук И. В.** "Толковый словарь психиатрических терминов"./ Под ред. канд. мед. наук **С. Н. Бокова.** — Воронеж: Издательство НПО "МОДЭК", 1995. — 640 с.
7. **Головин С. Ю. (составитель)** "Словарь практического психолога". — Минск: Харвест, М.: ООО "Издательство АСТ", 2001. — 800 с.
8. **Дессуар М.** "Очерк истории психологии". Москва-Минск, 2002. — 256 с.
9. **Гегель** "Сочинения". Т. 3. "Энциколопедия философских наук". Ч. 3. "Философия духа". — М., 1956.
10. **Гегель** "Энциклопедия философских наук". Т. 3. Философия духа. М., "Мысль", 1977. — 471 с.
11. **Декарт Р.** "Сочинения в 2 т.". М.: Мысль, 1989. — 654 с.
12. **Диоген Л.** "О жизни, учениях и изречениях знаменитых философов". — М., 1979. — 620 с.
13. Зарубежный психоанализ. Хрестоматия/Сост. И общ. ред. **В. М. Лейбина.** — СПб., 2001.
14. "История психологии. XX век"./// Под ред. **П. Я. Гальперина, А. Н. Ждан.** 4-е изд. — М.: Академический Проект; Екатеринбург: Деловая книга. 2002. — 832 с.
15. **Карвасарский Б. Д. (общая редакция)** "Психотерапевтическая энциклопедия". — СПб.: Питер Ком, 1999. — 752 с.
16. **Кондильяк** "Сочинения в 2-х томах". Т. 1. М., 1980. — 334 с.
17. **Кордуэлл М.** Психология. А — Я: Словарь-справочник / Пер. с англ. К. С. Ткаченко. — М.: ФАИР-ПРЕСС, 1999. — 448 с.
18. **Лейбниц Г. В.** "Сочинение в четырех томах". Т. 1.-2.-3. — М., 1982-1983-1984.

19. **Локк Джон** "Сочинения в 3-х томах". Т. 1. — М., 1985. — 621 с.
20. **Пифагор** "Золотой канон. Фигуры эзотерики". — М., 2004. — 448 с.
21. **Платон** "Избранные диалоги". — М., 1965.
22. **Платон** "Собрание сочинений в четырех томах". Т. 1. — М., 1990.
23. Психологическая энциклопедия. 2-е изд./ Под ред. **Р. Корсини, А. Ауэрбаха**. — СПб.: Питер, 2006. — 1096 с.
24. Психология. Полный энциклопедический справочник./ Сост. и общ. ред. **Б. Мещерякова, В. Зинченко**. — СПб.: прайм — ЕВРОЗНАК, 2007. — 896 с.
25. **Спиноза Б.** "Избранные произведения". Т.1.-2. М.: Государственное Издательство Политической Литературы. 1957. — 631с.-727с.
26. **Холл. М. П.** "Энциклопедическое изложение масонской, герметической, каббалистической и розенкрейцеровской символической философии". — М.: АСТ: Астрель, 2005. — 478, [2] с.
27. **Шпет Г. Г.** Philosophia Natalis. Избранные психолого-педагогические труды. М.: "Росийская политическая энциклопедия" (РОССПЭН), 2006. — 624 с.
28. **Шюре Э.** "Великие посвященные. Очерк эзотеризма религий". — Калуга. Типография Губернской Земской Управы, 1914. — 419 с.
29. **Яровицкий В.** "100 великих психологов". — М.: Вече, 2004. — 432 с.
30. http://www.psy.msu.ru/about/psy/index.html - Московский государственный институт имени М.В.Ломоносова. // Факультет психологии.
31. **Boldwin James Mark.** History of Psychology: A Sketch and an Interpretation. London: Watts, 1913
32. www.apa.org
33. www.azps.ru
34. www.koob.ru
35. www.psylib.org.ua/books
36. www.psychology.ru
37. www.psylib.myword.ru
38. www.psyedu.ru
39. www.vusnet.ru

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Ագնոստիցիզմ (հուն.-ից՝ անճանաչելիության ուսմունք) - ուսմունք, որը լիովին կամ մասնակիորեն ժխտում է աշխարհը ճանաչելու հնարավորությունը:

Ապերցեպցիա - ընկալման կախվածությունը կենսափորձից և ընկալման պահին՝ հոգեվիճակից: Գիտելիքը, պատկերացումները, հետաքրքրությունները կազմում են ապերցեպցիոն բովանդակությունը:

Ասկետիզմ (հուն.-ից՝ վարժանք, ճգնավորություն) - սկզբունք, որը բնորոշվում է պահանջմունքների բավարարման գործում խիստ զսպվածությամբ՝ բարոյական և գաղափարական բարձունքին, կատարելությանը հասնելու նպատակով: Հին Հունաստանում Ա. անվանում էին առաքինության մեջ վարժվելը:

Ասոցիանիզմ - հոգեբանության հիմնական ուղղություններից մեկը, որը հոգեկան գործընթացների դինամիկան բացատրում է ասոցիացիաների (զուգորդումների) սկզբունքով: Ա.-ի առաջին պոստուլատները ձևակերպվել են Արիստոտելի կողմից: 17-րդ դ.-ում Ա.-ի գաղափարները ամրապնդվել են հոգեկանի մասին մեխանիկական պատճառականության ուսմունքով:

Ատոմիզմ - ուսմունք մատերիայի ընդհատակա, մասնիկային կառուցվածքի մասին:

Արտահեղում կամ **էմանացիա** (լատ.-ից՝ բխում, ճառագում) - հին հունական միջնադարյան փիլիսոփայության մեջ նշանակել է կեցության ստորին, անցողիկ ձևերի բխումը բարձրագույնից՝ անփոփոխ, անսպառ նախահիմքից (Աստծուց):

Բարոյագիտություն կամ **էթիկա** (հուն.-ից՝ վարքի, պահվածքի արվեստ) - փիլիսոփայության բաժին: Գիտելիք բարոյականության էության, ծագման ու զարգացման մասին:

Բացարձակ շեմ - զգայունակության վերին և ստորին հաստատուն սահմանների ընդհանուր անվանումը:

Բրահմա - Հին Հնդկաստանում վերին՝ կրոնական կամ հոգևորական դասի (կաստայի) ներկայացուցիչ: Բրահմայական հիմնական դոգմաները շարադրված են Վեդաներում:

Գեշտալտ (գերմ.-ից՝ ամբողջական ձև, պատկեր, կերպ) - գեշտալտհոգեբանական ուղղության հիմնական հասկացություն, որն արտահայտում է ձևի և կառուցվածքայնության, ամբողջականության առաջնայնությունը մասի համեմատ:

Գոյաբանություն կամ **օնտոլոգիա** - փիլիսոփայության բաժին: Գիտելիք իրական կեցության կամ իրական աշխարհի սկզբնահիմքերի ու սկզբնապատճառների մասին: Մետաֆիզիկական Գ.-ը բացատրում է իրականությունը մտահայեցողական եղանակով:

Դեդուկցիա (լատ.-ից՝ բխեցում) - մտահանգման տեսակ: Ընդհանուր նախադրյալներից դեպի մասնավոր եզրահանգում: Ինչպես նաև վերլուծական բնույթի կշռադատություն:

Դիալեկտիկա (հուն.-ից՝ երկխոսության արվեստ) - փիլիսոփայական ուսմունք բնության, հասարակության և իմացության առավել ընդհանուր օրինաչափությունների մասին, որոնք բացահայտվում են հարցուպատասխանի, ճշգրտման ու համոզման ընթացքում:

Դոգմա (հուն.-ից՝ կարծիք, անխախտելի դրույթ) - կատեգորիա, որն արտահայտում է անփոփոխ հասկացությունները, բանաձևերը, անառարկելի փաստերն ու անփոփոխ ճշմարտությունները: Դ.-ի ծագումը կապված է կրոնական պատկերացումների ու հավատքի անքննադատելիության հետ:

Դուալիզմ (լատ.-ից՝ երկուսի ուղի) - փիլիսոփայական ուսմունք, որն ընդունում է համազոր, իրարամերժ և ինքնաբավ երկու նախասկիզբ (սուբստանց)՝ որպես ինքնուրույն կեցություններ. օր.՝ բարի-չար, լույս-խավար, արական-իգական:

Էմպիրիզմ (հուն.-ից՝ փորձի ուղի) - իմացաբանական ուղղություն, ըստ որի փորձն է գիտելիքի և ճշմարտության աղբյուրը, և միայն փորձով են դրանք հիմնավորվում:

Էպիստեմոլոգիա (հուն.-ից՝ ուսմունք գիտելիքի մասին, գիտություն գիտության մասին) - իմացաբանության հոմանիշ արևմտյան փիլիսոփայության մեջ:

Էվդեմոնիզմ (հուն.-ից՝ երանության, երջանկության ուսմունք) - բարոյագիտության մեթոդաբանական սկզբունք, որը բարոյականության գլխավոր չափանիշ և ցանկացած արարքի հիմք է ընդունում երջանկության ձգտումը:

Թեոգոնիա (հուն.-ից՝ աստվածածնություն) - աստվածների ծագման մասին հնագույն առասպելների համակարգը, աստվածների տոհմաբանությունը:

Իդեալիզմ (հուն.-ից՝ գաղափարապաշտություն, ուսմունք կերպարի մասին) - փիլիսոփայական ուղղություն, որը փիլիսոփայության հիմնահարցը լուծելիս առաջնային է համարում հոգեկանը՝ գաղափարը, գիտակցությունը, մտածողությունը, նրանից է ածանցում բնությունը և մարդու նյութական կեցությունը:

Իմացաբանություն (հուն.՝ **գնոսիոլոգիա**) - փիլիսոփայության բաժին, որն ուսումնասիրում է սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերությունը ճանաչողական գործընթացում, ճանաչողության բնույթը և հնարավորությունները:

Ինդուկցիա (լատ.-ից՝ մղում, ուղղում, մակածում) - մտահանգման տեսակ: Մասնավոր նախադրյալներից դեպի ընդհանուր եզրահանգում: Ինչպես նաև ընդհանրացնող բնույթի կշռադատություն:

Ինսայթ (անգլ.-ից՝ փայլատակում, հանկարծակի դուրսբերում) - մտքի գործունեության արդյունք, որը բնութագրվում է փորձի հիման վրա, ներհայեցողաբար իրավիճակի էության հասկացում կամ խնդրի հանկարծահաս լուծում:

Ինտենցիա (լատ.-ից՝ ուղղում, ձգտում) - գիտակցության, մտածողության ուղղվածությունը կոնկրետ առարկային:

Ինտրոսպեկցիա (լատ.-ից՝ ներհայեցում) - սեփական՝ ներքին (հոգեկան) երևույթների դիտարկումը, ինքնադիտումը:

Ինտուիցիա (լատ.-ից՝ սևեռում) - իրերն ու երևույթներն անմիջական հայեցողությամբ կամ ներհայեցմամբ ըմբռնելու, հասկանալու ընդունակություն՝ առանց նախնական կշռադատման և ապացուցման:

Կինիկներ կամ ցինիկներ - Հին Հունաստանում սոկրատեսյան փիլիսոփայական դպրոցի ներկայացուցիչներ, որոնք արտահայտել են ազատ հույների աղքատ դասերի գաղափարախոսությունը: Կ.-ը ձգտել են ծայրահեղ պարզեցված ապրելակերպի, կոչ են արել ասկետիկ կենսակերպի, վերադարձ դեպի բնություն, ժխտել են կրոնը, բարոյական և իրավական նորմերը:

Կիրենաիկներ - Արիստիպոս Կիրենացու հիմնած հին հունական սոկրատեսյան փիլիսոփայական դպրոցի ներկայացուցիչներ (Հյուսիսային Աֆրիկա, մ.թ.ա. 5-րդ դ.): Քարոզում էին հեդոնիզմ՝ երջանկության նույնացում զգայական հաճույքների հետ:

Կոնցեպտուալիզմ - ընդհանուր հասկացությունների (կոնցեպտների) գոյության ձևի մասին ուսմունք: Ըստ Կ.-ի, ընդհանուրը գոյություն ունի մարդու մտքում՝ որպես իրերի հատկությունների ընդհանրացման, վերացարկման արդյունք:

Կոսմոգոնիա (հուն.-ից՝ տիեզերածնություն) - աստղագիտության մի ճյուղ երկնային մարմինների և դրանց համակարգերի առաջացման ու զարգացման մասին:

Հայրաբանություն (հուն. պատրիստիկա) - եկեղեցու հայրերի աստվածաբանությունը և փիլիսոփայությունը 2-3-րդ դդ.՝ քրիստոնյաների դեմ հալածանքների պայմաններում: Հ.-յան ավանդույթները շարունակվել են մինչև 8-րդ դ.: Այդ ժամանակներում ի հայտ են եկել քրիստոնյա հեղինակների ջատագովական գրվածքները՝ պաշտպանվելու համար հեթանոսների մեղադրանքներից և արդարացնելու քրիստոնեական կրոնը:

Հոմեոստազիս (լատ.-ից՝ դադարի նման, կայուն) - դինամիկ հավասարակշռության տիպ, որը բնորոշ է ինքնակարգավորվող բարդ համակարգերին: Տերմինն առաջարկել է ամերիկացի ֆիզիոլոգ Ու. Քեննոնը (1929 թ.)՝ նկարագրելով օրգանիզմների հիմնական ֆիզիոլոգիական գործառույթների կայունության, ներքին միջավայրի բաղադրության և հատկությունների հարաբերական հաստատունության պահպանման մեխանիզմները:

Մանիքեականություն - սկզբնավորողի՝ Մանիքեոսի (Մանիի) անունից: Միջնադարում կրոնական ուսմունք Մերձավոր Արևելքում, 3-րդ դ.: Մ. կապվում է գնոստիցիզմի հետ: Ձգտում էր երկնայինի և երկրայինի հաշտեցման, փորձում էր համաձայնեցնել արմատապես միմյանցից տարբեր կրոնական ուսմունքներ: Հիմնական գաղափարախոսությունը դուալիստական էր:

Մատերիալիզմ - փիլիսոփայական ուսմունք, որը փիլիսոփայական հիմնախնդիրը լուծելիս առաջնային է համարում նյութականը, կեցությունը՝ որպես օբյեկտիվորեն իրական:

Մեթոդ և մեթոդիկա (հուն.-ից՝ իմացության ուղի, միջոց, ձև) - տեսական և գործնական հետազոտությունն ուղղորդող ճանաչողական սկզբունքների, միջոցների, եղանակների, մոտեցումների ամբողջություն: Մ.-ի կիրառումը, հնարքների գործադրումը, կոնկրետ օբյեկտին դրա մասնավորեցումն ու ձևափոխումը, իրավիճակային հարմարեցումը և ընթացակարգի իրացումը կազմում են մ.:

Մետաֆիզիկա (հուն.-ից՝ ֆիզիկայից կամ բնագիտությունից հետո, դրանց հիման վրա) - հասկացությունը ծագել է մ.թ.ա. 1-ին դ.՝ որպես արիստոտելյան փիլիսոփայության մի մասի անվանում: «Առաջին փիլիսոփայություն», որը հետազոտում է գոյություն ունեցող ամեն ինչը՝ ամբողջական աշխարհը, կեցության սկզբունքներն ու վերջնապատճառները, որը բարձրագույնն է, զգայարաններին անմատչելի և միայն մտահայեցմամբ հասանելի:

Միլեթյան դպրոց - հին հունական մատերիալիստական դպրոց, Միլետ, մ.թ.ա. 6-րդ դ.:

Միստերիաներ (հուն.-ից՝ խորհրդավոր, գաղտնի սրբագործություններ) - անտիկ աշխարհում որոշ աստվածությունների պաշտամունքին նվիրված գաղտնի ծիսակատարություններ ու արարողություններ: Կատարվել են հիմնականում գիշերը, ուղեկցվել խրախճանքներով, ողբահանդեսներով, երգով ու պարով: Մ. հիմք են հանդիսացել ուշ միջնադարի կրոնական բովանդակությամբ թատերգության ժանրի ձևավորման համար:

Մոնադ (հուն.-ից՝ միավոր, անբաժանելի) - կեցության պարզագույն հիմնատարր: Իդեալիստական փիլիսոփայական ուղղություններում ստացել է հոգեկանի նշանակություն և հակադրվել նյութական ատոմին: Մ.-ի մասին ամբողջական ուսմունք մշակել է Գ. Լայբնիցը (մոնադաբանություն):

Նոմինալիզմ (հուն.-ից՝ անվանման սկզբունք) - միջնադարյան սխոլաստիկական ուղղություն, որն ընդհանուր հասկացությունները՝ ունիվերսալիաները, համարում էր սոսկ եզակի առարկաների անուններ: Ն. ընդունել է միայն այդ առարկաների, նյութական իրերի գոյությունը՝ իրենց անհատական հատկություններով:

Պանթեիզմ (հուն.-ից՝ ամեն ինչ աստվածային, համաստվածություն) - փիլիսոփայական ուսմունք, ըստ որի Աստվածն անդեմ սկզբնապատճառ է և գտնվում է բնության սահմաններում, նույնական է բնությանը: Իսկ գերբնականը լուծված է բնության մեջ: Հասկացությունը առաջարկել է Ջ. Թոլանդը (1705 թ.):

Պեդոլոգիա (հուն.-ից՝ ուսմունք, գիտություն երեխայի մասին) - հոգեբանամանկավարժական տեսությունում հոսանք, որն առաջացել է 19-20-րդ դդ.: Պ. ներառում է երեխայի զարգացման նկատմամբ հոգեբանական, կազմաբանական, կենսաբանական և սոցիոլոգիական մոտեցումներ:

Ռացիոնալիզմ (լատ.-ից՝ բանականության մասին ուսմունք) - իմացաբանական ուղղություն, որը ճանաչողության մեջ առաջնային է համարում բանականությունն ու տրամաբանությունը: Ըստ Ռ.-ի, գիտելիքի աղբյուրը բանականությունն է, և մարդկային մտածողության հիմնարար սկզբունքներն ու վերացական գաղափարները հնարավոր չէ արտածել փորձից և հիմնավորել փորձով:

Ռեֆլեքսիա (լատ.-ից՝ անդրադարձում, արտացոլում) - այստեղ, խորհրդածում, որի դեպքում գիտակցությունն ուղղվում է ինքն իրեն՝ շրջվում դեպի ներքին, հոգեկան երևույթները:

Սխ(ք)ոլաստիկա (հուն.-ից՝ դպրոցական) - միջնադարյան կրոնափիլիսոփայական (քրիստոնյա աստվածաբանական) համոզմունք, որով փորձ էր արվում տեսական, գիտական հիմնավորում տալ կրոնական աշխարհայացքին: Ս.-ին փիլիսոփայական հիմք էին ծառայում անտիկ փիլիսոփայական գաղափարները:

Սկեպտիցիզմ (հուն.-ից՝ կասկածի ուսմունք) - փիլիսոփայական հայեցակարգ, որը կասկածի է ենթարկում օբյեկտիվ իրականությունը ճանաչելու հնարավորությունը՝ ընդգծելով գիտելիքի հարաբերական բնույթը:

Սոփեստներ (հուն.-ից՝ իմաստուններ, հմուտներ, վարպետներ) - հին հունական փիլիսոփայական դպրոցի ներկայացուցիչներ, մ.թ.ա. 5-4-րդ դդ.: Իմաստության և պերճախոսության արհեստավարժ ուսուցիչներ, տրամաբանական համոզման մեջ հմուտ մասնագետներ, որոնք առաջին անգամ գիտելիքը վաճառեցին և իմաստասիրությունը սկսեցին ուսուցանել փողով:

Ստոիկներ (Ստոյա՝ Աթենքի Ագորայի նկարազարդ սյունասրահի անունից) - հին հունական փիլիսոփայական դպրոցի ներկայացուցիչներ, մ.թ.ա. 4-րդ դ.: Ստոիկյան փիլիսոփայության մեջ գլխավոր տեղը գրավում է բարոյագիտությունը, որը հենվում է բնափիլիսոփայության (Ֆիզիկայի) և տրամաբանության վրա:

Սուբստանցիա (լատ.-ից՝ հիմքում դրված, գոյություն ունեցող էություն) - կատեգորիա, որը նշանակում է գոյություն ունեցող այն վերացականը, որն ապահովում է աշխարհի միասնությունը: Ս. մի դեպքում մատերիա է՝ որպես առաջնային տարր, նյութական մասնիկ, մյուս դեպքում՝ իդեա, որպես գիտակցական կամ գաղափարական տարր:

Վեդաներ (սանսկրիտ.-ից՝ գիտելիք) - հին հնդկական բանահյուսության հուշարձաններ, մ.թ.ա. 12-7-րդ դդ.: **Վ.-ում** աստվածացվում է բնությունը, ներառում է ծիսական պատվիրաններ, ոգեպաշտություն և նախնադարյան մոգություն: Հիմք են հանդիսացել Վեդանտա կրոնափիլիսոփայական ուսմունքի ձևավորման համար, վերջինս էլ Հինդուիզմի փիլիսոփայական հենքն է:

Վոլյունտարիզմ (լատ.-ից՝ կամապաշտություն) - իդեալիստական փիլիսոփայական ուղղություն, որն առաջնային է համարում կամքը՝ որպես ամեն ինչի առաջնահիմք, կեցության սկզբունք:

Տարբերակման շեմ - զգայունակության հարաբերական սահման, որով պայմանավորված է զգայական նրբին տարբերությունների, փոփոխությունների ընկալումը:

Տոպոլոգիա (հուն.-ից՝ տեղաբանություն) - մաթեմատիկայի բնագավառ, որում ուսումնասիրվում է որկրաչափական պատկերների այն հատկությունները, որոնք անփոփոխ են մնում միարժեք և անընդհատ արտապատկերումների ժամանակ: **Տ.-ում** էական չեն երկրաչափական պատկերների չափերն ու ձևերը: **Տ.-ական** հատկություններն են կապակցվածությունը, չափողականությունը և կոմպակտությունը: Տ. սկզբնավորել է Ա.

Պուանկարեն (1895 թ.): Հոգեբանության մեջ Տ.-ական սկզբունքներ կիրառվում են հոգեկան երևույթների կառուցվածքաբանական վերլուծություններում, ինչպես նաև հոգեբանական մոդելավորման մեջ:

Տրանսցենդենտալ կամ վերանցական (լատ.-ից՝ այնկողմնային, սահմանանց) - այն, ինչ գտնվում է գիտակցության սահմաններից դուրս, և փորձնական ճանաչողությանն անմատչելի է, առօրյա իմացվող աշխարհից այն կողմ՝ որպես ինքնուրույն և ինքնաբավ (բացարձակ) էություն, որը կարող է մտահասանելի լինել միայն մտահայեցողական ճանապարհով:

Ունիվերսալիաներ (լատ.-ից՝ ընդհանուրներ) - միջնադարյան փիլիսոփայության մեջ ընդհանուր գաղափարների և հասկացությունների անվանումը:

Օկազիոնալիզմ (լատ.-ից՝ պատահարի, դեպքի, առիթի սկզբունք) 17-րդ դ. ձևավորված արևմտյան փիլիսոփայական ուղղություն, որն անբացատրելի կամ անհնար էր համարում հոգու և մարմնի փոխազդեցությունը: Իսկ հոգեմարմնական պատճառական փոխպայմանավորվածությունը դիտվում է որպես «առիթ», «դեպք»՝ նախասահմանվածի համար (Աստծո միջամտություն):

Օկուլտիզմ (լատ.-ից՝ գաղտնախորհրդավորի ուսմունք) - այն ուսմունքների գաղափարը, որոնք ընդունում են գիտական հետազոտությանն անմատչելի գերբնական ֆենոմենների և ուժերի գոյությունը, մշակում են դրանց հետ փոխազդելու, հաղորդակցվելու գործնական եղանակներ (մոգություն, ոգեկանչություն):

Ֆենոմեն (հուն.-ից՝ երևութական, դրսևորվող) - կատեգորիա, որը նշանակում է փորձի մեջ տրված, զգայությունների միջոցով հասանելի երևույթ: Ինչպես նաև որևէ արտառոց բանի արտահայտություն, դրսևորում: Հոգեբանության մեջ «Ֆ.» են անվանվում մտահայեցվող առարկաները, որոնք կազմում են գիտակցության բովանդակությունը՝ գիտակցության փաստերը (մտապատկերներ և մտային գործողություններ):

Ֆրուստրացիա (լատ.-ից՝ ձախողում, խափանում) - տագնապային հոգեվիճակ, որն առաջանում է անհաջողության ապրման ժամանակ, երբ առկա են որոշակի դժվարություններ նպատակին հասնելու, խնդիրներ լուծելու ճանապարհին՝ որպես ակնկալիքների ու ծրագրերի փլուզում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Адлер А.** "Воспитание детей". "Взаимодействие полов". — Ростов на Дону, 1998.
2. **Адлер А.** "Практика и теория индивидуальной психологии". М., 1995. — 296 с.
3. **Ассаджиоли Р.** "Психосинтез: теория и практика". — М., 1994.
4. **Бехтерев В. М.** "Объективная психология". М.: Наука, 1991. — 475с.
5. Великая психология. Введение в психологическую мысль Шри Ауробиндо/ под ред. **А. С. Далала**. — М.: АСТ: Астрель, 2006 . — 543 [1] с.
6. **Вертгеймер М.** "Продуктивное мышление". М.; Прогресс, 1987. — 336 с.
7. **Вундт В.** "Система философии". СПб., Изд. Л.Ф. Пантелеева, 1902. — 436 с.
8. **Вундт В.** "Введение в психологию". — СПб., 2002.
9. **Гроф С.** За пределами мозга. Москва: Изд-во Трансперсонального института, 1993. — 504 с.
10. **Гроф С.** "Психология будущего" М.,ООО "Издательство АСТ" и др., 2002. — 458[6] с.
11. **Джейм У.** "Многообразие религиозного опыта". — М., 1993.
12. **Джейм У.** "Научные основы психологии". — Минск, 2003.
13. **Келлер В., Кофка К.** "Гештальт-психология". — Москва, 1998.
14. **Леонтев А. Н.** "Эволция психики". - М.: Московский психолого-социальный институт; Воронеж: Издательство НПО "МОДЭК", 1999. — 416 с.
15. **Лири Т., Метцнер Р., Олперт Р.** "Психоделический опыт". — Львов-Киев, 1998.
16. **Майков В.** "Трансперсональная психология: Истоки, история, современное состояние". // **В. Майков, В. Козлов**. — М.: ООО "Издательство АСТ" и др., 2004. — 603, [5] с.
17. **Маслоу Абрахам Г.** "Мотивация и личность". СПб.: Евразия, 1999. — 478 с.
18. **Менегетти А.** "Образ и бессознательное: Учебное пособие по интерпретации образов и сновидений". М., 2000. — с. 448
19. **Минделл А.** "Сила безмолвия: Как симптомы обагащают жизнь". М.: ООО "Издательство АСТ" и др., 2003. — 348, [4] с.

20. **Найссер У.** "Познание и реальность". — М., 1981.
21. Основные направления психологии в классических трудах. Ассоциативная психология. **Г. Спенсер** Основания психологии. **Т. Циген** Физиологическая психология в 14 лекциях. М., 1998. —560 с.
22. Основные направления психологии в классических трудах. Ассоциативная психология. **Г. Эббингауз** Очерк психологии. **А. Бэн** Психология. М., 1998. — 544 с.
23. **Пиаже Ж.** "Психология интеллекта". СПб., 2004. — 192 с.
24. **Робертсон Р.** "Введение в психологию Юнга". — Ростов на Дону, 1999.
25. **Роджерс К.** "Исскуство консультирования и терапии" М., 2002. — 976 с.
26. **Рубинштейн С. Л.** "Основы общей психологии". — СПб: Питер, 2000. — 720 с.
27. **Томэ Х., Кехеле Х.** "Современный психоанализ" Т. 1, Теория. — М., 1996.
28. **Томэ Х., Кехеле Х.** "Современный психоанализ" Т. 2, Практика. — М., 1996.
29. **Уилбер К.** "Краткая история всего". — М.: АСТ: Астрель, 2006. — 476[4] с.
30. **Уилбер К.** "Никаких границ: Восточные и западные пути личностного роста". М., 2004. — 283 (5) с.
31. **Франкл В.** "Человек в поисках смысла: Сборник". — М., 1990.
32. **Фрейд З.** "Введение в психоанализ: Лекции". — М., 1989.
33. **Фрейд З.** "Избранное" Ростов на Дону: "Феникс", 1998. — 352 с.
34. **Фрейд З.** "Остроумие и ее отношение к бессознательному" и др. — Минск, 1999.
35. **Фрейд З.** "Очерки по психологии сексуальности". — Минск, 2003.
36. **Фрейд З.** "Психоаналитические этюды". — Минск, 1999.
37. **Фрейд З.** "Толкование сновидений". — Минск, 1998.
38. **Фромм Э.** "Анатомоя человеческой деструктивности". — Минск, 1998.
39. **Фромм Э.** "Бегство от свободы". "Человек для себя". — Минск, 1998.
40. **Фромм Э.** "Иметь или быть". — М., 1986.
41. **Юнг К. Г.** "Божественный ребенок". — М., 1997.
42. **Юнг К. Г.** "Дух в человеке, исскустве и литературе" Минск, 2003. — 384 с.
43. **Юнг К. Г.** "Избранное". — Минск, 1998.

44. Юнг К. Г. "Об энергетике души". — М.: Академический Проект, 2008. — 297 с.
45. Юнг К. Г. "О природе психе" М., 2002. — 414 с.
46. Юнг К. Г. "Ответ Иову". — М., 2001.
47. Юнг К. Г. "Очерки по аналитической психологии". — Минск, 2003.
48. Юнг К. Г. "Психологические типы". — Минск, 1998.
49. Юнг К. Г. "Психология бессознательного". — М., 1998.
50. Юнг К. Г. "Психология dementia praecox". — Минск, 2003.
51. Юнг К. Г. Психология и алхимия. — М.: "Рефл-бук", К.: "Ваклер", 2003 — 592 с.
52. Юнг К. Г. "Психология переноса: Статьи.Сборник". — Москва-Киев, 1997.
53. Юнг К. Г. Синхрония. М.: "Рефл-бук", К.: "Ваклер", 2003 — 320 с.
54. Юнг Карл Густав, фон Франц М.-Л., Хендерсон Дж.Л., Якоби И., Яффе А. "Человек и его символы" М., 1997. — 368 с.
55. Юнг К. Г. Mysterium Coniunctionis. Таинство воссоединения. — Мн.: ООО "Харвест", 2003. — 576 с.
56. Ясперс Карл "Собрание сочинений по психопатологии в 2 т.". Т.1: "Ностальгия и преступления", "Бред ревности", "Методы проверки интеллекта и понятие деменции", "К анализу ложных восприятий". — М.: Издательский центр "Академия"; СПб.: "Белый кролик", 1996. — 352 с.
57. Ясперс Карл "Собрание сочинений по психопатологии в 2 т.". Т.2: "Ложные восприятия", "Феноменологическое направление исследования в психопатологии", "Каузальные и "понятные" связи между жизненной ситуацией и психозом при dementia praecox шизофрения". — М.: Издательский центр "Академия"; СПб.: "Белый кролик", 1996. — 256 с.
58. Adler A. The neurotic constitution. New York: Moffat. 1917.
59. Adler A. Study of organ inferiority and its psychical compensation: A contribution to clinical medicine.S.E.Jellife, Trans. New York: Nervous and Mental Disease Publication. 1917(Original work published 1907).
60. Adler A. Understanding human nature. Garden City, NY: Garden City Publishing. 1927.
61. Adler A. The science of living. New York: Greenberg. 1929.
62. Adler A. The pattern of life. New York: Holt, Rinehart and Winston. 1930.
63. Fechner G. T. Elemente der Psychophysik. - Leipzig: Breitkopf & Hartel, 1860.

64. **James W.** What is an Emotion? // Mind, 1884, 9, p. 188-205
65. **James W.** Does Consciousness Exist? // Journal of Philosophy, Psychology, and Scientific Metkods, 1904, 1, p. 477-491
66. **James W.** Are We Automata? // Mind, 1879, 4, p. 1-22
67. **Hull C. L.** Principles of Bihavior. - N.Y., 1943.
68. **Hull C. L.** A behavior System . - New-Haven, 1952.
69. **Kehler W.** Gestalt psychology. - N.Y.: Liveright, 1929.
70. **Kehler W.** Die Physischen Gestalten in Ruhe und in station"ıren Zustand. - Erfurt, 1912.
71. **Kehler W.** Gestalt Psychology Today. // American Psychologist, 1959, 14, P. 727-734
72. **Koffka K.** Percepcion: An introduction to Gestalt-theorie // Psychological Bulletin. — 1922. — Vol 19. — P. 531-585
73. **Koffka K.** Principles of Gestalt psychology. — N.Y.: Harcourt Brace, 1935.
74. **Lashley K. S.** The Behavioristic Interpretation of Consciousness. // Psychological Bulletin, 1923, 30, pp. 237-272; 329-353
75. **Lewin K.** Gesetz und Experiment in der Psychologie. — Berlin: Schlachtensee, 1927.
76. **Lewin K.** Die Entwiclung der experrimentellen Willenspsychologie und die Psychotherapie. - Leipzig, 1929.
77. **Maslow A. H.** A Theory of Human Motivation. // Psychological Review, 1943, 50, p. 370-396
78. **Neisser U.** Cognitive Psychology. N.Y., 1967.
79. **Rogers C.R.** Some Observations on the Organization of Personality. // American Psychologist, 1947, 2, p. 358-368
80. **Rogers C. R.** Significant Aspects of Client-Centered Therapy. // American Psychologist, 1946, 1, p. 415-422
81. **Skinner B. P.** The behavior of organisms; an experimental analisis. — 1938.
82. **Skinner B. P.** Science and Human Behavior. - N.Y., 1953.
83. **Skinner B. P.** About Behaviorism. N.Y., 1974.
84. **Skinner B. F.** Superstition in the Pigeon. // Journal of Experimental Psychology, 38, p.168-172
85. **Stern W.** Differentielle Psychologie. - Leipzig, 1911.
86. **Stern W.** Allgemeine Psychologie auf personalistischen Grundlage. - Haag, 1935.
87. **Thorndike E. L.** Animal intelligence. - N.Y., 1911.

88. Thorndike E. L. The Contribution of Psychology to Education. // The Journal of Educational Psychology, 1910, 1, p. 5-12
89. Titchener E. B. Experimental psychology (2vols., 4pts.). - N.Y.: Mucmillan, 1901-1905.
90. Titchener E. B. A text-book of psychology. - N.Y.: Mucmillan, 1910.
91. Titchener E. B. Systematic psychology: prolegomena. - N.Y.: Mucmillan, 1929. (Posthumos).
92. Tolman E. C. Purposive behavior in animals and Men. - N.Y; London, 1932.
93. Tolman E. C. Cognitive maps in rats and men // Psychological Revew. - 1948. - V. 55. — N.4. - p. 189-208
94. Tolman E. C. A new formula for behaviorism // Psychological Revew. - 1922. - V. 29
95. Watson J. B. Psychology as the behaviorist views it // Psychological Revew. 1913. - Vol 20. - p. 158-177
96. Watson J. B. Psychology from the standpoint of a behaviorist. - Philadelphia: Lippincott, 1919.
97. Watson J. B. Behaviorism. - N.Y., 1930.
98. Wertheimer M. Drei Abhandlungen zur Gestalttheorie. - Erfurt, 1925.
99. Wundt W. Grundriss der Psychologie. - Leipzig: Engelmann, 1896.

3.5.2. Ջոն Բրոդես Ուոթսոն 94
3.5.3. Բերես Ֆրեդերիկ Սքիներ 96
3.6. Նեոբիհեվիորիզմ 98
3.6.1. Էդուարդ Չեյս Թոլմեն 98
3.6.2. Ալբերտ Բանդուրա 99
3.7. Գեշտալտ-հոգեբանություն 102
3.7.1. Մաքս Վերտհայմեր 102
3.7.2. Կուրտ Կոֆկա 105
3.7.3. Վոլֆգանգ Քյոլեր 106
3.7.4. Կուրտ Լևին 109
3.7.5. Դանիել Կանեման 113
3.8. Հոգեհամադրում 116
3.8.1. Ռոբերթ Ասաջիոլի 116
3.9. Գործունեական մոտեցում 118
3.9.1. Սերգեյ Ռուբինշտեյն 118
3.9.2. Ալեքսեյ Լեոնտև 120
3.10. Զարգացման հոգեբանություն 123
3.10.1. Լև Վիգոտսկի 123
3.10.2. Բորիս Անանև 126
3.10.3. Անտոնիո Մենեգետի 127
3.11. Գենետիկական հոգեբանություն 131
3.11.1. Ժան Պիաժե 131
3.12. Հոգեֆիզիոլոգիա 134
3.12.1. Իվան Պավլով 134
3.12.2. Նիկոլայ Բեռնշտեյն 137
3.13. Հումանիստական հոգեբանություն 141
3.13.1. Գորդոն Օլպորտ 141
3.13.2. Կարլ Ռոջերս 142
3.13.3. Աբրահամ Մասլոու 145
3.14. Կոգնիտիվ հոգեբանություն 148
3.14.1. Ջորջ Քելլի 148
3.14.2. Լեոն Ֆեստինգեր 150
3.15. Գործոնային վերլուծություն 153
3.15.1. Ռայմոնդ Բեռնարդ Քեթթել 153
3.15.2. Հանս Յուրգեն Այզենկ 155
3.16. Էկզիստենցիալ հոգեբանություն 157
3.16.1. Վիկտոր Ֆրանկլ 157
3.17. Տրանսպերսոնալ հոգեբանություն 160
3.17.1. Ստանիսլավ Գրոֆ 160

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ՏԵՂԸ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 4
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄ 9
ՄԱՍ 1. ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ 15
1.1. Պյութագորաս 15
1.2. Սոկրատես 26
1.3. Պլատոն 29
1.4. Արիստոտել 34
1.5. Օգոստինոս երանելի 39
1.6. Ֆրենսիս Բեկոն 41
1.7. Ռենե Դեկարտ 44
1.8. Ջոն Լոկ 47
1.9. Գոթֆրիդ Վիլհելմ Լայբնից 50
ՄԱՍ 2. ԳԻՏԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ 55
2.1. Էռնստ Վեբեր 55
2.2. Գուստավ Թեոդոր Ֆեխներ 56
2.3. Հերման ֆոն Հելմհոլց 58
2.4. Վիլհելմ Վունդտ 60
2.5. Ֆրանց Բրենթանո 62
2.6. Գերման Էբինհաուզ 64
2.7. Օսվալդ Կյուլպե 66
ՄԱՍ 3. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 68
3.1. Ֆունկցիոնալիզմ 68
3.1.1. Ուիլիամ Ջեյմս 68
3.2. Հոգեվերլուծություն 70
3.2.1. Զիգմունդ Ֆրոյդ 70
3.2.2. Ալֆրեդ Ադլեր 73
3.2.3. Կարլ Յունգ 75
3.2.4. Կարեն Հորնի 77
3.2.5. Էրիխ Ֆրոմ 79
3.2.6. Էրիկ Էրիկսոն 83
3.3. Ստրուկտուրալիստական հոգեբանություն 86
3.3.1. Էդուարդ Բրադֆորդ Թիթչեներ 86
3.4. Դիֆերենցիալ հոգեբանություն 88
3.4.1. Ուիլյամ Շտերն 88
3.5. Բիհեվիորիզմ 92
3.5.1. Էդվարդ Լի Թորնդայք 92

3.17.2. Քեն Ուիլբեր 162
ՄԱՍ 4. ՀԱՅ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԻՏՔԸ 19-20-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ 166
ՄԱՍ 5. ՀԱՅ ԱՆՎԱՆԻ ՀՈԳԵԲԱՆՆԵՐ 173
5.1. Գուրգեն Էդիլյան 173
5.2. Մկրտիչ Մազմանյան 174
5.3. Հովսեփ Թութունջյան 175
5.4. Ալեքսանդր Լալայան 176
5.5. Ալբերտ Կոստանյան 178
5.6. Էլդա Գրին-Աբրահամյան 179
5.7. Սերգեյ Արզումանյան 181
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆԻ ՄԱՍԻՆ 184
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 186
ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ 188
ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 196